



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օպտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



7751

7752

7753

910.4(47.925)

U - 76

1326

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆ

Ի

ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱԻԱՌԱ

ՈՐԵՒԵԼԵԱՆ ՏԱԺԿԱՍՏԱՆ

---

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՍԱՐԵՆ ԵՒ ԶՈՐԵՆ, ՀԱՅԵՆ ԵՒ ՆՈՐԵՆ  
ԳԻՑԱՆԻ ԳԻՑՆՈՑ

---

ՄԱՍՆ Դ.

---

ՏԵՂԱԳՐԵԳ

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

---

• Հարֆ نظارت جلیله سنك ٦٩٥ غرولي رخصنه به

---

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Վ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ  
1985

13333

## ԶՕՆ

# ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ա. Ռ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Ս Գ Գ Ա Զ Ա Ն

# ՀԱՅՐԻԿ ԽՐԻՄԵԱՆ

ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐք ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՅ

Առ եւ ընկալ , իմըս Հայրիկ  
 Զայս երրակի ՀԱՅ մատենիկ ,  
 Զոր տամ ՆՈՒԿԻ Զեր Ա. անուան ,  
 Ի յիշատակ յաւէրժական :

Զեզ

Խ. Ռ.

ՄԻՒՐԱԽՈՐԵԱՆ

370  
240

## ԿԱՌԽԱԲԱՌ

Հուսկ ուրեմն կը հրատարակեմ իմ Տեղագրական Ուղեւորութեան այս մնացորդն՝ որում սպասող աղնիւ ընթերցողաց ներազամտութիւնն կը խնդրեմ, մամլոց տակէն ուշ ենելուն համար . . :

Երբ պարզօրէն մի արդար հաշիւ բռնեմք, ամեն որ դարձացմամբ պիտի տեսնէ թէ Ուղեւորն ի՞նչ ասա տիճանի նիւթական զոհողութիւնն եւ անձնանուիրութիւնն ունի իւր Երկասիրութեան մէջ՝ որ այժմ կաւարտի սոյն Գ. Մասովի:

Ասուգիւ կը հաւատամ թէ ամենն աշխատութիւն, վաղ կամ անսադան, վարձատրելի է համաձայն իւր կարեւորութեան եւ ծանրութեան, եւ թէ այս օրինակ ովարադայից մէջ յուսահատութիւնն ակար մարդոց գործ լինելով՝ բնաւ չկարեմ յանձնն առնուլ գայն. դո՞ւ եմ արդարեւ որ կարողութեանս չափով ծառայութիւն մը կը մասուցանեմ ոչ թէ միայն Ազգին, այլ նաև Յարեինամ կառավարութեան, որոյ Պետութեան Արեւելեան մասի զրոչմն կը կրէ գործոյս ամբողջութիւնն, զոր այժմ կը յանձնեմ մեր ընթերցակը ազգայնոց ՚ի նուրբ նկատառութիւն:

\* \* \*

Երկայիւս կը վութամ զիմ խորին շնորհակալութիւն յայտնել առ Վանմափայլ Յակոբ էֆէնտի Ֆրէնկեան, իւր այն բարձր զրից համար, զոր բարեհաճեցաւ ՚ի գործ դնել ՚ի զիւրութիւն իմ տաժանելի Երկրի ՚ի լոյս ընծայման: Նոյնպէս բանաւոր պատճառներ ունիմք մի եւ նոյն երախտաղիտական ջերմ ըզդացմամբ աստ յիշել նաև Մեծապատիւ Լեւոն պէյ Փափազեանն: Յիշեալ երկու ազնուամիտ անձնաւորութիւններու զրուատահաց արժանի անուանքն ասա

Նշանակելուս առթիւն կը յուսամ թէ իւրեանց ծառնուցեալ համեստութիւնն ինձ պիտի ներէ :

Գործոյս այս մասի մէջ եւս երբէք չեմք ըրած եւրոպական դահլիճներու , արքայական պալատներու եւ կամ այլ շքեղ ապարանաց նկարագիրն , ընաւ մըսած չեմք Փարփղի , Պերլինի եւ Լօնտրայի նման աշխարհանոչակ մայրաքաղաքները , այլ միայն շրջապայած եւ նկարագրած եմք ալեւոր Երկրի մը Փիվիքական եւ ուրիշ զանազան կողմերն , ինչպէս նաև ըրնակչաց խրճիթներն , գետնափոր բնակարաններն , ՀԱԻԱՏՈՅ ՏԱՃԱՐՆԵՐՆ , 'ի մի բան , այն բոլոր վայրերը , ուր կը բնակին մեր Հայ գիւղացիք , որոց , ըրած եմք նմանապէս , տարեկան կենաց չորս եղանակի համառօտա նկարագիրն :

Գոհութեամբ սրտի տեսնելով որ Կեղրոնի Պատիւսումնական խորհուրդն մեր երկասիրութիւնն (Երեք Մասերն 'ի միասին) 'ի քնին առած՝ արժանի համարած է Աղդ . վարժարանաց յանձնարարել 'ի գործածութիւն , որպէս կերեւի իւր Ծ . բորդ նստի եւ յուլիս 13ի հրատարակած պաշտօնական դրութիւններէն . ուստի պէտք զգացի աստ զնել հետեւեալ փոքրիկ հրահանդըն 'ի զիւրութիւն մասամբ մ'ուսուցչաց եւ առ հասարակ ուսանողաց :

### Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ուսուցիչն նախ պէտք է աչքի առջեւ ունենայ մեր ուղեւորած մասերն պարունակող քարտէսը , որոյ վերայ կանխապէս լաւ մը սորմեցունէ ուսանողաց աշխարհիս չորս կողմնական կէտերն՝ իւրեանց զիսաւոր երկրորդականներովն եւ ապա քաղաքի մը կամ

տեղւոյ մը զիրք, այս ինչ տեղւոյ նկատմամբ, որոշելո վարժութիւնք ընել տալ եւ ասոր համար 3-կ դաս բաւական է, եթէ աշակերտք փոքր ինչ խելահաս են, այնուհետեւ դասն աւանդէ աշակերտաց եւ անոնցմէ պահանջէ որչափ որ կարելի է բերանացի պատմութեամբ (խմատը առնելով)։ Այս դրութեամբ աշակերտքն պէտք է ուղեւորեն քարտիսովն, ոյր վրայ զտնուած տեղերն մասնացոյց ընել եւ անոնց անուններն տալ, զորս իրենք դասագրքին մէջ կարդացած լինելու են արդէն։

Գառառական անծանօթ բառերուն, ոմանց նման, փոխանակ ցանկ շինելոյ, պատշաճ դատեցինք իւրաքանչիւրի նշանակութիւն իրեն քով փակագծի մէջ զնել աւելի դիւրութեան համար, որ ընթերցողն չ'ըստիպուի շատ անդամ ցանկին նայիլ։

## ԿԱՐՃԱՌՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԷ

Հայարձնակ գաւառաց վերայ ընդհանրապէս խօսելոյ ատեն բնաւ չեմք ուղեր, ոմանց նման, չափադանց յուետես կամ չափաղանց լաւատես լինի՝ զոհելով մուր ուղղութիւնն զանաղան նկատումներու, այլ մեզ համար մնթու ընտրած եմք պարզօրէն նկարագրել եւ տեղագրել Երկրի ճիշդ պատկերն ինչպէս որ տեսած, շօշտիած եւ քննած եմք . . . Երկրագործութիւնն արդէն ամեն տեղ տակաւ ին իւր նախնական վիճակի մէջ կը գտնուի. ժողովուրդն առ հասարակ ցորեան, գարի եւ տարհեկան ցանել միայն դիտէ. իսկ ուրիշ արմտիք (զորս պէտք եղած տեղ յիշած եմք) եւ գետնախնձոր (Ք-Շ-Շ-Ե-Ն), որ ամենամեծ օլուտ կրնայ բերել, մանւանդ սովոյ տարիներումն.

դուն ուրեք կը մշակուին եւ այն եւս խիստ նուազ քառակութեամբ : Գիւղացի բնակիչքն իւրեանց մտաւոր խեղճութեամբ , որով եւ անտարբերութեամբ , Երկրի կիմային համաձայն , բնութեան հետ մրցիլ դժբաղդաբար դեռ չեն սորված . ահա խօսքիս ապացոյց , ունին ընդարձակ արաեր ջրարրի եւ միանգամայն բնակութեանց մերձ . սակայն իրենք միշտ կարօտ կը քաշեն սոխի մը եւ սխտորի մը , 'ի բաց կը թողում ուրիշ կարեւոր բանջարեղբէնք (զարգավար) :

\* \* \*

Երկրի Հայ զիւղացիներն , ցաւ է ըսել , որ վարժուած են ամենաշնչին գումարի մը (500-1000 դհկն.) համար ձգել երեսի վրայ իւրեանց ընտանիք , ընդարձակ հողերն՝ ընտիր կալուածներն , խոփն , արօնն եւ վերջապէս ամեն ինչ թող տալով զիմել 'ի պանդըխտութիւն կամ աւելի ստոյդ բացատրութեամբ՝ զնալ 'ի կորուստ : Այդ ուշակորոյս ողորմելիքն տարիներով կը թափառին պարտք վճարել եւ ապրուստով մը վերագառնալ . այս ժամանակամիջոցին Հայրենեաց արդաւանդ հոգերն կը մնան անմշակ , 'ի վեաս իւր եւ իւր Տէրութեան . մեր այդ պանդուխտքն թէ ի՞նչ եղանակաւ կը յաջողին պսակել յոյսերնին , կը թողում իւրեանց մտածել , միայն թէ չ'պէտք է մտուանալ եւ զայս՝ այսինքն երբ գոքա ընակավայրէն կը մեկնին , որպիսի կայտառութիւն , կապմուածք , ոյժ ունին եւ ի՞նչպէս ուղղաձիդ կը քաղլեն Երկրի վերայ . իսկ վերագարձի՛ ինչպէս կայտառութիւննին կորսնցուցած , ուժէ ընկած , վատառողջ , դողցես կմախ կտրած եւ մէկ խօսքով աղեղի նման ծուռած են յերկիր : Պանզըխտութիւնն ուրեմն աղզի մ՝ ամեն չարիքներէն գլխաւորն է :

կարնոյ գաւառին մէջ, թերեւս ուրիշ շատ տեղերը, բազմաթիւ չայ ընտանիք կան, որոնք սեպհական հող չունենալուն պատճառաւ աւատային դրութեան մը ներքեւ չարաչար աշխատելոյ դատապարտուած են. այս պարագային մէջ ներքին գաղթականութիւնք անհրաժեշտ են եւ խիստ շահաւոր՝ նոյն իսկ կառավարական տեսակիտով։ Անհուն հողեր կան ամայի եւ տակաւին մտքէս չէ ելած Առքերանւոյ արեւելեան հիւսիսակողման լայնածաւալ դաշտն Ապաղայի. այդպիսի մշակելի տեղերը պէտք է փոխադրել անհող, այլ ժրաբազուկ այդ զիւղացիքն, Անհամար լեռներ, լեռնահովիաք, սարեր, ձորեր եւայներ կան, յորս կարելի է հաղարաւոր ոչխարներ ու դուարներ պահել եւ շատ տեղերու մէջ հասցնել ընտիր նժոյզներ, որք համեմատաբար լաւ արժէք ունին. ըսել է թէ զիւղացւոյն օգուտն կը պահանջէ որ այժմ գոնէ անամսաբուծութեան աւելի կարեւորութիւն տալով իւր ունեցածն բազմապատկէ, եւ եթէ չունի՛ ջանայ ձեռք բերել, ինքն թող անհաւատ չ'լինի տեղւոյ բը նութեան վերայ, որ ժլատ չէ եւ կրնայ առատօրէն անունդ մատակարարել այդ անասուններուն, որոց արգեամբք մի օր ինքն կ'աղատի պահպատութեան անողոք ճիրաններէն։

Մեր կայսերական կառավարութիւնն ընաւ երբէք չուղեր իւր հաւատարիմ հպատակաց աղքատութիւնն, ըստ որում տիրողին եւ տիրելոյն շահերն սերտիւ իւրարու հետ կապուած լինելով՝ մին չ'կրնար անվաս մնալ երբ միւսն վեասուց ենթակայ է, եւ այս հօր ու զաւակաց համերաշխ կապն որչափ գօրանայ՝ այնչափ աւելի ժողովուրդն երջանիկ օրեր տեսնելոյ բաղդին կը հանդիպի, չ'նայելով այն մամնաւոր հաշիւներուն, զորս իւրաքանչիւր դարն իրեն հետ կը բերէ։ Երանի՛ թէ դրամատեարց կողմանէ յատուկ ըն-

կերութիւնք կազմուեին 'ի շինութիւն , որով 'ի բնաւ կութիւն ամայի տեղեաց , զարգացնեն Երկրի հողագործական , արհեստական եւ տնտեսական վիճակն , որ չլուած կուրութեան մէջ է , արդար շահեկանութեամբ դրամ տան քրտնաջան գիւղացւոց , որք անտարակոյս պիտի ազատուեին կարդ մ'անսիրտ վաշխառուներէ : Այդ դրամատեարք սկսին բանեցնել տալ պղնձի , երկաթի , ծծումբի , քարածուխի , աղի եւ այլ հանքեր՝ որ առատ են Երկրի մասնաւոր տեղերը . իրաւ է թէ յարաբերութեանց դժուարութիւնն մնծ արդելքներէն մին է այս տեսակ աշխարհաշինութեանց , բայց այժմ , շնորհիւ մեր կառավարութեան , օր ըստ օրէ դիւրանալոյ վրայ է :

Բազում տեղերը ջրոյ պակսութենէն ժողովուրդը կը տառապի , որպէս է Վան-Ցոսպայ Թիմարն , ուրոյ բնակչաց մնծ մասն 'ի պանդխտութեան կը գրտնուի , չքաւորութիւնն ծայրագոյն աստիճանն տիրած է սոյն գաւառի վերայ , թէպէտեւ ունին պատուական արտօրայք եւ զաշտօրայք՝ յարմար ջրարրի լինելոյ . սակայն ի՞նչ օգուտ որ կը մնան անմշակ ջրոյ պակսութենէն , ոյր պատճառաւ տեղւոյ բուսականութիւնը նուազ է , որով անասունքն եւս՝ նման ասուններուն մարմնով նիհարացած են . եթէ զանազան միջոցներով ջուր հանուի գաւառիս արտօրէից վերայ , հարստութիւնն կը լինի անսպառելի , եւ ասով դարձեալ առաջք կ'առնուի պանդխտութեան այդ Հայ գիւղացւոց , որք ինչպէս վերևու յիշեցի , վտիա անսամոց նման կմախ են դարձած , այնպէս որ կարելի է դիրենք կենդանի մեռեալ անուանել :

\* \* \*

Գտառացւոց կրթական կողմն մասնաւոր տեղերը կրնամք բաւական դոհացուցիչ համարիլ . սակայն

առ հասարակ մտածելով՝ ժողովուրդն զիռ ներկայ դարէն ներշնչուած չէ եւ ասոր համար չ'հաւատար կըրթութեան հրաշքին : Տեղացի մասնաւորաց կողմանէ Երկրի խաւարն փարատելոյ համար տարուած ջանքն ովկիանին մէջ կաթիլ մի ջրոյ նման է, որ գոյութիւն ունի եւ ոչ նշանակութիւն : Խմասուն եւ հեռատես ջանքեր պէտք են հետղիետէ մտցնել իւրեանց մէջ « տեղական իւղով տեղացւոց գլուխն օծելոյ » զըրութիւնն , որոյ շահն անթուելի է : Գիւղացւոց ամուսնական վիճակն ալ մեծ բարեկարգութեան պէտք ունի :


\* \* \*

Վանօրայքն երթալով ամայանալոյ ամենատխուր գժրադդութեան կը հանդիպին՝ եւ արդէն քանիներն , զորս իւրեանց կարգին նշանակած եմք , ամայացած եւ եղած են բնակարան անախորժ բուերու եւ ոմանք եւս այանքենտինէի անկարգութեան մէջ են : Ամեն լուրջ միտք կատարելապէս համոզուած է եւ կը համոզուի թէ վանքերու հիմնաքարանց հետ անքակտելի եղանակաւ կատարեած է Երկրի Հայ ժողովրդեան կեանքն , մանաւանդ զիւղական մասին եւ հետեւարար , երբ այդ վանքերն սննենաւանան , իւրեանց շրջապատի գիւղօրայքն ու թեմականիքն ինքնին անհետացած են եւ ասոր ցաւալի օրինակներն Երկասիրութեանցո մէջ պակաս չեն . ուրեմն ով որ այս բանի ճշմարտութեան հաւատալ չուղէ , նա ուղղակի թշնամի է Ազգին եւ միանգամայն կայսեր , որոյ կենաց երկարակեցութեան համար ընդ միշտ աղօթքներ եւ բարեմազթութիւններ տեղի կ'ունենան այդ նուիրական վայրերու մէջ , ըստ նախնի սովորութեան :

Արչա՛փ բարիք պիտի լինէին ընդհանուրին , եթէ Ազգ . Պատրիարքարանն յատուկ այցելու - պաշտօնեայ-

ներ խրկէ եւ համայն վանօրէից նկարագիրն առնել  
տայ հանդերձ նոցա նիւթական եւ բարոյական կող-  
մերովն եւ այսպէս շրջահայեաց տեսութեամբ զայն ս-  
ուսումնասիրելէն ետքն, անխօնչ ջանքեր ՚ի գործ դնեն  
բարեկարգել եւ ծազկեցնել այդ սրբազան տեղիքն,  
ուր Սահմանադրութեան համաձայն վարժարաններ  
բանալ, որք եթէ Երկրի կենաց յարմար ուղղութեան  
մը տակ զրուին, վանօրացքն շուտով կը դառնան մէկ  
մէկ Արեւ եւ իւրեանց լուսոյ ճառագայթներովն կը  
փարատեն զիսաւարն ագիտութեան այդ գիւղօրէից :

Աղնիւ ընթերցող, այս օրինակ զգացումներ երբ  
կը յայտնեմ, չ'պէտք է հետեւցնել թէ զրողն չափա-  
զանց կրօնասիրութենէ մղեալ է (\*), այլ ճշգրտապէս  
չշափած լինելով Աղդի մահացու վէրքն՝ իւր սրտի  
ներքին ցաւէն ստիպեալ՝ կը գրէ զայս տողեր եւ ՚ի բո-  
լոր սրտէ կը փափաքի որ Հայ Աղդն միշտ ԳՈՅ լինի  
եւ ազրի ընդ բարձր հոգանեաւ մեր Օսմանեան վե-  
հանձն կայսերաց, որոց վերայ աւելի շուք կը տայ  
այժմեան լուսամիտ Վեհապեան Սուլթան Համիտ Բ.  
կայսր համայն թուրքիոց Պետութեան :



(\*) Մուեսանդուրենէ գերծ կրօնասիրութիւնն արդեն ամեն բանական-մանկանացուի կենսական պէտք մի է, զի որպէս ՀԱՅՆ մարմնոյ համար, նոյնն է եւ ԿՐԾՎԻՆ նոգույն :

# ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ ՄՔ (\*)

Այժմեան ազգեր կամ ժողովուրդներ, որոնք, ինախնական ժամանակի, որոշ կազմակերպութիւն մը չունէին, յայտնի է որ բնական բերմամբ զգացածնին եւ ուզածնին իրարու կը հասկցնէին, դեռ չունեցած ոչ զիր եւ ոչ քերականութիւն - այլ հետզհետէ բնութեան այս ընդարձակ դպրոցին մէջ զիտողութիւններ, փորձեր, դէպքեր եւ առարկայներ զիրենք դաստիարակեցին, որով մտան ընկերական կարգ ու կանոնի տակ եւ ահա այս ուզգութեամբ իւրեանց մէջ նախ նշանագրին գաղափարն ծնած լինելու է, որ յառաջ երթալով մտաւ որոշակի ձիւերու եւ օրէնքներու ներքեւ, պատրաստուեցան տառեր եւ շնուեցաւ քերականութիւնն, զոր մարդիկ իւրեանց, օր ըստ օրէ զարգացման չորհիւ, կատարելագործելով հասուցին ներկայ վիճակին (\*\*). գաղափարներն եւ բառերն եւս բազմացան եւ զարգացան ժամանակի մտաւոր կարողութեան հետ եւ եղան ընդհանուրին գործածելի . սակայն մնացին, կան եւ ազգաց հետ պիտի մնան, զըրականութեան այդ սահմանէն դուրս, ժողովրդային բազմաթիւ բառեր, ոճեր, եւ ընտիր իմաստներ տուող դարձուածքներ, որք զարերու ձեռամբ փոփոխութիւնք կրելով կրեթան :

\* \* \*

Ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ անզիր (զըել ու կարդալ չ'գիտցող) ժողովրդեան մը լեզուն ընդհանուապէս ունի նաեւ կանոնաւոր բառեր աղճատելոյ եւ

(\*) Սոյն դիտողութիւնն, փոխանակ վերջը ճգելոյ, աստ դնել հարկ եղան :

(\*\*) Լեզուի այս յառաջ գնացուրիւնն կրնայ համարուիլ միշտ շարունակելի :

ՓԲ:

մանաւանդ շատ անգամ կրծատելոյ ընտթիւն, որով  
կստեղծէ ռամկական նորանոր բառեր, ոճեր եւ դար-  
ձուածքներ, որոնք, որպէս ասացի, կը պարունակեն  
այնպիսի իմաստներ եւ ձեւեր, որոց մասին քերակա-  
նութիւնն որոշակի կանոն մը չունի տակաւին :

Դարերն երթալով կը ծաղկին, զիտութիւնք յա-  
ռաջ կը զիմեն անդիմաղրելի եւ այս ամէնքն կը լինին  
առ հասարակ օտար լեզուաւ, որմէ առնելով մեր ժո-  
ղովրդեան պիտի հաղորդուի, ուրեմն անհրաժեշտ  
հարկ է որ Ազգի գրադէտ մասն պէտք եղած կարե-  
ւորութիւն տայ գաւառական լեզուին, որոյ հարստու-  
թեան տարերքն (բառեր) ամենամեծ զիւրութիւններ  
կ'ընծայէ այդ զիտութիւնքն մեր ժողովրդեան հաղոր-  
դելոյ միջնորդին, որ երբեմն օտար բառեր գործածե-  
լոյ կոտիպուի առ 'ի չ'գոյէ համապատասխան Հայ  
բառի :

Երանին թէ մասնաճիւղ մի կողմուի մեր մէջ, ո-  
րոյ նպատակն լինի այլ եւ այլ միջոցներ ձեռքը առ-  
նելով գաւառական բառերն, ոճերն, եւ խօսուածք-  
ներն հաւաքել, զտել եւ իրեւ զրական լեզու 'ի  
զործածութեան դնել մեր ամեն կարդի վարժարանաց  
մէջ :

Այս պահուս եթէ մեր Հայկարան ուսուցիչներու  
մատենադարաններն աչքէ անցունելոյ լինիմք աննշան  
թիւ մը հազիւ կարող եմք զտել (բացառութիւն  
շատ քիչ), որ լեզուի այս ճիւղն մշակելոյ համար  
ունեցած ըլլայ գաւառացւոց կեանքին եւ լեզուին  
վրայ գրուած մի քանի կտոր զրեանք :

\* \*

Գործոյս Բ. Մասի երես 179 ի ծանօթութեան  
նկատմամբ աստ կը յայտնիմ իմ կարծիքն :

Երբեմն բառի մը զործածուելոյ ատեն իրեն հետ,

առանց շաղկապի, ուրիշ յարակից բառ մը եւս կը գործածուի, զոր օրինակ հաց մաց, ջուր մուր, գիր միր, թուղթ մուղթ, դրիչ մրիչ, հին մին, եւ այլն. առյն վերջի բառերն, որպէս յայտնի կերեւին, կազմուած են առաջիններէն (\*) որոց սկզբնատառն միշտ մի փոխուելով. այդ փոխուեալ բառն առանձին ոչ նշանակութիւն մ'ունի եւ ոչ գործածութիւն, իսկ իւր նախընթաց որոշակի բառին հետ զործածուած ժամանակը անոր նշանակած նիւթի արժէքին կըտայ աւելի պարզ աստիճան մը, ինչպէս երբ կըսեմք հաց մաց սովորաբար կը հասկնամք որ եւ իցէ հաց, այսինքն չեմք հասկնար հացի ընտիր տեսակ մը, այլ մեզ կըտայ պարզ տեսակի մը դադափար, այսպէս պէտք է ըմբռնել նաեւ միւսներն, Այն բառն, որ մ տառով կսկսի, առյն օրինակ յարակից բառ մը չառներ:

Երես ցիշ շնորհի / ուղեւ իւղին. Տօն շնորհ. շնորհ / և իւրեմնու այս իով Մով իւրեմնու Տաման / Տու-Դու / . Ծուլրով Ծու-Երրով, Ծույրով / և այս եւ այսը:

ՀՊ, կ մկ. 1996 Տուր. 4.

(\*) Երես ուղաղրաքեամբ դիտեմք պիտի տեսնեմք մի եւ նոյն բանն օտարար լեզուաց մեջ ենս յար եւ նման կազմուրեամբ եւ գործածուրեամբ :

կուզէի , Երկասիրութեանցո վերաբերութեամբ , պատկառելի զրագէաներէն եւ այլ ականաւոր անձանցմէ ց'արդ ընդունածս բոլոր նամակներն , հետեւ եալներուն հետ , աստ կարգաւ շարել մի միայն 'ի պատիւ իւրեանց տղնիւ հեղինակացն . ուսկայն ինքնին մակարերելի պատճառաւ մը չ'կարողացայ , ուստի փոխազարձօրէն զիմյատուկ գոհութեակութիւնն կը յայտնեմ առ այսո , որոց ինձ ցոյց տուած այսչափ համակրանաց եւ քաջալերութեան առջեւ զիս անարժան կը գտնեմ :

## Ա.

• • • Մանուկի . . . Միրախորեան

ի Պոլիս

Ուրախութեամբ սրտի ընթերցաց ձեր երկասիրած « Նկարագրական Ուղեւորութիւն 'ի Հայաբնակ Գաւառու Արեւելեան Տաճկաստանի » անուն Գործի Ա. եւ Բ. Մասերն :

Ձեր սիրելութեան Հայորդիութիւն , որ արդէն վաղուց ի վեր ինձ ծանօթ էր , զգայուն հայասեռից ալ ծանօթացուցիք այդու հեղինակութեամբ , որով յաջողած էք Ազգին եւ միանգամայն Տէրութեան հաւասարապէս կարեւոր ծառայութիւն մը մատուցանել եւ սիրելի է մեզ որ շատերն եւս ձեր խոհեմ եւ լրբջատես զրութեան հետեւին այդպիսի ծառայութեանց մէջ , զորս ամենն կարգի ազգայնոց օգտակար ընելու յատկութիւններով օժտած էք նոր ոճով մը եւ մի տեսակ սահուն զրչով :

• • • Պարոն , զուք , կը թուի թէ , մեր Հայ ժողովրդեան կեանք ուսումնասիրելն ձեզ մասնաճիւղ ընտրած էք , որ ամենեւին չէք ձանձրանայր միշտ Սարերու եւ Չորերու , Հիներու եւ Կորերու մէջ թափառելէ եւ մեծ ախորժ կզզայք զիւղական պարզ խըն-

ճոյքներէն քան թէ եւրոպական երեկոյթներէ : Ես հոգւով չափ ուրախութիւն կզգամ 'ի սրտիս , որ այդ ընդարձակ ճանապարհորդութեան մէջ վատանդի մը չէք հանդիպած եւ այս կէտն արդարեւ կրնայ պատիւրերել Երկրին տիրող կառավարութեամն :

Առ այժմ զայս եւեթ ասեմ թէ այդ Երկասիրութիւնքդ մէկ մէկ զպրոց են , զորս կը բանայք ընթերցողաց միաքերու համար եւ դուք ձեր առած զատարակութեամբն անշուշտ այդպիսի եղանակաւ սիրելու էիք զլզգ եւ զջէրութիւն , ում հովանեաց ներքեւ մինչեւ ց'արդ կ'ապրիմք :

• • • Միրախորեան , դուք , իրեւ դրական մարդ , ընդ հոգով եւ ընդ հոլովմամբ ժամանակի ծածկեալներն դուրս տուած էք , Երկրի ֆիզիքական , ժողովրդոց նիւթական , մտաւորական եւ ուրիշ օգտակար նկարագիրներուն հետ : Կը գովեմ զջեղ որ զգուշացեր էք բանաստեղծականն երականի կարգը դասելէն . ապահով եղիք , ուշ կամ կանուխ պիտի զանէք այն քաջալերութիւնն , զոր սպասելու իրուունքն վաստկած էք ձեր անխոնչ ջանքերովն եւ հաստատամտութեամբն :

Մնամ աղօթարար առաւել բեղմնաւորել մտաց Ձերոց եւ արդիւնաւորեսցիք յայսպիսի աշխատութիւնը :

ՆերՍէՍ ԵՊԻՍԿ. ԳԷՈՐԳԵԱՆ

1885 Յունիս 26

Ի Ռոտոսթօ

Բ.

1885 Մայիս 8/20 իւսկիւտար

• • • Մանուկի Կ. • • • • Միրախորեան

ի Պօլիս

• • • Բարեկամ

Մինչ Ն. Շահնազարեան վարժարանի որրանուէր

յարկին տակն էլինք , արդէն իսկ ճանչցուած էր քո  
հայրենասփրական և ուսնղն եւ աւելնն . բոլոր գառա-  
կիցքդ , ընդ որս եւ ես կը սիրէինք յաճախ ունկնդիր  
լինիլ քեզ , երբ զմեզ կ'ոգեւորէիր մեր թնագաւառի  
քաղցր յիշատակներով եւ կը լուսուիր մեր սիրտերը :

Նկարագրական Ուղեւորութեանդ Ա. եւ Բ. Մա-  
սերն երեք անդամ ծայրէ 'ի ծայր ընթերցայ եւ տա-  
կաւին կը փափաքիմ կրկնել :

Յաւէտ ողբացեալ մեր սիրելի անօրէն Հ. Խփէք-  
ճեան , երբ կը տառապէր 'ի մահճի եւ իւր անձնանուէր  
աշակերտաց յաճախակի այցելութեամբք կ'սփոփուէր ,  
շարունակ կամէր Ձեր ՈՒՊԵԻՈՒԹԵԱՆ վերայ խօսիլ :

• • • Բարեկամ , բաւական առենէ 'ի վեր զրա-  
գարան մի պատրաստած եմ , որոյ հայերէն զրեանց  
մէջ Ձեր Երկերն եկան առաջին տեղին զրաւել եւ  
կազմել զրադարանիս արդն ու զարդն :

Իմ որտին չնորհակալութիւնն առ Ձեզ


Քոյզ

ՄԻՍԱԿ Կ. ՄԱԿԱՐԵԱՆ

---

Հեղինակի ստորագրութիւն չ'կրող օրինակն  
անվաւեր է .

---



ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՏԵՋԱՋԱՆԵՑՆԵՐ  
Ի ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱԼԱՌՈՍ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՌՏԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՍԱՐԵՆ ԵՒ ԶՈՐԵՆ, ՀՆԵՆ ԵՒ ՆՈՐԵՆ  
ՊԻՑԱՆԻ ՊԻՑՆՈՑ

ԴԼՈՒԽ Ը.

ԱՌԲԵՐԱՆԻ (ԲԵՐԿՐԻ)

Սոյն գաւառն, ըստ հին աշխարհագրական  
բաժանման, Վասպուրական նահանգի 36 գա-  
ւառներէն մին է, ունենալով Արեւելակողմէն  
աղեղնաձև լերանց մասնաւոր շղթայք, ոմանք  
Հիւսիսէն 'ի Հարաւ տարածեալ. Արեւմտահա-  
րաւէն կը տարածի Բղնունեաց ծովս, նոյնպէս  
և Քաջբերունիք (Արճէշ), Հարաւէն Վան-Տոսպ  
գաւառ, ոյր ունեցած սահմանը կը կազմեն 4-5  
ֆուրդ դիւղօրայք, պատուական հողերով և  
ջրերով ու ամեն կողմերը լի խոտերով, յորս կը  
խրինջան (ձիու ուրախութեան ձայն հանելը),  
Մարական աղատ թոռանց նժոյգներ, զորս տես-  
նողն մեծ հաճոյք կըզգայ, ուր կը մնայ հեծ-  
նողն: Արեւելեան Հիւսիսակողմն է Ապաղայի

նշանաւոր դաշտն , որոյ վերայ քիչ մ'ետք կը  
խօսիմք :

Երկիրն ընդհանրապէս դաշտային է , ա-  
ռողջարար օդով ջրով , և արդաւանդ հողով , ո-  
րոյ բարեբերութենէն թերես ծագումն առած  
լինի այժմեան « բերկրի » անունն , որ հաւանա-  
կանաբար աղաւաղեալն է « բերրի » բառին և  
կամ որպէս կ'աւանդուի « նախնի ժամանակաց  
մէջ լի ծառաստան կը լինի , որք ամեն տարի  
առատօրէն պտուղներ կը տային և բնակիչքն ի-  
րարու « բերկրի » (ուրախացիր) ըսելով պտղոց  
առատութիւնն կ'ողջունէին կամ կ'աւետէին ի-  
րարու :

Գաւառիս Արեւելեան լերանց մէջ նշանաւոր  
է « Սպահանի » կոչուածն , որոյ ստորոտք կը  
դանուի համանուն լճակ մը , որ մերձակայ ար-  
տօրէից ջուր կը տայ . սոյն լճակի ջուրն անուշ  
է և շատ զուլալ , որոյ նկատմամբ կ'աւանդեն  
թէ « մի օր Երուսաղիմայ նուիրակներէն մին  
Գործոթ գիւղի 40 զաւակ ունեցող քահանայ  
մը կը խոստովանցնէ լճակիս եղերաց վերայ .  
սակայն ջրոյ մէջ դտնուած դորտերն աղմուկ կը  
հանեն և նուիրակն անոնց բարկանալով կըսէ  
« լոեցէք » . նոքա ևս կը լոեն և ց'արդ սերըն-  
դէ 'ի սերունդ նոյն լուսութիւնն կը ողահեն » :  
Այժմ ոոյն լճակն բաղդատմամբ կընայ անաղ-  
մուկ համարուիլ :

Վերոյիշեալ Ապաղայի լայնատարած դաշտը ունի գրեթէ 3 ժամ երկայնութիւն և 2 ժամ լայնութիւն և է հորիզոնական դրիւք . այդչափը ընդարձակութեան մէջ հաւկթի մը մեծութեամբ դուն ուրեք . կը տեսնուին քարեր և ամեն տարի կը տայ անոպառելի մաքուր խոտ , որոյ բարձրութեան մէջ ժամանակին մարդու կը թաղուի : Ունի սեւագոյն ընտիր հող՝ ոլարարտ և բարերեր , որ կընայ մէկին վոխարէն 40-40 տալ ամենապառուական ցորեան և մանաւանդ գարի . սակայն ի՞նչ օգուտ , որ այժմ չունի բնակիչ , միայն թէ այդ ահագին դաշտի եղերքները տեղ տեղ մի քանի ֆուրդ դիւղեր կը դանուին՝ դիսաւորաբար Հայուրունց ըսուած հաշեռէնին վերաբերեալ , որոնք 3-5-6-10 տնական հաղիւ կը լինին և ընդ ամեն 400-450 ընտանիք կազմող և մեծագոյն մասամբ բնակողք շրջապատի լեռանց միջավայրերը : Իրենք չունին սէր հողին վերայ , կը պահեն միայն ոշխար և ընտիր ձիեր , հետևաբար տեղւոյս հարուստ բնութեան բարիքներն կը կորսուին յումզէտս :

Ապաղայի առատ խոտերն աշնան ժամանակին կը բռնկցնեն և հրդեհի նման հրոյ ճարակ կը տան ամբողջ դաշտն , ըստ որում եթէ չ'այրեն կամ չ'քաղեն , յաջորդ տարին բնութիւնը կը զանայ մի և նոյն պարզեւի կըկին մատակարառութիւնն , նախընթաց տարուան առատութեամբը : Գիտես թէ բնութիւնն կը փափաքի :

որ մարդիկ իւր բարիքն վայելելոյ համար մաս-  
նաւոր ջանքեր ՚ի գործ դնելէ չդադրին, ապա  
թէ ոչ ինքն կը զայրանայ և անպտուղ կը լինի :  
Եստ տեղեր ալ առանց այրելոյ թող կը տան  
այդ խոտերն և ձմեռ եղանակին աչքէ ելած  
կենդանիք և մանաւանդ ոչխարներ ու ձիեր  
դարձեալ ՚ի դաշտ հանելով՝ կը կերցնեն խոտե-  
րու ծայրերը, որք ձիւնէն վեր կը մնան :

Էստ աւանդութեան և ըստ տեղ տեղ տե-  
սանելի աւերակաց « Ապաղէն ՚ի հնումն 300 Հայ  
և մի քանի Եղնի գիւղօրայք գտնուած են » :

Այս ընդարձակ դաշտի շրջապատի լեռնե-  
րէն բղխած մասնաւոր ջուրերն ժողվուելով՝ կը  
կազմեն Առեստ (բանդու մահու) կոչուած գե-  
տըն, որ յորդութեան կողմանէ Վանայ ծովը  
թափող գետերէն կրնայ առաջինն համարուիլ:  
Կը պատմուի թէ « Ապաղայի գիւղօրէից Շէն ե-  
ղած ժամանակին սոյն գետն երբեմն բոլորովին  
կը ցամաքէր, ըստ որում կը բաժնուէր արտօ-  
քէից վերայ » :

Ականատեսք դարձեալ կը պատմեն թէ  
« Ճէննէթմէքեան Սուլթան Ապահուլ Ազիզ ձեռ-  
նարկել տուաւ մի ղօրանոց շինել Ապաղայի կեղ-  
ընը՝ յապահովութիւն և ՚ի գիւղաշինութիւն,  
սակայն ինչ ինչ պատճառաւ յետաձգուեցաւ:  
Սոյն անուանի դաշտի Արեւելակողմն է Պարսիկ  
և Հիւսիսակողմն Ռուս :

Էստ նորագոյն տեղեկութեանց՝ Առերանի

դաւառին մէջ մօտաւորապէս 90 դիւղեր կան ,  
20000 բնակչոք , յորոց 15000 ն Հայ են , և մնաց-  
եալ 5000 Քուրդ : Հայք կ'զբաղին առ հասարակ-  
երկրագործութեամբ և խաշնարածութեամբ ու  
վերջին աստիճան թշուառ են այլ դաւառաց  
դիւղերու հետ բաղդատելով : Քուրդերն , որ-  
պէս վերև յիշեցի , կը պահեն ոչխար և ձի ,  
լեռնաբնակ են ու կը գրաւեն Ապաղայի շրջա-  
պատի լեռնամէջերը , ուր շատ երջանիկ կ'ապ-  
րին իւրեանց շնչաւորներովն , իւրեանց բոլոր  
հարստութիւնքն ոտաւոր են և Հայոց ունեցա-  
ծին նման անշարժ չեն :

Դաւառիս մէջ չեն պակսիր աղդային նուի-  
րական վայրեր , յորս նշանակելի է Տէր ՅՈՒՍ-  
ԿԱՆ ՈՐԴԻ անուն վանքն , որ այժմ ամայացեալ  
վիճակէ մը մեծ տարբերութիւն չունի , և կը  
ծառայէ միայն քահանայ մը հանդերձ ընտան-  
եօքն ապրեցնելոյ . այս քահանայն երեկոյ և  
առաւեօտ առանձին կտղօթէ և կը յուսայ , որ  
քիչ ժամանակէն թերեւս յոյսն կը ստէ և աղօ-  
թելէ ալ դադրէ :

Վանքն ունի հողային բաւական կալուած-  
ներ :

### Գլ. Բ.

ԱՌԵԲԵՐԱՆԻՈՑ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՒՂԵԲՆ  
ԲԵԲԿԻՒ . — Դաւառիս հին բերդաքաղաքն

է, շինուած զրեթէ Առևոտ գետոյ ափանց վրայ.  
և չունի բնաւ իւր հին ժամանակուան փայլն,  
որ այժմ աւերակ մի դարձած է, ուր կը բնակին  
մի քոնի տուն Հայ՝ ողորմելի կացութեամբ :

ԴԱՐԾՈՒԹՅ. — Կը դանուի դաւասիս կեդարոնական Սրեւելը, ունի սիրուն դիրք մը և. 60  
-70 տուն Հայ բնակիչ, որոց նիւթական վիճակը մերձակայ դիւղերուն նայելով կընայ բաւական լաւ համարուիլ: Տեղոյս Հայերն չափազանց գանգատ չունին խրեանց կեանքէն: Առաջ կը բնակի մեր հոչակաւոր Մէլօն (Մելքոն) գաւառին նշանաւոր Հայն, որ ամենայն հաւատարմութեամբ 'ի գործ կը դնէ իւր մեռած կակօյի (պապ) կտակին, և երբ դժբաղզութեան մը հանդիպի, անկէ դուրս ենելուն վերայ լնմերցողն ևս կընայ ինձ հետ աղահով լինիլ, որ մեր Մէլօն ճարտարութեամբ աղատուելոյ կերպերով կը փրկուի: Տեղոյս Հայերն հայհոյութեանց բանասպեց են:

Գործոթ դիւղի մէջ հետեւեալնուիրական տեղիքն կը տեսնաւին, յորոց ոմանք կիսակործան են, ոմանք տաղաւարիկ և ոմանք մատուիկ. Ա. Ա. ՅՈՎ. ՀԱՆՆԵԼ. Բ. Ա. ԿՈՐԱՊԵՏ. Գ. Ա. ՍՈՒԳՈՒԽ. Դ. Ա. ՎԱՐՍԻԿ. Ե. Ա. ԿՈՂԱՅՅ ԽՄ. Զ. Ա. ԶԱՀԱՀԱՆԻ (շղթայաւոր): Գիւղացիք մի յատուկ մնտուկի մէջ կը պահեն նուի հանուն անուամբ մի ձեռագիր աւետարան, որում չի մերձենայլ ու իսրահանի ձեռք, այլ երբեմն,

նման մասունքի , դուրս կը հանէ քահանայն և  
կընթեռնու զայն իրժշկութիւն հիւանդաց կամ  
ախտաժէտաց և 'ի բարձումն Աստուածային  
պատժոց , որոց շատ անգամ աղատ չեն :

Միացեալ Ընկերութիւնն աստ ունի նախա-  
լրժարան մը :

ՊԶՑԻԿ ԳԻՒՂ. — Ունի 30 տուն Հայ բնա-  
կիչ , որոյ հողերն համեմատաբար շատ պարաբա-  
ն ջրարբի են , իսկ մտքերն աղքատ և ծարաւի  
ուսման և գիտութեան : Տեղւոյս հայերն շատ  
անգամ սեպհական քահանայ չունենալով զուրկ  
կը դանուին կրօնական կամ հոգեկան մխիթա-  
րանքէ , ուրիշ տեղերէ այցելու քահանայ կը  
գայ ի պահանջել հարկին , եթէ կայ իւրեանց  
համար փոքր ինչ մխիթարական մի կողմ , այն  
ևս Ս. ԹՎ.ԴԼ.ՌՍ անուամբ ամայացեալ վանքն է ,  
գիւղէն բաւական հեռու և սրտերու մօտ :

\* \* \*

Թող տալով գաւառիս մնացեալ մի քանի  
Հայ գիւղեր , որք չունին նշանակութեան ար-  
ժանի մի բան , շարունակեմք մեր ՈՒՂԻՆ , մեղ  
համար պէտք ոլիսի լինի անցանել Առեստ գե-  
տէն , որոյ մէջ 'ի գարնան « տառեխ » կոչուած  
անթիւ ձկունք կը խաղտն և կորսացուին կո-  
ղովսերով . շատ հազուագիւտ են 1-2 օխանոց  
ձկունք :

Առեստ գետն ունի հին , այլ ամրաշէն և  
գեղեցիկ կամուրջ մը մեր ճանապարհին վերայ ,

որ կը տեսնուի անխնամ վիճակի մէջ, յորմէ անցանելով յառաջ դնամք դէպ 'ի Քաջբերունեաց դաւառն :

Առեստ կամ նոր անուամբ սոյն « պէնտ մահու » գետն ՚ի դարնան սոսկալի եղանակաւ կը յորդի և երբեմն իսկ դժբաղդութեանց առիթ կը լինի մարդկային կեանքեր կուլ տալով, թերեւս ասկէ ծաղումն առած լինի իւր վերջի անունն : Գետոյս ընակած ընթացքն զինքն ժըլատ ըրած է դաւառիս համար պէտք եղած ջուրն մատակարարելոյ, իւր ընծոյած օդուան շատ աննշան մի բան է համեմատաբար :

Գետոյս եղերաց վերայ, ինչպէս նաև մեր նախորդ ճանապարհի (Թեմարայ սահմանակից տեղերն աւելի) մերձ 2-3 եղտի դիւղերու, ունի խիստ զուարճալի ռելնաներ, ուր բաւական քանակութեամբ եղէդներ կը բուսնին, և ձմեռ ատենը, ով որ համարձակի, կընայ ներս մտնել ու քաղել եղէդներն իրեն համար, զորս ընդհանրապէս կը տանին ՚ի քաղաք վաճառել և խիստ օդտակար են տանց ծածքերու համար . մանաւանդ եթէ դիտնան գերմանական դրութեամբ դօտեւոր տանիքներ կաղմել (ոյր նկատմամբ Տեղադրութեանցս Ա. Մասի ԼԱ. դլխոյն մէջ խօսած եմ) :

Այսպէս ահա վանայ կամ Բղնունեաց ծովու Արեւելեան Հիւսխային ըղտանման վզի եղերքներէն մեր ՈՃՆ շարունակելով կը տեսնուին

քրդական Յ գիշեր , որոնք կը պատկանին Աւ-  
առ ու ու կոչել կոչուած քրդուն , որ Մոկացի է և Փան  
Մահմուտ» անուանեալ հոչակաւոր քրդու ցե-  
ղէն սերած :

Սոյն ցեղապետ Հաշիրէթի պատմութիւնն  
ի է հետաքրքիր երեսյթներով , զորս աստյիշել  
մեր նպատակէն բոլորովին դուրս լինելով զանց  
կառնումք : Մեր ճանապարհի ուղղութիւնն  
այսպէս դէպ 'ի յԱրեմուտս լինելով և 5-6 ժամու  
չափ ուղի կտրելով կը մոնեմք հետեւալ դա-  
ւառն :

## ԳԼ. Գ.

Ք Ա Զ Բ Ե Ր Ո Ւ Խ Ի Ք

Գաւառիս սահմանն է Արեւելէն Առքերա-  
նի , Արեւմուտէն Խոռխոռունիք , Հարաւէն Վա-  
նայ ծովս և Հիւսիսէն կրնայ համարուիլ Ծաղ-  
կանց լեռառն (աւարտ) , ինչպէս և Ալաշկերտ :

Երկիրն Հիւսիսէն բլրային է , իսկ Հարաւէն  
դաշտային : Բուսականութիւնն շատ առատ է ,  
մանաւանդ Հիւսիսական կողմերը : Գաւառիս  
երկայնութիւնն է Արեւելէն յԱրեւմուտ 11-12  
ժամ , և լայնութիւնն Հարաւէն 'ի Հիւսիս 40  
ժամ , միջին հաշուով : Ունի պատուական կիմայ  
և պատուականագոյն ջուր , հողն ընտիր , որով  
և արդաւանդ . այլ մեծագոյն մասամբ անջրդի .  
(ունի միայն Ա.Ճէշ գետ , որ Ա.ճշու հովիտ ոռո-  
գելով 'ի ծով կը թափի) :

Քաջրերունիք կը պարունակէ 120 կ մօտ  
գիւղեր , յորոց 38-40 չայ են և մնացեալներն  
Քուրդ , և մասնաւոր գիւղեր Զէրքէղ . սակայն  
Հայոց թիւն անոնցմէ շատ մեծ է , բայտ որում  
Հայք բաղմաբնակութիւն են , այն ինչ Քուրդերն  
ոչ այնպէս : Հայոց գիւղերու բնակութեանց  
թիւն կրնամք , միջին հաշուով , 35-40 տուն սե-  
պել : Ի բաց առեալ 3-4 գիւղեր , մնացեալքն  
են առանց դպրոցի և առանց նոյն խակ դպրո-  
ցական դաղափարի : Դիւղերէն 5-6 հատ հա-  
զիւ կան քրդախառն :

\* \* \*

Դաւառիս Հայերն ընդհանրապէս երկրա-  
գործութեամբ կ'զբաղին և քիչ խանչարածու-  
թեամբ . խակ Քուրդք , մասնաւանդ Հիւսիսաբը-  
նակներն շատ քիչ գործ ունին ՀՌԴին հնա , ի-  
րենց բոլոր հարստութիւնք են քառոսանի կեն-  
դանիք և մասնաւանդ կը սկահեն ընտիր ձիեր :

Քաջրերունեաց Արմենական բնակիչքն նը-  
շանաւոր են . . . . հիւրասէր և ընտանեսէր ,  
պանդխտութեան դիմելն ի՞նչ է չգիտեն ու շատ  
աշխատասէր են : Դիւղերէն ոմանք ծառաստա-  
նով են և յառաջ կը բերեն սովորական պտուղ-  
ներ : Ականց և Աորափ (որոց վերայ 'ի կարգին  
կը խօսուի) կոչուածներն միայն ունին խաղողի  
այդիներ , որոց խաղողներն կը տարուին յայլ  
գիւղօրայս 'ի վաճառ :

Հայ ժողովրդեան երկրագործական արհես-

տըն համբաւ ունի և կը ցանեն ցորեան ամենէն շատ , նոյնպէս գարի , կորեակ , ոսպ , կը լուլ , կտաւատ , ինչպէս նաև ժամանակին ձմերուկ և սեխ , որք մեծութեամբ և քաղցրութեամբ անուանի են :

### ԴԱՒՍՈՒՄ ՑՈՐԵԱՆ ՑԱՆԵԼՈՅ ԵՂԱՆԱԿՆ

Նախ և առաջ ցանելի հողն կը վարեն երկու անգամ խաչաձեւ , յետոյ վրան տափ կը տան (կը հաւասարցնեն) կռեթներ (հողի կոշ) , հողն այսպէս իւր զիճակաւ կը մնայ մինչև ցորեան ցանելոյ ժամանակն , զոր օրինակ աշուն . երկրագործող խոփի երկու կողմերը ուշաբեռն ձևով երկու տախտակներ կը հաստատեն . խոփն զհող կը ճեղքէ , երկրագործը ցորեանն (ոերթն) երկայն ուղղութեամբ կը ցանէ այդ տախտակներու մէջ աեղը և երր տախտակներն իւրեանց տեղին կը փոխեն , յայնժամ ետ քշուած եղերաց հողերն երկու կողմէն գալով կը ծածկեն ցորենի հատիկներն , յորոց և ոչ մէկ հատ կորսուելոյ ենթակայ կը լինի կամ դուրս մնալով ըլլայ կերակուր թռչնոց : Այս դրութեամբ բընականաբար պիտի բուսնին ամեն հատիկներն , կանանաւոր չնչառութեան մը ներքեւ և 'ի ժամանակին հունձքեր քաղելոյ համար ևս դիւրութիւն կը տայ առանց հասկ մը կորանցնելոյ :

Ցանելոյ սոյն կերպն « տիր » կ'անուանեն , որ պէտք է լինի օրինակելի : Հողն 4 ին 8-60

արդասաւորութիւն ունի և ցորեանն ձիւնի նըման ճերմակ կը լինի ու հատիկներն սովորական ցորենի հատիկներէն աւելի խոշոր :

## Գ. Լ. Դ.

ՔԱԶԲԵՐՈՒՆԵԱՅ ԳԼԽԱԽՈՐ ԳԻՒՂԵՐ

ԱԿԱՆՑ . — Գաւառիս կեդրոնական տեղին կամ գիւղաքաղաքն է առ և տրոյ :

Գիւղս շինուած է ընդարձակ և տափարակ դաշտի վերայ . ունի 300 տուն բնակիչ , յորոց 30-35 տուն հազիւ Հայ են և մնացեալն Մահմետական : Տեղւոյս Հայքն ունին երկու եկեղեցի , յորոց մին է Ս. Թ.Ա.Դ.Ռ.Ո.Ս. Ս.Ռ.Ջ.Բ.Ա. և միւսըն Ս. Գ.Ո.Թ.Գ. , որ իրբե վանք , Վանայ Առաջնորդարանին տուրք (մուխաթայ) կը տայ և անշուշտ ինքն կառնու՝ որ տալոյ պարտական եղած է : Սոյն վանքն 242 տարիէ ՚ի վեր եկեղեցւոյ ձեւի վերածուած է նորոգմամբ , միայն խորանին համար կարելի է ասել Առաքելոց ժամանակէն մնացած լինի , որպէս և կ'աւանդեն իսկ : Ս. Թ.ադէոսին դալով արդէն առաքելաշէն է և տաճարաւոր բաւական գեղեցիկ , իսկ եկեղեցին նորոդութիւն մը տեսած է և շատ հին չէ : Աւնի երկու քահանայ , որք միջնադարեան մտօք կառաջնորդէն ժողովրդեան . դպրոցն տիսուր բացակայութեամբն ցաւ կը ներշնչէ ամեն զգայուն սիրտերու :

Աստ կեդրոնական նախակրթարան մը բա-

նալոյ ամեն յարմարութիւն կայ . վասն զի 2-3 գիւղեր կան իւրեան մօտիկ , որոնց անդիր մանուկներն եւս կրնան ամենայն դիւրութեամբ դալ 'ի նախակրթարան և ամբողջ օրն դասառութեամբ զբաղիլ ու երեկոյ տեղերնին վերադառնալ . այլ ուր է նախակրթարանն և ուր զայն բանալոյ ջանադիրք : Գիւղիս 300 տուն ընակիչներն , առանց բացառութեան , հողադորձ են . իսկ առն և տուրը Վանեցւոց և Բաղիշեցւոց ձեռքը կը դանուին . աստ կան բաւական թւրով կրտակներ շինուածքով աննշան :

Ականից մէջ կը նստի դաւառին գայմադամն , ընդ գերիշխանութեամբ Վանայ կուսակալին , և հարիւրապետ մընդիւրեւ ունենալով 100-150 ձիաւոր զօրքեր ի պահպանութիւն և յապահովութիւն ժողովրդեան :

Երկրին Առաջնորդ կը նստի Մեծոփայ վանքը (յանուն Աստուածածնայ կառուցեալ) 3<sup>1/2</sup> ժամու չափ հեռաւոր , որուն վանահայրն ալ է միանգամայն , և ի պահանջել հարկին տեղս կը դայ և կրկին 'ի վանս կը վերադառնայ :

Այս դիւղաքաղաքի դիմուն անցածներն ծերունիք կը պատմեն և իւր ամենաճոխ ու փառաւոր ժամանակէն մնացած է միայն 4-5 տուն չայք , որք ց'արդ ապրած են իւրեանց հացառատ ՍԵՂԱՆԻ շնորհիւ միայն , մնացեալքն ետքէն այլ և այլ կողմերէ եկած են :

Ականից մի Պլենկաղ (պատառատուն զգեստով) Հայ նստած էր վարդենւոյ մը նման կարճիկ ծառի մը շուքին տակ ամառուան Արեւու խայթով ճառադայիթներէն աղատ՝ դոհ կը լինէր բնութենէն կարծելով ինքինքն աւելի բարեբաղդ քան զախակն : Սոյն պահուն իմ անհոգ ուղեկիցք ցիր ու ցան աստ և անդ ցորեկուան հանդիսան կառնէին ու կը զուարճանային , որ 'ի վերջանալն միջօրէի տաքութեան ելնէինք յուղի հանդչելէն : Սօխակի փառաց նախանձորդ այս գիւղացւոյն առընթեր բարեւելով նստեցայ : Դժբաղդութիւնն մի չէր ինձ համար , որ այս ծերուկն չգիտէր խօսիլ ընդ ես զդրոցէն , այլ շատ աւելի դոհ եղայ և ուրախ ի վերջոյ , երբ գիտացի թէ վարժ էր նա զբրոցէն ճառել , որ սկսաւ իւր սիրած վարդի թփան տակն Ուղեորիս պատմել . . . և իւր խօսքերն թէե ճշմարիտ , սակայն ինչ օդուտ որ մտիկ չընելոյ պատճառներով միտքս պաշարեալ էր . մարդոյ պատմութիւնն 'ի գիր առնուլիմյատուկ բաղձանքս էր , զոր դժբախտաբար լնուլ չկըրցայ , զի նոյն պահուն իմ սեւակօթ դրիչ կոտրած էր , որով սիրտս տիսրութեամբ լեցուած : Պլենկաղի խօսքերն պարզ էին և անմեղ , որք կը բղխէին ճերմակ որտէ և առողջ մտքէ : Շատ լաւ ըմբռնեցի թէ ինչ կամէր ասել մեր գիւղացի ծերուկն , զոր միսիթարելոյ համար

ընականէն չէր ինչ պակսիր ինձ մի բան : Ճշմարիտն խօսելով մարդուն խօսքերն այնչափ տռատ էին և նիւթերով լի , որ ինձ կարդ տալ ընաւ չէր ուղեր և ես յայս վայրկենիս երբէք չէի վնտուեր .քաղաքավարութիւն դաշտի եղերքը , որոյ ծոցածին էր աղնիւ Հայն :

Այս ատեն ցորեկուան ժամ վեցն էր , երկնից կամորին վերայ Սրեգական ճառագայթից մէջէն մի աստղ նշմարեցի , որ կը փալփէր յներեւելս , որոյ լոյսն ընականէն ինչ կարժէր , երբ Սրեւու լուսոյ հեղեղն բազկատարած և տիեզերքին ցորեկ բերած կը թագաւորէր ամեն ուրեք : Մեր խօսից շարքին ասացի դիւղացւոյն , որ ապաշ կը թած ինձ կը նայէ , կը տեսնեմ կը րենեցի այս աստղ , ով գեղջուկ , նա շատ լոյս ունի և մենէ աւելի հեռուէ քան թէ Սրեւն , որոյ տաքութենէն փախ տուած՝ կապաստանիս այդ կարծիկ ծառի ներքեւ , երբ դիշեր ըլլայ պէտք է գիտնաս որ նորա (աստեղ) լոյսն մեղ շատ աւելի դգալի կը լինի , միայն թէ երանի այնմ , որ հեռատեսութեամբ դիտէ օդտիլ գերուան այ լուսինէն , ոյր ճառագայթից տակ Զեր կալերու ցորեաններ կը մաքրէք՝ էրան ընելով , զայս ասացի իւրեան կրցածին չափ հասկանալի լեզուաւ մը և բաժնուեցայ իրմէ զինքն թող տալով հոդեկան զուարթ տպաւորութեան մը ներքեւ :

## ԳԼՈՒԽ Ե.

ԱՐՃԵՇ՝ ՀԻՆ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ

Սոյն քաղաքն, որոյ երբեմն հռչակաւոր անուամբ ց'արդ կը կոչուի նաեւ գաւառն . կը գտնուի Ականից Հարաւակողմն և անկէ և ժամ հեռաւոր՝ Աղնունեաց ծովուն եղերքը : Այս պատմական բերդաքաղաքն Յ0-Յ3 տարիէ ի վեր ծովս առած լինելով այժմ կիսաւեր և բոլորովին ամայի դարձած է, տխուր աւերակաց մեծամեծ բեկորներն ծովու աղային ջրերէն շրջապատեալ կը կենան և կրնան երբեմն խորհրդաւոր լեզուաւ մը խօսիլ Ուղեւորաց սիրտերու հետ, որպէս յարաժամ ծովու ալեաց հետ : Աստ կը տեսնուին Զ Հայկական գետնատարան եկեղեցիք և մի մզկիթ, որ դարձեալ Յուրէն կիսով չափ տակաւին կանգուն է : Անտեսանելի չեն նաեւ հին շուկայից և արհեստական բերդի հիմնաքարինքն :

Արճէշ՝ գաւառիս ամենէն շէն և բազմաբընակութիւն ունեցող տեղին եղած է երբեմն, խիստ բանուկ և վաճառաշահ : Ականատես ծերունիք տակաւին կապրին և կաւանդեն հարցանողաց այն ամեն ինչ, որ խրեանց այդ քաղաքի անցելոյն կը վերտքերի :

ՄԵԿՆՈՒՄՆ

Ականցէն մեկնիմք դէպ ի յԱրեւմտահարաւ և 1½ ժամէն կը հասնիմք յԹրօրան : Սոյն

դիւղն 35-40 տուն ընակիչ ունի կիսով չափ Մահմետական : Հայք ունին Ս. Ա.Ս.ՏՈՒԾԱԾԻՆ անուամբ նորաշէն եկեղեցի մը կառուցեալ դիւղական ճաշակաւ, կայ մի քահանայ՝ կրօնական մատակարար, որոյ մարմնոյ մէկ աչք կոյրէ, խակ մտաց երկուքն ալ և այսէ ահա առաջնորդ տեղւոյս մեր աշխարհական ԺՈՂՈՎՐԴԵԱՆ : Դպրոցին գալով արդէն անունն չունի :

Գիւղիս առջեւէն կանցնի Արճու գետն որ երբեմն յանուն գիւղիս կանուանի «Օրօրան», որոյ մէջ գարնան ատեն բաւական թուով մանր ձկունք կը խաղան, որք պարապ գիւղացիներէն կորսացուին :

ԲԼՈՒԻՐՄԱԿ . — Սոյն դիւղն 60 տուն Հայ ընակիչ ունի, նոյնչափ ալ գրեթէ Քուրդ : Հայք ունին եկեղեցի և ունին քահանայ, խակ դըպրոց՝ ի հարկէ «մի օր Աստուած պիտի տայ» գթալով 50 էն աւելի կայտառ մանկանց վերայ : Գիւղը շատ զուարճալի է բնութեան սիրուն տեսարանաւն, միայն թէ ծառաստանքն անպտուղ են : Տեղւոյս հողն շատ զօրաւոր է և մանաւանդ խիստ յարմար բարտի ծառեր հասցնելոյ, այնպէս որ 8-10 տարուան տնկուած բարտին կարելի է համարիլ օրինաւոր հաստ գերան : Ահա բնութեան մի այլ տեսակ բարիք, որմէ անբընագէտ ժողովուրդ զուրկ է օգուտ քաղելէ, վասն զի զուրկ է մտաւոր լոյս վիճակէ : Աստ

կան պարտիզանն (ուսուանձը) դաղթական պարսիկներ, որ շատ լաւ շահիլ գիտեն իւրեանց արուեստովն . ղարմանալի է որ մերայինքն բը-նաւ միտք չունին նորանոր զբաղումներ ունեանալ ցորեանէն դատ :

ԲԱՆՈՒ . — Բնակիչք 45 տուն, ունին Ա. Դէորգի անուամբ սկարդ եկեղեցի մը և պարզագոյն քահանայ մը, իսկ դպրոց ունին ոչ և որոյ անունն իսկ արտառոց մի բան է իրենց ականջին : Բանոն ճանապարհի վերայ լինելով միշտ բաղմաթիւ հիւրեր անպակաս են համասեռէ և մանաւանդ տարասեռէ : Դիւղիս մէջ նշանաւոր արեւշատ (տարեւոր) անհատներ կը դանուին՝ այնպէս որ 80-100 տարի ապրիլն տեղացւոց համար դրեթէ առ հասարակ է :

ՀԱՐՊԻՍԻՆԱԿ . — Ունի 55-60 տուն բնակիչ, եկեղեցի մը և 2 քահանայ, որք կառաջնորդեն ժողովրդեան կոյր զկուրայն, որպէս երբեմն իրենք առաջնորդուած են . վարժարան գնել կը փափաքին, սակայն ծովու չկայ ահա իւրենց դժբաղդութիւնն :

ՅՈՐՈՒԹԻՒՆ . — Բնակութեանց թիւն է 40, բարւոք նիւթական վիճակի տէր . ունին տաճարաւոր գեղեցիկ եկեղեցի մը, որոյ անուամբ կոչուած է և գիւղն, ոյր մերձ կայ մի կոկիկ, և ամայի մատուռ, ուր տարին 2-3 անդամ պատարագ կը լինի և աստ է Արճիշեցի Յովհան-

նէս « ոսպնակեր » մականուանեալ վարդապետի գերեզմանն ։

Գաւառիս գիւղերէն նշանաւոր է մանաւանդ Ա.Ա.Ռ.Ջ. , որ բազմահայներէն մին լինելով հանդերձ , մասնաւոր առ և տրոյ ալ տեղի է և ուղիղ կը լինի ասել « իւր գինւոյ այդիներովն ներչնչեալ է Գողթան գաւառէն » :

\* \* \*

Քաջրերունիք ունիմի քանի նշանաւոր վանօրայք և բազմաթիւ յիշատակութիւնք արթընցնող նուիրական տեղիք :

Գիւղերն ամենամեծ մասամբ կարող են իշրենց յարմար նախակրթարաններ պահել , սակայն ուր են պահել տուողներն , որք Պօլսոյ հըրապարակն կամ լրագրական ասպարէզն աղմբկաւ կը լեցնեն , երբ մի քանի գիւղացի մանուկներ մի տեղ ժողովելով՝ նոցա ձեռք կը տան քերական կամ ընթերցարան :

Գաւառիս Մեծոփայ հոչակաւոր վանքն ամենապատուական տեղի մի է գիշերօմիկ վարժարան մունինալոյ իւր նիւթական վիճակաւն , գիրքովն և մանաւանդ նուիրական պարտականութեամբն , զոր ց'արդ չէ կատարած : Սոյն վանքն , որպէս յիշեցի , կարող է ցորեանի նման իւր ծոցէն դաւառիս համար ուսուցիչներ և ուսեալ քահանաներ դուրս տալ , երբ կամք լինի իներքուստ և կամեցողք յարտաքուստ : Կը ցաւիմ ասելոր Մեծոփայ վանքն ալ Մշոյ Ս. կա-

ըապետի վանուց նման ալճ Քնոբնեի պէս է .  
տխուր զգացմամբ կրկնեմ ուրեմն , զոր ինչ  
շատ տեղեր կրկնած եմ թէ « աստ ևս գործ  
կայ գործող չկայ » :

Քաջբերունեաց կամ Քաջ բերք ունի գառ  
ւառին վերայ այսչափ խօսիլ բառ կը համարիմ  
ու կը մեկնիմ ճանապարհնիս ուղղելով գէպ ՚ի  
յԱրեմուտս , 7-8 ժամէն կը մտնեմք ՚ի գաւառն  
Խոռխոռունեաց , ոյր վերայ խօսիլ որչափ որ ժա-  
մանին կը ներէ Ռւղեւորիս :

## ԳԼ. Զ.

Խ Ո Ռ Խ Ո Ռ Ո Խ Ն Ի Ք

Սոյն գաւառն կը գտնուի նախորդի Արև-  
մտակողմն և այժմ բաժնուած՝ Արծկէ և Ախլաթ  
երկու գաւառակներու :

Այս կրկին գաւառակներէն՝ Ախլաթու վե-  
րայ մեր Տեղադրութեանց Ա. ՄԱՍԻ երես 88-  
96 ի մէջ խօսած լինելով՝ այժմ նկարադրեմք և  
համառօտակի տեղագրեմք զԱրծկէն և ապա  
մեկնիմք տեղէս ընդարձակներ մեր ՈՃՆ , ուղեռ-  
ութով գէպ ՚ի սիրուն և հրաշակերտ Մանաղ-  
կերտ :

ԱՐԾԿԵ (ԱՐՁԱՒԱԶ)

Երկիրն ըսոնային և բլրային է առ հասա-  
րակ , միայն ծովու եղերքներն գաշտային են և  
գեղեցիկ տեսարան մը կընծայեն աչաց հայե-  
լց . կիմայն բարեխառն է և հողն խիստ արդա-

սաւոր, շատ նուազ ջրարրի լինելով հանդերձ, Ռևի պտղատու բաղմաթիւ ծառեր, յորս առատ են ընկուղենիք և ծիրանիք:

Սոյն դաւառն Վան-Տոսպայ կատարեալ ԱՄԲԱՐՆ կը համարուի, որմէ առաջուց առագաստաւոր նաւերն (որոց թիւն 400 ի կը հասնի) ամեն տարի ահագին քանակութեամբ ցորեան կը թափին Վանայ հրապարակին վերայ, ուր արդարեւ սով կը տիրէ, երբ Արճշու և մանաւանդ Արջաւազ դաւառիս ձիւնի նման ճերմակ ցորենի շեղջերն շարան շարան (կարդ կարդ) չը տեսնուին յաչս ժողովրդեան:

Արեւելէն յԱրեւմուտ 40 ժամ երկայնութիւն ունի սոյն դաւառն և Հարաւէն 'ի Հիւսիս 6-7 ժամ լայնութիւն:

Խոռխոռունեաց սահմանն կարելի է այսպէս որոշել, Արեւելէն Արճէշ, Արեւմուտէն Բղնունիս, Հարաւէն Վանայ ծովս և Հիւսիսէն Ալաշկերտու դաւառ:

Դաւառիս պարծանաց սարն է Սիփան լեռն, որ ունի ընդարձակ նստուածք կամ բաղմանդի յատակագիծ, բարձր և մշտնջենաւոր ձիւնապատ դագաթ, ուր ենելոյ համար դոնէ մէկ օր պէտք է: Սոյն հսկայ և հրաբղխային լերան դըլուխը 7-8 արտի մեծութեամբ լեռնադաշտ մի է, ուր կը լինի սառտիկ ցուրտ՝ նոյն իսկ վարդավառի ամենատաք եղանակին: Սիփանայ ձեան ջուրն վերի և վարի Սիփան կոչուած Հայ գիւղե-

ըու ջրաղացքներն կը բանեցնէ , և ջուր կը տայ բնակչաց , որոնք առանց Սիփանայ կեանք չ'ունին : Այս գիւղերն կը գտնուին լերան ծունկերուն և ոտքերուն վերայ :

Արծկէի հետ Ախլաթ գաւառակն առնելով 140 գիւղ հաշիւ կը լինի , 30,000 բնակչոք , յորոց 25,000 Հայ և մնացեալքն Տաճիկ , Քուրդ , և Զէրքէղ են :

Արծկէի Հայոց գիւղերու թիւն 30 ի հազիւ կը համնի , սակայն բաղմաբնակութիւն և միանգամայն մտղմամարդ են , բաղդատամամբ այլասեռ գիւղացւոց հետ : Հայ գիւղերու բնակութեանց միջին թիւն է 50 , ամենքն ալ երկրագործ և շատ քիչ խառնաբնակ : Տարագդի գիւղերու ըընակութեանց թիւն 3-10 միջին հաշուավ , որք լեռնային կողմերն և ցամաքային եղերքները կը գրաւեն . Հայերն կը բնակին մէջ աեղերը և ծովային եղերքները :

Դաւառիս Հայ գիւղերու վերայ տակաւին չ'խօսած՝ նոցա անուանքն , խրեանց հետաքըրքը ութեան համար , աստ կը նշանակեմ և ապա կ'անցնիմ նկարագրել և տեղագրել գլխաւորներն : Ահաւասիկ գիւղօրէից անսւանքն՝ Արջաւագ , Նորշնճիւղ , Կոճրէն , Վերին Սիփան , Վարի Սիփան (\*) , Կուղել , Խոռանց , Բարկատ , Առէն ,

(\*) Սոյն երկու գիւղերն իւրիանց անուանքն առած են գիրքերէն , Սիփանայ ծունկի վրայի գիւղն և Վերին Սիփան» կ'անուանի , իսկ ոտքի վրայինն «Վարի Սիփան» :

Առէնջկուղ (առաջ կոյս), Վիճկացոռուկ, Քարտես  
շել, Արճրա, Բեշնագամիր, Հեքաձոր, Նոր-  
շէն, Կերպուխ, Մանիկ, Մուրիսուս, Հասկէօնուե-  
րէն, Անուշ-Աղբիւր, Խորանս և այլն :

Երկրի Հայ ժողովուրդն արմտեաց մէջ ա-  
մենէն աւելի ցորեան կը ցանէ և տարեկանն  
(չավտար) խուրձերու կապոց շինելոյ համար  
միայն, ըստ որում ցորեան ցանել տարեկան  
ուտելն, կամ նոյն է ըսել, ճերմակ ցանել սև  
ուտելն ամենամեծ նախատինք համարուած է  
իրենց ընտանեկան շրջանակին մէջ « մարդ մը  
պէտք է որ վայելէ իւր աշխատութեան պտու-  
ղըն ». ահա տիեզերական մի սկզբունք, որում  
Մշոյ աշխարհի դիւզացիք անծանօթ պէտք է  
եղած լինին . զի նոքա ճերմակ կը ցանեն և  
միշտ սև կ'ուտեն . սորա պատճառին բացատ-  
րութիւնն գործոյս նպատակէն դուրս լինելով  
՚ի բաց կը թողում :

Հայերն քիչ քանակութեամբ կը պահեն  
նաև ոչխար, իսկ Մահմետականք քիչ հողա-  
դործ և շատ ոչխարաբոյծ են, նման նախորդ գա-  
ւառի բնակչացն :

Դաւառիս Հայք ամեն տարի 2000 քիլէէն (\*)

(\*) Մէկ քիլէն 360-380 օխա է, օխան 400 տը-  
րամ սեպելով : Այս կողմէն, որպէս եւ շատ տեղեր,  
տեսակ մ'օխա ալ կայ, որ 520 տրամ է եւ կ'անուա-  
նի տարածում :

աւելի ցորեան տասանորդ կը տան կառավարութեան և կատարեալ հիւրասիրութեան տիպար կը կրեն տնով և տեղով։ Արդարութիւն է խոստովանիլ որ Քուրդերէն ոմանք ևս սոյն օրինակ ազնուութենէ չեն զուրկ։ Իւրեանց հողագործական արհեստն յար և նման է Արճշոյն։ Լուսաւորութեան կայծ մ'անգամ այս կողմերու չայոց միտքերուն այցելութիւն դժբաղդաբար չէ տուած։ ամենքն են առանց դպրոցի, որով և առանց ԳԹԻ։ Ամբողջ գաւառիս մէջ 3-4 հատ ծաղկոցներ հաղիւ կան, որք չկայէն աւելի կարեկցութեան արժանի պատկեր կը կրեն։

### ԱՐՉԱՎԱԶԱՅԱՑ ԳԼԽԱՒՈՐ ԳԻՒՂԵՐՆ

ԱՐՃԱՎԱԶԱՅԱՑ . Գիւղաքաղաք, որմէ ծնած է գաւառին անունն, 'ի հնումն հին քաղաք և Խոռխոռունեաց ցեղի նշանաւոր տեղին էր, որ այժմ անշքացեալ է, ունի աւերեալ բերդ մը և նմանօրինակ մասնաւոր վայրեր, 70-80 աննշան կրպակներ, որք ամենամեծ մասամբ թրքաց ձեռքը կը գտնուին։

Արջաւազ այս կողմերու առեւտրական կերպնատեղին է, տեսարանն շատ գեղեցիկ և մեն տանց առջեւէն առատօրէն ջրեր կընթանան։ Բնակութեանց թիւն 500 ի կը հասնի, յորըս 30-40 տուն միայն Հայոց են, ողորմելի կացութեան մ'ենթարկեալ եկեղեցիովն և քահանայովն, դպրոց արդէն անուն չունի, զայս դիտնալով սրտիս ցաւէն թէեւ չէի ուզեր խօսք ը-

նել տեղւոյս նկատմամբ . սակայն երբ բնութիւնը կամ լաւ եւս է ըսել արիւնն զիս ստիպեց և ես յանդէտս հնագանդիլ պարտաւորած՝ գրեցի :

ԱՌԻՆ (առ Էն) . — Ամենայն մասամբ նշանաւոր ի գաւառիս , ունի 150 տուն Հայ բնակիչ , դեղեցիկ , այլ անզարդ եկեղեցի մը և ծաղկոց մը , ուր յոյս չկայ ծաղկի մը բացուելուն . Սոյն գիւղն միայնակ տարին 250 քիլէ ցորեանի տասանորդ կըտայ Տէրութեան : Յուլիս և օդուտոս ամիսներու մէջ Վանցի և Բաղիչեցի վաճառականաց թիւն գրեթէ գիւղի բնակութեանց թուոյն հը հաւասարի , որք ապրանք և մրգեղէնք բեռներով կը բերեն և նաւերով ցորեան կը տանին ց'վերջ ուեպտ . ամսոյն :

Գիւղիս համայն բնակութիւնք , մէկ լոյն խորի նման , փոս աղբիւրէ ջուր կը խմեն : Աստ արդիտութիւնն շօշափելի է ամեն կողմանէ , եթէ միօթարական մի կողմ ունին այն ևս երիտասարդաց աշխոյժ և կորովն է :

ԿԵՐՉՈՒԽ . — Ունի 100 տուն , նման տապանոյն , կըտան ցղկայսերն կայսեր և ղԱստուծոյն Աստուծոյ » ու այսպէս կառավարութեան ամբարները կը լեցնեն մեր Կեաղուխի մշակներն . տեղւոյս ընտիր է նաեւ գարին , որոյ հացն ցորենի հացէն շատ դժուարաւ կընայ որոշուիլ :

ԿՈՃՐԻՆ . — Վարի Սիփանի քիչ մը վարօք՝ Վանայ ծովու անմիջական եղերքը : Ունի 50 տուն Հայ և նման է նախորդ գիւղին :

Սքանչելագործայ վանքն , շինուած Սիփառայ մի կողին վերայ՝ սքանչելի տեսարանաւ , ըստ աւանդութեան այս վանուց մէջ կը պահուի . Քրիստոսի մանկութեան ժամանակի լուացման դաշտի մի վոքրիկ մասն , որում ազօթիւք կը դիմեն երբ երկիրն բնութենէն պատճըւի ժանտախտով , ծաղկի կամ այլ հիւանդութեամբ :

Արջաւազ դաւառի եզերաց տարասեռ գիւղերէն զատ , մի քանիք ևս մէջ տեղերը կը դըտնուին : Դաւառն կը պատկանի Վանայ կուսակալութեան :

Այսափ հերիք սեպելով շարունակեմք մեր ՈՒՂԵԼՈՐՈՒԹԻՒՆՆ : Մեզ կը պատահի Սարի սու կոչուած գիւղն , որոյ անուամք յորջորջեալ ընդարձակ , այլ ամայի դաշտօրայք կտրելով կը ժամանեմք ՚ի Տաշկըն՝ քուրդ գիւղակը , ոյր սահմաններն ածխային առատ հանգեր պակաս չեն . բայց անդործ ու անօդուտ կը մնան ծածկեալ հողին տակ՝ բնական այդ հարստութիւնքն : Սոյն գիշերը իջեւանեցանք Սիփան լեռան մի ստորոտ գրեթէ բացօթեայ և ամայի տեղւոյ մը մէջ , ուր որպէս յիշեցի , մինչև առաւօտ փոխան անուշ քուն քաշելոյ , հոգինիս քաղելոյ վերայ էինք :

Դաշկըն գիւղի մէջ կը բնակին մի քանի տուն Քուրդ , որք « շկակ » կանուանին :

## ԳԱԼՈՒԽ Ե.

ՄԵԿՆՈՒՄՆ Ի ՀԱՐՔ ԳԱԽԱՌ

Առաւօտնիս ասու՝ ի Դաշկըն գիւղն ըրած  
եմք և այժմ մեր Արեւն ծագած ենեմք յուղին  
Դաշկընէն 1 ½ ժամ ճանապարհորդելէն  
զինի մեղ կը հանդիպի մի ընդարձակ և երկայն  
ձորակ, որ սահմանն կը կազմէ ընդ մէջ Հարք  
դաւառի (Մանազկերտու) և Խոռխոռունեաց :

ՄՈՒՏՆ ԻՄ Ի ՀԱՐՔ ԳԱԽԱՌ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

ՆԱՀԱՆԳԻ

Այսուհետեւ մեր առնելիք ճանապարհն  
կը կոչուի «Մանազկերտու (Մանծկերտու այժ-  
մեան յորջորջմամբ) քուէն» (քարոտ տեղ), որ  
կը տեւէ 2 ½ ժամ. մեր ճանապարհի Հիւսիս-  
սակողմ մի քանի այրեր կան, զորս սովորաբար  
ժաղարաներ կ'անուանեն, որ այժմ անմարդարնակ  
լինելով չուրէ գաղանաց կատարեալ որջեր եղած  
են:

Սոյն քարագաշտերուն մէջ հազուագիւտ է  
ջուր, ասոր համար բազմաբնակութիւնք չկան,  
միայն ՚ի Հիւսիսակողմնն, բաւական հեռու նոյն  
այրերէն, կը դանուին 3-4 քուրդ գիւղեր՝ 3-5  
տնական բնակուած, որոնք գետնի տակի խո-  
րունկ տեղեաց ջրերով աւելի կապրին քան թէ  
մասնաւոր աղբիւրներով :

Սոյն իւղն բնակութեանց վերաբերմամբ հե-  
տաքրքիր ուղեւորի միտն կը դարձնու բնակա-

նաբար և կուշաւորի , եթէ պահ մը հողնութեան նիւ ննջած իսկ լինի , թէ արդեօք անահ և աներկիւղ այդ կատկածոտ վայրաց մէջ լինչպէս կապրին դոքա խաղաղ և անխռով :

Այս կողմերու արտօրայքն արդարեւ շատ քիչ են , սակայն բուսականութիւնն ընդարձակ և առատ է , լի ծաղիկներով և բուսեղինաց տեսակներովն : Այսպէս ահա կը հասնիմք ի Մանազկերտ , իւր սահմանին մէջ Յ-6 ժամ ուղի կարելէն զինի . սոյն պահուն Տեղագիր-Ռւզեւորիս բերանն ծարաւէն ցամքած , սիրոն չորցած , հողիին յուղեալ և միտքն յափշտակուած էր . . .

### ՄԱՆԱԶԿԵՐՏ ՀԻՆ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ

Հարք գաւառի սոյն իշխանանիսա քաղաքն , զոր շինած է Հայկ Նահապետի Մանաւազ որդին , կը գանուի գրեթէ Ասպահունեաց սահմանակից , Արածանի գետոյն առընթեր , մեր Մահմետական հայրենակիցք զայն կանուանեն « Մելազկերտ » , որ 'ի հնումն նշանաւոր տեղերէն մին էր 'ի Հայս . զարմանալի ընդարձակութեամք , պարխապներով ու այլ և այլ աշտարակներով ամրացեալ : Մենք թողումք տեղոյս պատմականն և տեղագրեմք զոր ինչ տեսած և անձամբ շօշափած եմք ներկայիս մէջ :

Մանազկերտ կը գանուի սեւորակ-քարոտ

մի ընդարձակ և բարեբեր դաշտի վերայ, իւր անուամբ այժմ կը կոչուի նաեւ գաւառն :

Քաղաքիս օդն և ջուրը խիստ առողջաբար հողն բարելից ու տեսաբանն վոեմ է և վեհ . մերձակայ դաշտօրայ.քն քիչ խոտաւէտ , ապա ռաժուտ է և քարերով լի : Գլխաւոր բերքերն են առատօրէն ցորեան , կտաւատ և կանեփ . քաղաքն բոլորովին անծ առաստան է , աստ վոք քիկ ուռենւոյ մը շուքն տամն անգամէն աւելի արժէք ունի քան թէ Պօլսոյ հասարակաց պարտէզներն և այս մասին արդար է ըսել որ բնակիչքն դատապարտելի անտարբերութիւն մի ունին , որ կը թուի յառաջ եկած լինիլ ամառ եղանակին բնութեան ցոյց տուած մասնաւոր զովութենէն , զոր բնակիչքն պարտական են մօտակայ լեռնակարկառներուն , որոց մէջ տեղէն համարեա թէ շարունակ կը փշէ օդն զովարար :

Մանազկերտու այժմեան բնակութեանց թիւն է 200 , յորմէ 85-90 տուն Հայկական և և մեացածն Մահմետական . ամենքն անխորապէս երկրագործութեամբ կը պարապին . աստ մի քանի վոքքիկ կրպակներ կան՝ պատկանող Բաղիչեցի Հայոց , որք բազմաթիւ գիւղերու հետ մասնաւոր առ և տրով կ'զբաղին : Անցնիմք ուրեմն նկարագրել և տեղագրել քաղաքիս ներկայ Պատկերն :

Քաղաքիս մեր դրացի Մահմետականներն

ունին իւրեանց նուիրական վայրերն և բաւական  
հաստատուն են :

Հայք ունին երկու հին և հոյակապ եկեղեցի, մին յանուն Ա. Ս.Ս.ՏՈՒԾՆԾՆԾ.Յ. և միւս  
յանուն Ա. Ս.Ս.ՐԴԾԻ կառուցեալ. վերջնոյն կից  
կայ դրօքն փակելօք մի այլ եկեղեցի՝ դարձեալ  
ոիրուն և դեղեցիկ, որ ամառ ատեն կը ծառայէ ցորեանի ամբարատեղւոյ :

Նախորդ երկու եկեղեցիք ընտիր ճարտարապետութեան դործ են՝ քառակուսի սիւներով: Կրօնական այս տեղիքն չեն և պայծառ սկահելոյ նպատակաւ ժողովրդեան երկու քահանաներէն մին առաջնոյն և միւսն երկրորդին մէջ երեկոյ և առաւօտ կը կատարեն անխափան իւրեանց ժամասացութիւնք, 'ի մխիթար ժողովրդեան, և իրենց տրտում սրբավայրիցն ու չը մոռնամ ասելոյ որ առանց տիրացուի և բազում անգամ ևս առանց գոնէ մէկ հատ փոխասաց մանկան կը կատարեն այդ արարողութիւնքն, զորս իրենք միայն կը լսեն, զի ունկընդիրք երկու կամ երեք խուլ պառաւներ են :

Սոյն պատկառելի քաղաքն շատ իրաւունք ունի արտաքին օժանդակութեամբ ծաղկոց մը ունենալ, որով տեղւոյս բոկոտն մանկանց՝ թերեւս Մանաւաղայ թոռներուն կանոնաւոր կը թութիւն մի տրուի և այսպէս այդ օժանդակողքն միջնորդ հանդիսանան նոցա (ուսանողաց) կլորիկ բերնին մէջ Ա. և Բ. դնելով պատիւ բեր-

րել Աղջին և միանգամայն Տէրութեան , ոյք  
հովանեաց ներքեւ որչափ աւելի ողջամիտ լի-  
նիմք , այնչափ կը յաւելումք փառքն Օսմանեան  
դահուն և կը պսակի գովելի նպատակն նորա  
լուսամիտ Դահակալին : Մանագկերտու Հայք  
ունին 40-50 հատ մանկիկներ ծաղկոցի վերա-  
բերեալ և բաւական թուով մանկիկուհիներ . ա-  
մենքն առ ՚ի չգոյէ դպրոցական տեղւոյ կը խամ-  
բին եկեղեցւոյ մի խոնաւ անկիւնը , ուր ՚ի ձե-  
ռին բռնած են բազմատեսակ դրեանք , զոր օ-  
քինակ շարականի մի կտոր , նարեկէն « ձայն  
հառաջանաց » թուղթ մը , ժամագրքէն « արք  
Տէր օդնեան ինձ » թերթ մը , դործոցէն Պօղոսի  
այլափոխութեան մի քանի պարբերութիւնք . և  
ումանց ձեռք Աւետարան աշխարհաբար (բողո-  
քականի) . զայս ամեն կ'անուանեն դաստիք+ ,  
ուղղութեան վերայ չեմ խօսիր , ըստ որում  
ինքնին մակարերելի է շատ դիւրաւ . ինձ դա-  
լով , ես աւելի ուրախ կը լինէի , եթէ հարցմա-  
նըս պատասխանն « դպրոց չկայ » լինէր , վասն  
զի երբ չկայն կայէն աւելի օդտակար լինի , Ու-  
ղեւորն իրաւունք չունի ցաւ դդալ այս օրինակ  
ծաղկոցի վերայ : Մանուկներն են աշխոյժ և  
կայտառ . այլ որպէս ասացի , են անտէը ու ան-  
տիրական , որով կարեկցութեան արժանի վիճա-  
կի մը մէջ կը գտնուին . խկ իւրեանց հարց  
դալով շատ կարճամիտ են բառին կատարեալ  
նշանակութեամբ :

Շարունակեմք տեղւոյս սըբագրութիւնն  
(նուիրական վայրեր գրելը) : Վերոյիշեալսերէն  
զատ կան նաև հետեւալք . Ա. մի մատուռիկ՝  
յանուն Ս. Ներօխի շինուած , որ այժմ այնչափ  
փոքրացած է՝ որ հաղիւ 3-4 խորանարդ մեթր  
տարածութիւն ունի , որմէ ներս մանել ուզողն  
պարտի խոնարհիլ . Բ. կամարակապ եկեղեցի մը  
(անունն անծանօթ) կը տեսնուի գետնի տակ ,  
որոյ տանիքն երթևեկութեան ճանապարհ է ,  
իսկ մէջն յարդովլ լի . Գ. տաղաւարիկներ թը-  
ւով վեց , յորոց երկուքն անորոշաբար սուրբ կը  
կոչուին և մնացեալ չորսն բարձր ժամանակ (սոքա-  
նման նախորդաց թիւ և յիշատակարան չ'ունին ,  
ուստի որ դարէն կը դան և ինչ անցքեր տե-  
սած են կը մնան անծանօթ տակաւին . դոքա  
տեղացի Հայոց մամնաւոր ուխտատեղիներն են ,  
մանաւանդ իդական սեռի համար , որ ամեն  
շաբաթ երեկոյներն անմոռաց , խունկ , մոմ , և  
ոմանք ևս ձեթ (կտաւատի իւղ) հետերնին առ-  
նելով կը տանին հոն տեղերը ու կը վառեն և կը  
ծխեն կուրծքի տակից մըմնջելով « Աստուած  
ողորմի մեր նախնեաց հոգւոյն » :

### ԳՅԼ. Բ.

### ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Քաղաքիս մէջ Արեւելակողմն կերպարա-  
նափոխեալ մի կրօնական շէնք կը տեսնուի , զոր  
Հայք « Մայր եկեղեցի » կ'անուանեն , թէպէտե-

մայրութենէ իրապէս դադրած լինի : Աւշադրութեամբ դիտեցի՝ որ այդ հինաւուրց շէնքի պատերն սուրբ էին, անկիւններն սուրբ էին, գետիններն ևս շատ տեղեր սրբութենէ զուրկ չէին . վերջապէս այդ օտարացեալ շէնքի ամեն կողմերը լի էին Քրիստոնէական և Ազգային ըզդացման արժանի նշխարներով, զորս պատեհ առթիւ մը համբուրեցի կարօտակէղ շրթամբ :

Աստ մի ծերունի դաւազան ի ձեռին նըստած էր մի պառկած խաչաքարի վերայ, ուր թուականն նայելոյ համար մեր ալեւորին կամ տարեւորին « վեր Ել » ասելոյ պէտք չ'մնաց, խեղճ պապիկն դեռ իւրեան չ'մօտեցած՝ ինքն արդէն երկու մեթրէն աւելի հեռացաւ ինքնարերաբար, պատկառելի, այլ պատկառոտ դիմօք, ես չ'գիտի թիւ մ'այդ քարի վերայ, որոյ դէմքն հրարխային էր, ծաւալով փոքր եւ քանակութեամբ շատ ԾԱՆՅ : Սոյն քարի նկատմամբ ահա ալեւորին խօսքերն, զորս իրեն անծանօթ Ուղեւորիս ուղղեց, երբ հարցում ըրի իւրեն թէ ի՞նչ քար է այս « մեր հին ժամանակի մեծերն այս քարին վերայ ենելով ոտք կը դընէին շնչառա » :

Մանազկերտի յԱրեւելակողմն 3-4 քարընկեց հեռու կայ մի այլ տաղաւարեկ Ս. ԴԱՆԻԵԼ անուամբ, որ ուխտատեղի է ոչ թէ միայն Հա-

յոց այլեւ Քրդաց : Սոյն սըբիկի քովերը կան  
բաւական թուռվ վիթխարի և հնութենէն ծաղ-  
կեալ խաչաքարինք , հսկայաբար յոտին կանդ-  
նած , ոմանք են ընտիր քանդակներով և ծա-  
ղիկներով , յորոց միոյն վերայ գրուած է « թիֆն  
Ո Ի Զ » (626) , զոր Ո. Յ Լ. Դ (1334) թիւէն հա-  
նելով կը մնայ 708 , որ քարի տարեւորութիւնն  
է , որմէ շատ աւելի հիներ կային . սակայն ա-  
ռանց դրի և թուականի ու ոմանք ևս տրդէն  
անընթեռնելի :

Մանազկերտ քաղաքի կեդրոնական տե-  
ղերը կը տեսնուին մի քանի բաղանիքներու ա-  
ւերեալ տեղիք , յորոց միոյն յատակը ասկէ 8-9  
տարի յառաջ օտարազգի բնտկիչներէն մին գե-  
տին փորած ատեն կը գտնէ մեծ քանակու-  
թեամբ կղմինտրներ , որովք իւր համար բնա-  
կարան մը շինել տուած է , որ այժմ շէնքերու  
մէջ ամենէն գեղեցիկն է համեմատաբար :

Դետնի տակն երբեմն հետաքրքրութեամբ  
կը փորեն և դուրս կը հանեն ընտիր մարմարիո-  
նէ փորուած կոներ (բաղնիքի ծորակներու տա-  
կի փոս քարն) , կը գտնուին ծորակներ , պա-  
լատներու հիմունք , պատեր , կոփածոյ լաւ քա-  
րեր , երկաթեղէն , պղնձեղէն , խեցեղէն և ա-  
պաղեղէն հին անօթներ , որոնք կրնան երբեմն  
գործածուիլ իւրեանց անորոշ տարեւորութեամբ  
հանդերձ :

Տեղւոյս կառավարութեան քով պաշտօն

վարող անձերէն միոյն քով տեսի կէս մեթք եր-  
կայնութեամբ մի բանալի , երկու տարի առաջ  
գետնի տակէն դանուած , որ ունէր զարմանա-  
լի արհեստ յիւր վերայ , կը ծալուէր պտուտա-  
կով և կը բացուէր պտուտակով , դոցելէն վերջ  
զմելիի դիրք կ'առնոյր , այլ ափսոս որ ժանդո-  
տած և վտած լինելով իւր արժէքն կորսնցու-  
ցած վիճակի մը մէջ կը դտնուէր : Դետնի տա-  
կէն դուրս եկած են նաև ընտիր խաչաքարինք  
նշանաւոր մեծութեամբ և քանդակներով , յո-  
րոց զոմանս տեսի . աստ հնատէր ուղեւոր մը  
զայրոյժ կ'զգայ մեր այն հին արհեստաւորաց  
դէմն , որ ժամանակին այնչափ հոգնած և չար-  
չարուած են սոյն քարանց վերայ այլ և այլ ծա-  
ղիկներ ու խաչեր փորագրել . սակայն անհոգ  
դտնուած են յիշատակարան և մանաւանդ թը-  
ւական գրելոյ մասին(\*) . սոյն ցաւալի կէտն Հա-  
յաբնակի ամէն կողմ ընդհանուր է :

\* \* \*

Երբ հետղհետէ հետաքրքիր կը լինէի Մա-  
նաւաղայ գետնի դանձարանին վերաբերու-  
թեամբ , ինձ առընթեր նստող Հայերէն մին  
պատմեց թէ « ասկէ և տարի յառաջ այս ինչ  
տեղ գետին կը փորէի , մեր մառանի (+էլու) հի-  
մը ձգելոյ համար , դտայ մարդկեղէն երկու ա-

(\*) Մեր նախնիք՝ կը թուի թէ այս տեսակ պա-  
րագայից մէջ թուականի ապագայի արժէքն լաւ չէին  
ըմբռնած :

հաղին մեծութեամբ գլուխներ , որոնք իրարու հետ քամուած էին երկաթէ ցողով մը և քարի մը վերայ զարնելով կոտրեցի » (Բնչ մեծ քաջութիւն) . սոյն իրովութեան ականատեսք ձայնակցեցան մեր քաջ և խելօք բանկառնեն . այս պատմութիւն Տեղագիր-Ռւղեւորիս մեծ վիշտ պատճառեց , վասն զի հսկայի զլուխներ եղած պէտք է լինէին , որոց մասին անզգայ դիւզացին պարզմորէն կը կրկնէր իր ըսելիքն , յորմէցաւէ զատ ձանձրոյթ մի չէի զգայր :

Շարունակեմք մեր ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆՆ , որ ամենամեծ իրաւամբ պէտք է մանրամասն լինի որչափ կարելի է :

\* \* \*

Դարձնեմք հայեացքնիս մեր շուրջը , ուր պիտի տեսնեմք 8-10 ձիթահաններու և ջրշեղջներու պարիսպներ , որք կիսով չափ տակաւին կանգուն կը կենան հիանալի ամրութեամբ և զարմանալի հիմունքներով , զորս նախնիք շինած են , դիտես թէ , զքաղաքն ապրեցնելոյ ց' դալուստն Քրիստոսի :

\* \* \*

Տարագիր բնակչաց հարիւրաւոր տանց փրւակներն ամեն կողմ լեցուն են խիտ առխիտ , ամեն ոք դիւրաւ կընայ և ազատ է այդ աւերակներէն իրեն համար բնակութեան տեղի մը դրաւել և հաստատել առանց մեծ դժուարութեան մը , ՚ի բաց առեալ փայտն , շինուա-

թեան ամեն տարերք պատրաստ են :

Մանազկերտ քաղաքն ի հնումն ունեցած է օ հատ հսկայական դրունք, մին յԱրեւելս, մին յԱրեւմռւտս, մին ի Հարաւ և միւս երկու քըն ի Հիւսիս . այժմ առնց տեղերն որոշակի յայտնի են և ոմանց տակաւին տեղերու վիթ-խարի քարինքն կը տեսնուին : Ականատեսք կը պատմեն թէ « այդ դռներէն միոյն վերայ ասկէ 35-40 տարի յառաջ հին և հրաշակերտ դռու մի կայր կախեալ, հին օրերէն մնացած » :

Քաղաքի անմիջական շրջապատը կան խը-րամներ հին աւուրց պարիսպներու մէջ տեղե-րըն : Բուրգերէն ոմանք վսեմօրէն տակաւին կանգուն են և ոմանք ևս աներևոյթ եղած :

\*

Յիրաւի տեղւոյս արքայական կամ իշխա-նական շինուածքներն այն աստիճան քար ու կիր և աւաղեռայ կաղմակերպեալ են, որ եթէ մարդիկ արհեստօրէն քանդած չլինէին, ց'արդ-ամեն ինչ իւր նորութեամբ կեցած պիտի լինէր Յուրգերէն հնգի ճակատներուն վերայ կան զե-տեղուած քառակուսի ճերմակ քարինք կէս մեթը երեսով, ուր կը տեսնուին Պարսկական և Արարական համառօտ յիշատակարաններ, գրե-րէն ոմանք աւերեալ են :

Մանազկերտու Արեւելեան Հիւսիսային բուրգի վերին կողմը հայերէն տառերով դըր-ուած է « ի թուականութեան Հայոց Շ Զ Գ (583)

կանգնեցաւ բուրգս ձեռամբ կիրակոսին, Առ-  
տուած ողօրմի ։

Մանազկերտի բուն քաղաքի շրջապատը  
իւր աւերակներով մէկ ժամու տեսզութեամբ  
շրջանակ մը կընայ կաղմել. իսկ արտաքին ոլոր-  
տին Յ ժամէն աւելի կը տեւէ. Սոյն վերջի ըն-  
դարձակ շրջանակին մէջ ևս ամեն կողմերը մա-  
նաւանդ Արեւմտեանն և Հարաւայինն լի են  
մասնաւոր տանց, գիւղօրէից, գետնատարած-  
եկեղեցեաց և մատուռներու աւերակներովն։  
Կան ընտիր ջուրեր, որք այս օրինակ պարագա-  
ցից մէջ արեւակէղ ուղեւորի . . . սիրտն կը զո-  
վացնեն։

## ԳԼ. Թ.

ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ ԵՒ ԿՈՍՊԱՇՏԱԿԱՆ ՔԱՐ

Մանազկերտի յԱրեւմտահարաւ գրեթէ մէկ  
ժամ հեռաւոր « կարմիր վանք » կոչուած տեղի  
մի կայ, ուր 2-3 աւերեալ եկեղեցեաց բեկորք  
կը տեսնուին, որք այս կողմերու Հայ գիւղաց-  
ւոց ուխտատեղւոյ կը ծառայեն, Յիշեալ կար-  
միր Վանք անուանեալ տեղէն քիչ մը տարա-  
կայ ահագին քար մի կայ, որ ունի 2 մետր եր-  
կայնութիւն և  $1\frac{1}{2}$  մետր լայնութիւն, բնականին  
վերայ տաշուած և ձեւակերպուած, որոյ գը-  
լուին տափարակ է և հաւկթաձե, տաշտի նման  
փորուած, զոր Հայք « սեղանի քար » կ'անուա-  
նեն, իսկ Քուրգելն « կեավը քաֆրան » (կռա-

պաշտի քար), որ ըստ ամենայն հաւանականութեան կը կարծուի լինիլ կուռքի մը պատուանդան մեր նախնեաց կռապաշտութեան ժամանակէն մնացած, ոյր վերայ չ'աստուած զետեղելով պաշտած լինին, Այս կողմեր կը տեսնուին նոյնակէս ջրաղացքներու երկայն շարք, մ'որոց թիւն « 300 էն աւելի եղած է երբեմն »՝ որպէս կ'աւանդեն, յորոց ոմանք այժմ տեսանելի են տակաւին և ոմանք ևս հազիւ նշմորելի մնացած, Ասոնց մէջ 12-13 հատ կան, որ կը գործեն և ամեն օր Հայոց և Քրդաց ցորեաններն իաղան,

Քաղաքիս Հարաւակողմն 1½ ժամ հեռաւոր կայ « Սնճան » ըսուած աւերեալ գիւղ մի, որոց նախնի բնակչաց աներեւոյթ թոռանց մեծ պապերու խաչաքարինքն ուռ կանգուն կը կենան, և ըստ Քրիստոնէական օրինաց երեսնին զարձուցած են յԱրեւելս, ոմանք մարմնոյ զանգուածի ծանրութենէն ծռուած են յԱրեւմուտս և ոմանք ևս երեսի վերայ ընկած, յորոց և ոչ մէկի դէմքն կարող եղայ տեսանել, վասն զիշատ մեծ և ծանր էին ու իմ և կարապետիս ոյժերն չեին զօրեր զայնա իւրեանց կռնակին վերայ դարձնել տեսմնելոյ նպատակաւ թէ՝ ունին թուական մը կամ յիշատակադիր և կամ գոնէ մի ՏԱՌ մէսրոպական,

Սոյն գիւղին առընթեր մի մեծ քարաժայ-

ոի տակէն կը բղխի ահազին դետ մը , որ նոյն աւերեալ գիւղի անուամբ « Ծնծանի դետ » կը կոչուի և կրնայ 10-15 ջրաղացներու ուրոյն ուրոյն ջուր տալ : Այս դետն , որ մանր ձուկներ ալ կը մնուցանէ , ունի պատուական ջուր՝ արտասուքի նման վճիտ ու պայծառ , որ Ռւղեւորիս յիշեցնել տուաւ Հայոց Զորոյ Շամիրամն . սակայն այս կողմերու գիւղօրէից ընծայած օ դուտն խիստ աննշան է : Ռւշի ուշով դետոյս ընթացքն և երկրի դիրքը դիտող մը շատ դիւրաւ կրնայ համազուիլ որ եթէ 1000-1500 ուկրոյ դումար մը ծախսելով չափաւոր աշխատութիւն մի ՚ի դործ դնեն սոյն ժլատ դետոյս պէտք եղած տեղ նոր ուղղութիւն տալոյ համար , յայնժամ բաղմաթիւ արտօրէից վերայ կարող է ել նել և անոնց մատակարարել առատօրէն ջուր , որ այժմ յումպէտս կ'ընթանայ : Այս անգութ դետն զինքը շրջապատող արեւակէզ արտօրէից վիզ ծուռ կամ գլխիկոր հասկերուն կաթիլ մի ջուր կը դլանայ , թերեւս չուղելոյ համար բնութեան օրէնքն ունակոխ ընել , որ զինքն չէ ստհմանած առ այդ և կամի մարդոց աշխատութիւնն տեսնել :

Մանազկերտի Սրեւմտեան Հիւսիսային մերձաւոր կողմէն՝ Սրեւելահիւսիսէն դէալ ՚ի յՍրեւմտահարաւ կ'ընթանայ Եփրատէսի Սրեւելեան զօրաւոր ճիւղն , որ կ'անուանի « Արածանի » և կը բղխի Մաղկանց լեռներէն և Տիատին դա-

ւառի գլխաւոր ձորակէն , յորմէ 3-6 մեծամեծ  
աղբիւրներ դուրս կը դան քարաժայռերու տա-  
կից , որք իրարու հետ սիդաբար կը միանան և  
կը կաղմեն զայդ ճիւղն , որ կ'անուանի նաև  
«Մուրատ» գետ , որոյ մէջ կը թափի մեր յիշած  
անդութ Անճանն և ոյր վերայ քաղաքէն 3/4 ժամ  
հեռու . 43 աչքէ մի գեղեցկաշէն կամուրջ կայ  
կապուած , շատ հաստատուն և հին : Սոյն նշա-  
նաւոր կամուրջի մէջ տեղի երեք աչքերն քան-  
դուած են , որով անց ու դարձ անկարելի ե-  
ղած են ճանապարհորդաց համար :

Գարնան ժամանակին գետոյս յորդման տ-  
տեն , օդովլի 42 կամ 46 այծու տիկերէ կազ-  
մեալ՝ անպատսպար տկանաւակաւ մ'անցուդարձ  
ընելոյ պարտաւորեալ են բոլոր ուղեւորք : Այդ-  
տիկերն իրարու հետ կապուած են և իւրեանց  
վերայ ողորմելի ճիւղերէ գործուած վանդակ մի  
կը ձգեն հօրիզոնական դրիւք՝ եղերքն բոլորո-  
վին անպատսպար , ոյր վերայ ուղեւորներն պի-  
տի նստին և 4-5 հոգի միայն կրնայ ընդունիլ .  
կենաց ամենամեծ վտանգն (մահ) աչքն առած  
պէտք է լինի մէկն , որ կարենայ զինքն այդ-  
խզճալի և երերուն տկանաւակին վտահիլ և յի-  
րաւի , շատ անգամ , հակառակ ամեն տեսակ  
նախազդուշութեանց կեանքեր զոհ կ'երթան և  
այսպէս Մուրատէն իւրեանց բուքան առնելով  
կը դնան յաշխարհն մեռելոց . բայց երբ գետոյ  
յորդութիւնն իջնայ , ձիով 'ի գետն մանելով

կ'անցնին կարաւաններն , որք դարձեալ երբեմն  
զոհեր կը տան դժբաղդաբար . . . :

Քանի երախտապարտ պիտի լինի երկիրն ,  
երբ մեր Բարեխնամ կառավարութիւնն յատուկ  
յանձնախմբի մը ձեռամբ մի տեղեկագիր շինել  
տայ Հայարնակ գաւառաց գետերու և վտան-  
գաւոր տեղերու անց ու դարձի վերայ և նորա-  
նոր կամուջներ հաստատել և հինցածներն վե-  
րանորոգել տալ , ուր որ անհրաժեշտ է : Զմոռ-  
նամ ըսելոյ որ ինչպէս հասարակ ժողովուրդ՝  
նոյնպէս և կառավարութեան ամեն կարգի պաշ-  
տօնեայք սոյն օրինակ տեղերէ շատ անդամ ան-  
ցանելոյ պարտաւորեալ են :

Վերոյիշեալ կամուրջի քանդման վերաբե-  
րութեամբ հայախօս մի Քուրդ ինձ պատմեց  
հետեւալն . « ասկէ 40-45 տարի յառաջ Հայ-  
տարանցի թոռուններն (աղնուական ցեղէ) Հաս-  
լանցի քրդաց դէմն կռիւ ունեցան , և Հայ-  
տարանցիք (բնակութիւննին Վանայ գաւառին  
մէջ) երբ կ'իյնան Հասլանցւոց (Մանազկերտի  
գաւառին մէջ բնակուած) ետեւէն , սոյն վեր-  
ջինքն նեղի իյնալով Եփրատէսի երեք աչքերն  
կը քանդեն , որմէ թշնամին այլ ևս չկընալով  
անցանել , իրենք կ'ազատուին » . կ'երեւի թէ  
սոյն կռիւն գարնան եղանակին տեղի ունե-  
ցած է , որ թշնամիք ՚ի գետն մտանել չեն համար-  
ձակեր : Նոյն թուականէն ցարդ անչէն կը կե-

նայ այդ հսկայ և դեղեցկաշէն կամուրջն , որոյ  
Արեւմտահարաւ 4-5 քարընկէց հեռաւորու-  
թեամբ Ս. ՆՇԱՆ անուամբ մի կիսակործան  
տաճար կայ , որոյ չորս պարսպաց կեռերն և վի-  
մաքարն տակաւին կան կանգուն , 'ի յիշատակ  
իւր անցեալ փառաց և ճոխութեան : Յիշեալ  
նուիրական շէնքին թուական չկայ և ոչ մի քա-  
րի վերայ , միայն խաչակիր մի քանի քարինք  
կը տեսնուին աստ և անդ պառկած : Աստ կայ  
մի անուշահամ ազրիւր , որոյ ջուրն «անմահա-  
կան» է և դարափի մը տակէն դուրս կը տայ  
զզզզալով (պաղուկ պաղուկ դուրս տալով) ու  
կը լճանայ կանոնաւոր փորուած քարի մը մէջ ,  
որմէ դուրս հոսելով կընթանայ և դալարեաց  
մէջէն կը թափի 'ի Մուրատ , յորմէ երկու քա-  
րընկէց հաղիւ հեռու է :

Այս պահուն միջօրէի տաքութենէն կը  
նեղուէի , սիրտս չուզեց սոյն ծաղկալից վայրէն  
հեռանալ . սակայն տեղէս ընդ փոյթ մեկնիլ  
անհրաժեշտ հարկ մի էր ինձ համար օրուան  
տարածամութենէն . միտքս զՅեսուն յիշեց որ  
Արեւն կեցնէր , որով կարենայի տակաւին թա-  
փառիլ Մանազկերտի սեւորակ դաշտը :

Ի Մանազկերտ Գայմագամ կը նստի ընդ  
գերիշխանութեամբ Մշոյ միւթէսարրը Փոյթեան  
և ունի ամենամեծ յարմարաւթիւն վերստին մեծ  
քաղաք լինելոյ :

## ԴԼ. Ժ.

ՄԱՆԱԶԿԵՐԸ ԳԱԽԱՌԱԿԻ ԳԼԽԱԽՈՐ ԳԻՒՂԵՐ

Մանազկերտ իւր անունն տարածելով այ-  
ժըմ կը կազմէ գաւառակ մը , որոյ սահմանէն  
տակաւին դուրս չելած՝ խօսիմք հետեւեալ Հայ  
գիւղերու վերայ , ի բաց թող տալով մի քանի  
մանր մունր Քուրդ գիւղօրայք և խառնաբնակ  
գիւղակներ :

Տէրիկ . — Կը գտնուի Մանազկերտի յԱ-  
րեւմտակողմն դրեթէ սահմանակից Ապահուն-  
եաց գաւառին : Դիւզս շինուածէ ցած և ըն-  
դարձակ բլրոյ մը կողերուն վերայ . ունի ՅՅ  
տուն ընակիչ մի եկեղեցի Աստուածածին ան-  
ուամբ , անբաւական , անճաշտկ և մութ , 2  
քահանայ , որք կը սիրեն զիսաւարն առաւել  
քան զլոյս , սոցա մոքերն կը թուին ներգոր-  
ծուած լինել եկեղեցւոյ Թուբէնէն . ոչ դպրոց  
ունին և ոչ ևս ունենալոյ միտք :

Տեղւոյս եկեղեցւոյ վերաբերմամբ տարե-  
ւորներն կաւանդեն թէ « մեր Աստուածածին  
շատ զօրաւոր է , այնպէս որ հին ժամանակ վայ-  
րէ ոչխարներն կուգային իւրեանց յօժար կա-  
մօք եկեղեցւոյս դրան առջեւ կը պառկէին վի-  
զերնին երկնցուցած , յետոյ քահանայն գալով  
և ժամ կ'սպասէր և երբ ոչխարն առաջուան պէս  
պառկած կենայր , յայնժամ կը կոչէր զժամակու-

չըն և ոչխարին օրհնեալ աղ կերցնելէն և երեք  
անգամ զայն օրհնելէն յետոյ և հրաժայէր անոր  
որ զոչխարն մորթէ , որոյ միան կը բաժնէին աղ-  
քատաց և կարօտելոց :

**ՈՐԾՈՒՄԿԵՑՈՒԿ .** — Աւնի 80-90 տուն .  
Թշուէ բնաւոհ անուամի՛ եկեղեցի մը , 2 քահանայ  
որոնց ջանքն դովելի է եկեղեցւոյ շինութեան  
համար . սակայն դատապարտելի անտարբերու-  
թիւն մ'ունին առ ուսումն և դաստիարակու-  
թիւն , թէեւ իւրեանց անտարբերութիւնն ար-  
դարացնելոյ բանաւոր կողմերն ունենան(\*), դըպ-  
րոց արդէն գոյութիւն իսկ չունի . բայց ունե-  
նալոյ մեծ դժուարութիւն մը չկայ , եթէ բացո-  
ղըն Երկրի կեանքն դասի պէս սերտած է . ա-  
հա գործ դարձեալ դործող կը պակսի : Գիւղիս  
տեսարանն լաւէ , օդով և ջրով՝ կենսատու տա-  
րերքներով :

**ՄԵՃԻՑԼՈՒ ՀԱՅ բնակութեանց թիւն է 80**  
յորում կը տեսնուի Յ տուն Քուրդ : Հայք աւնին  
մի աննշան եկեղեցի , 2 խեղճ քահանայ , որք  
ժողովրդեան կառաջնորդէն ՚ի բարին , որոյ վերայ  
չկարծեմ որ դաղափար իսկ ունենան երբ ՚ի նը-  
կատ առնուի դպրոցի անունէն զզուանք զգալնին :

(\*) Սոյն կէցն աստ միշել չեմ ուզեր , դի ներկայ  
գործիս նպատակէն չեղած կը լինիմ , այլ կը թողում  
առայժմ մթութեան եւ իւր ծանրակշխո վիճակին մէջ ,  
զոր հրապարակաւ յուզելոյ մտադիր եմ վաղ կամ ա-  
նագան :

Գիւղիս Արեւմտակողմն իրեն մերձ կայ Ա .  
Յովհաննէս » անուն փոքրիկ որբավայր մը , որ  
ապաէննէ տեղւոյս նեղելոց :

ԽՕԹՈՆԼՈՒ . — Ունի 45 տուն բնակիչ յոր-  
մէ 25 տուն Հայ և մնացեալն կարդացւոր (շեխ)՝  
են , որք շատ ընթերցասէր են :

Հայք ունին հնաշէն ամենապարզ եկեղեցի  
մը , որոյ սեղատի քարերէն ոմանց վերայ կը  
տեսնուի բեւեռագրեանք . ունին մի աղնիւ , ճշշ-  
մարիտ և ուսեալ քահանայ , որ իբրեւ գոհար ,  
ընկած է այս երկաթէ ժողովրդեան մէջ , տեղ-  
ւոյս տրտում եկեղեցւոյն և ժողովրդեան միակ  
մխիթարութիւնն սոյն կրօնական պաշտօնեայն է  
որ փափաք յայտնեց Տեղագիր-Ռւղեւորիս « Կը-  
րօնասէր ընկերութեան մը չնորհիւ ունենալ նա-  
խակրթարան մը , ուր 25-30 ուսանողներ կրնան  
յաճախիլ » :

ԹՈՆՏՐԱԿ ԿԱՄ ԹՈՆՏՐԱԿՈ . — Բնակու-  
թեանց թիւն է 70 , յորմէ 50 Հակական և 20  
Քրդական են . սոյն պատմական գիւղն ունի ե-  
կեղեցի և քահանայ , խոկ գպրոց « Աստուած տայ » :

ԹԱԼՈՒԻՍ ( այժմ Լաթար ) . — Նախնական  
որով և նախորդի նման պատմական գիւղ մի է  
և պարագայիւքն գրեթէ առաջնոյն պէս :

ՄՐԻՊՈՅ . — Սոյն գիւղն շինած է Միհր-  
դատ իշխան : 25 տուն խառն բնակիչք ունի  
այժմ և պահած են ց'արդ իւրեանց գոյութիւ-  
նըն . . . :

ՔԱՐԱՐԼՈՒ. — Ունի 80-90 տուն Արամական բնակիչք, եկեղեցի և դպրոցի շենք. ժողովրդեան նիւթական վիճակն շատ լաւ է: Դիւղիս մէջ 3-4 տուն հացալից տուներ կան, որոնց մէջ տարին 12 ամիս բնաւ արտաքին հիւրեր պակաս չեն:

ՊՈՒՏՆՈՒԿ. — 40 տուն, որոյ մէջ 10 տուն Քուրդ կը գտնուի, որ ունին խոհեմութիւն և բաւական մեղմութիւն: Հայք եկեղեցի ունին, այլ ոչ դպրոց, որոյ ողատճառաւ մանուկնին ողբալի կացութիւն մի ունին:

ԽԱՐԱՐԼ. — Ունի 90 տուն բնակիչ, մեծադոյն մասամբ Քուրդ. դիւղիս եկեղեցի և դպրոց «Աստուած տայ»:

Մանազկերտ գաւառի մի քանի աննշան գիւղերու վերայխօսին զանց ընելով ոճերնիս դէպ ՚ի յԱրեւմուտ յառաջ վարիմք և Զ ժամաւ չափ քարոտ, այլ բարերեր դաշտեր կը տրելէն զինի կը հանիմք յԱպահուհեաց Արեւելեան սահմանը, ուր են վերոյիշեալ տէրիկ և Ռըստամ կէտուկ գիւղերն: Այժմ կը գտնուիմք Մուրատ դետոյ եղերքը մի խոտաւէտ տեղւոյ մէջ և տակաւին չ'մտտծ յԱպահունիս սկէտք է նկարագրեմ տեղւոյս Արեւմուեան Հիւսիսային գիծն:

Աստ Մուրատայ հիւրընկալ ափանց վերայ մի գիշեր իջեւանեցանք, ընկերներէս ոմանք կուլային և ոմանք կը խնդային, առաջինքն ՚ի

պանդիստութեան գիմելոյ պատճառաւաւ . իսկ վեր-  
ջինքն պանդիստութենէն վերադարձ ընելոյ բաղ-  
դին հանդիպած լինելուն համար , իսկ իմ սիրա-  
թէեւ այս պահուս այդ երկու հակապատկեր  
զգացմանց միջնատեղին կը զրաւէր , ուակայն  
դարձեալ ունէի և դարսու մեծ էր ու պէս  
պէս , զորս չէին տեսնէր ընկերներուս աչքեր  
կարճատես : Աստ մի գիշեր ողջոյն անքուն ա-  
կամք հսկեցինք առաւօտ ընելոյ համար , որ-  
պէս զի լոյս տեսնեմք , որով կարաւանի քարձ-  
րահասակ ձիերու կռնակը փակչելով կարող լի-  
նիմք անցանել գետէն , որ բաւական յորդ է և  
զայրացկոտ գարնան եղանակին մէջ :

Մուրատայ այս եզերքը ամառ ատեն գի-  
շերուան ժամ 12 էն ետքը մարդոց արխւնն կը  
ծծեն տեսակ մ'օտային կենդանիք , որոց տու-  
ած վրէժինդրութեան նշաններն ուղեւորաց  
խոնջեալ մարմեյն ամեն կողմեր ուռոցքներով  
կը պատեն և առ այս մի քանի օր անհրաժեշտ  
հարկ է հանդիստ առնուլ , որովէս զի անհետ  
լինին առնուած ծածուկ վէրքերն ընութեան  
սոյն փոքրիկ կենդանիներն մեր այս կողմերու  
Հայ գիւղացիք առաջածովուն կանուանին , իսկ կեն-  
դանարաններն չզիտեմ թէ ինչ անուն կընան  
տալ այս անամոց , որ յարմարի խրեանց վի-  
ճակին , որք նման անսիրտ անասուններու , կը  
յարձակին սլարարտ կամ արխւնոտ ճանապար-  
հորդաց վերայ , յորոց ոմանք խրեանց լողոր-

տիքը, շրջանակի նման, ու ծուխ ընելով մէջ տեղ  
կը նստին ապահով, զի այդ կենդանիք ծուխէն  
կամ մանաւանդ կրակի բոցէն կը փախչին, որ  
իրենց բացարձակ խեղդիչն է :

\* \* \*

Առաւօտ է, մեր յուսոյ արշալոյմն բացուած՝  
անցնիմք խիստ երկիւղալից Մուրատայ ջրէն,  
ոյր երեսը շատ նայիլ չ'գար, քանզի կրնայ նա-  
յողին գլուխն դառնալով ընկնիլ 'ի գետն : Այս-  
պէս ահա բաւական տեղ ճանապարհորդելով  
կը հասնիմք « հաղար հաղար բլուրներ » (ոչն ոչն  
նեկելք) անուանեալ ընդարձակ և խոտաւէտ  
դաշտերն ու բլուրները . այս կողմերը ջուրն  
շատ նուազ է և երկու ու կէս ժամէն կը հաս-  
նիմք հետեւեալ դիւզը :

ՆՈՐԾՈՅԻՆ . — Սոյն գիւղն ունի 60 տուն  
բնակիչ զուտ Հայ, մի եկեղեցի և երկու քա-  
հանայ և մի խամրոց, ուր ցաւօք սրտի տեսի  
30 էն աւելի ժիր մանուկներ, որք առաւօտնե-  
րը՝ իւրեանց դաշտերու զուարթ ծաղկանց նման՝  
ցողերով բացուած՝ կը գան և երեկոյ տերեւա-  
թափ ու թօշնեալ կը վերադառնան 'ի տուն . . . :  
Դիւղիս նիւթական վիճակն բարւոք է . սակայն  
դարձեալ մարդոյ պակսութենէն՝ տեղւոյս նոր  
սերունդն դժբաղդութեան ենթարկուած է :

Նորատին կարեոր գիւղ մի է ամենայն կող-  
մանէ, և կը գտնուի . Խնուսայ դայմագամու-

թեան ներքեւ . ունի խոտաւէտ , ծաղկաւէտ ,  
որով և հոտաւէտ ընդարձակ դաշտեր , որք են  
մեծագոյն մասամբ հորիզոնական դրիւք , այլ  
անջրդի (քիչ բացառութեամբ) :

### ՄԵԿՆՈՒՄՆ

Տեղէս ելնելով իյնամք յուղի , 3 ժամէն կը  
հասնիմք Եօթնագոյն (հաֆն բնի) ըսուած Քուրդ  
դիւղը , որ 45 տուն հաղիւ ընակիչ ունի . բայց  
դրաւած կամ նոյն է ըսել իւր ձեռաց տակն  
ունի 100 տուն գոհացնելոյ չափ ընտիր հողեր :  
Խնուսայ գետն «Կոպալ» (փոքր ինչ ծուռ գաւա-  
ղան) անուանեալ , որ Բիւրակեանէն կը բղխի ,  
դալով կ'անցնի դիւղիս առջեւէն և Ապահուն-  
եաց վերին մասի սահմանագլխէն , ու անդ կը  
միանայ Մուրատայ հետ : Գիւղիս դաշտաց մէջ  
սովորական տեղերէն շատ աւելի ծաղկանց տե-  
սակներ դտնուելով յիշեալ անունն առած լինիլ  
կը թուի , որ աւելի ստոյգ կը լինի անուանել  
դայն « բաղմածաղկանց դիւղ » :

Գիւղէս մինչև Խնուսայ Արեւելեան բուն  
սահմանն երկու ժամու ճանապարհ է . . . . Ես  
կը վերադառնամ Մուրատայ՝ իմ հիւրընկալ  
դետոյ ափերու քով և յաջորդ գլխով կը շարու-  
նակեմ դիմ ՈՒՂԻՆ տարբեր դիծ մը բռնելով ,

\* \* \*

Մեր ուղեւորութիւնն ուղղակի յԱրեւմուտ  
2 ժամ շարունակելով կը մոնեմք հետեւեալ  
դաւառն :

## Գ. Ճ. Ժ. Ա.

ԱՊԱՀՈՒՆԵԱՑ ԿԱՄ ՀԱՅԵԱՅ ԴԱԻԱՌ (Պուանըին)

Տուրուբերան նահանգի սոյն կարևորագոյն գաւառն երկու գաւառակներու բաժանեալ է . Ա. Վերին Պուլանըին , Բ. Ներքին Պուլանըին : Երկու մասն ՚ի միասին առնելով դաշտային է . նոյնպէս ունի պատուական կլիմայ , լաւ ջուր և արգաւանդ հող , որ առ հանարակ թխագոյն է և ջրարրի : Դիւղերն ընդհանրապէս սիրուն տեսարաններէ չեն զուրկ , թէև չլինին ծառաստան . դուն ուրեք կը տեսանին ուռենիներ , ուրոց շուքն ամառ ատեն երթևեկ հիւրերուն անդամ անքաւական է : Պատուական մարդերէ և արտերէ շրջապատեալ են դիւղերն , որոնք ունին նշանաւոր հացատէրեր , ազնիւ և հիւրասէր , սիրտերնին բաց , սեղաննին առատ , աշքերնին կուշտ և վեհանձն են բնաւորութեամբ : (Ի կարգին կը յիշեմ մի քանի գլխաւոր անձնաւորութիւնքն այս կողմերուն : )

Հացեաց գաւառակներու բարերերութիւնըն ինձ իրաւունք կը տայ , որ զայնս ՆԱՐ ՇիրԱկներ անուանեմ , զորս հեռաւոր լեռներէ և մասամբ լեռնագօտիներէ սահմանեալ կրնամք նկատել :

Լերանց մէջ նշանաւոր են Կուլէուուն և Պէտան լերինքն , երկուքն ալ անտառոտ , առաջինն աւելի հաստ փայտեր կը մատակարարէ

քան թէ երկրորդն , այս կողմերու գիւղական շէնքերու ծածքերն կը պատրաստուին յիշեալ լերանց անտառներէն :

Ժողովուրդն առ հասարակ երկրագործ է , կը պահեն նաև ոչխար և ոմանք ընտիր ձիեր , որոնց կոնկին վրայ հեծնողներն նշանաւոր են ձիարշաւի արհեստին մէջ : Եփրատէս որդաճեմ կանցնի գաւառիս մէջ տեղէն :

Սոյն գաւառակներն կը պարծին խրեանց աւետիկ (ցորենի ընտիր տեսակն) ցորենի կլոր հատիկներովն , որովք կը մնուցանեն անթիւ ճանապարհորդք , առանց կրօնի և աղգութեան մէջ խտիր գնելոյ : Երթեւեկողաց կողմանէ հատուցումն լոկ չնորհակալութենէ մը միայն կը բազկանայ , այն ևս եթէ տալյօժարին , զի խիստ շատերն կը մոռնան այդ արդարացի և մարդագարի պարտականութիւնն :

Ահա միտարօրինակ ու հակապատկեր երկու նման օրինակ էակաց մէջ՝ կերողին և կերցնողին մէջ . մին խր ճակտի քրտանց կաթիլներու և անոր արդեանց համար տումար բռնել խր պապերէն չէ տեսած և ոչ ալ խր լուսահոգի քահանայ-վարժապետէն բան մը լսած և կամ դաս մ'առած այդ մասին . միւսն կը զլանայ մեծ հոգիներու առջեւ գոհութեան բառ . մ'արասսանել . մնանողի լեզուն կը հոգնի խօսք մ'ըսել , որ արդէն փորբ տմալիցուցած (ադահարար փո-

ըլ կշտացուցած) է, իսկ սնուցանովին ոչ բազուկներ հոգնիլ դիտեն և ոչ իւր ժրաջան եղներն, որոց վերայ երկրագործելոյ պահուն արդուսեան աշօք կը նայի դիւղացին, կը գուրզուրայ և կը փայփայէ իւր ոգեւորիչ ձեռամբ և առ այս իրաւունք ունի մեր գիւղացին. վասն զի այդ կենդանիքն կը կազմեն դիւղացւոյն ԿԵԾՆՔ:  
Վերոյիշեալ ընդհանուր տեղեկութիւնքն տալէս յետոյ կ'անցնիմ մանրամասնօրէն նկարագրել նոյն գաւառակներն իւրեանց առաջնութեան կարգաւ:

## Պ. Ժ.

### Ա. ՎԵՐԻՆ ՊՈԽԱՆՇԽ

Սոյն գաւառակն կը պարունակէ 15 Հայ գիւղեր, որոնց բնակութեանց միջին թիւն կը ընամք 100 ական տուն համարիլ և մենք գայնս նշանակեմք կարգաւ :

ԿՈՓ. — Սոյն գիւղն, որ կը գտնուի Վերին Պուլանըխի կեդրոնավայրը, կրնայ գաւառակիս գիւղաքաղաք կամ Մայր-գիւղ սեպուիլ, ուր կը նստի գայմագամն ընդ գերիշխանութեամբ Մշոյ Միւթէսարըֆութեան. ունի բանուկ երթեւեկութիւն մը Մանազկերտէն 'ի Մուշ և Մուշէն 'ի Մանազկերտ ևն: Տեղւոյս ժողովրդային կացութիւնն փոքր ինչ գոհացուցիչ կողմեր ունի:

Կոփայ բնակութեանց թիւն է 300 տուն Հայ, 3 տուն ևս եկոմի քուրդեր, ծառայութեան մը-

տած Հայոց քով։ Հայք ունին երեք եկեղեցի, որք են Ա. Ա. Աստուածածին, 30 տարուան չէնք. Բ. Ա. Թուխ մանսուկ, 63 տարուան. Գ. Ա. Գէորգ, որ չունի իւր շինութեան թուական և ոչ իսկ գործածելի է։ Ամեն եօթնեկի իրիկունները վերջի մատրան ներս և դուրս կը ժողովին և կարգաւ կը վառեն մօմ, և 'ի ճրագի կը լեցնեն նուիրական տլուղէն (շատ փոքր բարչ կամ  $\frac{1}{2}-1$  օխա պարունակութիւն ունեցող սափոր) նուիրեալ ձէթ, յետոյ կը ծխեն խունկ, որոյ բուրումն պառաւ կանայք երեսնին առնելով կը խաչակնքեն և փառք կրտան Աստուծոյ, որ այդ մատուոիկ պահպանած է մինչեւ ց'արդ։ Ունին հինգ վեց հատ քահանայ, ողորմելի մըտօք, այլ բարեպաշտ զգացումներով։ Նախակըրթարան մը, օր Վերին Պուլսնըխի մէջ առաջին լինելոյ յաւակնաւթիւնն ունի, և ուր կուսանին 50-60 աշակերտներ, կայտառ և ժիր։ Նախակըրթարանին դասասուն է վահան Մարտիրոսեան անուամբ Լիդցի երիտասարդն, որ մի և նոյն ատեն կառավարչի պաշտօնն ալ կը վարէ։ Դասասուն թէե կարող, այլ դըութիւնն ապարդիւն կընէ իւր ջանքերն, զորս անձամբ տեսի և գովեցի զինքն, որ օժտեալ էր աղնիւ յատկութիւններով։

Աստ անհրաժեշտ է կանոնաւոր նախակըրթարանի մը բացումն։ Դիւզո ազգային տեսակիտով մեծ արժէք և կարեորութիւն ունի։ սա-

կայն զայնս իւրեան տալու է կըթական ուղղութեամբ : Ներկայ դասատուն , որպէս վերև յիշեցի , թէև լինի բաւական զարգացեալ և ազնիւ բնաւորութեամբ , այլ անբաւական է , ըստ որում դպրոցական ՀՅԱՀԱՆԳՆԵՐՈՒ պէտք ունի . իմ սիրան շատ կը յուղուէր ամեն անդամ , երբ կը տեսնէի տեղոյս տռոյդ մանուկներն և անձնանուէր դասատուն :

Կոփայ Հարաւային Արեւելակողմն 1/4 ժամ հեռու է Ս. ԴԱՆԻԵԼ կոչուած սիրուն մենաստանն , ուր Միացեալ Բնկերութիւն բարձրագոյննախակրթարան մունէր , երկու տարի յառաջ և այժմ գոցուած . թէ ինչու , պատասխանն Տեղագրութեանս նպատակէն թէև քիչ հեռու . բայց շատ ընդարձակ լինելով աստ անյիշատակ թող տալոյ պարտաւորեալ եմ , թէպէտ ներշնչուած լինիմ այս պահուս խղճիս յանձնարուած ինդիրներէն :

Կոփայ Ս. Դանիէլ վանքն ունի երկու երեք վարդապետ և մի քանի խոտաղ , մշակ , կով , եղ , ոչխար , ընդարձակ և ընտիր արտօրայք : Սոյն վանքն գաւառիս լուսաւորութեան միջնորդ կընայ հանդիսանալ , եթէ պէտք եղած խնամք տարուի կըթութեան և դաստիարակութեան գործին : Վանուցս ջուրն նուազ է , որպէս և բարոյական լոյսն , ասոնց երկուքն ալ ձեռք բերելոյ համար բնաւ դժուարութիւն չը

կայ՝ երբ ԿԱՄՔ լինի : Ս. Դանիէլ զուրկ է նաև դրական կեանքէ :

ՇԵԽ-ԵԱՂՈՒՊ . — Սոյն գիւղն կը գտնուի նախորդի յԱրեւելահարաւ շինուած զառիվայր-ներու վրայ . ունի բաւական լաւ տեսարան և փոքր ինչ անպտուղ ծառաստան : Բնակութեանց թիւն է 150 . ունին եկեղեցի և մի ծաղկոց ան-յարմար շենքով , որ ամառուան համար է մի-այն , իսկ ձմեռը կը մակաղաւին ախոռի մի ան-կիւնը , կը տաքնան անասնոց շունչերով և կ'ու-սանին պարզ դասատուի մը մտքով . մանկանց թիւն 40 էն աւելի է , որոնց Հայրերն դժբաղդա-բար նախանձելի բնաւորութիւն ունենալէ հեռու-կը գտնուին : Աստ կայ մի քանի տուն բողոքա-կան՝ Հոքոյն Աբբայ ուստիեաւ , որք զայլս որսալոյ արհեստին մէջ քաջ հմտութիւն ունին : Տեղւոյս ուսուցիչն աղնիւ և առաքինի է , այլ կարօտ գըպ-րոցական ՀԻՇ.ՀՈՆԴԻ , զոր կրցայ իմովսանն իւր-եան տալ . վերջապէս գիւղիս նոր սերնդեան կրթական վիճակն զիս իրաւամբ . օրն ՚ի բուն բանտարկեց տեղւոյ մի խոնաւ անկիւնը , որմէ երկօրեայ գլխի ցաւ մը ժառանդեցի և որում համբերեցի առանց տրտունջի , վասն զի սիրով բնակեցայ հոն և ոչ բռնութեամբ , մանաւանդ որ հաւատացի թէ կրթական տեսութեամբ օ-գուտ մ'ընծայեցի 40 էն աւելի Հայ մանկանց ապագայի զարգացման համար :

ԽԱՉԼՈՒ . — Հայ գիւղ , որոյ 20 տարի ա-

ուաջ եղած 50 տուն բնակիչներէն այժմ հազիւ  
7-8 տուն մնացած են . իւրեանց դրացի են այ-  
ժըմ 35 տուն Քուրդ եկաւորք , որք լաւ կ'ապ-  
րին ապրած բնիկներուն հետ : Գիւղիս գերեզ-  
մանատանց քարերն աստ և անդ թաւալած են  
և ոմանք ևս կը դործածեն շինքերու համար  
առ ՚ի չդոյէ այլ քարանց : Աստ ուղեւորի աչքին  
առջեւ կայ ընդարձակ դաշտ մը , որոյ մի կողման  
վերայ դարձեալ կը տեսնուի մի Հայ դիւզ ա-  
ւերեալ , որ « խաչան » կ'անուանի , ուր չկան  
մարդ և անասուն , խաչն և արջառ : Գիւղիս  
առընթեր կը դտնուի Խաչլուանայ սիրուն լճա-  
կը , ոյր շրջապատն  $11\frac{1}{2}$  ժամ կը տեէ : Սոյն լը-  
ճակն երբեմն վերոյիշեալ աւերակ դիւղի ան-  
ուամբ կը կոչուի « խաչան » , որ անուշ ջուր ու-  
նենալով հանդերձ , իւր մէջէն անուշ ջրոյ յոր-  
դումներ ալ կան , երկրի արգանդէն դուրս տը-  
ւող : Խաչանն կ'ոռոգանէ Շէխ-եաղուպայ լայ-  
նատարած դաշտերու մեծադոյն մասն :

Մի երկայն օրուան կէս-օրինն էր , որ հա-  
սայ Խաչանի ափանց քով , ինձ հետ ունէի , բաց  
՚ի կարապետէս , մի կարճահասակ քահանայ , դա-  
շտ քիչ դրել ու կարդալ դիտէր . բայց տեղ-  
ւոյ ընութիւնն չէր զլացած իւրեան ներշնչելոց  
բանաստեղծական հանճար մը , զոր յանդէտս ցոյց  
կը տայր ինձ իւր խօսից մէջ . այս պահուն Խա-  
չանի եղերաց ալիքներն , Հարաւային կողմերէն  
շարժեալ , կ'աղմկէին մեր ճանապարհի տեսակ-

ցութիւնն այդ պլուզ քահանային հետ . խոր-  
հուրդներով միտքո յանկարծ պաշարուեցաւ թէ  
արդեօք ինչ կամէին տոել ալիքներն , որոց լե-  
զուն բնութիւնն չէր կապած , միայն թէ ես չէի  
կընտր հասկու , իսկ քահանային անուս և անգէտ  
հմուտ էր նորա լեզուին և մտքին , այլ չեղաւ  
թարդման ինձ համար , զի յոյս չունէր թէ լսե-  
լի պիտի լինէին այդ լճակի . . . ձայներն Ռւզե-  
ւորիս կողմանէ :

ԽԱՐԱՊԱ. Շէջի՞ . — Ունի չէն անցեալ մը .  
այժմ 20 տուն Հայ և կը դանուի Պլեճան լերան  
ստորատը . սոքա շատ պարագայից մէջ կը մխի-  
թարուին ոչ թէ յիշեալ Խաչանովս , այլ 'Իխաչ  
հանեալովս , յանուն որոյ օծեալ ունին շատ քա-  
րեր այդ հին քաղաքին մէջ :

ԲԼՈՒԻ . — Յար և նման նախորդ գիւղին :

ԲԻՐԱՆ . Սորա բնակութեանց թիւն է 30 ,  
ունին հին եկեղեցի մը և նոր քահանայ մը , ո-  
րոյ հետ բաւական երկար տեսնուելոյ տուիժ  
ունեցայ . դա հոգեւոր պաշտօնեայ լինելով՝ բը-  
նաւ խօսիլ չէր ուղեր հոգւոյ աշխարհի բանե-  
րուն վերայ , այլ միշտ զիւրեանց մարմնաւոր  
կեանքէն առատարար կը պատմէր և իւր պատ-  
մութիւնքն լի էին քաղցր և աւելի թթու դէպ-  
քերով և կոկիծներով , որոյ գարման մը տանիլն  
ուղեւորիս համար չէր :

Այս պահուս միտքս չունէր հաճութիւն  
քահանայի բոլոր ըսածներուն ուշի ուշի ուն-

կըն դնել, զի մեկնելոյ ժամս կը մօտենայր և ա-  
պա հարցուցի թէ ի՞նչ է ձեր եկեղեցւոյ անու-  
նըն, տուած պատասխանն աստ նոյնութեամբ կը  
նշանակեմ, զոր միտքս լաւ կը յիշէ «օրհնած  
աղա, ես ի՞նչ գիտեմ, որ կը հարցանես մեր ժա-  
մու անուն, իմ գիւղի ժողովուրդ էլ չգիտեր  
էտա բան, վարժապետ ալ չկայ որ սորվեցնէ  
ամենեցուն » այս խօսքն ըստ թէ չէ յարեց  
«մենք մեր պարտերէն մէկ օր Քրիստոսի անու-  
նըն էլ պիտի մոռնանք, դու եկած ես ինոր ժա-  
մըն կը հարցանես » : Ինչ որ է, Բիրան գիւղի  
եկեղեցւոյ անունն ինձ անծանօթ և այլակըն  
կարապետիս անհաւատովի, ես մեկնեցայ հե-  
տեւեալ գիւղը, որ Կոփայ յԱրեւելակողմն կը  
գտնուի և գրեթէ Ապահունեաց և Մանազկեր-  
տի միջաստհմանն կազմաղ գծին կը պատկանի :

## ԳԼ. ԺՊ.

### ՄԵՃԻՏՈՒԻ ԳԵՂԶԿՈՒՀԻՆ

Ի Մէճիտու գիւղն տակաւին չժամա-  
նած՝ ճանապարհին դէպ ՚ի մեզ կուգայր գիւ-  
ղի պառաւ տանտկիններէն մին, ոյր կ'ընկերա-  
նայր կորովի գեղջկուհի մը, սափորն ՚ի յուս . ա-  
ռաջինն կը թուէր լինիլ մեծ մայր վերջնոյն և եր-  
կուքն ալ գիւղէն չէին շատ հեռու ու երբ մեզ  
մօտեցան՝ ես չկրցայ շուտով ճանաչել այդ ա-  
րարածներու կամ հողածիններու ազգութիւնն .  
վասն զի զգեստուց տարազն տարբերութիւն մը

չեր դրած , որ չկարծէի զիրենք քրդուհի : Դեղջ-  
կուհին արդէն ճանապարհէն շեղած էր պատ-  
կառոտ և ամօթխած , աւելի իւր ողորմելի մեր-  
կութենէն քան թէ պատկառելոյ պարկեցու-  
թենէն : Մեր աղքատ գեղջկուհին թէ լինէր  
Մարուհի ես տակաւին զայդ գիտեմ ոչ , միայն  
թէ բաց էին իւր ուսերն և սափորի չուանէն  
կապտագունած ու կաշի կտրած էր , որ անսո-  
վոր չէ մի բան Պօլսոյ ջրհանկըաց կարդին մէջ .  
իսկ պառաւ մամիկին գալով սա ճանապարհէն  
դուրս չեր շեղած՝ միայն թէ ճերմակ , այլ շատ  
աղտոտ լաչակաւ մը իւր բերանն կը ծածկէր  
մինչեւ գթի վերնամաշկն կամ աչքերու լճի ա-  
փունքը , ուր գարուն չեր տիրեր : Պառաւն չու-  
նէր ոչ մի բեռ յիւր կռնակն , այլ նա արձակ էր  
ու համարձակ և տեսաւ խումբ մը վառեակներ .  
հոս է ահա հետաքրքիր մի տեսարան թէ այդ-  
գերեզմանի մերձաւորն ո՞րպիսի արագութեամբ  
և վարպետութեամբ բռնեց զվառեակն ուխտա-  
ւոր : Նախ դոդնոց շարժելով ընտանի ձայնիւ մը  
ձիւ ձիւ կանչեց , վառեակներն ամենքն մէկէն ,  
իւրեանց սովորութեան համաձայն , շատ մօտիկ  
եկան , հաւքուեցան շրջապատը մեր մամկին , որ  
անմիջապէս հանեց գրպանէն ափ մը գարի և  
անոնց նետեց . վառեակներն մինչ դլխիկոր գա-  
րին կը քաղէին (գետնէն կ'առնէին) անոնց մի-  
ոյն պոչէն յանկարծակի բռնեց և անմիջապէս ՚ի  
դիւղ վերադարձաւ , զոր հեռուանց կը դիտէի

տեսնելոյ համար խեղճ վառեակի վերջի վախ-  
ճանն : Հայուհի օրիորդն արդէն անուշ ջուր բե-  
րելոյ գնացած և վերադառնալոյ թերեւս մօտ  
լինէր :

Գիւղիս առընթեր տեսի մի այլ աղբիւր ,  
յորմէ բազում կանայք և աղջկունք ջուր կը տա-  
նէին (\*) : Քղիրն (գիւղի հիւրընկան) զմեղ հիւ-  
րընկալեց մի հինաւորց տունը , ու քիչ մ'ետք  
երեւցաւ մեր պառաւն , որ վառեակն ճարտա-  
րօրէն բռնած էր , մինչ այս մինչ այն տեսնուե-  
ցաւ նաեւ օրիորդն , յոյնժամ գիտացի թէ եր-  
կուքն ևս մեր հիւրընկալ յարկին կը վերաբե-  
րէին , որոյ տանտիկինն էր պառաւն , ոյը թոռնիկն  
էր պարկեշտափայլ օրիորդն . արդէն ջուրն և  
գիւղի աղբիւրն միտքէս չէին ելած , քովս նըս-  
տողին աղդ ըրի՝ որ հարցուց տան մեծ մօր թէ  
« ահա գիւղի մէջ մաքուր աղբիւր , աղջիկդ  
(թոռնիկն) է՞ր հեռու խրկած ես ջուր բերել »  
նա բարձրածայն առ այս տուաւ պատասխանն  
« հիւր ունիմ լեզու չ'հասկցող , որդիս , աւելի  
անուշ ջուր կուղէ , որ հուր չ'կտրի գլխիս և այս  
վառեկն (վառեակ) , որ իւր ցորեկի ճաշն է ,  
ճախած եմ իւրան (իւրեան) 20 հարացի , էն էլ  
թէ կուտայ թէ չիտար Աստուած գիտէ » :

(\*) Ըստ գիւղական սովորութեան , տան համար  
պէտք ըլլալիք ջուրն կանայք եւ աղջկունք կը բերեն ,  
իսկ կենգանեաց համար եղածն առ հասարակ արական  
սեռին կը պատկանի :

Այս պահուս գեղջկուհի օրիորդն սափորն լեցուցած՝ վերադարձաւ յիւր տնակն , պաղ ջուր տալ իրիկուան հիւրեկին , որ տան մի անկիւնը թոթոշացած՝ (հոգարտօրէն բազմած) կը ժպտէր ջրաբերին և գոհ կը լինէր :

Սոյն յարկն , որպէս վերեւ ասացի , հիւրասիրեց և զիս կարապետիս հետ մէկ ժամէն աւելի և ոչ պակաս . ուստի չնորհակալութիւն տանուտեառն և պառաւ տանտիկնոջ , գոհութիւն իւրեանց հացալից սեղանին և կրկին չնորհակալութիւն մեր մամիկին , որ մորթուած վառեակէն չ'մոռցաւ մեղ ևս արդար բաժին մը հանել : Ճշմարիտն խօսելով այս պահուս իմ ախորժակն գոցուած էր և կարապետիս բացուած , որ կշտանալ չդիտէր և իրաւունք ունէր , զի հետիոտ էր . իսկ իմ կըած փոփոխութիւնն դարձեալ գաղտնիք մի էր բնականէն ներշնչեալ , ուրով հացի սեղանէն ետ քաշուեցայ և նստայ լուռ ու մոտահոգ . սակայն նորէն քաջ ճանաչեցի , որ ջրաբեր գեղջկուհին այս դարաւոր և հիւրընկալ տան ՆԱԶԼՈՒՆ էր , որ մոմի նման կը վառուէր (ամեն հրամանի պատրաստ դըտնուիլ) տան հին հիւրին հանդէպ , որ նորեկ լինելով գիշեր մի ևս կենալոյ վրայէր : Օրն մեղ համար տարաժամէ , մենք խօսիմք նոյնպէս դիւղիս վերայ և մեկնեմք անյապաղ :

Մէճիտլուն , որ կոփէն ՀՂ ժամ հեռու է , ունի 85 տուն Հայ բնակիչ , յորս մի քանի տուն

քուրդ են : Հայք ունին մի աննշան եկեղեցի և  
տղիտութեամբ նշանաւոր երկու իրարու հետ  
անհաշտ քահանայ, որք ժողովրդեան կը կարա-  
պետեն, այլ ես չգիտեմ 'ի չարն թէ 'ի բարին,  
ոյր վերայ չհամազուեցայ թէ գաղափար ունե-  
ցած լինին . իսկ դպրոց կամ աղէկ է ըսել իւր-  
եանց կոյր մտաց լուսատու ճրագն մարած էր :  
Գիւղիս յԱրեւմտակողմն Ս. Յովհաննէս անուամբ  
սրբիկ մի կայ, ոյր վերայ մեծ յոյս դնելն, ա-  
ռանց գրել և կարդալոյ, չգիտեմ յիմարու-  
թիւն է թէ իմաստութիւն է :

### ՄԵԿՆՈՒՄՆ

Մէճիտուէն ելնելով ուղինիս դարձնեմք  
յԱրեւմտատա, կ'անցնիմք կոփայ քովէն և Արեւ-  
մտեան հարաւային ուղղութեամբ  $1\frac{1}{4}$  ժամէն  
կը համնիմք հետեւեալ գիւղը :

Ե0ՆՃԱԼՈՒ. — Գիւղս ունի 450 տուն Հայ,  
յորս 6-7 տուն բողքական հայ կը գտնուի,  
առիթներէ օգուտ քաղելոյ հետամուտ : Ունին  
եկեղեցի և քահանայ, իսկ դպրոցին գալով  
յիրաւի բաւական յարմար շէնք մը պատրաստ  
տեսայ, բայց չմոռնամ ըսել որ փակեալ էր, և  
շատ քիչ անդամ կը բացուէր, որպէս Ռւղեւո-  
րիս պատմեցին, և ում հոգ թէ 60 էն աւելի  
մանկանց ապադայն ևս նման օրինակ փոփո-  
խութիւնք կը ելոյ ենթակայ կամ խաղաղիք կը  
լինի, այսինքն քիչ անդամ կը բացուի և շատ  
անդամ կը դոցուին :

Եօճնալուն օրինաւոր նախակըթարանի մը պէտք ունի , որպէս սովետան հայի . մխիթարութիւն է ըսել որ նիւթական վիճակնին լաւ է , բայց չեմք կրնար չցաւիլ երբ զգացմամբ առ հասարակ աղքատ կացութիւն մի ունին :

Սոյն գիւղն թէպէտև ծառաստան չէ . սա կայն ունի գեղեցիկ տեսարան . իրեն առջևէն կ'ընթանայ Եփրատէսի օժանդակն կամ մեր յիշած Մուրատ գետն , զոր իրենք « Աեւ » գետ կ'անուանեն , որոյ սպայծառ ջուրն շատ տեղեր հանդարտօրէն կ'ընթանայ , և երբ գիւղիս քով կը հանի , պղտոր զոյն մը կ'առնու , ճիշդ նման տեղւոյ բնակչաց մոքերուն և սիրտերուն :

Շեր-ՎԱՆ-ՇԵԽ . — Ունի 400 տուն , մի եղեղեցի և վարժարանի կոկիկ շենք մը , դասառու մը պարզ , այլ օգտակար լինելոյ ճգաթափ 40-50 ուսանող և երկու քահանայ քարի յատկութեամբք օժտեալ : Գիւղս ունի լաւ տեսարան , այլ անծառաստան , և բլրային լինելով տեղւոյս օդն շարունակ կռուոյ մէջ է և այս պատճառաւ ուղեւորներն շատ անդամ պարտաւորեալ են աչք գոց քայլել կամ յայս գիւղ չմտնել . աւելորդ իսկ է ասել թէ բնակիչքն վարժ լինելով համբերող են բնութեան այդ անհանդարտ վիճակին , որուն գէմ բողոք բառանալն հարկ և ուղեւորիս իրաւունքն էր . բայց բնութենէն մեծ գատաւոր մ'ուր կարող էի տեսնել և մարմնաւոր աչք ինչպէս հնար՝ երբ

Աստուածախօս Մովսէսի Սինայ լերան վերայ  
ոնեցած զարհուրանքն մեր աչքին կամ մտքին  
առջեւն է :

Աստ մի հարիւրապետ 400 այրուձիով կը  
բնակի, ի բարեկարգութիւն այս կողմերու, և բա-  
տուդիւ խօսելով՝ շատ աչալուրջ են յամենայնի :

Դիւղիս նահապետական տուներէն առա-  
ջինն է Դաղար աղայի տուն, ուր 13 այլակրօն  
հիւրերու և կարապետիս հետ ցորեկուան ճա-  
շերնիս ըրած՝ մեկնեցանք հետևեալ գիւղը, որ  
նախորդի յԱրեւմոեան Հարաւն է և անկէ կէս  
ժամու չափ հաղիւ հեռաւոր :

ՀԱՄՉՈՒ-ՇԵԽ .— Դիւղս նախորդի նման ըն-  
դարձակ զառիվայրի վերայ կը գտնուի, լայնա-  
տարած նստուածքով. ունի 150 տուն Հայ բը-  
նակիչ, եկեղեցի, քահանայ և դպրոց, ուրախ  
եմ ըսել որ տեղւոյն բնակիչներն ալ Շերվանշեխա-  
ցոց պէս կարգալ ու գրել կը սիրեն. դասա-  
տու մի ունին, որ լաւ կը գոհացնէ ուսանողաց  
միտքերն, միայն թէ անբաւական է 50-60 մա-  
նուկներ նայելոյ. ուսանողաց թուոյն  $\frac{2}{3}$  մասն  
կը պակսի ամառ եղանակին :

Աստ կը գտնուին նշանաւոր ձիավարժու-  
թիւն ունեցող մի քանի Հայեր, յորս տեսի 90  
տարեկան ճերմկած ծերունի մը, հասակաւ  
պարթևական և սրտիւք աղնուական, որուն  
հետ տեսնուելուս ատեն իւր այդ տարեւորու-

թեան մէջ ունեցած առողջ և զօրաւոր կաղմաւ.  
թեան վերայ շատ ուրախ կը լինէր :

Նախորդ դիւղէն ելնելով շարունակեմք  
ուղինիս դէպ 'ի Հարաւ և երկու ժամէն կարող  
եմք հասնիլ հետեւալ տեղին :

ԵՕԹՆԶՈՒԻԾ . — Սոյն դիւղն կը բաղկանայ  
405 բնակութիւններէ . ժողովուրդը մեծագոյն  
մասամբ բարւոք նիւթականի տէր է . ունին Ա.  
Թ.ՌՈՒԽ ՄԱՆՈՒԿ անուամբ մի եկեղեցի , շինուած  
կոփածոյ սեւ և գեղեցիկ քարերէ , միայն թէ  
առաստաղն ցածր է իւր ընդարձակութեան  
նայելով և այս անշուշտ 60-70 տարի յառաջ ,  
շինող ճարտարապետի ճաշակն է : Ունին երկու  
քահանայ՝ բաւական սիրողք խմաստութեան .  
նոյնպէս նախակրթարան մը 40 հատ աշխայժ  
սլատանիներով , դպրոցական կանոնաւոր շէնք  
կը պակսի , դասատուն աշխատասէր և տոկուն  
մի անձ է : Նախակրթարանիս յատուկ խնամք  
կը տանին Արժ . Տ. Տաճատ քահանայն և դիւ-  
ղապետ Հայրապետ աղայն՝ որ ազնիւ և հեղ  
բնաւորութեան տէր է , իմ շնորհակալութիւնն  
իւրեան կը յայտնեմ այն հիւրասիրութեան հա-  
մար , զոր Տեղագիր-Ռւղեւորիս ցոյց տուած է  
իւր նահառետական յարկին տակ , ուր ամեն  
ատեն արտաքին հիւրեր անպակաս են . ինքն է  
եկեղեցասէր և միանդամայն ուսումնասէր :

Դիւղիս հեռաւոր սահմանները կան բաւա-

կան թուով բլուրներ , յորս նշանակելի է Զոր-  
տունի կոչուածն , ոյր վերայ աւերեալ պանդոկ  
մի կայ , և որոյ պարսպաց կանոնաւոր քարին-  
քըն , շատ անգամ այլ և այլ տեղերէ կը գան ու  
կը տանին շինութեանց համար : Յիշեալ բլույ  
դլուխը կը տեսնուի կիսակործան եկեղեցի մը ,  
դրեթէ 20 քառակուսի մեթը ընդարձակու-  
թեամբ , որոյ խորանն համեմատապէս մեծ է .  
սոյն աւերակի նկատմամբ ականատեսք կը պատ-  
մեն թէ « 1880 թուականին նոյն խորանի տակէն  
փոքրիկ ոսկի խաչ մը գտնուեցաւ քրդու մը  
ձեռամիւ , որմէ Հայերն ծախու առին » :

Եօմնջրոյ Հիւսիսական սահմանին վերայ  
կոյ մի այլ աւերակ աննշան , ուր մի քանի խա-  
չաքարինք տեսանելի են : Դիւզս իւր անունն  
առած է Հարաւային Արեւելակողմ գտնուած  
եօմն աղրիւրներէն , յորոց մին « սուրբ և կ'ան-  
ուանեն , որոյ մէջ ջերմ և ուրիշ հիւանդու-  
թիւնք ունեցողներն կը լուացուին « յառողջու-  
թիւն և 'ի բժշկութիւն » :

Տեղէս յԱրեւմտահարաւ մեկնելով  $\frac{3}{4}$  ժա-  
մէն կը հասնիմք հետեւեալ գիւղն :

ԹեՇՈՒՑ (\*) . — Ունի 80-90 տուն բնակիչ ,  
ոքք ունին եկեղեցի , քահանայ և բաւական  
խնամեալ նախակըթարան մը , որոյ շէնքն խիստ

(\*) Թեղուտ անուամբ կայ մի այլ գիւղ Ախլաթ  
դաւառակի մէջ , որոյ վերայ Տեղաղբութեանցաւ Ա.  
Մասին մէջ երես 91 խօսուած է :

անցարմաք է թէեւ դասատուն լինի յարմարագոյն . տեղւոյս ժողովուրդն եկեղեցասիրութեան հետ ունի նաեւ ուսումնասիրութիւն և հիւրասիրութիւն :

Թեղուտայ մէջ նշանաւոր է Մանուկ աղան՝ իշխան և մեծ իւր դիւղին . ինքն է բարձրահասակ և պարթեւադէմ, ունի նահապետական տունք և տեղիք, բարելից և հացալից սեղան . դռւոն բաց է ամեն ճանապարհորդաց համար անխոտիր ու թռնիրն վառ և տանտիկին միշտ պատրաստ 'ի թիսել « զհացն փրկարար » որպէս կ'անուանեն :

Մանուկ աղան պարզ գրել կարդալ մը հազիւ գիտէ, այլ ունի բնականէն դիւանագիտական հանճար և ընտանեկան մեծ դիրք մը : Այս անձն գիտես թէ, ծնած է աշխարհիս մակերեւոյթի կամ մարդկային խնդիրներն յուղելոյ, նման Սելովմայ աւազանին, որոյ մէջ ժամանակին անդամալոյծք կը բժշկուէին . առ այս խրեան քանիցս կրկնեցի թէ Երկրագունդն նախախնամութեան սահմանադրութեամբ, ինչպէս միշտ կը դառնայ, այսպէս ալ աշխարհի գործերն մարդկային օրինօք յաւէտ փոփոխութեանց ենթակայ են և թէ դաստիարակութեան ԶՕՐՆ մի օր պիտի հաւասարցնէ ընկերական անհաւասարութիւնքն և երջանկացնէ զմարդիկ :

Այս վայրկենիս մի ալեխառն ծերունի՝ որ կը թուէր լինել քահանայացու, հետեւեալ խօս-

քերն ըրաւ « այ Ստամպօլցի , կուշան ի՞նչ գի-  
տէ անօթիին հաւը , դուք նստած էք մեր Օս-  
մանցի թագաւորի քաղաքը ոչ ուրբ ունիք , ոչ  
ուրբ , մեր սրտի ցաւերն էթէ դէզ անենք ուրբէ  
Երկնից ամպերուն կը համնի » : Ես թէեւ զինքն  
անմիխթար չ'ձգեցի , սակայն ստոյդ էք որ իւր  
կեանքումն մեծամեծ վիշտեր կրած ունէր , որոց  
բորբոքումն զինքն կը մղէր այդ օրինակ խօսքեր  
արտարերելոյ : Իմ վերջի մնաս բարեւի պահուն  
իւր չորացեալ ձեռքը բռնած՝ զինքն միխթա-  
րեցի ասելով թէ՝ կենաց դժբաղդութեանց վե-  
րայ կատարեալ յաղթանակ տանելոյ համար ՀԱ-  
ԽԱԾՔ , ԱՇԽԱԾՈՒԹԻՒՆ և ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ու-  
նենալը անհրաժեշտ պայմանն է , և թէ աշխար-  
հիս մէջ ե՞րբ տեսար դու զվարդ առանց փուշի  
և դարձեալ ՎԱՐԴՆ ունենալոյ համար փուշէն  
վախնալ պէտք չէ : Այս խօսքիս վերայ ծերու-  
կըն ժպտելով ես դոհ եղայ և նպատակիս հա-  
սած՝ մեկնեցայ :

Թեղուտէն՝ այն է Վերին Պուլանըխայ Արե-  
մլտեան սահմանի դիւղէն ենելով շարունակեմք  
մեր ընթացքը դէպ 'ի Հարաւ և <sup>81</sup> ժամէն կը  
հասնիմք ուրու-ուրո (զիրօյի գերեզման) ըսուած  
տեղու . . . ուրկէ կը մտնեմք 'ի ներքին Պուլա-  
նըխ :

### Գլ. ԺՊ.

ՆԵՐԻՒՆ ՊՈՒԼԱՆԸԽ

Այսուհետեւ մեր Ռւղեւորութիւնն 'ի ներ-

քին Պուլանըխն է , որ կը գանուի վերջնոյն Արեմանքան հարաւակողմն և անոր չափ հորիզոնական դիրք չունի :

Ապահունեաց գաւառի սոյն մասն 10-11 չայ գիւղեր կը պարունակէ , որոց բնակութեանց միջին թիւն Վերին Պուլանըխի գիւղերու միջին թուոյն կը հաւասարի գրեթէ . մենք խօսիմք կարգաւ իւր կեղրոնական համարուած գիւղէն սկսեալ :

Լիջ . — Սոյն գիւղն շինուած է Վարդ գետոյ առընթեր , 4-5 քարընկէց հեռու դէպ ՚ի յԱրեւմաւտ , ցածր այլ ընդարձակ բլրոյ մը վերայ . ունի 180-200 տուն բնակիչ մեծագոյն մասամբ լաւնիւթական վիճակի տէր , որք ունին յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ հնաշէն եկեղեցի մը , դրիւք ողորմելի որպէս և շինութեամբն . կայ երկու քահանայ : Ուրախ եմ ըսել որ տեղական ջանից չնորհիւ կոփածոյ քարերէ վարժարան մի շինուած է , միայարկ , որուն նման գաւառիս մէջ չկայ :

Գիւղիս մէջ Միաց . Բնկ . նախակըթարան մի ունի , որ կը հոգացուի ծախիւք և Բարեգործական ընկերութեան » , որմէ տարեկան 50 սուկի կը վճարուի Միացեալին :

Լիդ գիւղի մերձ Վարդ գետակի եղերքը կը տեսնուի ամենալատուական տեսարան մը , մանաւանդ շատ հետաքրքրական է տեսնել գիւղի տղայոց ձկնորսութիւնն նոյն գետոյ մէջ , որոյ

ձկունք թէեւ լինին քիչ և փոքրիկ, այլ շատ համեղ են, Դեղացիներէն շատերն ես պարապոյ ժամերու մէջ ձկնորսութեամբ ժամանակ կ'անցունեն, իրիկուան կամ ցորեկուան համար մասնաւոր ճաշիկ մը պատրաստելոյ . ուղեւորի մը համար մեծ հաճոյք է աստ մի քանի ուռենեաց շուքերու տակ ամառ ատեն հանգչին :

Լիզ իւր մերձակայ սահմանին մէջ ունի, շինութեան համար, ընտիր քարեր, որոնք քանակութեամբ թեթեւ և ծաւալով մեծ են ու միանգամայն դիւրատաշ :

Աստ գայմագամ կը նոտի՝ Մշոյ միւթէսարը ֆութեան ներքեւ :

ԱՊՐԻ . — Լզայ յԱրեւելահիւսիս 1<sup>1</sup>/<sub>4</sub> ժամ անկէ տարակայ . ունի 75-80 տունք, յորոց կէսպին Հայ է և մեացեալն Քուրդ : Հայք ունին անշուք եկեղեցի մը և լաւ քահանայ մը, որոց շընորհիւ գիւղացւոց մանուկներն կը նախակըրթուին գոնէ պարզ ընթերցանութեամբ մը :

Տեղւոյս այլակրօնքն չէ անուամբ կը կոչուին թէեւ ամենքն ալ գլուխնին ճերմակ կապած չլինին և կարդալ ու գրել չգիտնան :

Սոքա 10-12 տարի յառաջ կառավարութեան տուրք չ'տալէ զատ, ոմանք իսկ տէրութենէն յատուկ եկամուտներ սւնէին, ինչպէս և ժողովուրդէն, այժմ այդ սովորութիւնն վերցըւած՝ կը գտնուին Բարեխնամ Տէրութեան աղդեցութեան ներքեւ ուղղակի :

Նեղւոյս կարդացւոր շեխերէն միոյն տան  
ո՞չ անուանեալ քար մի կայ որպէս թէ «լի-  
նի գերեզման Մամբրէ հովւոյն» , որ Մանեայ  
այրին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմին գը-  
տաւ և բերելով թորդան աւանը թաղեց : Յիշ-  
եալ գերեզմանի անուամբ թէ «Հայք և թէ Քուրդք  
երդում կ'ընեն և ուխտի կըգան , իրրե սրբոյ մը  
յարդելի գերեզմանի . ուխտաւորաց նուերք՝ ինչ  
որ ալ լինին՝ կը պատկանին բարեխրատ կամ կար-  
դող չեին : Գիւղիս Հիւսիսակողմն քարահանք  
մի կայ , յորմէ ջրաղանցքի քարեր կը հանեն  
ըջակայ գիւղօրայքն :

Շատ զարմանալի մի բան է տեսնել որ  
տեղւոյս մերայինք , ոչխարի հանդոյն , բաժնուած  
են և շեխերու վերայ , որոց շնորհիւ երբեմն ար-  
տաքին նեղչաց դէմն կը պաշտպանուին , և այս  
առթիւն , որպէս վերիւ ակնարկեցի , պաշտպան-  
եալքն ևս տարին 2-3 անդամ տօներուն ուստի  
անուամբ պարգևներ կը տանին իւրեանց տէ-  
ըերուն : Քրդականքն քիչ գործ ունին հողին  
հետ , իսկ Արմենականքն երկրագործութեամբ  
կ'ապրին , առանց որոյ ապրիլն արդէն չ'գիտեն :

Ապրիի Արեւելեան Հիւսիսակողմն կայ «Կար-  
միր վանք » ըստած աւերակ մը , ուր Հայեր  
ուխտի կ'երթան , որ կը թուի լինիլ « Թիլ աւա-  
նըն » : Գիւղիս Հարաւային կողմի աւերակներէն  
կը հանուին երբեմն խաչաքարինք :

Աստ ժամանած պահուս տեղւոյ մեծ Շե-  
խերէն մին զիս հիւրասիրեց և իրարու հետ խօ-  
սեցանք իմ զգացմամբ , այլ իրեն լեզուաւ , որ  
պարսկերենով մասամբ մը խառն լինելով՝ աւելի  
կը հասկանայի և քիչ կրնայի խօսիլ , դա խելօք  
ծերուկի մը յաջորդն էր և իւր նախորդի կտակն  
պահած , որ ըսած է թէ « երբ ոչխարի մը կա-  
թըն կուտէք՝ ձեղ պարտք լինի զայն պաշտպա-  
նել պատառիչ դաղանաց դէմն և այս ոչ թէ  
առաքինութեան համար , այլ աւելի ձեր շահին  
համար , որ տարիներէ ՚ի վեր կը շարունակի և  
« նուիրական » մի բան դարձած է , և արդէն  
ո՞ր ազգի մէջ այդպէս նուիրական դարձած բան  
մը չ'յարգուիր » . ահա իւր տրամաբան հետե-  
ւութիւնն , եթէ կարելի է այսպէս ասել :

ԲԻԾՆՔ . — Սոյն գիւղն ունի 60 տուն Հայ ,  
30 տան մօտ ևս Քուրդ , որոց զլխաւորն է Միր-  
զօ անուն ականաւոր Քուրդն , ում մի քանի  
ժամ հիւր լինելոյ առիթ ունեցայ և քանիցս ինձ  
կրկնեց առ տեղական Հայ դիւղացիս իւր ունե-  
ցած համականքն : Աստ Հայք ունին անզարդ ,  
այլ սիրուն եկեղեցի մը կառուցեալ յանուն Ա .  
Գէորգ զօրավարին . . . :

Տեղւոյս տղէտ քահանայքն են գլխաւոր  
պատճառ դպրոցի չգոյութեան , ըստ որում ժո-  
ղովուրդն նիւթական բարւոք կացութեան հետ  
ունի նաեւ եռանդ և սէր առ ուսումն և դաս-  
տիարակութիւն :

Վերոյիշեալ թրդապետն , որ գիւղիս գրեթէ բացարձակ պետ է , ունի հիւրասէր բնաւորութիւն մը և միշտ հրամայելոյ փափաքն , զոր կը լիցնէ տեղացի հրամայեալներուն վերայ . ունի նաեւ դիւանագիտական տաղանդ մը :

Ա.ՑԿՈՆ . — Լիդ դիւղի Հարաւակողմն , բը-նակութեանց թիւն է 93 , յորմէ 90 տուն Հայ և 3 տուն Քուրդ են , Հայք ունին ԱՍՏՈՒՄ-ԾԱԾԻՆ անուամբ եկեղեցի մը և երկու քահանայ . նոյնպէս նախակըթարան մը և երիտասարդ դասատու մը՝ զարգացման դոհացուցիչ վիճակի մէջ , որմէ պիտի օգտին անշուշտ տեղւոյս նոր սերունդն . դիւղացիքն մեծագոյն մասամբ ՀԱՅԻ տէր են , միայն թէ 3-4 տարիէ ՚ի վեր 24 տուն Զէրքէղ եկած է հոս . Զէրքէղներն տեղւոյս ամենէն աւելի խոտաւէտ տեղերն գրաւած են , որով այս կողմերու մեղուածան դիւղացւոց խաղաղութիւնն փոքր ինչ վրդոված :

ԿՈՂԱԿ . — Գիւղս ունի 90 տուն բնակիչ , յորմէ 40 տուն Հայ և 30 Քուրդ են , Հայք կոփածոյ քարէ հին եկեղեցի մունին յանուն Ա . Աստուածածնայ , կառուցեալ երեք խորանաւ : Եկեղեցին կը թուի լինիլուսաւորչաշէն և գպրոց « Աստուած տայ » : Կողակէն 20 վայրկեան հեռու բաւական բարձրութեամբ լեռ մի կայ , զոր տեղացիք կ'անուանեն կուժնեւ (յոյներ) , ոյք դադաթան վերայ կը գտնուի մի մատուռ : Արում կը դիմեն յուխտ Հայոց հետ նաեւ Մահ-

մետականքն : Դիւղս ունի պատուական տեսարան , ընտիր արտօրայք , խոտաւէտ մարդեր և 'ի պսակ ասոնց առատաջուր է :

Խօշէլու . — Լզայ յԱրեւմտեան կողմն 4  
ժամ հեռաւոր . ունի 94 տուն Հայ և մի քանի  
ևս Քուրդ : Հայոց եկեղեցին է Ա.ԱՏՈՒԱԾԱԾԻՆ  
անուամբ , շինուած սեւ քարերէ , կառուցման  
չիք թուական . բայց շատ հին չէ : Աւնին նա-  
խակրթարան մը , 40 աշակերտով և մի աղնիւ  
դասատու բաւական զարգացեալ վիճակաւ :  
Տեղւոյս մերայնոց նիւթականն բարւոք է : Նա-  
հապետական մեծ տունն է գիւղապետ Յովհան-  
նէս աղայի տուն , որուն պարծանքն է տան ա-  
ւագ զաւակ՝ Մարտիրոս աղայն : Շատ մխիթա-  
րական և օրինակելի բան է տեսնելով տեղւոյս  
գիւղական ընկերութիւնն կազմեալ « բարեշա-  
ւիդ » անուամբ , որ նախակրթարանիս 40 ուռա-  
նողաց աղքատ մասի դպրոցական ովիտոյքն կը  
մատակարարէ :

Գիւղիս նախակրթարանին այցելութիւն աը-  
ւածո պահուն անհուն բերկրութեամբ սիրտս  
լեցուեցաւ , երբ տեսի իւր նոր սերնդեան յու-  
սալից ապագայն և կլորիկ ու մլորիկ մանուկներ,  
որք հաւաքուած էին պարկեշտ դասատուի մը  
հսկողութեան ներքեւ , լոիկ ու մնջիկ կը ԴՔ-  
Բէին և կը ԿԱՐԴԱՑԻՆ , որով մի օր անշուշտ  
պիտի լինին երջանիկ . . . :

Գիւղիս առջեւէն կ'անցնի բաւական քա-

նակութեամբ ջուր մը , որ կը գեղեցկացնէ տեղ-  
ւոյս բնութիւնն . այդ գետակն « բարձր սար »  
ըսուած լեռնէն կը գայ և երթալով կը խառ-  
նուի Եփրատայ Արեւելեան ճիւղին հետ . Մեր  
դիւղապետ Ռէս Յովհաննէս աղային իմ շնոր-  
հակալութիւնն յայտնելով նոյնպէս գոհութիւն  
իւր հացալից սեղանին , որ կը գոհացնէ ամեն  
օր բազմաթիւ երթեւեկողք , մանաւանդ տարա-  
սեռ ցեղերէ եղողքն , որոց վերջնական փոխա-  
րինութիւնն առ տանուտէրն այս է . « Խոտէ  
մալատա ավակէ » (Աստուած տունդ շէն պա-  
հէ) . կամ « Խոտէ ըշտա ռազի պըտ » (Աստուած  
քենէ գոհ լինի) . առ այս տանուտէրն կը պա-  
տասխանէ . « սէր սէրան , սէր ճավան հատի »  
(իմ աչաց և իմ գլխին վերայ եկար) : Այս կող-  
մերը ինչպէս նաև Հայաբնակի այլ դիւղորոյքը ,  
այս օրինակ պարագայից մէջ խօսք կ'ուտան  
փոխանակ դրամի : Տեղէս մեկնելով գնամը հե-  
տեւեալ դիւղը .

ԱԿՐՈՒ . — Ունի 30-55 տուն խառն բնա-  
կելք , Հայկականքն ունին եկեղեցի և քահա-  
նայ , առանց նախակրթարանի կամ ուսման ՍՊ-  
ՏԱ.ՐԻ : Գիւղիս Հարաւային կողմէն կ'անցնի Եփ-  
րատէս , իսկ Արեւմտեան հիւսիսակողմն Խուլէ-  
դուած կոչուած անտառոտ լեառն , որ բաւական  
քանակութեամբ փայտեր կը մատակարարէ ան-  
փայտ Պուլանըխցւոց : Սոյն լերան վերայ «սուրբ»  
ըսուած տեղի մի կայ , ուրկէ աղբերակ մը կը բըշ-

խի , որոյ շրջապատի ծառերն չեն կտրեր . վասն զի և սուրբն կը բարկանայ և կտրողն չ'կընար ան- քսաս մնալ , որպէս օրինակներ տեսնուած է , կ'աւանդեն :

ՇԵԽ-ՎԱԼԻ . — Շատ հեռու չէ Խօշկել- տիէն . ունի 50 տուն բնակիչ , կիսով չափ Քուրդ : Հայք ունին եկեղեցի և քահանայ , իսկ ԴՊՐՈՑ և Աստուած տայ » ու այսպէս նախանձելի դիրք մը չունին և ոչ իսկ միսիթարական մի կողմ :

ԲՐԴԱՅ-ՇԵԽ : — Բնակութեանց թիւն է 40 , մեծագոյն մասամբ Հայ , որ ունին իւրեանց աղօթատեղին և աղօթող քահանայն՝ կրօնական պիտոյից մատակարար , դպրոց ոչ կայ և ոչ իսկ մէկի մը մտքէն կ'անցնի դորա ԿԱՐԵՒՈՐՈՒ- ԹԻՒՆՆ : Տեղւոյս պարագայքն , կարճիւ խօսե- լով , շատ տխուր են . . . :

\* \* \*

ՆԵՐՔԻՆ ՊՈՎԼԱՆՔԽԵՆ ՚ի Մուշ դնալոյ հա- մար գլխաւորաբար երկու ճանապարհ կայ , շա- բունակող դէպ ՚ի Հարաւ , մին է Պոստաքենտու- ուղին , որ Լիղէն 4 ժամ կը տեէ և միւսն Հա- սան-Կորանի ճանապարհ , որ առաջնոյն յԱրե- ւելակողմն կը դանուի :

ՊՈՍՏԱՔԵՆԾ . — 50 տուն , շինուած ըն- դարձակ բլրոց կողերուն վերայ և կը կազմէ մէջ տեղի սահմանն Մշոյ և ՆԵՐՔԻՆ ՊՈՎԼԱՆՔԽԻ Ժո- ղովուրդն կը դանուի անցոյս և անտարբեր վի- ճակի մէջ . իւրեանց հետ կ'ապրին մի քանի

տուն ՚Յուրդեր : Հայք ունին քահանայ մը խիստ  
վարժ ձի հեծնելոյ և անվարժ ընթերցման մէջ .  
եկեղեցին քանդած են և հնոյն հիմանց վերայ  
շինելոյ կ'աշխատին . սակայն երկու տարիէ ՚ի վեր  
պարիսպներն կիսաշէն կը կենայ և խեղճ քահա-  
նայն մի տնակ Եկեղեցի՝ և մի հայի տաշտ Ա-  
հեղուն ըրած՝ կ'աղօթէ և կը մկրտէ զերախայս .  
Դպրոց արդէն անհրաժեշտ է և չունին , թէ-  
պէտե իրենք զայն ունենալ կը փափաքին . առ  
այժմ թող այս լինի մեր Աբովյաննեան : Տեղէս  
կըկին դէպ ՚ի Հարաւ երկու ժամուան տեւողու-  
թեամբ անտառոս բլուրներ , ընդարձակ ձորեր  
կտրելով կը հանիմք Ապրլպուհարայ երկայն և  
նեղ ձոր , ահարկու և երկիւղալից ՚ի բնութե-  
նէ . . . : Այս կողմերը մի քանի փոքրիկ գիւ-  
ղեր կան քրդական . ոյն երկայն լեռնահովիան  
Յժամէն աւելի կը տեէ , որոյ Հարաւային դլու-  
խը համանուն Հայ գիւղն է , յորմէ զիւր անունն  
առած է :

ԱՊԼՂՊՈՒՀԱՐ. — Այս գիւղն , որ Մշոյ աշ-  
խարհին կը պատկանի , կը նայէ նորա լայնածա-  
ւալ դաշտի վերայ . ունի 25-30 տուն Հայ ,  
պարզ եկեղեցի մը և պարզագոյն քահանայ մը ,  
դպրոց ունին ոչ , իրենք շատ հիւրասէր են :

Ապրլպուհարայ մերձ է Ցրոնք անուանեալ  
պատմական գիւղն , ուր կայ 200 տուն զուտ  
Հայ . ունին եկեղեցի և քահանայ , իսկ դպրո-

ցին գալով, ՚ի հարկե մի օր Աստուած պիտի  
տայ առնէ (գութ) ձգելով անկ եղած սիրտե-  
րու մէջ, որք անուանապէս մօտ կը գտնուին և  
իրապէս շատ և շատ հեռու :

\*

Ներքին Պուլանըխէն դէպ ՚ի Մուշ տանող  
սոյն գծի նկարագիրն աւարտած լինելով մեզ  
համար արդէն կեդրոն ընտրած Լիլ գիւղէն  
սկսեալ խօսիմք վերոյիշեալ երկու դժերէն Ա-  
րեւելեանին վերայ համառօտակի :

Լիլէն մեր ՈՒՂԻՆ շարունակելով դէպ ՚ի  
Մուշ, այս անդամին վերի ճանապարհաւն (զոր  
ես Արեւելեան գիծ անուանեցի) և ընդարձակ  
ու սիրուն տեսարաններէ, քիչ լեռներէ և շատ  
բլուրներէ ու մանաւանդ խոտաւէտ դաշտերէ  
անցանելով և ժամէն կը հասնիմք հետևեալ  
դիւղը :

## Գլ. ԺԵ.

ՀԱՍԱՆ-ԿՈՐԱՆ ԵՒ ԻՒՐ ԲՆԱԿԻՉՔՆ

Գիւղս ունի 15-20 տուն Քուրդ, որ ունին  
ընդարձակ խոտարեր դաշտօրայք և մարդօրայք,  
նոյնպէս պատուական տեսարան մը, որոյ ար-  
ժէքն իրենք ճանաչելոյ չափ չունին դժբաղդա-  
բար մտաւոր զարդացում կամ կարողութիւն :

Աստ ժամանած պահուս օրն տարաժամեալ  
էր, վափաք մ'զգացի դարձեալ Յեսուի նման,  
որ Արեւն շուտով ՚ի մար չ'մտնէ՝ մինչեւ որ ես

վերադառնայի ՚ի լիդ կարապետիս հետ , որոյ  
փափաքն կարծեմ թէ իմինէս աւելի բուռն էր .  
ինչ որ է , որովհետև մենք Յեսուսի հոգին չու-  
նէինք , որպէս զի Արեգակն պահ մը մեզ հնա-  
զանդէր , և մենք այս անհնազանդութեան վե-  
րայ տրտունջ բառնալոյ բնաւ իրաւունք չու-  
նիմք , երբ ինքն (Արեգակն) բնութեան սահ-  
մանադրութենէն շեղիլ չէր կրնար , որով և մենք  
ստիպուեցանք մի գիշեր գիւղիս մէջ կենալ :

Հիւրասիրուեցայ գիւղիս գլխաւորին տու-  
նը , ամեն կողմանէ Քուրդեր զիս պաշարեցին ,  
այսու ամենայնիւ սկսայ հետզհետէ հաճոյք  
զգալ նոցա խօսքերէն՝ զորս կարապետս քաջ և  
ես նուազ կը հասկնայի . սակայն դարձեալ ա-  
նուրախ չէի և աւելի անոր համար որ իւրեանց  
կենաց ՆկորԱ.Դիրն այդ նուազովն կարող էի  
սերտել և բան մ'օդտիլ . սոքա կը խօսէին Մա-  
րական բարբառաւ , որոց պատմութեան մէջ ընդ-  
աղօտս կը նշմարուէին հետեւեալ Հայկական բա-  
ռերու (աղճատեալ ) դորձածութիւնք , զորս ար-  
տաքոյ կարդի ախորժամնօք կը դիտէի , ինչպէս  
սուրան (սատանայ) , պնչէնօ (տնաշէն) , կորդ (Շվա-  
րած հող) , մորդ (մարդ) : Արական սեռի անուանց  
մէջ ունէին հետեւեալ անուանքն , զոր օրինակ Մը-  
չաւ Մը-դ (Մուրատ) , Գապօ (Գասպար) . իդական  
սեռի մէջ Զօօ (Զմրուխտ) , Մարտ (Մարիամ) . Վար-  
դա (Վարդան) , Սրբ (Սրբուհի) :

Ահա մի կարեւոր պարագայ , որ ցոյց կը

տայ թէ Հայկական և Քըդական կեանքն որչափ  
պէտք է իմաստասիրել։ Աստ սոյն երեկոյ զար-  
մացայ և քաղցր տպաւորութեան մը ներքեւ ա-  
նուշ քուն մը քաշեցի ց'առաւօտ։ Ասկէ զատ  
կան նոյնպէս քանի մը Հայ և Քուրդ մասնաւոր  
գիւղօրայք։ Տեղէս մինչև ՚ի Մուշ 10 ժամնաւան  
ճանապարհ է։

Այսափ բաւ համարելով կը կին վերադառ-  
նամք 'ի Լիզ, որմէ շարունակեմք մեր ՈՒՂԵԿՈ-  
ՐՈՒԹԻՒՆՆ կամ ՈՇԾ և այս անդամին դէպ 'ի  
Հիւսիսային Արեւմտակողմն՝ 'ի Խնուս գաւառն։  
Աղահունեաց վիճակը կը պատկանի Մշոյ Միւ-  
թէսարըֆի գերիշխանութեան։

### ՄԵԿՆՈՒՄՆ

Լիզ աւանէն մեկնիմք դէպ 'ի Հիւսիս և  
4-5 ժամու չափ մեր նախորդ ճանապարհին վե-  
րայ (որով եկանք յայս գաւառակն Վերին Պու-  
լանըխէն), յառաջ գնալ հարկ է ու կը հասնիմք  
Վերին Պուլանըխի Արեւմտեան սահմանը, յոր-  
մէ շարունակելով կը գնամք դարձեալ յեղբ  
Եփրատայ, որմէ՝ նման այլ տեղեաց՝ դարնան  
ժամանակին «տկանաւակաւ», իսկ ամառ եղա-  
նակին, որ յորդումն իջած կը լինի արդէն, մէջ  
մտնելով կանցնին ուղեւորքն։ ասկէ կէս ժամ  
հեռու տեղ մը սոյն դետն կը միանայ Արածա-  
նիի մի այլ ճիւղին հետ (խնուսայ գետ)։

Այժմ մենք անվասո անցեր եմք դետի  
հանդիպոյ կողմն , այլ ևս ջրոց բնական երկիւղէն  
աղատ՝ կարող եմք ապահովապէս շարունակել  
մեր ընթացքը մինչև Համլաշեխ և Շերվանշեխ  
անուանեալ գիւղերու (որոց վերայ խօսուած է  
արդէն) միջավայրը , ուր Հանանց և Ճէռանց կոչ-  
ուած Քուրդ զօրաւոր ցեղերն ոլարբերաբար ի-  
րարու հետ կռուի կը բռնուին և շատ անդամ  
ամենաշնչին առիթներէ դրդեալ . այս առթիւ  
տեղական Հայերն բնականարար կը լինին ան-  
հանգիստ :

Ասկէ մէկ ժամու տեւողութեամբ ընդար-  
ձակ և տափարակ արտօրայք կտրելով կը ժա-  
մանեմք « զեռնակ » ըստած հին բերդի գրե-  
թէ ստորոտը , և յետ այսու կ'անցանիմք գօտե-  
ւոր երկոյն լեռներէ , ընդարձակ բլուրներէ և  
ձորերէ , որք մեծագոյն մասսամբ կը կազմեն Ա-  
պահունեաց և Խնուսայ մէջ տեղի սահմանն :  
Այսպէս մեր ՈՒՂԻՆ դէպ 'ի դար 'ի վեր շարու-  
նակելով կը մանեմք երկայն ձորակ մը , զոր կ'ան-  
ուանեն Շառալը , որոյ մէջ կան ընտիր աղի աղ-  
բերակներ . Այն ամենակարեւոր հանքն այս կող-  
մերը շատ առատ է , ոյր ջրերն 4-5 քառակու-  
սի մեթը տարածութիւն ունեցող ածուներու  
մէջ ընդունելով կը լճացնեն , Արեգական տա-  
քութեան աղդեցութեամբ ջրերն շողիանալով  
մաքուր և ձիւնի նման սպիտակ աղեր կը նստին  
յատակը , որմէ հանելով կը շեղջեն ու կը դնեն

՚ի վաճառ . Հայերն զայն « Խնուսայ աղ » կան-  
ուաննեն, գաւառին անուամբ , Թուղլու Հայաբնա-  
կի բազմաթիւ գաւառաց աղ կը մատակարարէ  
և բազում դիւղացիք աղի ջրերէն ևս կը տանեն  
՚ի գործածութիւն , իր բնական վիճակաւն : Կա-  
ռավարութեան կողմանէ աստ լը նստին յատակ  
պաշտօնեայք հսկել ոսյն հանքի վերայ , որ ուղ-  
ղակի իւրեանց տրամադրութեան ներքեւ կը  
դտնուի և շատ արդիւնաբերէ :

## ԳԼ. ՓԶ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԻՆ ԽԱԶԱՔԱՐ ՄԸ

Աղի վաճառատեղւոյն Արեւմտեան Հարա-  
ւակողմն , որ բլրային և ձորային է , Յ վայրկե-  
նի հեռաւորութեամբ երկու ընդարձակ բլրոց  
միջավայրը՝ ցամքած աղբիւրի մը քով հին բնա-  
կութեանց նշմարանքներ կային , ինձ թուեցաւ  
լինիլ վանքի մը տեղի , որոյ վերաբերութեամբ  
փորձառու Հայ կարապետս հետեւեալ պատ-  
մութիւնն ինձ ըրաւ , « 8 տարի յառաջ երբ մէկ  
օր այս ճանապարհէն ՚ի Պուլանըխ կ'երթայի , ճա-  
նապարհի այս ինչ աղբիւրի քով (յիշեալ ցամ-  
քած աղբիւրն է , զոր ինձ յետոյ ցոյց տուաւ )  
հանգիստ մ'առնուլ նստայ . հոգնութենէս ըն-  
կայ ՚ի քուն և տեսայ երազիս մէջ մի սուրբ  
մարդ , որ իւր անունն ինձ չասաց . մարդն ձիւ-  
նի պէս ճերմակ մազ մորուքով էր , աչքիս շատ  
ալեւոր երեւցաւ , որ քշեց եկաւ վրաս և զիս

կը ծեծէր ասելով թէ « ամեն ատեն իմ այս վանքի ճանապարհէն կ'երթառ ու կուդաս , էր դու չ'ես գար զիմ գերեզման մի անգամ տեսնել , որ այս ինչ ըլլոյ գլուխն է ». « Ես արթննալուս պէս ձեռքս դողալ սկսաւ վախնալով դնացի անոր ըսած տեղը և դտայ հետաւ խաչաքար մը , զոր համբուրեցի և տակի հողերէն քիչ մը իմ երկու աչքին վրայ քսելով ճանբայ ընկայ » : Այս ջերմեռանդ Հայու խօսքերն զիս հետաքըրքը ութեամբ լեցուցին և ուղեցի գիտնալ թէ արդեօք ուր է այդ քարն , ոյր վերայ իմ կարապետն զմայլմամբ կը խօսէր և որոյ ոտքի տակի հողն իւր երկու աշաց վերայ քսած էր :

Մարդուն հետ մեր ճանապարհէն շեղեցանք երթալ տեսնելոյ համար այդ հետաւ քարը և ցոյց տուած տեղը շատ փնտռեցի . սակայն չկրնալով զքարն գտնել , յոյսերնիս կտրեցինք և մարդուն խօսքը պահ մ'ինձ թուեցաւ շինծու : Քիչ մ'ետքը իմ ջերմեռանդ կարապետն ամօթահար՝ գնաց մերձակայ ձորակը , ուրկէ ձիս պիտի բերէր ՚ի մեկնիլ . յանկարծ , նման Քոլոմպոսի Ամերիկան գտնելուն , սաստիկ ուրախութենէ մը բռնուած՝ զիս կոչեց բարձրաձայն թէ « արի գտայ , արի գտայ , իՄ սրբոյ քարն կորեր են այս ձորակի մէջ . շուտ արի , տես ճիշդ համբուրածո քարն է , զոր աղէկ կը ճանաշեմ , որ առաջ իւր բռն տեղն եղած ատեն ոտքի վերայ ԿԱՆԴՈՒՆ կեցած էր և հիմա որ հին տե-

զին փոխած է, թաւալագլոր եկած ու ընկած է  
այս տեղ երեսի վերայ » :

Ճշմարտախօս կարապետիս այս կոչին վերայ  
դիմեցի յայն ձորակին՝ դիւղացւոյն անանուն սրբ-  
բոյ տապանաքարն տեսնել և արդարեւ դտանք,  
և կարապետիս հետ բազում ճգամբ փորի վե-  
րայէն զայն դարձուցինք յիւր կոնկին . ես տե-  
սայ դորա կերպարանքն , զոր զմայլմամբ ինձ կը  
նկարագրէր երբեմն երազատես դիւղացին :

Յիշեալ քարն ունի  $1\frac{1}{2}$  մեթր երկայնու-  
թիւն և  $\frac{1}{2}$  մեթր լայնութիւն ,  $\frac{1}{4}$  մեթր խորու-  
թեամբ . խաչաքարն կը խօսի ամենահին լեզ-  
ուաւ մը , հակառակ Տեղագիր-Ռւղեւորիս թա-  
խանձանաց , չուղեց բնաւ զիւր տարիքն յայտ-  
նել , թէպէտեւ եղերաց վերայ ունէր թուական  
և դիր , զորս ժամանակն անընթեռնելի ըրած  
էր . երկու ժամէն աւելի վատնեցի զմելիով քե-  
րելով և քերթելով զայս տապանաքարի շրջա-  
պատի տառերն . սակայն ինձ համար լոյս մը  
առնուն անկարելի եղաւ . նկարագրեմ այժմ  
գէթ իւր դէմքն :

Սոյն ոչ մարմարիոնէ , այլ ամուր քարին  
վերայ գեղեցկօրէն քանդակեալ է մի պատկա-  
ռելի եպիսկոպոսի կերպարանք , խաչն ՚ի ձեռին  
պատարագի զգեստներով չաթալ թագն դլու-  
խը դրած , գլխուն վերայ երկու կողմանէ ջա-  
հեր կախուած են . եպիսկոպոսի աջակողմն  
վայրի սիրուն ոչխար մը կայ , որոյ դառնուին կաթ

կը ծծէ և մայրն յօժարակամ՝ յոտին կեցած՝ կը լիղէ զանի (զգառնուկն) :

Տապանաքարի բոլորտիքը գրերու շրջանակէն ներս մի քանի աղաւնիներ փորուած են . քարն անշուշտ մի ամենաճարտար Հայ արհեստաւորի ձեռագործն է , և ով դիտէ որ դարուն պատկանող . բուռն փափաք մի ունէի զայս քարըն փոխագրել , եթէ մօտակայ մի Հայ դիւղ գտնուէր . բայց դժբաղդաբար Հայ բնակութիւններէ շատ հեռու լինելով՝ քարն ևս ծանրու ճանապարհներն լեռնոտ . այս պատճառաւ քարն կեցաւ հօն , ուր որ էր :

Աստ կը տեմնուի մի այլ քար մէկ խորանարդ մեթը մեծութեամբ , յատուկ տաշուած , ոյր համար կ'աւանդեն թէ « իտոր տակէն 60-70 տարի յառաջ դանձ հանուած է » : Սոյն վերջի քարին վերայ փորուած է երկրագործի խովն և կը դտնուի մերձ այն վայրին , զոր ևս վանուց տեղի կարծելով չէի սխալած :

Տեղւոյս նկատմամբ՝ խնուսցի մի Հայ ինձ պատմեց թէ՝ ինքն 14 տարի յառաջ ոսկի մը գտած էր աստ՝ անհաւասար եղերք ունեցող , ոյր երկու երեսներուն վերայ պատկերներ կոխուած և մեծութեամբ ճերմակ մէ ճիտէն քիչ փոքր , առանց գորա արժէքն գիտնալոյ կը տանի զայն 'ի Խնուս և 4 Օսմ: ոսկւոյ կը վաճառէ :

Թուղլայի ձորէն մեկնելով շարունակեմք  
մեր ՄԵԹՈՏԸ կտմ ՈՃԸ դէպ ՚ի Հիւսիս և ԱՌ/<sub>2</sub>  
ժամուան ճանապարհ ընդարձակ զառիվերեր  
կտրելով կիջնեմք զառիվոյրէ մը և կը ժամա-  
նեմք Խնուս գաւառի Արեւելեան ծայրը :

## Գ.Լ. Ժ.Լ.

### Խ Ն Ո Ւ Ս

Սոյն դաւառն երկայն և լայնատարած լեռ-  
նահովիտ մի կարելի է համարիլ և իւր բնական  
դիրքն յԱրեւելէն յԱրեւմուտ երկայնութեամբ ,  
տարածուած նման դրեթէ Վասպուրականի Հա-  
յոց Զոր դաւառին : Իւր երկայնութիւնն է 8-9  
ժամ և լոյնութիւնն 1-1<sup>1</sup>/<sub>2</sub> :

Խնուսայ սահմանն է Արեւելէն Խրէմոյէ կոչ-  
ուած մասնաւոր լեռառն , որոյ ծայրի միջավայրը  
կայ Կեռւէլ դադա (Խօշապայ Կասր գիւղին մէջ ևս  
կայ սոյն անուամբ յարգելի տեղ մը , ոյր վերայ  
Տեղագրութեանս Բ. մասին մէջ խօսուած է) ա-  
նուն «ճգնաւորի մը գերեզման» , որոյ առընթեր  
կան մի քանի ուռենիք և մի աղբերակ պատ-  
ուական ջրով : Կիւղէլ պապան ուխտաւեղի է  
թէ Հայոց և թէ Քրդաց . առաջինքն աստ կը  
դիմեն Վարագայ Խաչի տօնին : Այս անծանօթ  
գերեզմանին համար Հայք կը պնդեն թէ «մերն  
է» , և Քրդերն կը վճռեն թէ «աբն է» . և վեր-  
ջինքն իրաւունք յառաջ կը բերեն առելով թէ  
«մենք շատ անդամ յանուն նորա կ'երդնումք» ,

որպէս երբեմն կ'երդնուին մեր պատերն նորա  
գլխոյն վերայ » : Ստուգիւ խօսելով, այս տեղին  
ում կը պատկանի՝ վաւերական ապացոյց մի  
չկայ . սակայն ինձ գալով՝ թէ առաջնոյն լինի  
և թէ վերջնոյն , անօգուտ է այդ մեռեալ տպ-  
րանաց վերայ խօսիլ և վիճել այդ չափ :

Արեւմուտէն Բիւրակեան լերինք (ո՞չն հեծ),  
որոյ դրեթէ Արեւելեան ստորոտը կը գտնուի  
Խնուսայ բերդաքաղաք , ոյր վերայ 'ի կարդին  
կը խօսուի : Բիւրակեան լեռներէն կը բղխի Խը-  
նուսայ գետն , որ գաւառի Արեւմուտէն սկըս-  
եալ կը գնայ դեպ 'ի յԱրեւելս և 11 ժամու չափ  
ճանապարհորդելէն յետոյ կը հասնի 'ի Վերին  
Պուլանըս , ուր Թեղուտ կոչուած դիւղի Արեւ-  
մըտեան ստհմանին վերայ կը միանայ Արածա-  
նիի Արեւելեան զօրաւոր ճիւղին հետ : Սոյն գե-  
տը Խնուս գաւառի մէջ իւր ունեցած ոլորապա-  
տոյտ ուղղութեան սպատճառաւն է թերես , որ  
տեղացիք ղայն հօդու (ծուռ , անուղիղ) կ'ան-  
ուանեն : Հարաւէն Խոճուր (Ղամեքայ բերդ) ըս-  
տած ձիւնապատ լեռն իւր գօտիովն , որ կը  
ձգուի Արեւելէն յԱրեւմուհարաւ . Հիւսիսէն  
Սպիտակ լեռն , որ Բիւրակեան լերանց մէկ  
բաղուկն կը համարուի՝ Արեւմուեան Հիւսիսա-  
կողմէն :

\* \* \*

Խնուսն օդով , ջրով և հողով արգասաբեր  
և պատռական մի գաւառ է , որ յառաջ կը բե-

ըէ առատօրէն ցորեան, արմտեաց մէջ, և կո-  
րընկան այլ խոտերու մէջ, ըստ որում խոտ քա-  
ղելոյ համար ոստին տեղեր կը պակսին : Արտօ-  
րայքն կ'ոռողութին աւելի գաւառիս մասնաւոր  
ջրերէն քան թէ յիշեալ գետէն, դոր եթէ յա-  
ջողին արհեստական հնարիւք արտօրէից վերայ  
հանել, գաւառս կը լինի մի Դ.Ռ.Ա.Տ.Ա.Վ.Յ.Յ.Յ.՝ որ  
արդէն ամբողջապէս Հայ տարրերէ կը բաղկա-  
նայ . Քուրդերն ունին գաւառին շրջապատը :

\* \* \*

Խնուս գաւառն 24-25 Հայ գիւղերէ կը  
բաղկանոյ մեր գծած սահմանովն . կան բաւա-  
կան թուով Քրդաց գիւղակներ ալ, որք ընդ-  
հանրապէս 2-3-4-5 ընակութիւններէ կազմուած  
են, իւրեանց ամենէն բազմամարդ գիւղն հազիւ  
20-25 տուն կը ոլարունակէ : Խնդիր է այժմ թէ  
ինչ է պատճառն, որ Քուրդերն 1-2 տնով գիւղ  
մը կարող են հաստատել, իսկ Հայք 20 տնով  
չեն համարձակիր տեղ մը դնալ և նոր գիւղ մը  
կազմել :

\* \* \*

Գաւառիս Հայոց 24-25 գիւղերն 1350 տուն  
կը ոլարունակեն, 13500 ընակչօք : Գիւղերու  
գլխաւորներն իւրեանց աշխարհագրական գիր-  
քովն նկարագրելէն և տեղագրելէն յետոյ մնա-  
ցեալներու գիրքերն և աշխարհագրական ուղ-  
ղութիւնքն աւելորդ կը համարիմ մի առ մի նը-  
շանակել, մանաւանդ երբ զգալի տարրերու-

թիւն չտեսնուի իրենց մէջ և դիւղն չլինի առկանաւոր :

## ԳԱԼ. ԺԱԲ.

Քարազուածուած . — Ունի 450 տուն՝ բաժնուած 3 թաղերու, պատուական տեսարանաւ, կենսաատ օդով և առատ ջրով։ Նիւթական վիճակնին շատ լաւ է. ունին յանուն Ա. Յակոբայ կառուցեալ եկեղեցի մը՝ շինուած քարուկիր, 6 սիւներու վերայ և 3 խորանաւ։ Սոյն եկեղեցին գաւառիս մէջ նմանը չունի, որոյ տանիքին վերայ երկու գերաններու մէջ տեղը կախած են Տփղիսէն բերուած երկու հատ բաւական մեծ զանգակներ, որք երեկոյ առաւօտ զգիւղացիս կը կոչեն յաղօթս, մանաւանդ տօնախմբութեան օրերը։ կայ երկու քահանայ՝ մտային ողորմելի կարողութեանց տէր և մէկ նախակըթարան, շէնքով և պարագայիւք շատ կանոնաւոր։ Ուսանողաց միջին թիւն ամառն ու ձմեռը 50, որք են խիստ աշխոյժ և կորովի. միայն թէ ցաւալի կէտն հօս է, որ այդչափ ուսանողք մի դաստուի յանձնուած են, որ միանգամայն կառավարչութիւն ընելոյ ես դատապարտեալ է։

Քարաչօպանի Հայոց մէջ կը գտնուին այնպիսի անհատներ, որք ձայն ունին թնուսայ դատարանին մէջ և մեծ ազդեցութիւն դաւառին վերայ։ Տեղւոյս գիւղացիքն սովորութիւն չունին իրենց ննջեցելոց տապանաքարինքն օ-

ծել տալոյ , այլ քարին կիսակլոր ձև մը կը տան և կը նմանցնեն ըղտու և աւելի յաճախ ձիու . հանդերձ թամբովն , որ նշան է մեռնողի ձիա - վարժութեան և քաջասրտութեան :

Գիւղիս մէջ մի գիշեր՝ ի ժամ 4 ին տեղի ունեցած փոքրիկ գեղքն արժան կը համարիմ աստ նշանակել և ուշիմ ընթերցողին ցոյց տալ երկրի մի հետաքրքրաշարժ սովորութիւնն :

Մինչ ամեն ո.ք 'ի քուն մտնելոյ վերայ էր , և կալպաններէն (Էտրունչը) ոմանք դէմքերնին դարձուցած ընդդէմ նորածին լուսնոյ կերդէին մի երգ , յանկարծ գիւղիս Հիւսիսակաղմն Սայլ - որ անուն Հայ գիւղի ոչխարաց վերայ գողեր յարձակած էին , մինչ այս և մինչ այն տեսնուեցաւ որ մի կարճահասակ ծերունի անուանեալն Պղտօ (Պաղտասար) , կուրծք լայն , բաց և մազոտ , գլուխն գունտ , ճակատն գուրս ընկած , իւր մէկ թևէն տակը խուրձ մը զէնք և միւս ձեռքը բռնած մի ճերմակ ղամբիկ ՚ի գիւղս մը - տաւ հուստրու (աղմկաւ) , ղամբիկն աչքի մէջ ընդունած գնտակի հարուածէն , նման զդայուն մարդոյ , արտասուք կը թափէր և գիտես թէ բանականի զգացմունք եկած էին այդ անելեղու կենդանւոյն վերայ , ոյր ետեւի ոտքէն ևս սուրէ հարուածուելով արիւն կը հոսէր յերկիր աղբիւրի նման : Մեր Պղտօյի ետեւէն հասաւ մի երիտասարդ՝ իւր հետ ունենալով երկու

բարձրահասակ գողեր , որք 'ի շնորհս կառավարութեան տեղս գտնուող երկու պաշտօնէից տարուեցան գիշերանց 'ի բերդաքաղաքն , ուր շղթայի ղարնուեցան . դատաւորի հարցման վերայ՝ բռնողներն պարզապէս կառավարութեան պատմած էին թէ « սոքա յարձակեցան մեր հօտին վերայ և մենք մեր կենաց վերջի վտանգով զիրենք բռնեցինք ու 4 էն երկուքն յաջողեցան փախչիլ . տեղւոյ դայմագամն զիւր պարտք կը կատարէ և դէպքն այսպէս կը վերջանայ : Մի ամիսէն ետքը դաւառիս մէջ կրկին ինձ պատահեցաւ Սայլոր գիւղի մնը քաջասիրտ Պղտօն , որ իւր յիշեալ զամբիկ հեծած՝ կերթար 'ի Խնուս : Բայց այս անգամին ձին միականի դարձած էր ամիս մը յառաջ ընդունած հարուածէն : Բնական էր որ Պղտօյին հարցանէի թէ ուր կերթաս , մանաւանդ որ իւրեան հետ արդէն կանխաւ ծանօթացած էի և թէ մի և նոյն կողմն կը ճանապարհորդէինք 'ի միասին . ահա իւր պատասխանն՝ զոր տուաւ մի շատ վեհանձն զգացմամբ . « Կերթամ անելու մեր ոչխարաց վերայ յարձակող և զիմ աննման ձին վիրաւորող գողերուն և զիրենք բանտէն դուրս հանելու . . . . »

Ք.Ա.Վ.Ա.Ն-ՏՈՒԻՔ . — Սոյն գիւղն Քարաջոպանի յԱրեւմտակողմն է և անկէ կէս ժամաւ չափ հեռաւոր . իւր բնական վիճակաւն ղնախորդն կը դերադանցէ . նիւթականն գրեթէ անոր հա-

ւասար : Ունի 90 տուն բնակիչ, Ա. Գևորգ ան-  
ուամբ հնաշէն եկեղեցի մը , երկու քահանայ և  
մէկ նախակրթարան , Միացեալ Ընկերութեան  
պատկանող : Նախակրթարանիս ծախքն տեղա-  
ցիք կը հոգան , տեղացիք շինած են կանոնա-  
ւոր վարժարան մը և պէտք եղած գրասեղան-  
ներն . իսկ դպրոցական պիտոյքն կը հոգայ Ըն-  
կերութիւնն , որոյ ընդհանուր տեռչի ուղղութեան  
ենթարկեալ է նախակրթարանն , ուր 33-60 ու-  
սանողներ կ'աշակերտին , և ամառ ատեն չեն  
պակսիր , որ ուրախառիթ պարագայ մի է , զոր  
չտեսի դժբաղդարար այլ գիւղերու մէջ : Դիւ-  
ղիս նախակրթարանն Կտարիէ 'ի վեր ունէր տե-  
ղացի երկու ուսուցիչք՝ Խորեն Մկրտիչեան և  
Մկրտիչ Մուրատեան , որք էին աղնիւ և առա-  
քինի , բառին բացարձակ նշանակութեամբ , լի  
ազգային զգացումներով , հոգիք անձնանուէրք  
և հաւատարիմք իւրեանց սուրբ կոչման , զոր  
կը սիրէին ջերմապէս . սոքա յաջողած էին ա-  
մառ եղանակին աշակերտաց թիւն աննուազ  
պահել ձմեռուան թիւէն , ասոնց շնորհիւ սուզ  
ժամանակի մէջ տեղւոյս նոր սերունդն մեծա-  
մեծ յոյսերով բեռնաւորիլ սկսան . սակայն քա-  
նի տխուր է ինձ յիշել աստ թէ անցեալ տարի այդ  
երկու երիտասարդներն մէկ շաբթուան մէջ վոխ-  
ուեցան առ Աստուած , զոր շատ կը սիրէին և  
աշակերտաց ևս սիրել կը տային : Սոյն տողերն  
աստ յիշեցի ի ՅԱԿԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ այդ երկու

դաստիարակաց , որք իրարու հետ այնպէս էին որպէս երկու հարազատ եղբարք , և արդէն Ս. Կարապետի վանուց մէջ , (Խրիմեանի վանահայրութեան օրովն) մի և նոյն գրասեղանին վերայ դաստիարակուած էին . Նախախնամութիւնն ալ գիտես թէ չուղեց՝ որ սոքա իրարմէ բաժանեալ մեան , ուստի ՚ի միասին կոչեց առ ինքն զանոնք , որոց յիշատակն ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ եղիցի յաւիտեան :

Քո-վան-տուքէն տակաւին չ'մեկնած՝ կարմէ որ գրեմք իւր մերձակայ տեղիքն , որք թէ օգտակար և թէ քիչ հետաքրքրական չեն :

Դիւղիս Հարաւակողմն՝ իւր սահմանին մէջ կէս ժամու հեռաւորութեամբ փոքր ձորակի մը միջավայրը կայ ջրաղացքի և ձիթահանի համար ընտիր քարի հանք մը , որոյ շրջապատը կան պատուական ջրոց աղբերակներ , զորս կ'անուանին «սպիտակ» և խորունկ » աղբիւրներ , տեղւոյս վերնակողմն դժնուող բլրակին վերայ ծառ մի կայ հինաւուրց , զոր կ'անուանեն «Ս. ծառ » , որոյ բոլորտիքը կը տեսնուին մորենիք և մասուրենիք . վերջնոց պտուղն կարմիր է և աւելի կլոր , կը հասուննան աշնան վերջի ամսուան մէջ , որք գիւղացի մանուկներու համար սիրելի պարգեւներ են բնութենէն տրուած :

Յիշեալ քարահանքի ձորոյ ձախակողմն 3-4 քարընկէց հեռաւորութեամբ բլրակ մի կայ ,

զոր տեղացիք «կարմիր կատայ»<sup>(\*)</sup> կ'անուանեն ,  
ոյր վերայ աւերակի մը հետքեր նշմարելի են :  
Սորա վերի կողման ճանապարհի աջակողմն կը  
տեմնուի ձորակ մը անուանեալ «Խահլէ ձոր» , ո-  
րոյ Արեւմոակողմն կը գտնուի լեռնակ մի «Գի-  
տուրա» անուն և յԱրեւելակողմն լճակ մի «մեծ  
հեռ» կոչուած . սորտ վերայ կան այլ ընդ այլոյ  
աւանդութիւնք , յորոց մին է թէ «մեծ հեռ»  
մէջ հրեղէն ձիեր կը դտնուին , որ ամեն մար-  
դոյ չեն երեխիր » . լճակիս յԱրեւմոակողմն , փո-  
քըր ինչ տարակայ դտնուող տղային հանքն աս-  
կէ 10 տարի յառաջ Հայոց կը ոպատկանէր , իսկ  
այժմ անցած է կառավարութեան , որ անդ շի-  
նած է փոքրիկ շենք մը և պաշտօնէից ձեռամբ  
աղերն արտադրելով կը վաճառուին նախնի տէ-  
րերուն և այլոց :

Քո-վան-տոռք գիւղի Հիւսիսակողման սահ-  
մանին վերայ կը նշմարուի աւերակ մը վերաբե-  
րեալ Հայոց և միանդամայն Քրդաց , որք զայն  
կ'անուանեն «Թալալոց» , ուր կայ ջուր և մի  
քանի ծառեր . սոյն վայրն ուխտատեղի է ան-  
խտիր երկու աղդաց , որոց մանը տղայքն , երբ  
ճղային հիւսանդութենէն բռնուած լինին , կը  
բերեն , տեղւոյս ջրովս կը լուանան և խանչէլով

(\*) Հայ գիւղացիք առ հասարակ «կատայ» կ'ան-  
ուանին այն խաչաձեւ շինուած հացապլիմն , որոյ  
խմորն բաղարջի խմորէն է կամ դարձեալ իւղով շա-  
ղախեալ :

ըսուած աղբերակէն ևս ջուր կը խմյունեն հիւ-  
ւանդին(\*): Թալալոցիս շրջապատը շատ են պըտ-  
զաբեր արտօրայք և խոտաւէտ մարգեր . այս  
կողմն է Քարառականքու անուանեալ գիւղն , ոյր մի  
մասի աւերակներէն երբեմն աղճապակիներ  
դուրս եկած են . աստ կը տեսնուին Հայոց և  
Քրդաց պատկանող մի քանի անյիշատակ գե-  
րեղմաններ :

Տեղւոյս Հարաւակողմն 10 վայրկեան հե-  
ռաւոր կայ Շոկ-Տահակու անուն մի գիւղակ , ուր  
դարձեալ կը տեսանին Հայկական ննջեցելոց  
տապանաքարինք . . . .

## Գ. I. Ժ. Թ.

### ԽՆՈՒՍ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ

Այս հին քաղաքն կը դանուի յԱրեւմտա-  
կողմն դաւառիս , որ նորա անուամբ կոչուած  
լինիլ կը թուի և շինուած է մի ընդարձակ լեռ-  
նաձորակի մէջ ու կընայ համարուիլ Բիւրակ-  
եան լեռանց Արեւելեան ստորոտն : Չորի մէջ  
տեղէն կանցնի Արածանին՝ բաւական մէծ քա-

(\*) Հիւանդ մը , երբ ճղային տկարութենէ մը բըռ-  
նուելով կիյսայ եւ բերանն եւս ոկսի փրփրիլ , երեսն  
եւ մանաւանդ շրթներն կապոյտ գոյն մի առնուլ , Հա-  
յոց գիւղական բացատրութեամբ «թալցնել » կըսեն ,  
հիւանդն կանուանեն «թալցնող » եւ բժշկութեան  
նոյն օրինակ տեղին եւս «թալալոց » , որոյ բացատ-  
րութիւնն այս է , եւ յիտ այսու կրկնելն աւելորդ :

նակութեամբ , որ Բիւրակեան լեռներէն բըղը խելով յԱրեւմուտէն յԱրեւելահարաւ կը ճանա՞պարհորդէ և զբերդաքաղաքն Հարաւային և Հիւսիսային՝ երկու մեծ մասերու կը բաժնէ , որոնք զօրաւոր կամուրջով մ'իրարու հետ կը ցուած են : Բնակիչներն իւրեանց պարապոյ ժամերուն սոյն գետէն պատուական ձկունք կորսան , և երբեմն իրարու կը խրկեն ընծայ :

Խնուս բերդաքաղաքն , որպէս խօսուեցաւ , մեծագոյն մասամբ սահմանեալ է ընական լեռներէ , որոց մէջ եղած խոռոչներն այնչափ ընդարձակ են , որք գրեթէ փոքրիկ անձաւներ են , յորս կը ընակին աղքատ գնչուներ՝ իւրեանց ընտանեօք հանդերձ : Տեղւոյս օդն բարեխառն և ջուրն շատ ընտիր է . Ուղեւորիս աչաց հանդէպ ամեն կողմը հետաքրքիր տեսարաններ անպակաս են , որոց մէջ են զբնակութիւնս շրջապատող երկու լեռնադադարձունք , զորս բնութիւնն պատրաստած է և ոչ թէ մարդըն , որոյ կարողութենէն բացարձակապէս վերէ մի այդպիսի բան յօրինել :

Քաղաքիս բնակութեանց թիւն այժմ հազիւ 300 ի կը հասնի , յորոց 480 Հայ և մնացեալ 420 տուն Մահմետական են : Տուներն ընդհանրապէս քարաշէն կը ընեն , վասն զի ամէն կողմը շինութեան համար յարմարագոյն քարեր լի են՝ թիւսագոյն , դիւրասաշ և հա-

մեմատաբար թեթեւ զանգուածով :

Հայք ունին յանուն Ա. Աստուածածնայ հին եկեղեցի մը , կառուցեալ պարզ ճաշակաւ և երկու քահանայ ու մի նախակրթարան , ուր 100 մանուկներ կ'ուսանին անորոշ ուղղութեան մը ներքեւ , ոյլ գովելի ձիրքերով :

Մահմետական դրացիներն եւս ունին մի ըիւշտիյէ (ուսումնարան) նոր շինուած՝ հնամիտ դասատուով մը , որոյ վերաբերութեամբ ինձ պատմեցին թէ « իւր ուղղութիւնն ներկայ ժամանակիս չպատասխաներ » : Նոյնպէս ունին մի մզկիթ հին ժամանակէն մնացած :

\* \* \*

Ժողովուրդն առ հասարակ երկրագործ և վաճառական է (մասնաւոր) . ունին մի քանի աննշան կրպակներ երկու աղջաց վերաբերեալ . բոլոր առեւտուրնին կարնոյ հետ է , որ տեղէս 21<sub>½</sub>-3 օրուան ճանապարհաւ հեռու կը գտնուի դէպ 'ի յԱրեւմտահիւսիս : Երբեմն քաղաք և այժմ գիւղաքաղաքէս . . . վոքք ինչ հեռու հանքային ջուր մի կայ խիստ դառնահամ :

Խնուս Գայմադամութիւն է ընդ գերիշխանութեամբ կարնոյ կուսակալութեան . ունի հեռագրաթել : Գաւառիս Փոխ-Առաջնորդն աստ կը նստի կարնոյ Առաջնորդի իրաւասութեան տակ :

**ԳԼ. Ի.**

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՄԲԵԹԱԽՈՐ ՎԱՆՔ

Խնուռ բերդաքաղաքի յԱրեւելահարաւ  
կէս ժամուան հեռաւորութեամբ կայ Պժնկերտ(\*)  
անուամբ գիւղակ մը , ուր 8-10 տուն Հայեր  
տակաւին մնացած են . . . :

Դիւղակիս մերձ յԱրեւելակողմն Յ վայրկե-  
նի տարակայութեամբ ընտիր և պատուական  
տեսարան ունեցող բլրոյ մը վերայ կայ հնաշէն , այլ  
հաստահիմն վանք մի գմբեթաւոր՝ կառուցեալ  
յանուն Ս. Կարապետի , ում երբեմն այցելու-  
թեան կը գան հեռու տեղերէ , և ես չգտի  
վանուցս մէջ ոչ գրաւոր և ոչ շնչաւոր մի բռն ,  
միայն թէ անցելոյն մէջ ունեցած ընդարձակ  
շինուածոյ հետքերն զինքը կը շրջապատեն ներ-  
կայիս մէջ . . . : Բատ աւանդութեան՝ « վանու-  
ցըս շրջապատը ժամանակին քաղաք եղած է » .  
արդարեւ ոչ ոք կընայ տարակուսիլ երբ մի ան-  
դամ տեղւոյս հանգամանքներն ուշով դիտէ :

Այս տեղի Ս. Կարապետն փայտեայ փոք-  
րիկ դուռնէ մ'ի զատ ուրիշ բան մի չունի , որ  
յիշեալ գիւղի 8-10 տուն Հայոց հետ Տէր Յով-  
ոէի ծերունի , այլ կըակոտ քահանայի (\*\*) պահ-

(\*) Սոյն անուամբ երկու գիւղակներ ալ Հայոց  
Զորոյ մէջ կան , որոց վերայ արդէն խօսուած է ՏԵ-  
ՂԱԳՐՈՒԹԵԱՆՍ Ա. Մասով (Երես 179-180) :

(\*\*) Տէլի քէշիջ մականուանեալ , որ մի քանի ա-  
միս յառաջ վախճանեցաւ :

պանութեան տակն կը դժնուէր, որում երբ  
այցելութիւն տալոյ պէտք զգացի, ինձ ջերմ  
փափաք յայտնեց վանուցս վերապայծառու-  
թեան մասին, 'ի չնորհս հանդառնէն հէն ճը, զոր  
ըրած և քանի մը սենեակներու հիմունք դրած  
էր 2 կանգուն բարձրութեամիւ, որ բարձի թողի  
վիճակի մէջ կը կենայր :

ՊԺՆԿԵՐԹԻ ալեւորներէն տարեւորագոյնն  
ինձ պատմեց ասելով թէ՝ « մեր վանքն ասկէ  
50-60 տարի յառաջ հողային բաղմաթիւ կալու-  
ածներ ունէր, զորս այլ և այլ անձինք իւրա-  
ցուցին օդուտ քաղելով վանուցս անտիրութե-  
նէն » : Սոյն դառն ճշմարտութիւնն Հայարնակ  
գաւառաց ուրիշ բաղմաթիւ վանքերու ևս կը-  
նայ պատկանիլ :

Աւելորդ խոկ է ասել թէ դպրոց և անոր  
գաղափարն անծանօթ են տեղւոյս մերայնոցն,  
որք այդ մասին մի խօսք չ'առացին Ռւղեւորիս,  
և ես ուրիշ բան մը չէի կընար ընել յայս պա-  
հուն, բայց եթէ յուսատրել և մխիթարել զի-  
րենք իւրեանց տառապանաց մէջ, զորս կը կը-  
րեն տղիտութեան երեսէն, որոյ մահացու ապ-  
տակն է դիւղացի մանկան կլորիկ բերնին մէջ  
Ա և Բ զնելով իրեն ԼՈՅՄ տալն :

Աստի վերագառնամք դարձեալ 'ի Խնուսայ  
բերդաքաղաքն, որմէ մեկնած՝ ՈՃԵՐՆԻՍ շա-  
րունակեմք և ուղինիս դարձնեմք դէպ 'ի յԱրե-  
ւել, դաւառիս մնացեալ դիւղօրէկց վերայ գը-

բելոյ : Մեր սոյն ճանապարհին վերայ , երկու կողմէն ընութիւնն հետաքրքիր և զարմանալի շարքերով բարձր և ահագին պարիսպներ կազմած է լեռնակարկառներէ , որոց մէջ տեղերը խոտաւէտ արտօրայք և դաշտօրայք են . այսպէս  $2\frac{1}{2}$  ժամէն կը համնիմք ՚ի Զեվիրմէ , որ գաւառիս կարեռագոյն գիւղերէն մին է :

**ԶԵՎԻՐՄԷ .** — Կը գտնուի տափարակ դաշտի վերայ , ամեն կողմանէ շրջապատեալ է մորդագետիններէ և ընտիր արտերէ . ունի շրջանակածե նստուածք մը , որոյ առջեւէն կ'անցնի բառը ըստուած գետոյ մի զօրաւոր ճիւղն , որ այլ և այլ մասնաւոր ջուրց ամբողջութիւնն է . օդը բարեխառն և ջուրն ոչ այնչափ գովելի , հողըն արգաստոր : Խան բաւական թուով ուռենիք , որք շուք կը տան ամառ եղանակի կէս օրուան ատեն շուք չունեցող Հայ բնակչաց , որ 410-415 տուններէ կը բաղկանան , յորոց 40 տուն բողոքական են : Հայք ունին ԱՍՏՈՒԾԱԾԻՆ անուն ճռէ և հին եկեղեցի մը , գիւղէն 3-4 քարընկէց հեռու , կառուցեալ կոփածոյ սեւ քարերէ , անզարդ և բոլորովին թափուր . եկեղեցին չունի թուական՝ իւր տարեւորութիւնն յիշեցնող . քահանայի տեղւոյ կը ծառայէ մի անգիր տիրացու կամ լաւ ևս է ըսել մի ողորմելի արարած , որոյ լեզուն շատ անոն է մասն շարտկանին վերայ , զոր ՚ի ձեռին ունի միշտ :

Աստ կայ , նման Թուվանտուքին , նախակըր-

թարան մը Միացեալ Ընկերութեան պատկանող, որ կը հոգացուի դարձեալ (որպէս Քուվանտուքին) տեղական ծախիւք, բաց ՚ի դըպրոցական պիտոյքէ, զոր կը մատակարարէ Ընկերութիւնն, երբ բուհնահէ իւր ընդհանուր տեսուչ։ 40 էն աւելի աշակերաներ կ'ուսանին, այլ ցաւ է լսել որ անյարմար յարկի մը ներքեւ։

Տեղւոյս ուսուցիչն է Պ. Գրիգոր Տօնտեկտեան, տեղացի մի ազնիւ երիտասարդ, դառնկեր Քուվանտուքի լուսահոգի դասատուաց, անձնանուէր, զարգացեալ և որ աւելի լաւն է՝ օժտեալ ազգային ընտիր բարեմասնութեամբք. սա կը համարուի տեղւոյս առաջին լուսաւորիչ իւր թղթովն և գրչովն, և որոյ շուրջը շատ անգամ ամեն հասակէ ուսանողք կը գտնուին, որ քիչ միիթարական չէ և կը փափաքիմ տեսնել Հայարնակի ամեն գիւղերու մէջ ևս։ Ժողովրդեան նիւթական կացութիւնն ընդհանրապէս լաւ է. սակայն տակաւին ժամանակէն ներշընչութիւն մը ընդունած չ'ինելում յանդէտս կը սիրեն զիսաւարն առաւել քան զլոյս և այս բանն տեղւոյս նոր սերնդեան . . . համար կընայ ուղղակի դժբաղդութիւն մը համարուիլ։

Գիւղիս Հայ բողոքականք, արդարութիւն է խոստովանիլ, իւրեանց թուոյն նուազութեան հակառակ, ունին կանոնաւոր ժողովարան և դպրոց հանդերձ յարմար չէնքովն. ինձ պատմեցին թէ՝ սոքա շարունակ հետամուտ են տե-

զական բնակչաց տղիտութենէն , որով և անմիշ  
աբանութենէն օգուտ քաղել :

ԽՈԶԼՈՒ . — Սոյն գիւղն նախորդէն 2 ժամ  
հեռու է և կը գտնուի նորա Արեւմտեան Հիւ-  
սիսակողմն ու շինուած . . . : Ունի 85 տուն  
Լուսաւորչական և 3-4 տուն բողոքական Հայ՝  
վերջնոց պատմաբաննեան . յանձնուած է առաջ-  
նոց նոր սերունդն : Տեղւոյս բնակչաց նիւթա-  
կան վիճակն բարւոք է , այլ մեղք որ սոյն մը-  
խիթարական կողմէն օգուտ քաղող անհատներ  
կը պակսին . մանաւանդ երբ ժողովուրդն տրա-  
մադիր է զոհողութիւնք ընել կրթական գործ-  
ծին համար , Տեղագիր-Ռւզեւորն կը պարտաւո-  
րի դարձեալ կրկնել այս դառն ճշմարտութիւն  
թէ՝ « աստ ևս գործ կայ դործող չկայ » :

Խոզլուայ մէջէն կ'անցնին 'ի Բաղէշ , 'ի Սը-  
ղերդ և 'ի Վան Երթևեկող կարաւանքն և զօ-  
րախմբեր . . . : Գիւղիս առընթեր առուտակի մը  
եղերքը ուռեննոյ շուքին տակ նստած էի Երկու  
նորահաս դիւղացւոց հետ , յորոց մին տեղացի  
էր և միւսն Զէվիրմէցի . և մեր խնդիրն էր դըպ-  
րոցի վերայ , ժամաւ վերայ , տէրտէրի վերայ ,  
պատարագի վերայ , տիրացուի վերայ , թուղթի  
վերայ , դըչի վերայ և յետոյ Գրի վերայ ու վեր-  
ջապէս ամենուս խօսքերն թէ լինէին Աստուա-  
ծային և թէ լինէին մարդկային խմաստութեան  
վերայ , նոքա կը ցանկային և ագահօրէն կը ցան-

կային լսել ինձ , որ ոչ թէ միայն ձանձրոյթ մի չէի զգայը , այլ նաև շատ ուրախ կը լինէի՝ որ հետաքրքիր Հայ դիւղացւոց հետ էր իմ խօսքն:

Քարտէտէռէն . — Ունի 65 տուն Հայք , յորս կը տեսնուին նաև մի քանի եկովի Քրդաց բը-նակութիւնք : Հայք ունին ողօրմելի եկեղեցւոյ հետ խղճալի քահանայ մը . ուրախ եմ ասել որ սոքա դպրոց չեն մառացած և ունին աղնիւ և բաւական զարդացեալ ուսուցիչ մը , որ իւր կենաց օրինական 35 էն աւելի ուսանողներ կը դաստիարակէ և յաջողած է նոյնպէս զգիւղացիս վառ պահել դպրոցասիրութեան մէջ և համոզել զիրենք դպրոցական շէնքի մը համար , որ դժբաղդաբար կը պակսի և ես ցաւօք տեսի աշակերտաց բնակավայրն , որոյ բնակիչներն էին նոյնպէս ուսանողաց հայրերու երկրագործ եղինքըն և այլ կենդանիք :

Սոյն գիւղն , որ նման նախորդաց , նիւթապէս ունի իւր մխիթարական կողմն , արտաքին դժբաղդութիւններէ կիսով չափ զերծ է , թերեւս 'ի շնորհս իւրեանց ուսումնասիրութեան և շերմեռանդութեան . վասն զի ուր որ գիտութեան Լ08Ռ մուտ գտնէ , տգիտութեան խուռքն անկէ կը հալածուի և այս շատ բնական է :

Քարաքէօփրիւի տեսարանն խիստ զուարճալի է օդովին և մանաւանդ խմելոյ մասնաւոր ջրերովին , որոց տեսակէն քիչ տեղ կը գտնուի : Դիւղս տափարակ դաշտի վերայ կը գտնուի :

**ՀԱՐԱՄԻԿ.** — Շինուած է ընդարձակ բըլըոյ մը կողից վերայ . ունի 80 տուն Հայ բնակութիւնք , որոց մէջ 43 տուն ես բողոքական Հայեր կան : Մերայինքն ունին եկեղեցի մը և ամենաճարտար քահանայ մը , զոր ջանադիր դտայ բանալ տալոյ նախակրթարան մը , որուն այնպէս պէտք ունին , որպէս կազն՝ ոտից և կոյրն՝ լուսատու աշաց : Երբ աստ մի այլակրօն կարապետի հետ լեռնակարկառի շուքին տակը նստեցանք 'ի հանդիստ , բազում գիւղացիք զմեզ շրջապատեցին 'ի լսել բան մի , բայց ես այս պահուս բարոյւ շան ցաւէ մը բոնուած կը տանջուէի . ուստի խօսք տուի ընկերիս և ես լուսթեամբ որտիս ցան անցուցի , չեմ յիշեր թէ ինչ տեսակ զգացման տակ ելանք 'ի ճանապարհ շարունակել վերստին մեր ՈՒՂԻՆ :

**ԵԼՓԻԾ.** — Բնակութեանց թիւն է 50 , ունին եկեղեցի և քահանայ , դպրոց « Աստուած տայ » և այս առթիւ 30 ի մօտ դպրոցականաց վիճակն շատ արդահատելի է , առանց նոյն խկարդահատող մ'ունենալոյ :

**ԽԱՅԼ-ՆԵՐ-Լ.** — Ունի 50 տուն Հայ բնակիչ , որք ունին « Ս. Սարգիս զօրավար » անուն ունու եկեղեցի մը , նմանօրինակ քահանայ և դպրոց , որոյ մէջ աշակերտողքն աւելի արեգակնային լոյս կը տեսնեն քան թէ մայիսն ժողովուրդն շատ չքաւոր է և որ աւելի ցաւալին է՝ ստրուկ զգացումներով պաշարեալ :

ԴՐԻՄԱՆ . — Բնակութեանց թիւն 43 տուն  
և կայութեամբ կրօնական ու ազգային վիճակաւն  
դրեթէ յար և նման առաջնոյն :

## ԳԼ. ԻԱ.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԽՆՈՒՄԻ ԳԻՒՂՈՔԵՒՑ

ՔԱՂՔԻԿ . — Բնակիչք 43 տուն , ունին ե-  
կեղեցի , քահանայ և դպրոց , որոյ մէջ անձնա-  
նուէր դասատու մը կը կրթէ 30 էն աւելի ուսա-  
նողներ և կը դաստիարակէ :

Սոյն գիւղն Խնուս գաւառի Հարաւային  
մասի կարեոր գիւղերէն մին է . շինուած բնա-  
կանէն ահոելի լեռնակուտակաց միջավայրը ,  
որոյ չորս կողմն բնութեան տեսարանն մարդուս  
աւելի զարհուրանք կը պատճառէ քան թէ  
հրճուանք . ունի ընտիր օդ և պատուական  
ջուր . իրեն առջեւէն մի գետ կ'անցնի , զոր  
կ'անուանեն «Ս. Դանիէլ» , որ գարնան եղանակին  
շատ յօրգառատ կը լինի և երբեմն խսկ դժբաղդ-  
զոհեր տեղի կ'ունենան իւր մէջ : Գիւղիս մերձ  
լեռ մը կայ , զոր տեղական գիւղացիք « Դամե-  
քայ բերդ » կ'անուանեն :

Քաղքիկ , որպէս կ'աւանդեն , եղած լինել  
կը թուի « ընդարձակ քաղաք մը պարսպա-  
պատ » , որոյ հետքերն տակաւին նշմարելի են  
թէպէտ և ընդ աղօտս : Հիւսիսակողմն մի քանի  
նի քարընկէց հեռու աւերակ մի կը տեսնուի  
« Խաչ-քարեր » կոչուած : Քաղքիկին մօտ է ա-

իւր չէման անուանեալ ընդարձակ և հռչակաւոր  
մարդագետին . . . : Գարնան ատեն սոյն մար-  
դագետին Երկնից դրախտ Երկրին վրայ կը պատ-  
կերացնէ իւր բազմատեսակ ծաղիկներով : Տեղ-  
ւոյս Հարաւակոյմն բարձրանալով դէսկ 'ի Դա-  
մեք ըերդն՝ ձորակ մի կայ որ կ'անուանի «ի  
մի լարի», զոր կ'ստուգաբանեն իբրև թէ «Դա-  
մեք զկայէն սպաննելու նպատակաւ երբ աղեղն  
կը լարէ, յանկարծ աներևոյթ ձայն մի կը լսուի  
թէ «թէ մի լարեր», որ դարերու հոլովմանց մէջ  
աղաւազուելով եղած է «ի մի լարի». կը կար-  
ծուի թէ աստ Դամեք սպաննած լինի զկայէն,  
որոյ գերեզմանն իւր անուամբ կը յիշեն անորոշ  
բլրակ մը ցոյց տալով :

\* \* \*

Քաղքիկին դրացի կը տեսնուին Երկու այլ  
աւերակներ՝ մին «դանելոյ» (թերեւս Դանիէլի) և  
միւսն «քաղքիկ» ըսուած . Երկուքն ևս զուրկ  
չեն իրենց անցեալ փառաց տիսուր պատկեր  
ցոյց տուող նշաններէ, և խաչակիր քարերէ:  
Դիւզիս մէջ տեղը առուակ մի կայ՝ որ կը կոչ-  
ուի «խառն ի փողան» :

Տեղւոյս պարագայքն երբ սիրտող աչօք  
դիտեմք շատ դիւրաւ կարող եմք դուշակել թէ  
նախապէս քաղքաք եղած է, և ապա պղտիկ-  
նալով քաղքիկ անունն առած :

\* \* \*

Ասկէ տակաւին չմեկնած երբ ուզեցի եկե-

զեցին ալ տեսնել (որմէ հեռու շինուած էր դըպ-  
րոցն), գիւղին հիւրընկալ չայն կոչեց բարձ-  
րաձայն զժամակոչն, որ փայտէ փանալին պիտի  
բերէր և բանայր ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆՆ՝ որ շինուած  
էր անտաշ քարերէ, որք այս կողմերը առատ  
են: Եկաւ մեր կուղլան (տաճուռ) ժամակոչն, որ  
կը քայլէր երկնքի և երկրի մէջտեղէն և տուաւ  
ինձ հետեւեալ պատասխանն «Ճառէդ եմ, մեր  
ժամ տեսնելու բան չէ, զի ոչ զարդ կայ և ոչ  
ոլատիեր, շարական մ'ունիմք ինորն էլ ճոթերն  
(անոր ալ եղերքներ) անտէրի մկներն կոծած  
են, խսիր (փսխաթ) էլ Աստուած տայ»: սոյն դան-  
դատանաց խօսքերն ըրած ոլահուն բանալին  
ձեռքը դէպ ՚ի յեկեղեցին կերթայր զայն բա-  
նալոյ Ռւզեւորիս համար, որ արդարեւ սրտա-  
լոյզ պատասխանեցի խրեան տխուր բացատ-  
րութեան թէ «Ժամկոչ», թէ որ ձեր ժամտուն  
զարդարուած էնէր, շարականն մկներէն չ'վսա-  
սուելով նոր մնայր և ունենայիք խսիր կտմքորդ  
փոռուած, ես չ'պիտի փափաքէի ներս մտնել,  
վասն զի ՚ի Պօլիս զարդարուն ԵՀԵՂԵՑԻՆԵՐ շատ  
տեսած եմ, յորոց պարզագոյնին մէջ միայն կը  
բնակի ՅՈՒԻՒՑԵՆԱԿԱՆՆ և ահա այս մոտօք դուք  
կրնայք մխիթարուիլ ձեր այդ չի՞ն եկեղեցիովն:

Եկեղեցին չունէր նշանակելի մի բան և ես  
իմ վերջին բարեւն մեր կուղլան ժամակոչին  
տուած՝ մեկնեցայ:

ՔԱՓԱԼ, — 35-37 տուն, ունին եկեղեցի և

քահանայ, այլ ոչ դպրոց։ Աստ կը բնակին նոյն-  
պէս 45 տուն Քուրդ . . . :

**ԱՂՃԱՄԵԼԻՔ.** — Ունի 36 տուն Հայ բնա-  
կիչք, ընդ որս նաև մի քանի տուն Քուրդք.  
Հայք ունին եկեղեցի և քահանայ, իսկ դպրոց  
«Աստուած տայ»։

Դիւղիս հնութեանց և աւանդութեանց  
մասին զանց կառնում գրել, մինչ Գեր. Հայր Գ.  
Սրուանձտեանց յիշատակութիւն մըրած է իւր  
Դրոց և Բրոցին մէջ։

**ՊՈՒՐՆԱԶ.** — Ունի 30 տուն, եկեղեցի մը  
Թուրքականունի անուանը, որ «շատ դիւահարներ կը  
բժշկէ» կըսեն։ Դիւզս շատ ջրարբի է և խոտաւէտ  
ընդարձակ մարգերովիս, ունի Ս. Սարգիս անուն  
տաղաւարիկ մը, որոյ քովիերը կը տեսնուին միքա-  
նի տապանաքարինք, որոնց կը դիմեն ջերմե-  
ռանդօրէն քամի (Եկ) ունեցող հիւանդներ։

**ՄԱՐՈՒԻՑ.** — Յար և նման նախորդին՝ եկե-  
ղեցիովիս, քահանայովիս և դպրոցի չկայու-  
թեամբն։ Աստ տարազդիք չկան և կարելի է  
ասել իրենք աւելի նուազ ջերմեռանդ և ու-  
սումնասէր են քան թէ Պուրկազյիք։

**ԵԱՀԵԱ.** — բնակիչք 28 տուն, ունին փոք-  
րիկ աղօթարան մը և քահանայ մը։ իսկ դըպ-  
րոց, ազնիւ վերծանող, մի՛ հարցներ, զի սպա-  
տասիսանն բացառական լինելով՝ անբնական չէ՝  
որ զքեղ վշտացնէ։ Դիւղիս Արեւելեան Հիւսի-  
սակողմն մեծ բլրոյ վերայ ահագին վէմ մի կայ։

որոյ բարձրութիւնն 5-6 մետր կը լինի , սորա  
համար 'ի ծերոց կաւանդեն թէ «երկու եղբայր  
եղած են , յորոց մին առատ խոտ կունենայ իւր  
կենդանեաց տալու և միւսը չունենար , որ մի  
օր իւր եղբօրմէն խոտ կուզէ , իսկ ունեցող եղ-  
բայրն տալ չուզեր և կանդթանայ , որով քար  
կը դառնայ» զոր ց'արդ «քարացեալ եղբայր  
կանուանեն :

ԽԸՐԹ . — 45 տուն բնակիչ ունի՝ կիսով չափ  
Քուրդ . Հայք եկեղեցի ունին , քահանայ շատ  
անդամ չունին , իսկ դպրոց բնաւ :

ԵԿՆԻ-ՔԼՕՑ . — 23-25 տուն կայ , եկեղեցի  
և քահանայ , իսկ դպրոց «Աստուած տայ» :

ԽՐԻՄՆԽԱՅԻ : — Բնակիչ 26 տուն , որ դըժ-  
բաղտաբար . . . կրօնական որ և է մխիթարու-  
թիւն չունին , միայն թէ երբեմն այցելու քա-  
հանայ մի կը պատահի , որ կը մատակարարէ  
իւրեանց հոգեկան պիտոյքն . սոցա համոզումն  
այս է թէ «Աստուած եթէ ուզէ , մեզ եկեղեցի  
ալ , քահանայ ալ և դպրոց ալ կուտայ» : Սոյն  
դիւզն խորին արդահատանաց արժանի է :

ՇԱՊԱՏԻՆ . — Ունի 23 տուն բնակիչ , եկե-  
ղեցի և քահանայ , իսկ դպրոց ոչ . դիտես թէ  
իւրեանց համար Արեւու կամ աշաց լոյսն բաւական  
է , այլ ևս ի՞նչ պէտք է մտաց ԼՈՒՍԱԽՈՐՈՒ-  
ԹԻՒՆ :

ԱՐՊՈՒԽԱԴ . — Բնակութեանց թիւն 20 ,  
եկեղեցի ունին առանց դպրոցի և իւրենք նա-

Խանձելի վիճակ մը չունին դժբաղդարար :

ՍՈՅԼԻ Բնակութիւն 20, ունին միայն եւ կեղեցի :

ԳԵՂ-ՏԱԿԱՆ . — գիւղս ունի 20 տուն բնակիչ, յորմէ 15 Հայկական և 5 Քրդական են. Հայք կրօնական և Աղդ. բան մը չունին, հանգամանք ներով դրեթէ օտարացած են, թէպէտե կը խօսին Հայ լեզուաւ. կորուսած են Աղդ. յատկանիշնին և ստացած օտար յատկութիւնք, որով անբնական չէ իւրեանց համար թէ հեռանան և պաղին . . . :

ՍԵՒԷՆ-ՇԱՀ . — Ունի 12 տուն բնակիչ՝ մեծագոյն մասամբ Քուրդ. տեղւոյս Հայք նախորդէն մեծ տարբերութիւն մը չունին :

ՍՈՅԼԻ-ՈՐԻ . — Սոյն գիւղն շինուած է գաւառիս յԱրեւելահիւսիս՝ փոքրիկ հովտի մը մէջքիչ հեռու Քարաչօպանէն. ունի 10 տուն : Աստ 5 տուն եկաւոր Քուրդ կը բնակի, որոնցմէ Հայք մեծ դժգոհութիւն մը չունին : Տեղւոյս մերայնոցն եկեղեցի, քահանայ և դպրոց Աստուածտայ», այսուամենայնիւ գովելի է իրենց միաբանական ոգին, որով կը սիրեն . . . . և զՄուրք կրօն (Քարաչօպան գիւղի դէպքին մէջ յաղթանակ տանող մեր անվեհեր պղտօնն այս գիւղէն է) :

Գիւղս ունի մի սրբիկ՝ որ ուխտատեղի է ջերմունեցողաց համար :

Սայլորի բնակիչքն ուրիշ գիւղերու հետ

բաղդատելով՝ շատ աւելի կանեփ կը ցանեն :

Պաշտեայ. — Գիւղս ունի Երրորդութեան թու-  
ով բնակութիւնք, որք մնացորդ են նախնի  
բաղմահայութեան և այժմեանքն գոհ կը լինին  
ապրելով միայն իրենց պապերու ապրած տե-  
ղը, հոգ չէ թէ ներկայիս մէջ եկեղեցի և դըպ-  
րոց անուն չունի 'ի Պաշքէօյ :

\* \* \*

Խնուս գաւառի 27 գիւղերու վիճակագ-  
րութիւն ամփոփելով՝ կարող եմք գտնել 1360  
տուն զուտ Հայ, 15600 բնակչօք և արդէն վեր-  
ջի վիճակագրութիւնն ևս այսպէս ցոյց կը տայ :  
Դաւառիս համայն գիւղօրայք ենթարկեալ են  
Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի վանուց իրա-  
ւասութեան, որմէ շատ գժգոհ են այժմ և բը-  
նաւ յօժարամիտ չեն երեիր վանական տուր-  
քերնին (պտղի) վճարել . իսկ քաղաքականա-  
պէս կարնոյ առաջնորդութեան կը պատկանին,  
4-5 տարիէ ի վեր : Ընդհանրապէս խօսելով  
գիւղերն  $1\frac{1}{4}$ -2 ժամ հազիւ հեռաւորութիւն  
ունին իրարմէ յաջորդաբար :

## ԳԼ. ԻԲ.

### Մ Ե Կ Ն Ո Ւ Մ Ն

Խնուսայ յԱրևմտակողմն վերոյիշեալ Խող-  
լու գիւղի մերձաւոր տեղէն ճամբայ ելնելով  
շարունակեմք մեր ուղեւորութիւն և բաւական  
յառաջ դնալէն յետոյ կը համնիմք Թանը-ուէքէ

ըսուած ընդարձակ ձորաբերանները : Ներկայիս  
մէջ ուրախ եմ ասել որ մեղմացած է այս անո-  
զոք տեղին , չնորհիւ Բարեխնամ կառավարու-  
թեան պաշտօնէից հսկողութեան : Սոյն արիւն-  
ուուշտ վայրէն ոչ ժամու տեւողութեամբ յա-  
ռաջ դնալով պէտք կը լինի մեզ Քուրդ գիւղակի  
մը մէջ կենալ և աստ արտաւորեցանք Արևելեան  
կծող հովէ մը պաշտպանուելոյ համար դիշերել  
ահա հոս է հետաքրքիր տեսարանն . իւրաքան-  
չիւր ճանապարհորդ իւր բոլորտիքը սուրուխ  
(ԿԵՐԵ) քարեր շարելով նորա մէջ պառկեցաւ ,  
քարերն ՚ի պահանջել հարկին թշնամւոյն դէմն  
իրեւ դէնք սլիտի գործածուէին , ճեռաց բաղ-  
մաթիւ գաւաղանք պատրաստուեցան՝ քարանց  
աջակից ընկեր , իսկ ինձ գալով ճանապարհոր-  
դաց նման մոտաւանջութեան ովկիանին մէջ ըն-  
կըղմած չէի . վասն զի վեցաշեայ պահապան մը  
իմ կենաց կը հսկէր և փառք նախախնամու-  
թեան , որ բնաւ պէտք չունեցանք այդ տա-  
րերց , որք լեզու չունին , շունչ չունին . սակայն  
չործ տեսնելոյ կը կոչուին շատ անդամ : Այս  
տեղը մեզ տեսութեամն եկան կոնագլուխ և  
բարձրահասակ և անձինք , որոց լեզուն պարս-  
կականի հետ խառն էր , գիտէին խօսիլ նաև  
գաւառաբարբառ . Հայերէն , այլ իրենք Հայ  
չէին , աղքութիւննին անծանօթ , հագած ձեռ-  
ւերնին անորոշ և հեծած էին սեւ , կարմիր ,

ճերմակ ու կապոյտ նժոյգներ . սոքա կը խօսէ .  
ին կոկորդային լեզուաւ մը , որ լեռնաբնակ  
ժողովրդոց բնական է և յատուկ : Կը խօսէին  
բոլորովին աներկիւղ և կը թուէին լինել բա-  
ցարձակ տէր այդ երկրին , թէև իրապէս շունէ-  
ին ափ մի հող իւրեանց կոխած տեղերէն : Սոյն  
խօսուն արարածներէն բնաւ մսաս մը չ'կրեցինք  
և իրենք հեռացան մենէ մտահոգ : Այս դի-  
շեր՝ որ բնաւ լուսնոյ դէմք չ'տեսանք , հակա-  
ռակ իւր մօտաւորութեան , մեղ համար դժբաղ-  
տութեանց մեծագոյնն եղաւ , մանաւանդ երբ  
Արշալուսոյ ծագումն ողջունելոյ բախտին հան-  
դիպելէ տակաւին օ ժամաւ չափ հեռու էինք .  
այս պահուս մեր Հռչէն Երկինքն անգթացած՝  
անձրեսի ամենասարսափելին մեղ կը խրկէր՝ այն  
ինչ Երկիրն իւր կաթիլներուն երբէք պէտք մը  
շունէր եղանակին նայելով . մենք արդէն բնու-  
թեան օրինաց դժած սահմանէն դուրս ելնել  
չէինք կարող , ուստի ծայրագոյն համբերու-  
թեամբ առաւօտ ըրինք՝ ողջունելով ոչ թէ միայն  
զարշալոյսն այլև հրաշափառ Արեգակ մը , ո-  
րոյ նման , տարուան շրջանի մէջ , դուն ուրեք կը  
տեսնուի մահկանացուներու աչաց :

Առաւօտ ՚ի ժամ 12 տեղէս մեկնեցանք՝  
հոգինիս մեր բերանը հասած , բայց ոչ դուրս  
ելած : Մի քանի վայրկեան յառաջ գնալով ժա-  
մանեցանք ՚ի տաշտն ԹԱՐԴՄԱՆՈՒ , որոյ ունե-

ցած բաղմաթիւ բլուրներ և ձորերն Բարձր Հայոց  
Արևելքան - Հարաւային սահմանն կը կազմեն :  
Երկիրն է խոտաւէտ, օդաւէտ՝ դրախտանման  
ընտիր տեղիք, յորս շատ երջանիկ կրնան ապ-  
րիլ Հայ գիւղացիք, եթէ միայն Աստուծոյ և բը-  
նութեան հետ գործ ունենան և արդէն դա-  
րերէ ՚ի վեր վարժուած և գոհ են ղԱստուծոյն  
Աստուծոյ՝ և զկայսերն կայսեր տալով. Դաշտիս  
անունն զիս թէև հետաքրքրեց, այլ գոհացու-  
ցիչ աւանդութիւն մը կամ տեղեկութիւն չկըր-  
ցայ լսել մէկէ մը :

Ասկէ ետքը 4 ժամ կանոնաւոր ճամբայ  
կտրեցինք անկանոն մարդոց հետ, և այս ահա-  
գին տարածութեան մէջ 2 հատ քուրդ գիւ-  
ղակներ միայն կային, յորոց խրաքանչիւրն 10-  
12 տնական հաղիւ կը լինէին և բնակիչներն վը-  
րանաբնակ չեն. այլ նստկան լինելով կը վարեն  
բաւական խաղաղ կեանք՝ այլոց հետ բաղտա-  
տելով. Այն անձուկ գիւղակներն ունին ընդար-  
ձակ արօտատեղիք և արտօրայք, որք շատ են  
հարիւրաւոր բնակութեանց: Աստ երկու հա-  
մազգայինք միացած մի Մահմետական ընկերի  
հետ՝ մեղ պատահեցան, որոնցմէ մէկն տուած  
իր վայրկենական բարևին հետ կամէր մեղ վար-  
ժապետ լինիլ՝ զգուշութեան դասեր տալոյ հապ-  
ճեպով մը, առ այս մենք ոտք առինք և թը-  
ռանք ուղինիս շարունակել. երկիւղի տագնա-  
պը տակաւին մեր սիրտերն ահով և դողով պա-

շարած է և տեղւոյ բնական դիրքերն անդամ՝  
սոսկում պատճառող են . մի ժամու տեւողու-  
թեամբ տակաւին յառաջ գնալէ յետոյ մեր դէմն  
կ'ենեն դարձեալ լայնատարած դաշտօրայք ,  
որոց Արեւելակողմն այնչափ լերանց ծերպեր և  
խորունկ ձորեր կան , յորս հին ժամանակ հա-  
րիւրաւոր աւազակներ և աւարներ տարած մէ-  
ջերնին բաժնած են : Սոյն կողմերը հսկողու-  
թեանց պէտքն քիչ զգալի չէ երթեւեկոզաց հա-  
մար : Այս տեղերը մի մարդագետնի եղերքը  
գարնան եղանակին բազմաթիւ գեղեցիկ տեսա-  
րաններ կը ներկայանան ուղեւորաց աչքին և  
կը խօսին նոցա սիրտերուն հետ , որք արովիե-  
լով 4 ժամէն կը համնիմք Երասխ գետոյ մի  
փոքրիկ ճիւղի ավերը , ուր մեր « կամուրջի  
անհամբեր » Երասխն յԱրեւմուտէն կ'ընթանայ  
դէպ ՚ի յԱրեւել և երթալով կը շատնայ , Արա-  
րատ նահանդն ամբողջապէս կը չափէ , նախի-  
ջեւան և Գողմն գաւառները կը կտրէ և վեր-  
ջապէս օձապտոյտ գնալով Երկրի Արեւելակողմն՝  
Փայտակարան աշխարհ և հոն « Պալասան » ան-  
ուաննեալ դաշտին մէջ կը միանայ Կուր գետոյ  
հետ ու կը թափի ՚ի կասպիական ծովս :

Մենք տակաւին Երասխայ յիշեալ ճիւղի  
եղերաց վերայ՝ բնութեան տեսարանքն անկշու-  
րէն կը դիտեմք . բնութեան այս գեղազուարճ  
տեղը շատ բնակիչներ կը պակսին : Երկիրն միշտ  
պատրաստ է ՚ի պազարերել և յամենայն դար-

նան կը բանայ իւր արդանդ մարդոց պարդեւ-  
ներ տալ իւր կենսատու օդին հետ ։ բայց քանի  
շաւ է ասել աստանօր թէ ուր ժրաբազուկ ժո-  
ղովուրդ՝ ընդունողք այդ պարդեաց և շնչողք  
այդ . . . օդին, զոր որչափ գովիմ՝ քիչ է : Զեմ  
ուզեր տեղւոյս հանդամանքներն դիտելոյ հա-  
մար ասկէ աւելի յապազիկ աստ, ըստ որում  
զգացմունքներն կընան իրարու բաղիսիլ և այդ  
հակոտնեայ բաղխմանէն յառաջ գալիք ելեք-  
տրական կայծն զիս կարող է շանթահարել, ո-  
րով բազում ուշակորոյս պարզամտաց միտքերն  
կը մօլորին և չեն կարող տեսանել զւարն և զբա-  
րին կամ իրականն և պատրականն, որոց բնու-  
թիւնն զիրենք իրարմէ մշտնջենապէս անջատած  
է և չեն մօաւենար ինամի լինիլ իրարու, մեկ-  
նիմք ուրեմն այս . . . վայրէն :

Եարունակեմք մեր ուղին դարձեալ և 2  
ժամէն կը համնիմք ժուռտէնէ ըսուսծ քուրդ  
գիւղը, որ հակառակ իւր բնակութեանց թուոյ  
նուազմանն՝ ընդարձակ հողեր ունին 'ի վայե-  
լումն : Սոյն երբեմն Արմենական և այժմ Քըր-  
դական գիւղն շատ հին է : Ասկէ մեր ընթացքն  
կըկին յառաջ վարելով հարկ կը լինի նորէն ըն-  
դարձակ լեռնահովտաց մէջէն անցնիլ. այս կող-  
մերը գարունն շատ ուշ կը գայ և գալին վերջն  
ալ շուտով չ'երթար . նոյն համեմատութեամբ է  
նաև ձմեռուան գալուստն . այսպէս ուղինիս  
յառաջ տանելով կ'անցնիմք 3-4 քուրդ գիւ-

զակներ , որոց բնակութիւնքն շատ տխուր են և ողորմելի . բայց ինչ զարմանք , որ բնակիչքն երջանիկ են և դոհ իւրեանց վիճակէն . պահաժըստութիւն ինչ է սոքա չգիտեն . այդ ազգակործան սովորութիւնն , գիտես թէ Արմենական ժողովրդեան յատուկ է : Այս եղանակաւ 8 ժամ ճանապարհորդելէն զինի կը ժամանեմք այս անգամին խիստ ընդարձակ բլրոյ մառընթեր , ոյր կողերուն վերայ շատ անգամ ճանապարհորդք կը գիշերեն : Այս տեղեաց բնութիւնն անգութէ և մանաւանդ ժլատ մեր երես դոնէ մի անգամ ժպտելոյ . անամոց անգամ սնունդ մատակարարելոյ կը դժկամակի և արդէն մարդկային քրտինք իր վերայ չընդունիր և վասն այն պտղարերել չգիտեր :

Աստ անքուն առաւօտ ընելով մեր դարձեալ Արեւելեան Արշալուսոյն հետ ելանք կը կին շարունակել զմեր ուղին , մի և նոյն ուղղութեամբ , որ կը տանի զմեղ 'ի կարին :

## ՊԼ. ԻԳ.

ՄՈՒՏՆ Ի ԿԱՐՆՈՅ ԳԱԻԱՌՆ ԿԱՄ Ի ԲԱՐՁՐ ՀԱՅԱ

Ելնեմք հւայրեւուն անուանեալ ոլորապտոյտ լեռները և անոնց հովիտներէն երթալով այսպէս կ'անցնիմք կարնոյ Հարաւային լերանց շղթայներէն : Ամբողջ մէկ օրուան ճանապարհ այս կողմերը բնակութիւնք չկան . այլ ամեն տեղ լի են հովիտներով և լեռներով , որոնք կը նու-

ցանել հաղարաւոր ոչխարներ և դուարներ : Տեղ-  
ւոյս բնութեան հարուստ կողմերէն ոչխարաց  
վաճառականներն (Ա-ՀԷ) միայն կը շահին , թող  
տալով հօտերնին այս տեղերը 3-4 ամսոյ ժամա-  
նակամիջոցին մէջ շատ լաւ կը պարարտանան և  
նորէն կը տանին իրենց երկիր , ուր թերևս չ'կան  
սոյն օրինակ անտէր վայրեր , որոնց մէջ ամառ-  
ատեն երբեմն ապահովութեան համար կառա-  
վարութեան պաշտօնեայք կը հսկեն : Վերոյիշ-  
եալ տեղէն  $\frac{1}{2}$  ժամ տեւողութեամբ ուղի առ-  
նելով կը հասնեմք «Դայլայլի» ըսուած ահագին  
ձորամէջերը , զառիվայրերը , ասկէ յետոյ կ'եր-  
թամք յաւեր քաղաք (Խորառ ՀՀԷ) ըսուած ա-  
ւերակը , որ կը գտնուի մեր ճանապարհի ձա-  
խակողմն և մեր դէմքն կը նայի ուղղակի ՚ի Հիւ-  
սիս : Սոյն հինաւուրց և անյիշատակ աւերակի  
մի քանի տանց հիմունքներն տակաւին կը տես-  
նուին , որոց քով երբեմն հսգնած ճանապար-  
հորդք հանգիստ կ'առնուն՝ երբ Արևու կիզմանէն  
նեղութիւն մը զգայ . ըստ աւանդութեան՝ «Կար-  
նոյ վաճառաշահ տեղերէն մին եղած է » այդ  
աւեր քաղաքն . ասկէ մէկ ժամու շափ ևս տա-  
կաւին երկայն և զառիվայր ձորամէջերէ գնա-  
լով կ'իջնեմք ընդարձակ երկրի վերայ , ուր գը-  
րեթէ մի ժամ ևս ընթացքնիս շարունակելով կը  
ժամանեմք ՚ի Կարին , որոյ գաւառին վերայ(\*) ա-  
հա կը խօսիմք :

(\*) Մեր Տեղագրութեանց Ա. Մաթի 49 Կրորգ ե-

Սոյն գաւառն . . . ունի բարձր դիրք՝ որ մէ ծագած է իւր նահանգական հին անունն , ինչ է գեղեցիկ տեսարաններով , շրջապատեալ հեռաւոր և մասամբ մը մերձաւոր լեռներէ , մանաւանդ Արեւելեան և Արեւլահարաւային կողմերէն . լերանց մէջ նշանակելի է ուշագնու և գուշագնու , որոնք իրենց դրից համաձայն ընդունած են անուննին , նոյնպէս նու դաշն կոչուած քիչ հեռաւոր լեառն , որ սոյն լերանց շարունակութիւնն է : Այս լերանց մէջ կը դըտնուին վայրի կենդանիք՝ ինչպէս եղջերու , դայլ արջ , աղուէս , նապաստակ և այլն :

\* \* \*

Երկիրն ունի մի լայնածաւալ դաշտավայր , որոյ երկայնութիւնն 7-8 ժամ է յԱրեւելէն յԱրեւմուտ և լայնութիւնն օ ժամ Հիւսիսէն 'ի Հարաւ . սոյն դաշտի մէջն է ծովակ կամ շամբ բեսի մէջ մտած եմք 'ի կարին , Տրապիզոնի Արեւելեան Հարաւային ուղղութեամբ եւ ասկէ ի Մուշ մեկնած . իսկ այժմ տարրեր զծով մը կը վերադառնամք 'ի կարին , որոյ վերայ դործիս Ա. Մասի յիշեալ երեսի մէջ ըրած խոստմանս համաձայն կը գրեմք՝ ինչ որ պէտք է ու Տեղագրութեանս նպատակէն դուրս չէ եւ արդէն խոհեմութիւն կը համարիմք , մանաւանդ արտաքին պատճառներ ունիմք կարնոյ վիճակին վերայ ամփոփ գրելոյ եւ մեղ համար որոշեալ սահմանէն դուրս չելնելոյ :

Կարնոյ կոչուած լճակն, զոր կը իիշէ մեր Խորենացի Հայրն :

Գաւառիս օդն շատ ցուրտ է, այլ քաջառողջ, որոյ բնակիչք առ հասարակ հուժկու կաղմուածք և բարձր հասակ ունին հանդերձ առողջութեամբ : Եփրատէսի զօրաւոր ճիւղն, զոր Հայք կ'անուանեն «Սև գետ» և մահմետականք (+մթ սու) , կը բղիսի գաւառիս այլ և այլ լեռներէն, մանաւանդ Ոսկեանց կամ Սուքիասանց և կամ Տումու ըսուածներէն, որք կը գտնուին Կարնոյ գաշտի Արեւելը :

Կարնոյ գրացի նշանաւոր լեռներէն յԱրեւելակողմն «Ս. Նշան» լեռնագօտին, ոյր վերայ մատուցիկ մի կայ, և որոյ անուամբ լեռնագօտին կ'անուանի . նոյնպէս Գոհանամք լեառն որ նախընթացի շարունակութիւնն կընայ համարուիլ, սոյն վերջի լերան նկատմամբ կ'աւանդեն թէ «Երբ Նոյայ Տապան ջրոյ երեսը կը ծփայր և ջուբերն տակաւ առ տակաւ իջնալոյ վրայ էին տապանն քսուած է այս լերան և Նոյ Նահապետ «Գոհանամք Արարչին» ասելով վառք կը տայ և ց'արդ լերան անունն մնաց «Գոհանամք լեռ» : Երկրի հողն ընդհանրապէս արդասաւոր է և խիստ շատ կը ցանեն ցորեան և հաճար :

Այս գաւառի մէջ ջերմուկներ շատ դտնուելով՝ պարբերաբար երկրաշարժ տեղի կունենայ և տարի շըլինիր որ մի քանի անդամ ցնցում չը կրէ, որպէս կը պատմեն տեղացիք :

Գալ. Իդ.

ԿԱՐԻՆ ՔԱՂԱՔ ԿԱՄ ԹԵՌԴՈՒՊՈԼԻՍ

Կարին, զոր Մահմետականք էրզրում կ'անուանեն, գաւառիս ընդարձակ կուսակալութեան կեդրոնատեղին է ամենայն մասամբ, որ շատ ստոյգ կը լինի անուանել զայն Մայր-քաղաք։ Ենուած է վերոյիշեալ դաշտավայրի յԱրեւելահարաւ և կը գտնուի Բարձր Հայոց կեդրոնական Արեւելը. ունի լայնատարած նստուածք մը. ըստ պատմութեան՝ « այս քաղաքն Յունաց Թէոդոս կայսրը յանուն իւր շինել տուած է Անատօլ կոչուած զօրավարին ձեռամբ » :

Քաղաքն ունի բաւական լաւ տեսարաններ և գաւառին դիւզերն իւր զգալի հորիզոնն կը կազմեն (Հիւսիսէն մանաւանդ), օդն՝ որպէս կանխաւ յիշեցի, հակառակ իւր ցուրտ բնութեան վիճակին, քաջառողջ է. Սեսլումբեր ամսոյ 15–20 էն սկսեալ ձմեռն ինքինք ցոյց կը տայ և բնակիչքն պարտաւորուած են բնութեան ըրած սոյն կանուխ այցելութիւնն ողջունելոյ համար, վառելեաց և հագանելեաց մասին պատրաստութիւնք տեսնել. գարունն սոյն համեմատութեամբ շուտով չ'սկսիր : 1882 Մայիսի ծաղկազարդ ամսոյ 9 ին բաւական քանակութեամբ ձիւն տեղաց, մանաւանդ մերձակայ լերանց վերայ, այնպէս որ մենք պարտաւորուեցանք, ձըմեռուան նման, զմեղ պահպանել ցրաւյ աղդե-

ցութենէն, որով մարդս կրնայ սովորականէն առ ւելի մխասութիւն. վասն զի զեղանակն ամառուան կարծելով ըստ այնմ կը հագուին, յանկարծ վը-ըայ կը հասնի միջանկեալ ձմեռ. մը (1-2 օրեայ) և զբնակիչս պաղեցնելով տկարութեան կ'են-թարկէ :

Կարին իւր հիմնարկութենէն 'ի վեր ընդ միշտ պաշտպանողական դիրքերէ զուրկ չէ զըտ-նուած, որպէս է և այժմ չնորհիւ մեր կայսե-րական կառավարութեան իմաստուն հեռատե-սութեան, որով խրամներ և այլ և այլ ամբու-թիւնք շինել տալով՝ զքաղաքն ապահոված է արտաքին թշնամիներէ, որք որչափ ալ հնարա-գէտ և ռազմագէտ լինին՝ դարձեալ դիւրաւ մխաս հասցնելն անկարելի է : Քաղաքիս բերդն տակաւին կիսով չափ գործածելի է և 'ի հնուց շատ ամրապինդ կառուցեալ: Բնակութիւնքն քարաշէն են մեծագոյն մասամբ, առ հասարակ երկայարկ և տեղական ճաշակաւ կառուցեալ դուն ուրեք կը տեսնուին նաև եռայարկ տու-ներ: Քաղաքն ունի կառավարական կանոնաւոր շէնքեր և բոլորովին անծառաստան է :

Կարնոյ համայն բնակութեանց թիւն է 40,000 տուն, զոր կը նշանակեմ աստ թուոց ա-ռաջնորդութեան կարգաւ: Ա. Մահմետական 7,600 տուն: Բ. Արմենական 2,000: Գ. Հռովմէա-կան (Հայ կաթոլիկ) 150: Դ. Յոյն 100: Մնաց-

եալ 150 կը քաղկանայ Ամերիկացի, (Հայ Բոզոքական) Լատին (Մայրապետ և Գափճեան Քրէւներ) և Պարսիկ տարբերէն :

Մահմետականքն ունին 25-30 հատ մզկիթ, յորց մեծագոյն մասն ունի խրեան յատուկ նախակրթարանն (էէնէռոյէն) և խրաքանչիւրին մէջ կը գտնուին 20-30ական ուսանողք, որք կը դաստիարակուին տակաւին հին դրութեամբ, 'ի բաց առեալ վերոյիշեալ կրթարանքն, ունին նաև 2 այլ ուսումնարաններ (Բուշչէն). սոյն երկու վարժարանաց ուսանողներուն թիւն 200 էն աւելի է :

Աստ անպատշաճ չեմ համարիր միջանկեալ սպատմութիւն մի ընելև ապա շարունակել. «Կարնոյ Հայոց բնակութեանց թիւն առկէ 60 տարի յառաջ 4,000 էր և 1829 յուլիս 10ի սպատերագմըն խաղաղելէն ետքը երբ Ռուսիոյ Պասքովիչ զօրապետն կարինէն իւր զօրքերն առած կը մեկնի, կարնոյ նոյն ժամանակի 4,000 տուն Հայերն ևս կը փափագին գաղթել գիւղերու հետ, գալիք երկիւղներէն պաշարուած. սակայն նոյն ժամանակի Առաջնորդ կարապետ եպիսկոպոս Հնուտցի (<sup>\*</sup>) ժողովրդեան այս տրամադրութիւնք գիտնալով գեղեցիկ հեռատեսութեամբ՝ կը գըէ 'ի Պատրիարքարան կանխապէս դարման մը տանիլ կամ ազդու միջոց մը խորհիլ

(\*) Գիւղ մի է 'ի Սպեր գաւառի :

ժողովրդեան գաղթականութեան առաջքն առաջի սելու համար, նոյն ժամանակուան Պատրիարքը և Ամբրայքն խորհուրդ ընելով որոշում կը տան, փոխանակ այդ ազնիւ Եպիսկոպոսին աջակցելու կամ խորհուրդ մը տալու, անմիջապէս պաշտօնանկ կը նեն դանի, այդ լուրն որուած լինելուն համար և թէ ի՞նչ պատճառաւ Եպիսկոպոսն իւր անձնանուիրութեան զոհ կերթայ չգիտեմք, միայն թէ զինքն պաշտօնանկ ընող գիրն Պատրիարքարանն կը յղէ իրեն, որոյ յաջորդ ընտրուած իսրայէլ անուն վարդապետ մը ճամբայ կը հանեն 'ի կարին», «Կարապետ Եպիսկոպոսն իւր պաշտօնանկութեան լուրն Առածին պէս սաստիկ կը յուզուի և կը ցաւի ասելով թէ «իմ տիրող կառավարութեան և Աղքին ծառայութիւն մը մատուցանելու բաղձանքով իմաց տուի Պատրիարքարանին գաղթականաց առաջքն առնել տալու համար և Պատրիարքարանն, զիս քաջալերելու փոխան, պաշտօնանկ ընելով իմ տեղ ուրիշ մարդ կը կարգէ, կեցիր ուրեմն, որ ես զկարին աւերակ դարցունեմ, թո՛ղ Պատրիարքարանէն խրկուած նոր Առաջնորդն (իսրայէլ վարդապետ) աւերակաց վերայ առաջնորդ լինի», «այս խօսքին վերայ ինքն ես մղում կը տայ գաղթականութեան իմաց տալով ամեն կողմը թէ «ողատրաստուեցէք գաղթելու և ես ընդ ձեղ եմ». ամենք կը պատրաստուին և միահամուռ կը գաղթեն 'ի

Թուսաստան և երբ կը հասնին Հասան-Գալէ  
ըսուած գիւղաքաղաքն Խորայէլ վարդապետն  
ետենուն կը հասնի զիրենք (զգաղթականս)՝  
վերադարձնելու . սակայն Կարապետ Եպիսկո-  
պոսի թելադրութեամբ լաւ ծեծ մը կուտէ գաղ-  
թականներէն և նորէն կը վերադառնայ 'ի Կա-  
րին , ուր 20 տուն միայն Հայ կը գտնէ , զոր ի-  
րեն համար չէ ժողովուրդ համարելով չ'կենար  
'ի Կարին , այլ վերադարձ կընէ 'ի Պօլիս» : Այս-  
պէս ահա Կարնոյ քաղաքն սոյն օրինակ անց-  
քեր տեսած է :

Գաղթականութեան յիշեալ թուականէն  
ց'արդ 56 տարի է . սոյն ժամանակամիջոցին մէջ  
այդ 20 տունն 2,000 եղած է թէ գաղթականաց  
ոմանց վերադարձովն և թէ այլ և այլ դաւառ-  
ներէն դալովը . ուստի ներկայ թիւն թէև կէսն  
լինի գաղթելոց թուոյն , այսուամենայնիւ գար-  
ձեալ պահ մը կընայ զմեզ մխիթարական տպա-  
ւորութեան մը ներքեւ պահել և չ'թողուլ որ  
յայտնեմ մտքիս և սրտիս զգացած արդար ցա-  
ւըն ընդդէմ այն Պատրիարքին և Ամիրայիցն ,  
որք անխոհեմութեամբ տեղի տուած են այդ-  
մեծ գաղթականութեան , որ յիւր ժամանակին  
Ազգին և միանգամայն Տէրութեան հաւասարա-  
պէս ահագին վնասուց պատճառ եղաւ :

ԿԱՐՆՈՅ ՀԱՅՈՅ ՀՈՅԱԿԱՊ ԵԿԵՂԵՑԻՆ

Յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ

սոյն եկեղեցին 42-43 տարուան է և շինուած  
20 սիւներու վերայ, կոփածոյ կարմրագոյն քա-  
րերէ, իւր ընդարձակութեան համեմատ բարձ-  
րութիւն չունի, այսու ամենայնիւ իւր հոկայու-  
թիւնն Օսմանեան Ասխական մասին վերայ հաղ-  
ուագիւտ է. ունի Յ խորան և երեք դրունք, ա-  
ռաջինքն ևս վոտքը են եկեղեցւոյ մարմնոյն հա-  
մեմատութեամբ. սիւներն միակտուր են, որք  
տեսանողաց իրաւի զարմանք կը պատճառեն:  
Կանանց վերնատունն ճաշակաւոր ճարտարապե-  
տի մը դործ է:

Եկեղեցւոյ Հարաւակողմն կից մատուռ մի  
կայ քարաշէն, զոր « տաճար » կ'անուանեն և է  
անթուական: Եզր Կաթուղիկոսին օրով ոոյն  
մատրան մէջ եղած է այն ժողովն, յորում Հայք  
միաբանած են Յունաց հետ: Եկեղեցին ունի  
գեղեցկաշէն զանդակատուն մը և իրեն յԱրեւ-  
մտահիւսիս մէկ քարընկէց հեռու ընդարձակ  
գերեզմանատուն մը՝ որ ծառաղարդեալ և կա-  
նոնաւորեալ լինելով մեծ հաճոյք կ'զգայ տեսա-  
նողն, թերեւս մի և նոյն հաճոյք կ'զգան նաև  
այդ յաւիտենական ննջարանի մեռելոց հոգինե-  
րը, տեսնելով իւրեանց 'ի հող տապանի թաղ-  
ուած մարմիններու սոյն զուարճալի բնակավայ-  
րըն, ուր կիւրակէ և տօն օրերը գեղեցիկ ժա-  
մանակ կ'անցունեն քաղաքիս դրեթէ ամեն կար-  
գի աղգայինք:

Կարնոյ Հայոց հին պապերու այս գերեզ-

մանատուն տեղւոյն ծանօթներէս միոյն առաջ-  
նորդութեամբն տեսնել ուզեցի և 'ի միասին  
գալով մտանք յայս նուիրավայրն , ուր երկու  
հոգիներ մի անհոգի տապանաքարի քով կե-  
ցած յիշատակագիր մը կ'ընթեռնուին և կը վի-  
ճէին . իւրեանց վէճի առարկայն էր թէ « երբ  
երկու տարասեռ և տարակրօն մեռեալներ մի  
և նոյն գերեզմանոցին մէջ իրարու քով թաղ-  
ուին , արդեօք իրական ապացոյց մի կայ թէ  
սոցա հոգիներն իրարու հետ կը կռտին կամ ի-  
րարու դէմ թշնամութիւն կը մնուցանեն 'ի հան-  
գերձելումն և կը դիմեն Արդարոյն » . առքա  
զիս դատաւոր ընտրեցին , որ զիրենք նախա-  
պէս ողջունած և լուութեամբ կեցած մտիկ  
կընէի իրենց հոգեկան կամ մարմնական այս վէ-  
ճին . տակաւին և ոչ միոյն իրաւունք տուած՝  
ասացի եռ աշխարհական եմ և կրօնական այս  
օրինաց հարցերու վճռատու լինել չ'կարեմ , մի-  
այն թէ մարմնաւոր աշխարհիս մէջ ապրած տ-  
տենք լոկ զհոգեկան մտածելն կը նշանակէ քան-  
դել մարմնոյ և հոգւոյ միացմամբ կաղմակեր-  
պեալ՝ Աստուածային պատկերով մարդկեղէն  
խորհրդաւոր շէնքն , որոյ որ և է մի մամն վրշ-  
տացած ժամանակ կը վշտանան նաև մնացած  
բոլոր մասելն ևս , ուրեմն մարմնոյ բոլոր ան-  
դամներն տարբեր պաշտօնով հաւասար իրա-  
ւունք կը վայելէն այդ շէնքի գերագոյն ճար-  
տարապետին առջև և հաւասարութեան այդ-

սուրբ օրէնքն սիրել և յամենայնի դժնուիլ հաւատարիմ յանձնարարած՝ բաժնուեցայ իրենցմէ :

Աղնիւ վերծանող, սոյն միջանկեալ պարբերութեան մասին ներողամիտ եղիր, զի դրածն անկարեռը մի բան չէր և մեր Երկրի ամեն կողմի Հայոց կեանքն այս խնդիրէն իւր բաժինն ունի, զոր մարմնաւոր կամ հոգեւոր կարծելուդ մէջ աղատ ես, միայն թէ վերջի անունն տալոյ սխալանաց մէջ ընկնելէն զգուշացիր, ահա կ'ասիմ քեզ :

\* \* \*

Գերեզմանոցիս մէջ կայ նոյնպէս սիրուն մատուռ մը, զոր Ռուսք 1878 թուականին կառուցանել տուած են «ի յիշատակ վերջի պատերազմին աստ Օսմանեան զինուց առջև հրացանով ընկած Ռուսական հասարակ զինուորաց, որոց գերեզմաններէն շրջապատեալ է այդ մատուռն, որ կը կենայ այժմ դրօքն փակելոք :

## ԴԼ. ԻԵ.

ԲԱՐԵԲԱՐԱՅ ՅԻՇԱՏԱԿՆ ԱՆՄԱՀ Է

Կարնոյ մէջ ժամանակ առ ժամանակ տեսոնուած են և կը տեսնուին մեծահոգի աղդայինք, յորոց մի քանիներու անուանքն իւրեանց գործերով աստ նշանակել արժան կամ լաւ ևս է ըսել պարտք կը համարիմ: Մեծանուն և բարեյիշատակ Խաչատուր էֆէնտի Փաստը:

մաճեան , որ 500-600 ոսկի ծախք ընելով՝ Կարս-  
նոյ եկեղեցւոյ վերոյիշեալ զանգակատունն գե-  
ղեցկօրէն շինել տուած է , զոր արդէն 1858ի երկ-  
բաշարմն կործանած էր : Մեծանուն և բարեյի-  
շատակ Յակոբ Էֆէնտի Մակարեան , 1000-1500  
ոսկւոյ ծախիւք , տեղւոյս խարխուլ և անբաւա-  
կան վարժարանն քակել տալով՝ նոր և ընդար-  
ձակ վարժարան մը կառուցանել տուաւ և այժմ  
հանգուցելոյն յիշատակագիրն այդ լուսոյ տա-  
ճարի դրան ճակտի վերայ դրոշմեալ կը տեսա-  
նի : (\*) Տէր Աղարեան Սողոմոն աղայի աղնիւ  
որդիք և մեծաշուք ժառանգորդք , 500-600  
ոսկի ծախիւք , կառուցանել տուած են երկսեռ  
վարժարան մը քաղաքիս Զայզարայի թաղին  
մէջ . 'ի վեր նշանակեալ աղդօդուտ շինութեանց  
մէջ այժմեան Պատրիարք Ամեն . Վեհապետեան  
Սրբազն Հայրն գործոն գեր մ'ունեցեր է , ինչ-  
պէս նաև Աղդային այլ շինութեանց մէջ , զորօրի-  
նակ հոյակապ Առաջնորդարան և Հոխիսիմեանց  
անուամբ աղջկանց վարժարանն նորին Բարձրա-  
շընորհ Սրբազնութեան օրովոյ և ջանքով շին-  
ուած են , որմէ յառաջ Կարնոյ մէջ իդական  
սեռի գաստիարակութիւնն տակաւին ոկսած չէր .  
նոյնպէս կարեւոր պարագայ մի է յիշեցնել թէ  
մինչև 'ի սոյն շինութեանց թուականն քաղաքիս  
մէջ , դուն ուրեք , երկայարկ շէնքեր դտնուած

(\*) Կանխարանի մէջ յիշուած Միսակ Էֆէնտին  
թոռնիւնին է այս առաքինի մարդուն :

են, այնպէս որ կը պատճռուի թէ « երբ առաջ՝ նորդարանն երկայարկ կը կառուցուի հասարակութենէն շատերն կը զարմանան ասելով թէ « այս ի՞նչ տեսակ տուն է, որոյ գուռն բարձրէն բացուած է », ասկէ կարելի է մասամբ մը հետեւցնել թէ Կարնոյ մեր Հայոց մտաւոր ղարդացման ջերմաչափն 1862էն (շնութեան թուական) կակաի բարձրանալ:

Կարնոյ մէջ նշանաւոր են հետեւեալ գերդաստաններն՝ ինչպէս Պալլարեան, Նշիկեան, Եանըքեան, Տէր Ներսէսեան, և Խանճեան եղբարքն :

Վաղժառան +

Քաղաքիո լուսաւորչական Հայք ունին Յ Հատ Աղդային վարժարաններ . Ա. Մայր վարժարան « Արծնեան » կոչուած՝ ընդարձակ և յարմարագոյն շնութեամբ, որ կը գտնուի Եկեղեցւոյ բակին մէջ (զի դարաւոր փորձերն մեզ ցոյց տուած են և յետ այսու աւելի կըտան թէ դպրոցն երբ Եկեղեցւոյ բակէն հեռանայ՝ կեանք ունենալէ կը դադրի և աւելի անոր համար, որ նորա լոմայովն կապրի : Արական սեռակ այս վարժարանն 600-650 աշակերտք կը դաստիարակէ, տարիքնին 6-13 : Բ. Եկեղեցւոյ մերձ « Հռիփսիմեանց » օրիորդաց վարժարան, որոյ աշակերտուհեաց թիւն 400ի կը համնի, տարիքնին 6-13 : Գ. Թաղ. Երկսեռ վարժարան, որ Եկեղեցիէն հեռու, Զայդարայ ըսուած թաղին

մէջ շինուած է (որոյ հիմնարկողաց յիշտակութիւնն վերև ըրած եմ՝ արդէն), սոյն կրթալսանի երկսեռ ուսանողաց թիւն է 140-150 :

Մասնաւոր Հարժաբան +

Ա. Աղջի մեծանուն ԲՈՐԵԲԱՐ աղա Մկրտիչ Սանասարեանցի բարձրագոյն վարժարանն , հիմնարկուած 1881 թուականին և ուր Գերմանական ուղղութեամբ կը դաստիարակուին 90 ի մօտ ուսանողք , որք մեծագոյն մասամբ գիշերօթիկ են : Սոյն վարժարան հիմնուրկող բարերարն Հոյյալնակի այլ և այլ դաւառներէն 25-30 ուշիմ պատանիք հաւաքել տալով իւր ծախիւք դաստիարակել կը տայ յանուն քաղաքակրթութեան . . . թոշակաւոր ուսանողքն խիստ համեստ դումար մը միայն կը վճարեն : Սանասարեանց ազնիւ ազգատոհմի անուան նուիրեալ այս վարժարանն , բաց ի այլ և այլ պաշտօնեայներէ , երեք դլխաւոր Վարիչ-պաշտօնեայ ունի , զորս յիշեալ Հայրենասէրն դարձեալ իւր ծախքով 'ի Գերմանիա կրթել տուած է : Վարժարանն որ իննամեայ շրջան ունի , կը համապատասխանէ Գերմանիոյ Միջնակարգ վարժարանաց աստիճանին և կը բաղկանայ Նախակրթարանէ ու Կրթարանէ . առաջինն կը պարունակէ երեք դասարան և երկրորդն կը պարունակէ վեց դասարան :

Վարժարանն ունի նաև գործատուն , (որոյ մէջ յարմարութիւն ունեցող ուսանողքն կզրա-

զին մասնաւոր արհեստներով), զոր հետզհետէ կատարեալ Արհեստանոցի վերածելոյ մտադիր է Հիմնադիրն, որ իւր վարժարանին համար պիտի բանայ նոյնպէս Մասնագիտական շրջան մ'եռամեայ ընթացքով:

Բարձրագոյն Կրթարանիս անմահ բարերարի ՅԻՇԱՏՈԿՆ, դարուց 'ի դարս անմոռաց պիտի պահուի ամեն Հայ սիրտերու մէջ, զի ինքն առաջին միջնորդ կը հանդիսանայ . . . քաղաքակրթութեսն հիմնաքար դնելոյ, բանալով այսպէս երկու հատ լուսոյ տաճարներ, մին 'ի Վասպուրական՝ Վանայ մէջ իդական սեռին համար, և միւսն 'ի Բարձր Հայս՝ Կարնոյ մէջ արական սեռի համար:

Պ. «Աղապալեան վարժարան» զոր բացած է Մկրտիչ Էֆէնտի Աղապալեան, երեք տարիէ 'ի վեր. ունի 100 ուսանող և Լուսահողի իփէքաճեանի 1881 ին շինած Կրթական ընդհանուր ծրագրի թաղային վարժարանաց վերաբերեալ մասին կը համապատասխանէ. անձնուէր Հիմնադիր-Ծնօրէնի ջանքերն գովութեան արժանի են: Գ. Հռովմէական Հայոց «Լաղարիսթ» և «Անարատ Յղութիւն» անուամբ երկու վարժարաններն, մին արական և միւսն իդական սեռին պատկանեալ և յանձնուած՝ մի քանի Լատին կը ըսնաւորաց, որք ունին իւրեանց յատուկ եկեղեցին Աստուածածին կոչուած: Սոյն վարժարանաց մէջ 200 էն աւելի ուսանողներ կան և

մեծ մասամբ Լուսաւորչական ու մնացեալներն  
են Յոյն, Պարսիկ և Մահմետական։ Դ. Բողոքականաց երկսեռ վարժարանն՝ հաստատուած բաղմահայ թաղի մը մէջ։ Ե. Նախակրթարան Յունաց, որք ունին նաև Ս. Գէորգ. կոչուած եկեղեցի մը։

\* \* \*

Կարնոյ Հայոց ազգային վարժարաններն 1200 սոկի ծախք ունին տարեկան, որ կը հայթայթուի, ամենամեծ մասամբ, եկեղեցւոյ կալուածական եկամուտներէն։ Կրթական ուղղութիւնն գլխաւորաբար կը պատկանի Գեր. Առաջնորդին, որոյ բարձր և համակրելի գիրքն մեծամեծ յոյսեր կը ներշնչեն թէ ուսումնասէր Կարնեցիք իւրեանց ժրադան Առաջնորդին աջակցելով, քիչ ժամանակի մէջ վարժարաններու ուսումնական վիճակն պիտի կարողանան հասցնել այն բարձրութեան, որ համապատասխան լինի քաղաքի անուանն, ըստ որում Կարին ընդարձակ կուսակալութեան մը կեղրոն լինելով՝ Կարնեցիք իրապէս կը գտնուին խիստ լաւ պայմաններու ներքեւ, որով շատ քիչ պատճառ ունին բարձի թողի ուղղութեան մը հետեիլ։

\* \* \*

Կարնեցին անձանօթ մը տեսած ատեն կը հետաքրքրուի և կը ջանայ ոչ թէ միայն զանձանօթն ճանաչել, այլ նաև եթէ կարելի է նորասրտի և մտաց խորհուրդներն իսկ գիւնալ, Կար-

նեցին ունի նոյնպէս գովելի և միանդամայն ընդօրինակելի այլ յատկութիւնք ինչպէս անկեղծութիւն, ում նկատմամբ կը լինի թող լինի, ընտանեսէր է, պանդխտութեան դիմելն ինչ է չդիտեր և արդէն իրաւամբ դատապարտելի մի բան դարձած է, ամեն ոք կապրի իւր ընտանեաց քով և երբ նեղ վիճակի մէջ դտնուի դիտէ սակաւապետ կենօք ասզրելով ինքզինքն դոհացնել: Առ հասարակ զուարճութիւն կը սիրեն, միայն թէ արհեստաւոր դասերէն ոմանք, որպէս ինձ պատմեցին, երբեմն կը չափազանցեն այդ զուարճասիրութիւնն, որ չ'կրնար պախարակելի չ'նկատուիլ երբ կը շեղի իւր օրինաւոր սահմանէն: Առքա Հայրենի աւանդութիւնք շատ լաւ կը պահեն թէ 'ի վանս ուխտադնացութեամբ, թէ պահեցողութեամբ և թէ այլովք հանդերձ: Ունին 'ի Պօլիս մասնաւոր պանդուխտներ, որք վաճառական են և ունին պատուաւոր դիրք մը: Կարնեցի ընտանիք քաջդիտէ տան շինարարութիւն և հեռատեսել ապագայի անակընկալ անբաղդութիւնն ներկայի բարեբաղդ վիճակի մէջ և ըստ այնմ կը տնտեսէ իւր տնական կացութիւնը, յամենայնի պարկեցած և ժիր է: Տեղւոյս Հայքն ունին խօսից մէջ իրենց յատուկ մասնաւոր նշան մը զոր օրինակ կուգամ' է, կերթամ' է, կաշխատիմ' է, և լն. սոյն նշանն, որ ուսեալ մասին մէջ չ'տեսնուիր, կը համապատասխանէ մեր Պօլսեցի եղբարց կօբին:

Գլ. իշ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Կարնոյ մէջ կը նստին Ռուսական, Անգլիական, Դաղղիական, Պաղպական, և Պարսկական Դեսպանք: Քաղաքն ունի պատրաստ պէտք եղածին չափ զինութրական զօրութիւն և կը պահպանուի ամենայն աշալըջութեամբ: Եաւ գոհ եմ տստանօր յիշատակել թէ մեր Հայոց և դրացի Մահմետականաց մէջ օր ըստ օրէ վերստին կը քաղցրանան այն ներդաշնակ յարաբերութիւնքն, որ տեղւոյ հանրածանօթ, այլ անստոյդ դէպերէն պահ մը դառնացած էին և հետզհետէ անհետ լինելոյ վերայ կը գտնուին իւրեանց մէջէն այն տխուր տպաւորութիւնքն, որոց երեսէն բանտարկեալներն մեր Օդոստափառ Կայսեր ներման արժանացած՝ անցեալ տարի արձակուեցան 'ի միսիթարութիւն իրենց թշուառ ընտանեաց և 'ի գոհունակութիւն համայն Աղջին:

\* \* \*

Կարնոյ մեր Աղփային Վարչութիւն իւր բոլոր ճիւղերովն կանոնաւոր եղանակաւ (սահմանադրապէս) կազմաւորեալ է չնորհիւ Դեր. Առաջնորդի անխոնջ ջանից, որ քաջ գիտէ պարագային համաձայն գործելով՝ մի լաւ յարաբերութիւն մշակել տեղական կառավարութեան և պաշտօնական այլ և այլ մարմնոց հետ, փափաքելի է սոյն օրինակ ձիրքեր տեսնել Հայարնակի

բոլոր վիճակաց հովիւներուն քսվ :

\* \* \*

Քաղաքիս համայն կրտակաց թիւն 3500էն պակաս չէ և ՚ի նոցանէ երկու շուկայ միայն կայ ծածկուած , մնացեալքն բացօդեայ են և շինութեամբք պարզ : Պանդոկներու թիւն 150ի կը հասնի , որպէս և հացադործքն (ֆրանք) 180-200 . վերջնոց առն և տուրն ամենէն աւելի ընթացիկ է . շուկայքն բաւական լայն են , ուր ամառ եղանակին , երբ հով մը կը լինի , անվարժ երթեւեկողք կը պարտաւորին աչքերնին գոցել ու այնպէս քայլել , որպէս զի փոշի չըլենայ :

Բերգի արքաներնեւն (Եւստաչյանէն) . — Կարին դուրս կը խրկէ մեծ քանակութեամբ ցորեան , և դարի , նոյնպէս անտանոց մէջ ոչխար , ձի , կով , եղ , և անոնց կաշին ու բուրդ :

Ներանուննեւն (Եմբէրնեւնէն) . — Կը բերուին Եւրոպական ամեն տեսակ ասլրանքներ ու կանոնաւոր շենքերու համար մեծ քանակութեամբ ընտիր փայտեր , որք կարնոյ Հիւսիսակողման Առաջնաւ կոչուած անտառներէն , և Նարմանէն (Տայք նահանգի մի փոքր վիճակ) կը կտրուին : Պարսկաստանէն կը բերեն կուռկուռի ծխախոտ (Խեմուէտէ) , բամպակ . և ընտիր դորդեր (Խալլէ :

Կարնոյ վաճառականութիւն և արհեստք առևտրական ու արհեստական վիճակն , բաղդատարար , բաւական շարժուն են և ոչ մեռեալ , արդէն 0սմ . Հայաբնակ գաւառաց բոլոր կեդ-

բոնական քաղաքներէն առաջին լինելով՝ ուղղակի, յարաբերութիւն ունին անոնց հետ, ինչպէս Նրդնկայի, Մշոյ, Բաղիշոյ, Վանայ, և այլոց հետ. ամեն օր բազմաթիւ կարաւանաց երթեւեկութիւնք անպակաս են քաղաքիս մէջ:

Տեղւոյս սովորական արհեստներն են պըղնձագործութիւն, գարբնութիւն, պայտառութիւն, զինագործութիւն, ոսկերչութիւն, գերձակութիւն, կօշկակարութիւն, թամբագործութիւն, հիւսնութիւն, ոստայնանկութիւն, օճառաշխնութիւն, խաղաղորդութիւն, ներկարարութիւն, սեւ սաթի շինութիւն, մոմաշխնութիւն. կան նոյնպէս ժամագործ, սիկարնիկ և սանտր շինող, որմնադիր և այլն և այլն: Յիշեալ արհեստներէն շատերն ունին իւրեանց տեսակներն և իրարմէ քիչ ու շատ կարևոր տեղ ըլունող. որոց մէջ պըղնձագործութեան արհեստն զարդացեալ վիճակի մէջ է և կրնայ Պօլսոյ հետ մրցիլ: Արհեստաւորներն գիտեն հին և կոտորակեալ պղնձեղէններն հալեցնելով այլ և այլ մեծութեամբ կաղապարել և ապա բոլորակի ծեծելով տախտակներ բանալ, զոր իրենք հայտնակ կ'անուանեն: Երկրին ամեն կողմեր կը տարուին ՚ի վաճառ տեղւոյս պատրմաստած պղնձեղէններէն, սեւ սաթ, որմէ կը շինեն սիկարնիկ՝ Տայք նահանգէն (Բարձր Հայոց Արեւելահիւսիս) կուգայ:

Հայք կ'զբաղին դլխաւորաբար վաճառա-

կանութեամբ և արհեստներով, նոյնպէս են  
Յոյնք և Պարսիկք . Մահմետականքն կը պարա-  
պին նպարավաճառութեամբ և մասնաւոր ա-  
ռով ու տրով . կան իրենց մէջ բաւական թուով  
թամբադործ, մնավաճառ, խաղաղորդ . սոքա-  
կապրին նմանապէս անշարժ կալուածոց եկա-  
մուտներով ու կառավարական ղանաղան պաշ-  
տօններով . Սոքա ձիավաճառութեան մէջ առաջին  
տեղին կը գրաւեն և սմանք ձիու բնաւորութե-  
նէն և աղէկութենէն լաւ հասկնալուն մէջ համ-  
բաւ ունին :

Քաղաքիս վերայ այսչափ գրել բաւ համա-  
րելով անցնիմք իւր գիւղերուն, որոնց ան-  
ուանքն նախ նշանակեմք, իւրեանց ունեցած  
Հոյկական ձեռց պատճառաւ, և ապա բնակու-  
թեանց թուոյն մեծութեան կարգաւ իրենց  
վերայ խօսիմք :

Կարնոյ գաւառին վերաբերեալ գիւղերուն  
թիւն 45-50 ի կը հասնի և ամենամեծ մասամբ  
խառնարնակ են, այսինքն Արմենական և Մահ-  
մետական տարրերէ կը բաղկանան . սոյն գիւ-  
ղերն առ հասարակ դաշտային լինելով ժողո-  
վուրդն, նման լեռնականաց, կոկորդական ձայն  
չունի : Բնութիւնն, որպէս վերև յիշած եմ, իւր  
ցրտութեամբ կը զլանայ պաղոյ ծառ մը հաս-  
ցընելոյ բնակչաց համար, որք Վասպուրական

նահանգի մերայնոց նման միայն երկրագործութեամբ չեն զրադիր , այլ գեղեցիկ հեռատեսութեամբ շատերն ալ արհեստաւոր են , ինչպէս պղնձագործ , պղնձաջինջ (Հ-Լ-Հ) , դանակագործ , բեւեռագործ , որմնագիր , հիւսն , պայտառ , կտաւագործ և ջորեպան :

### Գ-Լ. Բ-Հ.

ԿԱՐՆՈՅ ԴԱՇՏԻ ԳԻՒՂԵՐՍԻ ԱՆՈՒԱՆՔՆ (\*)

Կան , Օձնի , Զիթահող , Ագարակ , Խարարդ , Կեղ , Ըլըճա , Հինձք , Ումուտում , Կըրիչք , Մուտուրկա , Արծաթի , Տիարիդոմ , Ճինիս , Բղտաձոր , Դարահասան , Թուանջ , Գոմք , Սօվուք-ջերմիկ , Դուընիկ , Շեխնոց , Թեթիկիր , Գեղախոռ , Ապըլհինտի , Սէօկիւթի , Պատիշէն , Գղըլքիլիսէ , Բլուր , Միւտիւրիւկ , Սալաձոր , Թօփալ-չափուշ , Նոր-շէն , Կրճնկոց , Սնկառինջ , Երկնուստ , Երկայն-մասուր , Շեփիկ , Եօղպէկ , Արշնի , Վերին դիւղ :

Եարունակեմք այժմ մեր գիւղագրութիւ-

(\*) Կարնոյ գիւղօրէից վերայ ընդհանրապէս խօսած ատենս չեմ ուզեր չնորհակալութեամբ չ'իշատակել Արժ . Տէր Յովհաննէս քահամնայ վաղարշակերացին , որոյ սոյն գիւղերու մեծ մասին վերայ հըրատարակած 40 երեսէ բազկացեալ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆ մեր առած տեղեկութիւնք մասամբ մը ճոխացուցին վերաբերութեամբ այն գիւղերուն , զորս անձամբ այցելելոյ ոչ պատեհութիւն եւ ոչ իսկ պէտք զդացինք :

նըն այս կողմերուն և այն կարգաւ , դոր վերե  
յիշած եմ , նշանակելով հանդերձ կարեւոր մա-  
սի գիրքն և հեռաւորութիւնը կարնոյ քաղաքի  
նկատմամբ : Գիւղօրայքն մեծագոյն մասամբ կը  
գտնուին կարնոյ գաշտի (որոյ ընդարձակու-  
թիւնն արդէն սահմանած եմք երես 136) յԱրե-  
մբտեան Հիւսիսակողմն , միջին հաշուով  $3\frac{1}{4}$ —4  
ժամու շառաւիղով կիսարոլորակ մի կը կազմեն ,  
որոյ կեղրոնն գրեթէ ղկարին քաղաք համա-  
րելով :

ԿԱՆ . — Գիւղս կը դանուի յԱրեմտահիւ-  
սիս կարնոյ և անկէ 1 ժամ հեռաւոր , որոյ  
գաշտավայրի բոլոր գիւղերու մէջ բազմահայու-  
թեամբ և կարեորութեամբ առաջինն է , դոր  
կընամք դաւառիս Գիւղաքաղաք կամ Մայր-  
գիւղ սեպել : Բնակութեանց թիւն է 280 , որմէ  
200 տուն Արմենական են և 80 Մահմետական :  
Հայք ունին Ս. Փրկիծ անուամբ կոկիկ եկեղե-  
ցի մը , կառուցմամբ ոչ դարաւոր , չորս հատ  
քահանայ և ծաղկոց , ուր ծաղկելոյ փափաքով  
կը գիմեն 120 ի մօտ ուսանողք , յորս 25—30 ի-  
գական սեռէ են : Բնակիչք աւելի արհեստաւոր  
են քան թէ հողագործ : Տեղւոյս մերայնոց մա-  
սին կ'աւանդեն թէ ։ Շիրակայ մեծ քաղաքէն  
(Անի) գաղթած են և չկարծեմ որ սոյն լակո-  
նական խօսքն ստուգութենէ հեռու լինի :

02ՆԻ . — Բնակիչ 160 տուն , որմէ 100 Հայ-  
կական և 60 Տաճկական են , Հայք յանուն Ս.

երբնը դնիթենն կառուցեալ ունին եկեղեցի  
մը . կայ նաև ծաղկոց մը , որոյ մէջ 50 մանչ և  
մի քանի աղջկունք կը դաստիառակուն դեղջ-  
կական ուղղութեամբ : Տեղոյս բնակիչքն ևս  
դրեթէ կիսով չափ արհեստուոր են : Հայերն  
ունին ընտանեկան և ընկերական դուլելի կեանք  
մը և իրարու հետ սիրով կ'ասպիրին :

**ԶիթՌ.ՀՈՂ.** — Ունի 400 տուն բնակիչ , մե-  
ծաղոյն մասամբ Հայ և մասցեալն Մահմետա-  
կան : Մերայինքն ունին Ս. Ս.ՍՑՈՒԱՆԱՆԻՆ ան-  
ուամբ գեղեցկակերտ եկեղեցի մը , որոյ մէջ  
կայ ճարտարարուեստ խաչկոլմի , զարդարեալ  
կրօնական խորհրդաւոր պատկերօք . սոյն ըն-  
տիր ձեռակերտն կարնոյ հին արհեստաւորաց  
շենքն է , որով մարդո դիւրաւ կրնայ դաղա-  
փար մի կաղմեղ այս ժողովրդեան մտաւոր ճար-  
տարութեան և արհեստական ունակութեան վե-  
րայ . ունին նախակրթարան մը 50-60 արական  
և իգական սեռէ բաղկացեալ մանուկներով .  
դիւզո շատ անգամ դրսէն ուսուցիչ չունենալով  
տեղական քահանայից ձեռամբ կը դաստիա-  
րակուի տեղոյս նոր սերունդն , որ տակաւին  
կարեկցութեան արժանի վիճակ մ'ունի :

Զիթահողի սահմանէն կանցնի գիտակ մը ,  
որ կը բղիսի Հիւոխակողմի « խաչափայտի » լե-  
րանց ճեղքուածքներէն , ոլորասլտոյտ շրջելով  
կը դառնայ յԱրեւմաւտ և կը խառնի 'ի Մօրին(\*):

(\*) Աւու դետոյ մի լայն տեղին դարերէ 'ի վեր մօ-

ԳԼ. ԻԼ.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՐՆՈՑ ԴԻՒՂՈՐԵՒՑ

ԱԴԱՐԱԿ . — Բնակութիւնք 405 տուն, յորմէ 70 Հայկական և 35 Տաճկական են : Հայք ունին ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿՈՎԵՏ կոչուած եկեղեցի մը, կայ 2 .քահանայ և մէկ ծաղկոց : Գիւղա Աղդին տուած է մի գոհար Պ. Մկրտիչ Խաչիկեան՝ աղնիւ երխուասարդն, զգայուն և հեռատես . . . որ բնակութիւնն այժմ հաստատած է քաղաքին մէջ, ուր ՚ի շարս ուսեալ մասին պատուաւոր տեղի մը կը գրաւէ և որոյ պատու վերայ եղած հետեւեալ տեղեկութիւնք կարեոր կը համարիմ պատմել և ապա շարունակել .

Կարնոյ ընդհանուր գաղթականութեան ժամանակը (տես էջ 140) . միմիայն այս Աղարակ դիւղի Հայերն իւրեանց տեղէն չշարժեցան, ըստ որում Քահետ-Թորո (Թորոս) Խաչիկեանն կարող կը լինի տեղւոյ /Հայերն հանդարտեցնել և միանգամայն դիմադրել Կարապետ Եպիսկոպոսի կրից բռնութեան, որով գաւառիս համայն Հայերն կամէր տանիլ ՚ի Ռաւսաստան . յիշեալ Եպիսկոպոսն երբ զԹորոն կրկին համոզմամբ և մասամբ մը սպառնալեօք կուղէ իւրնպատակին բերել, այս անդամին մեր աղնիւ Թորոն բարկութենէն Բաբելոնեան հուը կը որացած եւ ոչ թէ առանձին լճակ է, զոր յիշած եմք յերես 137 :

բած ոտքերն գետին կը զարնէ , նման ճշմարտախօս Դալիլէին Երկրագնդիս դառնալու վկայութեանն , և կը դոչէ ասելով « մենք աւելի նախապատիւ կը համարիմք մեռնիլ մեր Օսմանցու հողին վերայ և չ'թողուլ զՀայրենիս քան թէ երթալ օտարին հպատակ լինելով չունենալ տուն և տեղիք : » Այս վեհանձն պատասխանն համբաւ կը հանէ դաւառիս մէջ՝ մինչեւ որ կը հասնի ձէնէթ մէքեան Սուլթան Մահմուտի ականջը և անմիջապէս հրաման կընէ Կարնոյ նոյն ատենուան կուսակալ հոչակաւոր Խսէթ Փաշային , որ պատուէ զՀայ Թորոն , որոյ հաւատարմութեան հոգին զիւր համբաւն , որպէս ասացի , մինչեւ կայսեր ականջը հասուցած էր :

Կուսական կը կոչէ առ ինքն զանի (Հայ Թորոն) և շատ մը Խալէներ (պարգև) այս ազնիւ Հայուն տալէն ետքը անոր կը հագցունէ կարմիր և գեղեցիկ ծերանի մը և կը վերադարձնէ յիւր գիւղ ու մունետիկ հանելով ամեն կողմերը կը պատուիրէ թէ և ով որ ագարակ գիւղի բնակչաց , որք իրենց հայրենի ոհանք սիրելով չեն գաղթած , զնաս մը հասցնելու լինի « չարաչար պիտի պատժուի » այսպէս ահա մեր հայրենասէր Թորոն առօք և փառօք 'ի գիւղն կը վերադառնայ և դրացի Մահմետականացմէ ամեն տեսակ արգանք ընդունելոյ բաղդին կը հադիպի և ահաւասիկ իր վերջի կտակն , զորը ըրածէ մեռած պահուն « իմ մահուանէն անբա եթէ

աշխարհիս գործերն դարձեալ պատերազմ կը  
բերեն մեր այս Երկրին վերայ, դուք սիրէցէ՛ք  
հոգւով և մարմնով զօսմանցին, սիրեցէ՛ք ձեր  
չայրենիք, որոյ օհանք քակողին դէմն իմ չորաց-  
եալ սոկրոտիք պիտի բողոքեն՝ այս աշխարհի  
մէջ Սուլթանին առջև, և 'ի հանդերձելումն ար-  
դարոյն՝ և թողնա (գաղթող) երևի թշնամի  
թէ՛ մեր Տէրութեան, թէ մեր Աղգին և թէ՛  
մեր այս Ագարակին, ուր ծնած և մնած եմք  
գիւղովին »

Հակառէց Թուրքն

### Ա. Հայունից

ԽԱՐԱԿԻ. — Բնակիչ 90 տուն, յորմէ 60  
չայ և 30 Տաճիկ են։ Հայերն ունին Ս. Ա.Ս.՝  
ՈՒԱԾԱԾԻՆ անուն եկեղեցի մը, սիրուն տես-  
քով և ճաշակաւոր կառուցմամբ։ Խւր խաչկալն  
ճարտարարուեստ գործ մի է, նուրբ և ընտիր։  
'ի ծերոց կ'աւանդի թէ « այս է Արծն քաղաք,  
հոչակաւոր և պատմական, բազմաթիւ եկեղեցի-  
ներով և հաղարաւոր բնակիչներով »։ սոյն ա-  
ւանդութիւնն ճշմարտութեան կը մերձի երբ  
գիւղիս շրջապատի ընդարձակ աւերակաց տե-  
ղերն 'ի նկատ առնուի, որոցմէ, նման Մանազ-  
կերտ քաղաքին, դուրս եկած են երբեմն հին  
բաղանեաց և այլ շենքերու հետքեր, պղնձէ  
անօթք, այլ և այլ զարդերու նշաններ և Հել-  
լենական դրոշմ կրող դրամներ։ մենք թողումք  
աեղւոյս հին վիճակի նկարագիրն Լաստիվերտա-

ցւոյ ճարտար դրչին և անցնիմք յայլ գիւղ :

ԸՆԼԾՈ. և ԿԵԶ (\*). — Սոյն երկու գիւղերուն վերայ մեր Տեղագրութեանց Ա. Մասի երես 17-18 խոսած լինելով՝ աստ կը կնել աւելորդ կը համարիմ:

ՀԻՆՉՅ. — Կարնոյ յԱրեւելահիւսիս և անկէ 3 ժամու չափ հեռաւոր. բնակութեանց թիւը 80, որմէ 50 Լուսաւորչական Հայ, 20 Հռոմէական Հայ և 10 տուն Մահմետական։ Մերայինքն ունին յանուն Ա. ԽԱՂԻ շինուած եկեղեցի մը բարձր բլրոյ մը կողին վերայ, շրջապատեալ բազում տապանաքարերէ։ Տեղւոյս Հայոց դերեղմանատան մի եղերաց վերայ մատուոիկ մի կայ, ոյր նկատմամբ կը պատմուի թէ « Մեծն Ներսէս Հայրապետի ճգնարանն եղած է »։ Հինձք գիւղն ունի դետակ մը՝ որ կը բղիսի մերձակայ լեռներէն։ սոյն ջրոյ մէջէն գիւղացիք մանր ձկունք կ'օրսան երբեմն :

ՈՒՄՈՒՑՈՒՄ (յոյս) . — Կարնոյ լերանց Հիւսիսակողման ստորոտը կը գտնուի, շինուած ընդարձակ բլրոյ մը կողին վերայ, և բաւական լաւ տեսարանաւ . ունի 78 տուն, որմէ 50 Արմենական և 28 Մահմետական են։ Արմենականքն ունին Ա. ՅԱԿՈԲ անուամբ դետնափոր եկեղեցի մը, հին և շատ ողորմելի . եկեղեցւոյս վիճակին նայելով կարելի է ասել թէ իւր շինուած

(\*) Կեզ անուան տեղ սխալմամբ Պաղ դրուած է գործիս Ա. Մասի յիշեալ երեսի մէջ է

թեան ատենը զԱստուած միայն գետնի տակ  
պաշտելոյ աղատ կրցած են լինիլ։ Երկու տարա-  
կան բնակիչք թաղերով իրարմէ անջատեալ կը  
բնակին . . . :

Տեղոյս մերձակայ լերանց մէջ երբեմն « կով-  
ծուծ » կոչուած վայրի կենդանիք կ'երեւին, որոց  
մասին տեղացիք կը պատմեն թէ գառան չափ  
մեծութիւն ունի և երկայն պոչ մը , որով կը շըր-  
ջապատէ ոչխարի սրունքները , այնպէս որ խեղճ  
ոչխարն կը մնայ անշարժ և ինքն զնորա կաթ-  
ծծելով կը թունաւորէ , որմէ այլ եւս ոչ ոք կը  
համարձակի ուտել . գիւղացիք բժշկական այլ  
և այլ դեղեր ՚ի դործ կը դնեն ոչխարէն այդ-  
թոյն դուրս բերելոյ համար . զոր օրինակ արիւն  
կ'առնուն և յաճախ սառի նման պաղ ջրով կը  
լուանան ոչխարի ծիծերն և այնպէս կը կթեն ու  
կը թափեն . սոյն դործողութիւնն մի ամսոյ չափ  
կը շարունակեն և ապա կը համարձակին այդ-  
ոչխարի կաթէն ուտել . Կարնոյ միւս լերանց մէջ  
սոյն օրինակ լիսասակար կենդանիք ց'արդ չեն  
տեսնուած :

ԿՐԻՉՔ . — Բնակութեանց թիւն 75 , որմէ  
40 տուն Հայ և 35 Տաճիկ են : Հայերն ունին  
Ք.Թ.Ս.Ց.Ո.Ս Թ.Ա.Գ.Ա.Խ.Ո.Ր անունով պարզ եկեղեցի  
մը : Դիւղէս  $\frac{1}{2}$  ժամ հեռաւորութեամբ քարայր  
մի կայ փորուած , զոր « քարաքիթ » կանուա-  
նեն , որոյ նկատմամբ անորոշաբար կաւանդեն  
թէ « Ֆէհրատ անուն մէկէ մը մնացած է » :

ՄՈՒՏՈՒՐԿԱ . — Կարնոյ Հիւսիսակողմն ,  
բնակիչ 74 տուն , որմէ 60 Հայ և 14 Տաճիկ են .  
Հայք ունին ՍՈՒԻՐԲ ՅՈՒԿՈԲ անուամբ բաւական  
ճաշակաւոր Եկեղեցի մը , քահանայ և ծաղկոց :

Ա.Բ.Ռ.Թ.Ի . — Բնակութեանց թիւն 70 , որ-  
մէ 10 տուն Լուսաւորչական Հայ են , 40 Հայ  
կաթոլիկ և 20 Մահմետական : Լուսաւորչական-  
քըն ունին մի Եկեղեցի , կառուցեալ յանուն  
ՍՈՒԻՐԲ ՆՇԱՆի . գիւղս քաղաքէն 4 ժամ հե-  
ռու է դէպ ՚ի Հիւսիսակողմն և շինուած Տումու-  
լերանց ստորոտ . ունի ջերմուկ մը , որ կը ծա-  
ռայէ յառողջութիւն այս կողմերու բնակչաց :

ՏԻՆԾ.Բ.Ի.Գ.Ռ.Մ. — Բնակիչ 70 տուն , կէսէն  
աւելի Մահմետական . Հայկականքն ունին  
ՍՈՒԻՐԲ ՄԻՆԱՍ կոչուած պարզ Եկեղեցի մը և  
խեղճուկ ծաղկոց մը , սոքա ունին նմանապէս  
գետնավոր Եկեղեցի մը , ուր զԱստուած պաշ-  
տելոյ համար մտնելն այժմ պէտք չեն զգար  
որպէս զգացեր են երբեմն :

ՃԻՆԻՍ . — Ունի 68 տուն , որմէ 20 Հայ և  
48 Տաճիկ են . առաջինքն ունին ողորմելի Եկե-  
ղեցի մը՝ շինուած ՍՈՒԻՐԲ ԳԼՈՐԳ.Ա.Յ անուամբ ,  
կայ ծաղկոց մը , որ չունենալին տասն անդամ  
աւելի գէշ է , աստ կը տեսնուի 3-4 տուն Յոյն :

ԸՂ.Տ.Ջ.Ո.Ր . — Շինուած լերանց միջավայրը .  
ունի 63 տուն , 33 Հայ են և 30 Տաճիկ . Եկեղե-  
ցին ՍՈՒԻՐԲ ՅՈՒԿՈԲ Գիւղիս մերձակայ լեռներէ-  
կը բղխին մի քանի աղբիւրք , սղաղ և անուշա

համ, որսնք գլխիվայր կը վաղեն կարկաջասահ ընթացիւք 'ի դաշտն Կարնոյ և հոն կռոռեն բաւական ուռենիք և բարդենիք ու միացմամբ երկու ջրաղացքներու ջուր տալսվ՝ կը թափին Կարնոյ դաշտի Մօրին մէջ։ Գիւղիս յԱրեւմը-տակողմն Հայոց հին գերեզմանատան մէջ փոք-րիկ եկեղեցի մը կայ և աւանդութիւն կըսէ թէ «Յունաց Հերակլ կայսեր ժամանակը երբ կե-նաց փայտն գերութենէն կը վերադարձնեն, այս գերեզմանատունէն անցած ատեն նոր մե-ռած պատանի մը դագաղէն յարութիւն կառ-նու, այս պատճառաւ բարեպաշտ քրիստոն-եայք աստ փառաւոր եկեղեցի մի կը շննեն և կանուանեն զայն ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ 'ի յիշա-տակ տեսնուած հրաշիցն » այժմ ուխտատեղի է սոյն եկեղեցին, որ հաւանօրէն պէտք է յա-ջորդ եղած լինի փառաւոր նախորդի մը։

ՅԱՐՈՒԾՈՒՆ. — Բնակութիւն 65 տուն, 30 Հայ և 33 Թուրք։ Հայք ունին ՍՈՒՐԲ ԱՍՏ-ՈՒՄԱՆԻՒՆ անունով եկեղեցի մառանց ծաղ-կոցի, զոր ունենալոյ յոյսն աւ կը պակսի։

## Գլ. ԻՌ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՐՆՈՑ ԳԻՒՂՈՐԵՒՑ

ԹՈՒԱՆԶ. — Բնակութիւն 60, որմէ 20 տուն Հայ, 33 Թուրք և 7 Հռովմէական։ աստ կայ երկու եկեղեցի, մին մերայնոց և միւսն Հռով-մէականաց։ Մեր Հայոց եկեղեցւոյ շրջապատը

ի է հին քարերով, նշմարելի են նոյնպէս աւե-  
րակաց հետքեր :

ՍՈՎՈՒԿԻ-ԶԵՐՄՈՒԿ . — Կը դտնուի կար-  
նոյ յԱրեւելահիւսիս և ժամ հեռաւորութեամբ .  
ունի 60 տուն, որմէ 25 Հայկական և 35 Թուր-  
քական են . Հայք ունին բաւական ճաշակաւոր  
եկեղեցի մը՝ կառուցեալ 0. ՀԻԵՇՏՈՒԱՊԵՏԻ  
անուամբ, մէկ քահանայ, իսկ դպրոց « Աստուած  
տայ » . գիւղիս շրջապատը լի են հանքային զա-  
նազան ջրեր, տաքութեան բարեխառնութեամբ  
իրարմէ տարրեր, որպէս և համով և գոյնով :  
Սոյն հանքային ջրոց վերսոյ աւաղաններ շին-  
ուած են, յորս ժողովուրդ (թէ քաղաքացի և  
թէ գիւղացի) կը լողանան յառողջութիւն, դոր  
յիրաւի շատ անդամ կը դտնեն :

ԴՈՒԾՆԻԿ . — Բնակութիւն 55, 40 Հայ և  
45 տուն թուրք . Հայոց եկեղեցին է ՍՈՒՐԲ  
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, որ ամեն տեղերու սովորական  
ՅՈՅՍՆ և ԱՊՈՒԻՆՆ է և այս ամենամեծ իրա-  
ւամբ, գիւղս ծաղկոց մունի շատ ողորմելի և  
ժողովուրդ իրապէս ողբալի, որոց վիճակն աւելի  
իւրեանց առաջարկեան տալու է քան թէ դրացի  
Թըքաց ընկերական կացութեան, որ քաղցը  
բնութենէ զուրկ չէ :

ԴՈՄՔ (մակաղատեղիք) — Ունի 53 տուն,  
մեծագոյն մասամբ Թըքական . Հայկականաց  
եկեղեցին է ՍՈՒՐԲ ՅՈՒՈՒ, կայ քահանայ մը ,  
իսկ ծաղկոց « Աստուած տայ » և ժողովուրդ

ջերմեռանդ է Աստուծով և բնաւ դպրոցով :

Շեխնոթ . — Կը գտնուի Կարնոյ յԱրեւելահիւսիս , վերոդրեալ Կան գիւղաքաղաքէն 20 վայրկենի հեռաւորութեամբ . բնակութեանց թիւն է 50 , որմէ 40 Արմենական և 10 ԹՌքական են . Արմենականքն ունին կոկիկ եկեղեցի մը , անուն ՍՈՒՐԲ ՅՈՎՀՈՆՆԵԼՈ , ժողովուրդն կրօնասիրութեան չափ չունի ուսումնասիրութիւն : գիւղիս մէջ կը պահուի մագաղաթի վերայ դըրուած ձեռագիր Աւետարան(\*) մը :

ԹԵԹԿԵՐ . — Ունի 48 տուն , 40 Տաճիկ և 8 Հայ . վերջնոյն համար եկեղեցի և դպրոց «Աստուած տայ» :

ԳԵՂԱԽՈՌԻ . — 45 տուն , որմէ 35 Հայ և 40 տուն Թուրք են : Հայք ունին քարուկիր եկեղեցի մը՝ կառուցեալ յանուն ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ զօրավարին . . . :

ԱՊԲԼՀԻՆՑԻ . — Բնակ . 44 տուն , 20 Հայոց , 24 Տաճկաց , առաջինք ունին ՍՈՒՐԲ ՍՍՏՈՒԱՆԱԾԻՆ կոչուած եկեղեցի մը , դպրոց չունին :

ՍԷՅԼԻՒԹԼԻ . — Տուն 42 , որմէ հանենք գլխաւոր առաքելոց թուով Հայ , մնացեալ 30 տուն Տաճկական են : Տեղւոյս առաքելաթիւ Արմենական բնակութիւնքն կը պարծին ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՄԲԻՆ , որ իրենց եկեղեցւոյ անունն է ,

(\*) Սոյն Աւետարանն Եւագրի անուն կրօնաւորին ձեռամբ դրուած է 'ի Հայրապետութեան Տեառն Պետրոսի գետաղարձի :

սոքա չունին վերնատուն , ուր հաւաքուելով  
թերևս մի օր հոգւով սրբով լեցուին և սկսին  
քարոզել Երկրի ժողովրդեան ՀՅ.Ց և ԲԱ.Ն :

ՊԱ.ՑԻՇԼ. — Բնակութիւն 40 տուն , յոր-  
մէ 30 Հայկական և 10 Մահմետական են . վեր-  
ջինքն առաջնոց և առաջինքն վերջնոց հետ լաւ  
յարաբերութեան մէջ են : Մերայինքն ունին Ս.  
ԳէՈՐԴ անուամբ կոկիկ եկեղեցի մը , որոյ քա-  
հանայի տղիտութեան տխուր հետեւանքը ժո-  
ղովուրդն պարտաւորուած է կրել , այս պատ-  
ճառաւ գիւղիս Հայերն մարդոցմէ ալ և գրե-  
թէ Աստուծմէ ալ ձեռք քաշելոյ վրայ են :

ԳՐՁԼ. ՔԻԼԻՄ. (կարմիր եկեղեցի) . — Բը-  
նակութիւն 40 տուն , կիսով չափ Մահմետական .  
Հայերն ունին մի եկեղեցի՝ անուամբ Ս. ՆՇԱ.Ն ,  
որմէ , 'ի զուր , նշան կը խնդրեն առանց դպրոց  
ունենալոյ և առանց դրի զօրութեան հաւա-  
տալոյ : Ես չեմ կարծեր որ սոյն օրինակ անխելք  
որ և է հպատակ մը , լուսաւորութեան հետա-  
մաւտ եղող մեր Օսմ. տիրող Կառավարութեան  
պատուաբեր կարենայ լինիլ :

ԲԼՈՒՐ. — Բնակութիւն 38 տուն , 20 Հայ  
և 18 Մահմետական . առաջինք ունին եկեղե-  
ցի մը Ս. ԳէՈՐԴ անուն , իսկ դպրոց արդէն ա-  
նուն չունի :

ՄԻԼԻՑԻԼՈՒԿ. — Բնակութիւն 37 տուն ,  
որոյ միաւոր թուոյն չափ Հայ և տասնաւորին  
չափ Տաճիկ են . Հայք եկեղեցի և դպրոց չու-

նին : Գիւղիս մերձակայ լերինքն ունին հետաքըրքական դիրքեր , զորս բնութեան խորհըրդաւոր ձեռքն պատրաստած է :

**ԹՕՓԱԼ-ԶԱՎՈՒՇ .** — Բնակութիւն 37 տուն, որմէ 8 տուն Արմենական և 29 Մահմետական են : Տեղւոյս Հայերն ունին Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍ (հընազանդութիւն) կոչուած պարզ եկեղեցի մը , որոյ այդ փոքրաթիւ ժողովուրդն հոգւով ջերմեռանդ է , մատօք 'ի խաւարի և մարմնով չքաւոր , իրենց դրացի մահմետականքն փեթակ ունին , որմէ կը հանեն պատուական մեղր 'ի վաճառ և դրամ (մետաղ) ունեցողներն միայն կարող են ճաշակել զայն . խակ անկուտին 'ի հեռուստ վիզ ծռած , ուղածին չափ թող նայէ , եթէ դործ չունի :

**ՍԱԼՈՋՈՐ .** — Բնակութիւն 36 տուն , որմէ 8 Հայ և 28 թուրք են : Հայերն քահանայ և դպրոց չունին , այլ ունին եկեղեցի մը Ս. ՍԱՐԴԻՍ զօրավար : Գիւղս նախապէս բազմահայ եղած է , որպէս իւր շրջապատի հնական նշմարանքներն և պառկած տապանաքարինքն ցոյց կը տան :

**ՆՈՐ-ՇԷՆ .** — Բնակութիւն 32 տուն , որոյ վերջի միաւոր թուովն եթէ ամբողջը բաժնենք , պիտի ունենանք քանորդին չափ Հայ , և նոյնչափ ալ թուրք : Մեռեալ մտօք Հայերն ունին Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ անուամբ եկեղեցի մը փայտաշէն , զոր կառոցած է Անտոն անուն

Ռուսահայ մը , 'ի յիշատակ իւր ծնողաց :

Ա.Բ.ՌՈՒՆԻՒ . — Բնակութեամբ նախորդին հաւասար , Հայերն 20 տուն են Ս. ՅԱԿՈԲ եկեղեցիովն , դպրոց չ'ունին և քահանայ քիչ անգամ կունենան :

ԿՐՃՆԿՈՑ . — Բնակութիւն 30 տուն , կիսով չափ Հայ , որք ունին եկեղեցի մը Ս. ԽԾ.Զ անուամբ , որ պահապանն է իրենց թէ 'ի գիշերի և թէ 'ի տուընջեան . դպրոց չ'ունին ունենալոյ յոյսին հետ :

ՄՆԿԾ.Ռ.ԻՆ.Զ . — Բնակութիւն 30 տուն , որմէ 10 Հայկական և 20 Մահմետական , առաջինք ունին եկեղեցի մը Ս. ՄԻՆԱՍ կոչուած :

ԵՐԿՆՈՒՍՏ . — Բնակութիւն 28 , որմէ 5 տուն Հայ և 23 Տաճիկ են . առաջինք ունին մի եկեղեցի յանուն Ս. ԳԱԲՐԻԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ :

ԵՐԿԱՅՆ - ՄԱՍՈՒԻՔ . — Բնակութիւն 26 տուն , յորմէ 20 Տաճիկ են և 6 Հայ , առանց եկեղեցւոյ և դպրոցի :

ՇԵՓԻԿ . — Բնակութիւն 25 տուն , որոյ միաւոր թիւն Մահմետական է և տասնաւորն Հայկական , որք ունին ողորմելի եկեղեցի մը :

Ա.ԲՇՆԻ . — Բնակութիւն 20 տուն , յորմէ 17 Հայ և 3 Տաճիկ են . Հայք ունին Ս. ՄԻՆԱՍ ըստած եկեղեցի մը , ուր առաւօտ և երեկոյ խեղճ քահանայն կ'աղօթէ և կը յուսայ . . . .

Է.ԶՊԵԿ . — Ունի 17 տուն , որմէ 7 Հայ և 40 Տաճիկ են : Այդ 7 մահացու հուշ թուով

Հայ բնակիչներն ունին մի եկեղեցի յանուն Ա. ԹԱԴԵՍՈՍ և Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԵՍՈՍ առաքելոց :

Վերին գիհղ. — Բնակութիւն 45 տուն Հայ և եկեղեցին Ա. ՀՐԵՇՏԱԿՈՂԵՏ :

\* \* \*

Կարնոյ դաւառի վերոդրեալ 40 գիւղերէն զատ կան տակաւին մի քանի աննշան գիւղեր, մեծադոյն մասամբ ԹՌ.Քական :

Որպէս յայտնի կը տեսնուի, դաւառիս բոլոր գիւղերն յանցելումն ունեցած են համեմատական բազմահայութիւն մը, որ ներկայիս մէջ շատ նուազած է (\*), 1829 ի ընդհանուր դաշկանութեան պատճառաւ, որոյ առաջք նոյն ժամանակի (ամիբայութեան ատեն) աղդային վարչութիւնն կամ Պատրիարքն կարող էին առնուլ, որպէս կ'ստուգեն Կարնոյ խելահաս և հեռատես անձինքն, և չեն առած 'ի վնաս Աղդին և Տէրութեան հաւասարապէս :

\* \* \*

Ամիսովելով դաւառիս դաշտի գիւղօրէից բնակութեանց թիւն կրնամք ունենալ 2000 տուն Հայկական և 1200 տուն Մահմետական . 36 եկեղեցի և ծաղկոց գրեթէ նոյնչափ, վերջինքն ամենամեծ մասամբ անուանական են, Մահմե-

(\*) Խօսքիս ճշմարտութիւնն ինքնին կը տեսնուի, երբ իւրաքանչիւր գիւղի բնակութեանց թուոյն քով կը նշանակեմք եկեղեցին եւ իւր հին տաղանաքարինք կամ դերեղմանատեղիքն :

տականքն թէև լինին եկովի . . . , սակայն արդարութիւն պարտք կը դնէ վրաս խոստովանել՝ որ իւրեանց ունեցած յարաբերական վիճակէն երկրի տարրական կամ բնիկ ժողովուրդն ըաւական դոհ լինելոյ պատճառներ ունի :

Կարնոյ դաշտի Հայ դիւղացին արժանի է քաջալերութեան, զի ճարտար և աշխատասէր է ու բնականէն ներշնչեալ մտային այնպիսի տըրամաղբութիւններէ և ձգտումներէ, որով կարող է արհեստական զարգացման մէջ մեծ տեղի մը գրաւել։ Բաւական թուով Հայեր սեփական հող չունենալով այս և այն դիւղերու մէջ կաշխատին այլոց . և ընդհանրապէս սովորութիւն չունին պանդխոտութեան գնալ և դեղերիլյօտարութեան շատ տարիներ և ընտանեսիրութեան . . . . այդ զօրաւոր զգացումն՝ որ առանց չուանի զիրենք կը կատէ գտնուած տեղը, կարժէ գտնուիլ Հայարնակի այլ դաւառաց անհեռատես Հայոց սիրտերուն մէջ . վասն զի պանդխոտղքն, ինչ ազգէ կը լինին թող լինին, ուղղակի և դրականապէս վնաս կը հասցնեն թէ իւրեանց ազգին և թէ միանգամայն տիրող կառավարութեան գանձուն, և ըսածս այնչափ պարզ ու դիւրըմբռնելի է որ բացատրութեան բնաւ պէտք մը չ'կայ :

Ազգային կեդրոնական Վարչութեան որոշմամբ այժմ Սպեր, Խնուս, Կեղի, Դերջան, և

Բասեն գաւառներն , որք մասնաւոր վտառանորդներով կը կառավարուին , մտած են ընդգերիշխանութեամբ Կարնոյ Առաջնորդութեան (այդ մերձակայ վիճակաց Ազգային գործերուն դիւրութիւն մը ընծայելոյ նպատակաւ) :

Կարնոյ Առաջնորդութիւնն կուսակալութեան կեղրոնը գտնուելով իրաւամբ պարտաւորեալ է , Ազգային արեան բնական մղումն , այդ Կուսակալութեան սահմանին մէջ գտնուող այլ վիճակաց Հայերու գործոց օդնել՝ կառավարութեան հետ անոնց ունեցած յարաբերութեան մէջ և այդ վիճակներն են Արեւելահիւսիսէն Պայազիտ Արեւմուտէն Երիզա կամ Երդնկա , Հիւսիսային Արեւմուտէն Բարերդ :

## Գլ. Լ.

### ԿԱՐՆՈՅ ԴԱՇՏԻ ՎԱՆՈՐԱՅՔ

Ա. ՍՈՒՐԲԻ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ . — Կը գտնուի Կարնոյ Արեւելահիւսիս և անկէ 11/4 ժամու չափ հեռու , մերձ Մուտուրկա կոչուած գլուղին (ոյր վրայ խօսուած է) : Գմբեթաւոր սոյն մենաստանըն կառուցեալ է բարձր լլրոյ մը կողին վերայ , որ Կարնոյ դաշտի Արեւելեան դօտեւոր լերանց միոյն գրեթէ պորտ կը հսմարուի , շինուած է սրբատաշ քարերէ , ունի գեղեցիկ տեսարան և բաւական ծառաստան , զուարճալի վայրերովն ։ Վանքէն 2-3 քարբնկէց հետաւոր փոքրիկ ջրըլէժ մի կայ , որ խշբուքով մը վար թափած

ատեն աղմուկ կարձակէ , սոյն ջրվէժն տեղացիք « դոշ դոշ » կանուանեն , որոյ մօտակայ մի յարմար տեղը աւազան շինուած է ամառ եղանակին մէջ լողանալոյ համար : Վանքն համայն կարնեցւոց ուխտատեղին և միանդամայն զուարճավայրն է :

Կաւանդեն թէ երբ Տրդատի հրամանաւ մեր սուրբ Դրիգոր Լուսաւորիչ կը տարուի յԱրտաշատ քաղաքն հոն խոր վիրապի մէջ ձգելոյ , այս կողմէն ճանապարհորդած լինելով՝ մի դիշեր աստ կիջեւանի , ետքէն բարեպաշտ քրիստոնեայք յանուննորա (Լուսաւորչի) շինել կը տան զայս մենաստան և ՚ի յիշատակ խոր վիրապին դուք մ'ալ փորել կը տան . սոյն գուրքն այժմ կը տեսնուի եկեղեցւոյ աւանդատան մէջ , 2 մեթը խորութեամբ :

Ի Հնումն կարնոյ Առաջնորդանիստ տեղին եղած է այս վանքն :

Բ. Ս. Ա.Ս ՏՈՒԱԾԻՆ կամ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ.

— Կարնոյ Հիւսիսակողմն Յ ժամու հեռաւորութեամբ : Սոյն մենաստանն երկրաշարժէ շատ փոփոխութիւնք կրած և ապա վերաշինուածէ . այլ ոչ այնչափ հոյակապ , որոյ առաջին հիմնարկութիւն մեծն ներսէս Հայրապետին կընծայեն և աւանդութիւն կըսէ թէ « Մեծն ներսէս Հայրապետ իւր ճդնարանին մէջ (Հինձք դիւղի գերեղմանատան եղերքը՝ որ վանքէս շատ հեռու չէ,) կը տեսնէ յերազի դՏիրամայրն Աստուա-

ծածին ծիրանազգեստ, այս պատճառաւ յանուն  
Աստուածածնայ կառուցանել կըտայ ոյս Մե-  
նաստան՝ որմէ 20 վոյրկենի չափ հեռու կը  
դունուին Հոխիսիմեանց քարայրք (բաղկացեալ  
2-3 քարանձաւներէ), յորս սուրբ կուսանք ա-  
ղօթիւք ժամանակ անցուցած են երբեմն . այս  
տեղերը կան ընտիր ջրեր, հին և նուիրական ա-  
ւերակաց նշաններ և գերեզմանք :

Դ. Ս. ԽԱՂԱԿՈՅ. ՎԱՆԻ. — ՚Ի Հիւսիսակողմն  
քաղաքին և անկէ 4 ժամու չափ տարակայ :

Կարնոյ յիշեալ երեք վանքերն թէպէտե  
ունին ընդարձակ արտօրայք և մարդօրսայք, ու  
մասնաւոր եկամուտներ բարեպաշտ ուխտաւո-  
րաց երթեւեկութենէն, այսու ամենայնիւ դա-  
ւառիս բարոյապէս օգուտ մը տալոյ վիճակի  
մէջ տակաւին չեն դժնուեր դժբաղդաբար, մի-  
այն թէ ց'արդ կը պահպանուին, որով ամայա-  
նալոյ ամենառողբալի կացութենէն փրկուած (\*)  
են . Դոհ եմ ասել որ այժմ այդ վանքերն կը  
պատկանին Կարնոյ մեր Աղդային Դաւառական  
Վարչութեան ուղղակի իրաւասութեան, որով և  
տրամադրութեան ներքեւ, և Գեր. Առաջնորդ՝  
Հայր Օրմանեան զայնս իւր խնամոց յատուկ ա-  
ռարկայ ընելով Վարչութեան հետ իմաստուն և

(\*) Այս ալ կրնայ ուրախառիթ պարագայ մը հա-  
մարուիլ բաղդատմամբ մեր յայլ գաւառս ուղեւորած  
առթիւ տեսած քանի մ'ամայացեալ վանօրէից հետ :

օրինակելի որոշումն ըրած են, զոր աստ մի քանի տողով կ'ամփոփեմ « այդ վանքերու եկամուտներն հաւաքել և զայնս տնտեսագիտական բարւոք վիճակի մը մէջ դնել, որոնցմէ գոյացած եկամուտովն մի ընծայարան բանալ Աստուածածնայ Կարմիր վանուց մէջ », ուր ծաղկեցնել զյիշատակն և պսակել զնպատակն Մեծին Հայրապետին Ներսիսի, ում կ'ընծայեն արդէն սոյն վանուց նախնի կառուցումն, զոր վերեւ յիշեցի : Աստ պարտք կ'զգամ հրապարակաւ գովել ամեն անոնք, որք մղում կը տան ՚ի կտար հանելոյ զայդ գործն, որ ընդարձակ գաւառիս Հայ գիւղացւոց մտաւոր խաւարն փարատելոյ ունի ճշգրիտ բնութիւն մը և այսէ շահն Աղդային և շահն Կառավարութեան, զորս իւրարմէ կը նկատեմ միշտ անբաժան : Եւ միթէ բնական չէ և չեմք տեսներ ամեն օր՝ որ երբ երկնից Արեւն, յառաւօտեան սպահուն, իւր լուսատու դէմքն մեր Աշխարհին ալ ցոյց տալով հսն թագաւորած խաւարն անմիջապէս տեղի կը տայ և դարձեալ ով տեսաւ զայդ Արեւն, որոյ ծաղած լոյսն նախ լերանց բարձունքներէն չ'ըսկըսէր և հետզետէ չ'ծաւալէր իրմէն ցածր (խոսնարհ) տեղերը և մինչև իսկ իւր ստորոտը . ահա մի բնական, որով անժխտելի օրինակ, որոյ մէջ ամեն կեդրոնական քաղաքներն (զորս մենք լերանց դադաթներուն նմանցուցինք, որպէս կ'իւղերն՝ նոցա ստորոտներուն), իւրեանց բա-

Ժինն և պարտականութիւն կընան տեսնել, վերաբերութեամբ մեր գիւղացի մանկանց լուսաւորութեան և կըթութեան դործին :

Կարնոյ մերձ, կէս ժամ՝ հեռու, «Ապտրահման զաղի » կոչուած ուխտատեղի մի կայ, որ կանոնաւոր մատուռ մի է քարուկիր, որոյ մէջ կայ գերեզման մը, որ կը գտնուի Մահմետականաց ձեռքը, մեր Հայերն ևս յարգանք կընծայեն այդ գամբարանին, ոյր նկատմամբ կը հաւատան լինիլ, «Հայ նահապետի մը գերեզման » սոյն կէտն թէ ինչ աստիճան ստոյդ է, վաւերական բան մը չ'կայ :

Կարնոյ և իւր շրջակայքը ց'արդ պէտք եղածին չափ հնախուզական հետազօտութիւնք չէ եղած և 'ի նուրբ խուզարկութեան բազում յայտնութիւնք յուսալի են :

## ԳԼ. Ա.

Հայ նեղանակ ուրբենան կենաց լոք եղանակի  
համարած նկարագիր (\*)

## Գ. Ա. Ր Ո Ւ Խ

ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ

Դարուն երբ իւր առաջի նշաններն ցոյց կը

(\*) Մենք կը խօսիմք ընդհանրապէս մեր ուղեւորած զաւառներու գիւղօրէից վերայ, 'ի նկատ չ'առնելով այն մասնաւոր տարբերութիւնքն, զորս այդ

տայ , Հայաբնակ դաւառաց Հայ դիւղացիներու աշխատութեանց ժամն հնջելոյ վերայ . կը լինի : Մարդիկ դուրս կ'ենեն իւրեանց խոնարհ բնակարաններէն և ոմանք ևս դետնափոր տուներէն , յորոց շատ տեղերը համաձայն են Պլինիոսի պատմածին : Ամենքն միահամուռ աշխատութեան կը պատրաստուին , արք և կանայք , ծերք և տղայք , երիտասարդք և կուսանք իրար անցման մէջ են . խովին և արօրը , գութանն և վիծկին կը շինուին հետղհետէ :

Խոտաղի (անասուն դարմանող մշակ) այս ատենուան գործեր .— Մինչև ց'արդ աշխատաւոր եղեր և գոմէշներ ախոռներու մէջ հանդիստ կ'առնէին նախորդ տարուան չարաչար աշխատութենէն , մի քանի օր ևս տակաւին բանտարկուած են այդ անասունքն , որոնք դարնան մերձենալն զգալով բնազդօրէն ուրախութեան ցոյցեր կ'ընեն և ոտքերնին գետին զարնելով որոտումներ կը հանեն : Անամնապահներն կը կերցնեն անասնոց , սովորականէն աւելի , կուսպ (կտաւատի մէջէն ձէթ հանելէն յետոյ մնացեալն) , գոմէշներն կրկին և կրկին ձէթով կ'օծեն , որպէս զի շուտով պարարտանան , զի աշխատութեան ժամերն կը մերձին :

\* \* \*

գաւառներն , մի եւ նոյն սովորութեան վերաբերութեամբ , իրարմէ աւելի կամ պակաս կրնան ունենալ եւ երք տեսնեմք , որ այդ տարբերութիւնքն աչքի զարնելու չափ զգալի են , կը նշանակեմք ուր որ պատահին :

Խոստաղներն , որք իւրեանց հոգւոյն պէս  
կամ աչաց լուսոյ նման , ամբողջ ձմեռը , զանա-  
սունս դարմանեցին , առանց ախոռէն դուրս հա-  
նելոյ , կ'սկսին պարբերաբար դուրս հանել զա-  
նոնք և ոչ թէ աշխատցնելոյ , այլ միայն տանիլ  
յաղբիւր 'ի ջուր , ըստ որում ց'արդ ախոռի մէջ  
ջուր կը խմցնէին անասնոց և երբ այդ հեղ և  
անլեզու կենդանիներն դուրս կելնեն իրենց Յ  
ամսեայ արդելանոցէն օր և Արև կը տեսնեն ,  
այն ատեն հետաքրքիր և սիրուն եղանակաւ մը  
ցատկելով և խայտալով կը յայտնեն դարձեալ  
ուրախութիւննին , անասնոց այս ցատկելն կամ  
խայտալն « տրճիկ » կանուանեն և բայն « տրճկել » ,  
Անասնոց կարգին մէջ գոմէշներն աւելի զդու-  
շութեամբ դուրս կը հանեն , որք այլ անասնոց  
նման , արձակ ու համարձակ չեն թողուր . վասն  
զի կընան մարդուս մխասել կոխկռտելով կամ  
գլխոյ կատաղութեամբ . առ այս մեր գիւղացի  
կտրին մշակներն ի՞նչ կընեն . — Հպարտ զգաց-  
մամբ մը թեւերնին սօթտած՝ գոմէշի վզէն կը  
կախեն մի կարճիկ գերան , զոր « կոճ » կ'ան-  
ուանեն , մի և նոյն ատեն երկու մշակներ կամ  
խոտաղներ չուան նետելով գոմէշի գլուխը , և  
երկու կողմանէ կը բռնեն ամուր ու այսպէս ծա-  
նըր ծանըր կը տանին 'ի ջուր , սոյն օրինակ գոմէշ-  
ներն « մոսլի » անուն կը կրեն , որոնց ճակատ և  
ոմանց ևս պոչի ծայը ու չորս ոտքերն բնակա-  
նէն ճերմակ կը լինին , այդ ճերմակ տեղին կան-  
ուանեն « պաշ » :

Գարնան սկիզբը անասուններն մի քանի  
անգամ ել և մուտ ընելէն յետոյ, և որովհետեւ  
ամբողջ ձմեռ մը կերան ու խմեցին անաշխատ,  
մէկէն 'ի մէկ լծան տակ մտնելոյ չեն խոնարհիր և  
կապստամբին. գիւղացիք ունին մի յարմարա-  
գոյն սովորութիւն. այդ անասուններն աշխա-  
տութեան ընտելացնելոյ համար . շատ փուխը  
(կակուղ, գիւրափշրելի) հողեր կը վարեն գրե-  
թէ անկանոն եղանակաւ մը, մեր գիւղացիք  
այդ աշխատութիւնն «խամախանէս» կանուա-  
նեն :

Գիւղացիք ջանելու այս առնենուան

Գիւղացիք յաճախ կ'երթևեկեն 'ի քաղաք (ո-  
րում կը պատկանին կամ գիւղին աւելի մօտ է)՝  
ընկեր մը գտնել, որմէ իրենց գարնան համար  
պէտք եղած գրամն առնուլ շատերն դժբաղդա-  
բար այնպիսի անսիրտ մարդոց ճիրաններու մէջ  
կլինան, որոնցմէ առած փոքրիկ դումարին փոխա-  
ըն յետոյ շարունակ տալով տալով չեն կարող  
պարտքէ ազատիլ: Հայ գիւղացւոյ մահու և  
կենաց օրերու սկիզբն է. նա բնաւ չնայիր ա-  
ռած գրամի վերադրի (տոկոս) շատին կամ քը-  
չին. այլ անհաշիւ սակարկութիւն մը կընէ, ինչ-  
պէս որ յարմարի և երբեմն իսկ գրաւ տալով  
արտ կամ այդի, եթէ ունին: Այսուհետեւ ա-  
ռած ստակն պէտք չեղած տեղը բաղում ան-  
գամ կը ծախսէ միամտաբար կամ աւելի ուղիղ

կը լինի ասել տղիտաբար . խիստ շատերու համար արդէն ԽՆԱՅՈՒԹԻՒՆ ըսուած բանն երբէք նշանակութիւն չունի , նորա աչք ԱՌԱԾ է սիրտն ՀԻՒՐԸՆԿԱԼ և ձեռք ԲԱՅ : Դիւղացին այդ գրամովն իւր երկրագործական վիճակի պէտքերն կը հոգայ , զի նա չունի ընտանեկան ֆանեւլիւն , որոց մասին բան մը գրելն աւելորդէ , բաւական համարելով ՄԷՃԻՄԼՈՒԻ գեղջկուհոյն և իւր պառաւ մեծ մօր նկարագիրն , որ իւր համառօտութեամբն ընդարձակօրէն կը պարունակէ Արմենական գիւղացւոյն տնական կենաց պատկերն (տես էջ 75 և ԳԼ. ԺՊ) :

## ԳԼ. ԼԲ.

### Գ Ո Մ Շ Ա Կ Ռ Ի Ի

Դիւղացիներն վերոյիշեալ եղանակաւ զանասունս կանոնաւոր աշխատութեան վարժեցնելէն ետքը գիւղին մէջ մոսլի գոմէշ ունեցողներն իւրաբու հետ կը խօսին , իւրեանց գոմէշներն հանել 'ի կռիւ : Դիւղացիք արդէն կիմանան , զի խօսքերնին ծածուկ չէ և ես յիմ ուղեւորութեան բնաւ չ'տեսի խորհրդապահութեան մի նշոյլ այդ Հայ մարդոց քով , ձայն կը տարածուի գիւղի ամեն կողմը թէ այս ինչ անձանց գոմէշներն այս ինչ տեղ կռիւ պիտի ընեն . ահա հոս է մեր Աշխարհի Հայոց գեղջկական կենաց մի հետաքրքրական կողմն , որ իրենց մէջ ամենուն առ հասարակ սիրելի է : Երբ որոշեալ

ժամն կը հասնի, երկու գոմշատեարք հրաման  
կընեն մշակներուն թէ « գուրս հանեցէք ՄԵՐ  
մոսլիներն և բերէք այս ինչ արտի մէջ (տեղւոյ  
անուն տալով) , ուր պիտի թողումք զանոնք 'ի  
կռիւ ». մշակաց արդէն ուղած բանն է, անմի-  
ջապէս տունը կը վաղեն ուրախական ցոյցերով.  
երկու կողմանց մշակներն մոսլիներու գլուխը  
դրուած չուաններու ծայրերէն կը բռնեն երկու  
կողմանէ. կոճն տակաւին գոմէշի վզէն չ'հանած՝  
ախոռներէն դուրս կը հանեն և կը տանին գէպ  
'ի յայն տեղին, ուր պիտի լինի մեր գիւղացւոց  
գոմշակռիւն, զոր տեսնելոյ փափաքով մեծ և  
փոքր, արք և կանայք խուռն բազմութեամբ  
հոն կը դիմեն : Այս պահուս գոմշատեարք  
ձեռքերնին ետեւնին դրած՝ վեհանձնօրէն կը  
կենան բաղմութեան մէջ . մշակներն ևս մոսլի-  
ներն բերած և պատրաստ կը կենան՝ անհամբեր  
սպասելով տեարց վերջնական հրամանին . վեր-  
ջապէս հրաժան կ'արձակուի . խոտազներն զգո-  
մէշս յարմար դիրքով մը կը կեցնեն, կոճերն  
վար կ'առնուն վզերէն և իրարու մօտեցնելով  
կը տան ճակատ ճակատի, շուաններն քակելով  
իրենք ետ կը քաշուին . մոսլիներն կոիւնին կը  
շարունակեն և կարելի է ասել 3-4 ժամէն ա-  
ւելի : Դիւղի երիտասարդներն երկու կողմէն  
չուաններ ձեռքերնին բռնած՝ զգուշօրէն կը կե-  
նան, որպէս զի այդ երկու կոռուասէր անասունք  
երբ զիրեար մսասելոյ չափ յառաջ երթան, յաղ-

թութիւնն տակաւին անորոշ մնացած , անմիջաւ պէս իրարմէ դատեն :

Աղնիւ վերծանող , այժմ մեր մոռլիներն տակաւին կոխնին շարունակելոյ վերայ կը գըտնուին . տէրերն աչալուրջ հսկողութեամբ կեցած կը նային դործի վախճանն տեսնել , սիրտերնին կը նետէ իւրեանց այդ անասնոց յաղթութիւն տանելուն և կամ պարտութիւն կրելուն համար . վերջապէս կամ կոխին երկարելով իրարմէ կը բաժնեն , կամ 'ի նոցանէ մին կը փախչի , որով և հանդէսն վերջ կը դժոնէ . ներկայ եղողներն կը վերադառնան տուներնին և ոմանք ևս կը շնորհաւորեն զյաղթողին տէր , որոյ դէմքի ամեն կողմը կը տեսնուի բնական մի դուռը ողութիւն , խակյաղթուողի տիրոջ վերայ կը տիրէ խորին արտմութիւն մը :

Գէ-շացւոց բուռ գարնան չործեր

Խամահանդէսն և գոմշակոփեր վերջացած են , դիւղացիք յաճախակի 'ի դաշտս երթեւեկել կ'ակսին , ոմանք գարընցան կ'ընեն և ոմանք աշընցաններն կ'ոռոգեն , եթէ ջրարրի են , նոյն պէս խոտաւէտ տեղեր և մարգեր , եթէ հորիզոնական դիրք ունին ու ջրոց ներքեւ են : Առաւօտեան կանուխ զոյդ զոյդ եղներն լծած , արօրով , խոփով , գութանով , վիծկիով , կենադանեաց ցորեկուան համար մնունդով (զի այս առեն դաշտերն զկենդանիս դոհացնելոյ չափ չ'ունին տակաւին բոյսեր դուրս տուած) և ա-

ուատ հացով կ'երթան իւրեանց աշխատութեան տեղին , ուր Երկիրը ճեղքելով յոյսերնին կը թաղեն և կ'սպասեն Երկնից կամարի գթութեան , որ անձրև ցողէ յաճեցումն ցանուած ցորենոյն կամ թաղուած յոյսերուն , որովք ապրած են և տակաւին կ'ասլրին այդ Երկրի հողագործներն , որոց ապագային արդարեւ վայ կը լինի , երբ Երկինք անդթանայ կամ պղնձանայ Մծրնայ Հայրապետի օրուան պէս :

### Գ. Լ. Լ. Գ.

ՀԱՎԻԻ ԵՒ ՀՕՏ

Հայոց ոչխարներն կսկսին 'ի դաշտս և 'ի լեռինս յաճախիլ , վասն զի ձիւներն Երթալով ցամաք Երկիրն արդէն կերեսի և ոչխարքն նախորդ տարիէն մնացած չոր խոտերու ծայրերովն գարնան սկիզբի ամիսներու մէջ կրնան կշտանալ , արեգակնային տեղերն , զոր « պառոժ » կ'անուանեն , բաւական խոտի ծայր ունին դուրս տրուած կամ ծյեցուցած , որով կրնան ոչխարաց նոր խոտի նուպարն (առաջի ճաշակն) տալ : Ոչխարներն կսկսին ծնանիլ , (մարտի սկիզբէն ց'վերջ մայիսի) գիւղօրէից վերայ առ . հասարակ ուրախութիւն և հրճուանք կը տիրեն , հովիւք կը ժպտին և ոչխարքն ծնեալ դառանց հետ 'ի միասին կը ճարակեն . վասն զի այս ատենուան (մարտի սկիզբէն ց'ապրիլի կէս) ոչխարին տուած կաթն միայն զիւր գառնուկն հաղիւ կարող է

մնուցանել և արդէն գառնուկն առատ կաթով  
մնանելոյ պէտք ունի բաւական օրեր :

Մեր հովիւն կապանակը (երկայն վերարկու  
կամ չորրոշութեա թաղիքէ շինուած և թանձր , ո-  
րով ձեռուուան ցուրտէն կը պահպանուի) հա-  
գած՝ կը հսկէ հօտին վերայ թէ՛ ի մակաղատեղ-  
ւոջ , թէ՛ ի լերինս և թէ՛ ի դաշտս , զի մի գու-  
ցէ գայլի մը կերակուր փախցունէ և կամոչ-  
խարի մը ծնանելոյ ատենը , դիպուածով մը ,  
գառնուկն մեռանի , որ անձնանուէր հովուոյն  
համար մահ է , վերջապէս հովիւն կը հսկէ և  
Սիրով կը հսկէ :

Երբ ոչխարք գոմէն դուրս հանել ուղուի  
հովիւն կ'առնու իւր հովուական դաւաղան 'ի  
ձեռին , հացալից մախաղն կը կապէ կոնկին ,  
գոմի դուռն բանալով շրթանց և ձայնի այլ և  
այլ նշաններ կը տայ ոչխարաց , որոնք անմիջապէս  
ստքի կ'ելնեն և շուներն ևս կ'սկսին դլխով մըշտ-  
կել կամ զարնել ծոյլ ոչխարաց կոնկին և դմա-  
կին (Քույրուու+) և այսպէս բոլոր ոչխարներն դուրս  
հանելով հովուոյն բոլորտիքը շրջապատել տա-  
լէն յետոյ , նորէն չներն գոմէն դուրս կելնեն .  
հովիւն հօտին առջեւն ընկած՝ կը դիմէ դէպ 'ի  
սարեր վերստին յարաբերութեան մէջ մտնել  
Աստուծոյ և Բնութեան հետ . այս պահուս տի-  
րասէր և հաւատարիմ գամփռերէն ոմանք հով-  
ուոյն շուրջը կը պատեն 'ի ճանապարհի շարու-

նակութեան , ոմանք ոչխարաց մէջ կը քայլին և  
ոմանք ևս հօտին ետեէն ընկնելով դանդաղա-  
քայլ ոչխարներն կամ խումբէն հեռու մնացած-  
ներն կը քշեն , իբրև թէ ուրբէնէ եղած ըլլային :

Երկու կամ երեք հովիւ հազարաւոր ոչ-  
խարներ կարող են աներկիւղ առաջնորդել երկ-  
րի ամենէն ամայի տեղերը , յորս մահկանացուն  
առիւծասիրտ իսկ լինի դարձեալ իւր մանաւոր  
երկիւղի տաղնապն կրնայ ունենալ , եթէ ոչ 'ի  
մարդկանէ , գոնէ 'ի բնութենէ . այս բանի դաղտ-  
նիքն ոչխարաց հետ երթացող 6-10 շանց հա-  
ւատարմաւթեան և երախտագիտութեան մէջ  
փնտոելու է . այս օրինակ շուներն դայլիսեղդդ-  
(դայլ խեղդող) կ'անուանին , որոց վերայ հովիւն  
արդէն կատարելապէս վուահ է և ոչ ոք կա-  
րող է ոչխարին ձեռք դպցունել բացի հովիւն:  
Եթէ 'ի հեռուստ մի դայլ երկի կամ մի անծա-  
նօթ մարդ , հովիւն իսկոյն սուլելով նշան կը-  
տայ իւր դամփուերուն , որք կը պատրաստուին  
եկողին դիմագրելոյ կամ նորա վրայ յարձակե-  
լոյ , որ դարձեալ առանց հովուոյն նշանաւու-  
թեան չէ : Հատապտհ շներն , որոց համար յա-  
տուկ ոչխարաց կամ կայ սահմանեալ , փայտէ ,  
սուրէ , հրացանէ բնաւ գլուխ չեն ծռեր , այն-  
պէս որ երբեմն մարդս կը զարմանայ :

## Գլ. ԼՊ.

Հովիւն երբոր զոչխարս որոշեալ տեղին

Հովիւն երբոր զոչխարս որոշեալ տեղին

կը հասցնէ զանոնք կը յանձնէ իւր հաւատարիմ պահպանողացն և ինքն աղբիւրի մը քով կամ մի այլ յարմար տեղը կը նստի հանդիսաւ առնուլ և ապա տօպրակէն դուրս կը հանէ իւր հովուական կօտ (փայտէ Եւաստա) , մի քանի հատ ոչխարներ կթելով կը լեցնէ ու կը դնէ զայն բացօդեայ տեղմը, քարերու տակ պաղեցնելոյ համար : Երբոր ցորեկուան իւր որոշած ճաշի ատենը կուգայ, հովիւն ունի բազում նշաններ զոշխարս առ ինքն հրաւիրել, շներն արդէն մը զում կըտան այդ հաւաքման, ոչխարներն խուռներամ գալով կը շրջապատեն զհովիւն, որ սոյն պահուն իւր աղալից պարկէն ափով աղ կը հանէ և ոչխարաց կը կերցնէ, շատերն իսկ կըգան ու կը լիզեն հովուոյն աղոտ ձեռքը ամենայն ախորժանօք, որ յետոյ ոչխարաց մաղալ կըտայ (հանդիսաւ կըտայ), շներն կը կերակըէ և ՚ի վերջոյ ինքն կը բերէ քարի տակէն կաթնալից կօտըն, որոյ երեսը սեր և միանդամայն ԱՅԻ կապած է, հովիւն կ'սկսի իւր անսեթեւեթ, այլ պատուական ճաշիկն ընել. այս պահուս ոչխարքըն, իրենց սովորութեան համաձայն, տեղերէն չեն շարժիր : Կը պատահի որ ճաշի միջոցին ոչխար մը ծնանի հովիւն անմիջապէս պէտք եղած ինամքն կը տանի իւր ճաշն ձգած : Մէկ երկու ժամու շափէ ժամանակ անցունելէն ետքը զոշխարս կը հանէ կը լին յարօտ և այսպէս դեղեցիկ և քնական կենօք զօրն երեկոյ ընելով

ծնելոց մէջէն ժիր գառնուկներն կը թողու մարց  
հետ և տկարներն յիւր տօպրակ կամ խուռածին  
մէջ (հայպայ) դրած՝ կը ձգէ «նէրի» (նոխազ)  
կոչուած մեծ և արու այծերուն վերայ ու կը<sup>1</sup>  
վերադառնայ 'ի գիւղ :

Դարձեալ կը պատահի երբեմն որ մի բա-  
րեկամ, ցորեկ ատեն յարօտատեղին կամ ճաշին  
վերայ հովուոյն այցելութեան գալ ուղէ, չներն  
կարգելուն զինքն, որ կը պարտաւորի բարձ-  
րածայն պօռալ և յայնժամ հովիւն մի ընտանի  
ձայնով կը կոչէ առ ինքն արգելիչ գամփոերն,  
և զանոնք 'ի հանդարտութիւն կը հրաւիրէ . այդ  
երախտադէտ անասունքն, դիտես թէ անմիջա-  
պէս կղդան եկող մարդոյ ներքին տրամադրու-  
թիւնքն ու ըստ այնմ կը հանդարտին կամ կը  
կատղին (սաստիկ բարկանալ) և զհովիւն շրջա-  
պատած՝ լրջօրէն կը դիտեն զայցելուն :

### Հ Ա Հ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ք Ե Խ

Ոչխարաց արածելոյ արօտատեղէն երբեմն  
պատուաւոր ճանապարհորդ մ'անցնի, մեր հո-  
վիւն կառնու մի սիրուն գառնուկ յիւր գիրկ  
կամ մի գեղեցիկ խոյ կը տանի ճանապարի ե-  
զերաց վերայ կը կենայ, յորմէ 'ի հեռուստ ե-  
րեւցող ճանապարհորդն պիտի անցնի և երբ  
մօտենայ հովիւն քաղաքավարութեամբ մը, ա-  
նոր առջեւ կը բռնէ զգառնուկն և կը կենայ  
ակնածօրէն լուռ, ճանապարհորդն նրան կը տայ  
մի քանի դահեկան պարդե և կը մեկնի, եթէ

ժամանակ ներէ , կ'առնու զգառնուկն հովուոյն գրկէն , բաւական զանի սիրելէն յետոյ , կըկին տիրոջ կը յանձնէ ու կը հեռանայ :

Հայաբնակ գաւառաց հովիւներու և գառնարածներու այս սովորութիւնն երբեմն գիւղացի մշակներն ևս 'ի գործ կը դնեն և փոխանակ ոչխար կամ գառնուկ բերելոյ ահագին եղմը կը հանեն անցորդաց առջեւ :

Մայիսի ծաղկապսակ ամսոյ մէջ մոտած եմք արդէն . Երկրի դաշտերն և բլուրներն , լեռներն և ձորերն առ հասարակ պճնած են գոյնզգոյն ծաղկամբք , Երգեցիկ թռչուններն իւրեանց դեղեցիկ և մոդական դայլայլիկներովն զհայրն կենաց կը փառաւորեն : Այս ամսոյ մէջ ամեն առաւօտ գիւղացի կանայք և օրիորդք , Արուսեակի ծագմանը , իրարու հետ կ'ընկերան , կռնակնին կը կապեն հաց և բանջարահան գործիք ու կը դնան 'ի գաշտս , առ 'ի քաղել զբանջարս և զծաղկունս և երբ կը համնին իւրեանց կանխաւ ընարած տեղին , յայնժամ ոչխարացնման կը սփռուին գաշտաց երեսը և իւրաքանչիւրն կ'սկսի իւր հաշոյն քաղել զբնտիրոս 'ի ծաղկանց և 'ի բանջարեղինաց . այսպէս անխոնջ կ'աշխատին մինչև ցերեկ և ապա իրարու ձայն տալով կը պատրաստուին ճաշելոյ , ամեն մէկ ընկեր իւր ունեցած հացն մէջ տեղը կը դնէ և ընկերութեամբ դեղջկական սեղան

մը կաղմելով՝ անուշ ջրոյ մը շուրջը կը բոլորուին,  
աստ է տեսանել մեր գեղջկուհեաց անմեղ խըն-  
ճոյքն, զոր կընեն շատ ուրախութեամբ։ Ճա-  
շեն յետոյ իւրեանց աշխատանաց պտուղներն  
կ'սկսին կարդաղըել փունջ փունջ կապելով, իւ-  
րաքանչիւրն իւր ճաշակին համաձայն, Ա. յսպէս  
փոքր ինչ հանգիստ առնելէն ետքը, ոմանք  
ևս փոքրիկ քուն մը կը քաշեն աղբիւրի մ'եղեր-  
քը։ 'Ի վերջոյ իւրեանց մէջէն երիցագոյնն ձայն  
կը տայ միւսներուն տսելով «ելք.ք», քորք իմ,  
ելք.ք չարչարուիլ, օրն հիվար (երեկոյ) է ։ ա-  
մենքն վեր ելած՝ վերստին դաշտաց երեսը կը  
բռնեն։ Օրն տարաժամութենէն զով լինելով  
աշխոյժնին նորոգութիւն մը կ'զգենու և դար-  
ձեալ կը քաղեն, կը վնջեն, ու մեզարնին ( $1\frac{1}{2}$ )  
մեթք մեծութեամբ քառակուսի լաթ մը մազէ  
և կտաւի նման դործուած) և տօպրակնին։ Ե-  
րեկոյեան վերադարձն կը մերձի, ոմանք դլխոյ  
պսակներ կը շինեն ծաղկեայ, սիրտերնին ու-  
րախութեամբ լի է, ամենքն բնութեան տուած  
պարգևներով կը ժպտին, ոչ ոք 'ի նոցանէ արր-  
տումերես ունի, այդ հայուհիներն գլուխնին  
ծաղկամբ.ք պսակած՝ վերադարձ կընեն 'ի զիւղ,  
ուր կեցող այլ օրիորդ.ք և անչափահաս մանչե-  
րըն կը դիմաւորեն զիրեն.ք, իրարու բաժին կը  
հանեն ծաղիկներէն, և ուտելիքներէն, զորս  
դիւղի պառաւ կանայքն կսկսին դնահատել ի-  
րենց լնէոյն մէջ, զոր այս պահուս կընեն հա-

ւաքուած զիւղի անկիւնական տեղերը :

Բանջարեղէնքն կը ծառայեն Հայ զիւղաց, որ ՚ի կերակուր պահք աւուրց համար դու աւրողն ամենէն կը քարկոծուի (կ'անարգուի) :

Դարնան երեք և ամսուուան առաջի ամիսները ոչխարներն, առ հասարակ, ՚ի զիւղ կը բերուին կթելոյ համար և անոնց ամենէն աւելի կաթ տալոյ ժամանակն է մայիս 155ն ց'վերջ յունիսի . այս ատենն ոչխարներն երկու անգամ կը կթեն :

## Գլ. 16.

(ՊԵՐԱԿԵՆՔ (ԲԵՐԱՎԵԴԻ))

Այսուհետեւ կը մտնեմք ամառուան ամենէն աւելի տաք ամիսները, դաշտերն և լեռներն կանանչ կերպարանքնին տակաւ առ տակաւ չորցնելոյ վերայ կը դանուին, ոչխարաց կաթըն կ'սկսի նուաղիլ, մանաւանդ եթէ ճամբայ շատ ընեն, այս պատճառաւ հովիւներն զիւղէն 1 ժամու հեռաւորութեամբ տեղի մը կընտրեն զոշխարս հոն ՚ի կիթ բերել, մինչեւ բուն աշուն :

Յորեկին ՚ի ժամ 7-8 գեղջկուհիք կռնակնին սեռիկ (Քառական) մը կապած՝ բուրդ մանելով խումբ խումբ կը դիմեն այն տեղը, զոր կ'անուանեն «Պերատեղ» և ուր հովիւն զհօտն պիտի բերէ հեռաւոր արօտատեղերէն : Այն կանայքն և աղջկունքը, որ բերատեղին կ'երթան ՚ի կիթ

ոչխարաց կ'անուանին «Պերուոր» (բերուոր), հովիւն, որպէս ասացի, զհօտն առած կը գայ բերատեղին, աստ նշան տալով ոչխարք շուրջ զտեղեաւն կը բոլորեն, գիւղի բերուորքն եկած պատրաստ կեցած են, յորոց իւրաքանչիւրն ունի իւրեան յատկացեալ տեղին, ուր նատելոյ համար մէկ մէկ քար տրուած է, որոյ վերսյ է բարձր այս պահուս փոքրիկ աղջկունք խայտալով կը վաղեն, հօտի մէջէն կթելի ոչխարներն մի առ մի կը բերեն բերուորաց առջև, կը կեցնեն, բռնելով ոչխարաց դլուխէն, խսկ այծերուն մորուքէն և բերուորքն կը կըթեն զանոնք մեղմօրէն ձայներ հանելով։ Լմալէն ետքը կաթերնին իրարու փոխ կըտան, ոմանք պարտատէր կը մնան և ոմանք պարտապան, յետ այնու կաթնալից սեռիկնին կռնակնին կապած՝ դարձեալ խումբ խումբ ՚ի գիւղ կը վերադառնան :

Դաստիարակ

Այս ատենը գառնարածն զգառինս առած՝ մի բլրոյ ետեւը, ոչխարաց աչքէն անտես, անհամբեր կ'սպառէ հովուոյն նշանտուութեան, նոյն և առաւել անհամբեր վիճակի մէջ են նաև խեղճ գառնուկներն և ուլուկներն, հովիւն նըշան կըտայ գառնարածին, որ անմիջապէս կարձակէ զգառինս, որք, առանց կապանքի և պարսպի բանտարկուած էին գառնարածի աղգեցութեան ներքեւ, ահա հոս կայ անբացատրելի

տեսարանի մը քաղցրութիւն, զոր կ'զգայ մահ-  
կանացուն, երբ կը տեսնէ այդ փոքրիկ և ան-  
լեզու անամնոց աճապարն դէպ ՚ի իւրեանց ՄՈՅ-  
ԲԵՐՆ, որոնք, որդեկորոյս ծնողաց նման, չու-  
արեալ կեցած՝ կը նային շատ և անդ, գլուխ-  
նին դարձնելով և ձայնելով գառինքն կը խնդ-  
րեն, մարդկային կարեկցութիւն հրաւիրող հայ-  
եացքներ նետելով առ հովիւն։ Այժմ գառնե-  
րըն եկած և մտած են սշխարաց մէջ և 4-5 վայր-  
կենի տեւողութեամբ ամեն գառներն մայրերնին  
կը գտնեն. երբեմն խառնաշվոթութիւնք հօ-  
տին մէջ կը տիրեն և գառներէն ունանք մոլորե-  
լով չեն կրնար մայրերը գտնել, յայնժամ հովի-  
ւըն զանոնք կը յանձնէ իւրեանց մարց վազվա-  
զակի, այսպէս  $\frac{1}{2}-\frac{3}{4}$  ժամու չափ գառներն իւր-  
եանց մայրերու արդար կաթ ուտելէն ետքը  
գառնարածն և հովիւն յոտս կելնեն և կը մեկ-  
նեն զդառինս ՚ի մարց կամ զմարս ՚ի գառանց,  
և առա հովիւն դարձեալ զշխարս և գառնա-  
րածն զդառինս առած՝ կերթան կրկին ՚ի գաշտս  
և ՚ի լերինս, յորս ց'խոնարհիլ Արեուն արածե-  
լէն յետոյ ուշ ատեն կը վերադարձնեն զանոնք  
ի գիւղ։

## Զայտ

Գիւղացիներէն ոչխար շատ ունեցողներն,  
զիւղէն 4-5 ժամ հեռաւորութեամբ մի խոտա-  
էն, լեռնադաշտ կամ յարմար ձորամէջ մը կրնտ-

քեն խւրեանց համար և հոն կը պատրաստեն վրաններ, մի քանի տուն այսպէս ի միասին կը բնակին և անդ կը կրթեն զոջսարս, անդ կը պատրաստեն սեր և կարագ, խւղ և պանիր, ժաժիկ և չորթան, գիւղացւոց այս սովորութեան « զոմա » անուն կըտան, որ 2-3 ամիս կը տեւէ և Քրդաց մէջ աւելի ընդհանուր է :

## Գ. I. L. 2.

### Ա. Մ Ա Ռ

ՅՈՒՆԻՍ, ՅՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ

Ամառուան ամսոց սկիզբը խոտերն կսկսին քաղուիլ, բազմաթիւ սարակներ (բանւոր կամ առօրեայ վարձկան) սարերը և ձորերն, դաշտերը և լեռները կը բռնեն, երկիւղն արդէն փառատած է ամեն կողմերէ . այսպէս մի ամսոյ չափ խոտաքաղութիւնն շարունակելով կը մերձի հնձոց ժամանակն, այս ատեն մեր Հայ գիւղացիք խորին մտատանջութեամբ և գուրգուրալով կը նային արտօրէից վերայ, որոց հասկերն աստոքի ծանրութենէն զլուխնին ծռած են, որք մալուլ (տրտում) գիւղացւոյն դէմքը պահ մը ժպիտներով կը ծաղկեցնեն, որով իւր տիսուր սիրտն կը լենայ գեղեցիկ յոյսերով :

Տարի կը լինի՝ որ արմատներն ուտող խըլուրդներ կամ հասկերն կրծող թրթուրներ կը դոյանան և մեծ աղէտ կը բերեն յուսալից արտերու գլխին, խեղճ գիւղացիք մարդոցմէ յոյսերնին

բոլորովին կտրած՝ կը դիմեն Երկնից զթութեան,  
բերել կըտան Ա. Գեղարդ կամ այլ և այլ որբոց  
մասունքներ, զանազան անուամբ Աւետարան-  
ներ, որովք հանգիստաւոր եղանակաւ անդաս-  
տան կ'օրհնեն Երկարօրէն և սրտառուչ ազօթք-  
ներ տեղի կունենան դաշտաց մէջ, ուր մատաղ  
կընեն պարարակ եղներ « ՚ի բարձումն Աստուա-  
ծային պատժոց » որպէս կանուանեն, կը հասնի  
վերջապէս զարտօրայս քաղելոյ ժամանակն և  
ահա հունձք բաղումք են և մշակք ոչ սակաւք:

Մեծ արտերու մէջ կը լեցուին հնձաքաղ-  
ներն, իւրաքանչիւր կարդն կամ խումբն ունի  
իւրեան գլխաւորն, զոր « հոնած » կանուանեն,  
որ ամենէն լաւ և սրադ հնձողն է և որոյ պաշ-  
տօնն է միանգամայն սահման գծել միւս հնձո-  
ղաց և այդ սահմանն, զոր հոնածն նեղ ճանա-  
պարհի պէս կը բանայ « հոն » կանուանեն, հո-  
նածէն անմիջապէս ետքը եկողն « հոնած եղբայ-  
րըն » է: Հնձողներն ցորեկուան ճաշերնին կընեն,  
որոց գլխաւոր կերակուրն է լոկ ապուր և աղ-  
ջրոյ մէջ պահպանուած բանջարեղէնք, եթէ օրն  
պահք է. իսկ եթէ ուտիք՝ կերակուրնին է թան-  
տպուր և կամ շիկաթան: Շաբաթ երեկոյ արտի-  
տէրն արդէն կը բերէ ճաշ (կորկոտով շինուած),  
որոյ երեսին իւղն կալեկոծի, նոյնպէս մածուն,  
որ իրենց ամենաօիրելի և շատ սովորական ե-  
ղած ուտելիքն է: Ցորեկուան ճաշէն ետքը կու-  
տեն սխտոր կամ կը խմեն սխտորաջուր, նոյնպէս

և քացախ . իրենք արդէն փորձառութեամբ  
դիտեն թէ սխառըն և քացախն չառ առողջա-  
պահական են ամառուան այդ տաքուն երբ  
Արևն կիղիչէ , որոյ ներքեւ օրն ի բուն չարա-  
չար աշխատելոյ կոչուած են :

Կը յիշեմ թէ մի օր երբ ընդարձակ արտի  
մը հնձողաց այցելութեան գնացի , զիս թախան-  
ձանօք վար դրին և կարապետիս հետ ճաշերնիս  
ըրինք այդ դիւղացւոց հետ , որոց ճաշի եղա-  
նակն կամ կերակուրն , ինչ ալլինէին , արդէն չէին  
կարող ինձ դժգոհութեան մը տեղի տալ , երբ  
իմ նպատակն էր անոնց կեանքն անձամբ շօշա-  
փել և սերտել : Քանի հետաքրքրական էր տե-  
սանել , որ սոքա ի վերջոյ սկսան , իրեւ մարսե-  
ցուցիչ , բարկ (Քեսին) քացախ խմել կարդաւ ,  
նախ և առաջ ուղեւորիս հրամցուցին , իրեւ  
վառուած սրտի զովարար , և իրենց խելքով ի-  
րարու կը բացատրէին քացախի այդ տաք պա-  
հուն ունեցած օդտակարութիւնն , ես արդէն  
անսովոր էի այդմ և չկըցայ ընդունիլ կամ ի  
ձեռին առնուլ քացախին ամանն , սիրով թող  
տալով իմ բաժին ագահ կարապետիս , որոյ  
գինւոյ նման խմելու փափաքին արդէն ծանօթ  
էի . աստ հնձողաց մէջ կայր մերձակայ դիւղի  
Հետական-Հարժառութեան , որ խնդրեց ինչ պատճառ  
հասկցնել քացախէն չխմելուս , որպէս զի իրենք  
ալ այնուհետև այդ սովորութիւնն ձգեն . պէտք  
դգացի այս պահուս դոհացուցիչ պատասխան

մի տալ այդ անձին՝ որ ներկայացնողն էր ամեւ-  
նուն, « ով գիւղացիք ասացի, դուք շատ իրա-  
ւունք ունիք քացախ խմելոյ և միանգամայն  
սխտոր վրան ուժելոյ, վասն զի դուք օրն ող-  
ջոյն Արեգական ճառագայթից ներքեւ չարա-  
չար կաշխատիք և ձեր սիրտն, անշուշտ եղա-  
նակի ընա՛ան տաքութենէն, այրած և թերեւս  
մրկած է. իսկ ինձ գալով իմ սիրտն ալ ձեզ  
նման այրած է թէպէտեւ. սակայն . . . , այս  
վայրկենիս Արեւուն ձեզ տուած նեղութեան  
դարմանն քացախն ընտրած էք և չունիք այլ  
դարման մ' ՚ի ձեռին. ուստի դորա գործածու-  
թիւնն կրկին կը յանձնարարեմ ձեզ ՚ի զովացու-  
մըն. առ այս իրենք շարունակեցին քացախի  
այդ օրինակ գործածութիւնն և ապա վերջա-  
ցուցին գեղջկան ճաշն, որմէ յետոյ սոքա-  
ունեցան հանգստութեան ժամեր, յորս ոմանք  
սկսան խուրձերու շուքին տակ անհոգ օրէն քուն  
քաշել, սմանք մանքաղնին կամ գերանգինին  
որել :

Աբու քաղելոյ ատեն, երբ պատուաւոր ան-  
ցորդ մը մերձակայ ճանապարհէն անցնելոյ լի-  
նի, յայնժամ արդի հոնածն մեծ խուրձ մը կա-  
պած՝ կը տանի և անցորդին առջեւ և ՚ի պատիւ  
անոր յոտին կը կանգնեցնէ զխուրձն, իւր ընա-  
կան դիրքովն, ապա պարդեն, ինչ որ է, ըն-  
դունելով կրկին իւր խուրձովն կը վերադառնայ

առ իւր ընկերս . դարձեալ յաւարտ արտին մի  
և նոյն բանն կընէ հօնածն իւր տիրոջ նկատ-  
մամբ , որմէ շալ մը կապասէ :

Նարաթ երեկոյները արտօրէից հնձողներն  
խաղալով և ուրախութիւն ընելով 'ի գիւղ կը  
վերադառնան , զի հետեւալ օրն ՕՌ ՀՈՒԳՈՑ-  
ԵԱՆ է , հետեւարար դառն քրտանց մէջ մտնել  
չկայ , և պէտք է Ա . պահել զայդ օրն , երկիւ-  
զածութեամբ յեկեղեցի գնալ , ուրկէ դուրս  
կընան կեանք չունենալ . հոգւով ու մարմնով  
կամ նամնով և նմուշով անհետանալ այդ երկրի  
կապոյտ կամարի տակից :

## Գլ. Ա. Ա.

ԿԱԼ ԵՒ ԿՈՒԹ

Երբ հունձքերն դաշտերէն կը բերուին , յայն-  
ժամ կառավարութենէն գիւղի տասանորդ առ-  
նողն թէ՛ Մահմետական լինի այն և թէ՛ Հայ կը  
գայ 'ի գիւղն , որ ամենէն պատուաւոր բնա-  
կավայրն իրեն համար պատրաստուած է . սոյն  
պաշտօնեայն « Նահնա » կը կոչուի , ում համար  
այսուհետեւ հաւն ու հաւկիթ , ձուազեղն և  
մածուն , սերն և կարագ առատ են . գիւղի այդ-  
ուն շարայի որկորն իսկ ունենայ , դարձեալ շի-  
րակայ ամբարք չին պակսիր . նա ամենուն կը  
հրամայէ , ամեն բանի հարոցն է և ամեն ժողով-  
ներու նախագահն , որ ունի իւր իրաւասութեան  
ներքն 2-3 ստորագաս մարդիկ , որոնք խոտե-

բու խուրձեր կը համրեն , կալերու ցորեաններն կը չափեն և այլ գործեր կը տեսնեն վերաբերութեամբ տասանորդական տրոց :

Դաշտերն , շատ արտերու հետ , արդէն սկըսած են չորանալ , բնութիւնն օր ըստ օրէ մի տխուր պատկեր կզգենու և իւր բաղմատեսակ զարդերէն կը մերկանայ , ծաղիկներն թափած են և շատերու կոկոններն գոցուած , որք այլ ևս չ'կամին հոտներջնչել մարդոց , յորոց բաղումք մարդկային և միանգամայն Աստուածային օրիւնաց հակառակ կը վարուին , որպէս յաճախ կը տեսնուի մեր Հայաբնակ դաւառաց դիւղական մասի տարեկան կենաց շրջանին մէջ :

Հովիւներն զոչխարս կը խուզեն և տակաւին դիւղացւոյն դիշեր ու ցորեկյայտնի չեն :

Արտերէն որայքն արդէն 'ի կալատեղն եկած են և տակաւին կըդան . գործածելի անսասուններն են եզ , կով , ձի և ոմանք էշ . իրենց գործիքներն են « կամ » և « ճառճառ » . առաջինն Զ կանգուն երկայնութեամբ , մէկ կանգուն լայնութեամբ և 3-4 մատ թանձրութեամբ փայտ մի է , որոյ գլուխն ծռուած է դէպ 'ի վեր , սուրա տակի երեսն կայծքարերով շարուած է , և վրայի երեսը մարդ մը կը կենայ , թէ ծանրութիւն պատճառելոյ և թէ լծան երկու եղներն կառավարելոյ համար . երկրորդն , զոր մեծ քանակութեամբ հունձք ունեցողներն միայն կը գործածեն , կը բաղկանայ 11½ կանգուն երկայ-

նութիւն և 1 թիղ տրամադիծ ունեցող 2 փայտեայ գլաններէ , որոց վերայ , զանաղան ուղղութեամբ ուրաքի նման կտրող (բայց քիչ սուր) երկաթներ կան հաստատուած . գլաններն կը դառնան երկու կողմերէն յարմարցուած փայտերու մէջ , որոնց վերայ մի մարդ կը նստի , դարձեալ թէ ծանրութեան և թէ միանդամայն զգործիս (\*) քաշող ձիերն կառավարելոյ :

Ճառճառն , որ շատ դործ կը տեսնայ , աւելի յարդ կը պատրասրէ քան թէ ցորեան : Մեր դիւղացիներն մի լաւ սովորութիւն ունին , որ վերոյիշեալ 2 դործիքներու առջեւ , շարք մը տուարներ մէկ գծի վրայ քովէ քով կապած՝ կը քալեցնեն , որոց ոտքի տակը կը մանրուին հասկերն , որոնցմէ ցորեանի հատիկներն դուրս կուգան . կալատեղին շրջան ընող անասնոց սոյն շարքն « կալատիզ » կանուանեն Վասպուրականի դիւղացիք , մեր շեցիք « կոռի » :

Կալերն յառաջ կերթան , հովերն պարբերաբար կը փշեն , որով ցորեան յարդէն կը զատեն , շեղիերն կը բարձրանան և խեղճ դիւղացին դարձեալ ուրախութիւն ու տրտմութիւն խառնօրէն կղղայ յինքեան , ուրախութիւն՝ զի կը տեսնէ իւր աշաց հանդէպ չարաչար աշխատանաց և դառն քրտանց արդիւնք եղող կար-

(\*) Սոյն զործիքին եղներ ալ կը լծուին , առկայն ձին աւելի ընդհանուր է , որպէս զի շատ արագօրէն դառնայ . սորա համար զոյգ ձի ալ կը զործածեն .

միուկ ցորեաններն , (\*) յորոց շատ սիրայօժար կը տայ և զկայսերն կայսեր և ղթառուծոյն Աստուծոյ ։ Նա վեհ սրտով տակաւին կը տայ վանուց վարդապետին , կը տայ գիւղի քահանալին , կը տայ վարժապետին (եթէ ունին) , կը տայ ոչխարարած և գառնարած հովիւներուն , կը տայ մշակին և խոտաղին , կը տայ անդիարածին , կը տայ քղիրին , կը տայ պահապանին (Խոռոչէ) . այդ գիւղացին տակաւին բաժին կը հանէ իրմէն աւելի աղքատաց և բաժին կը հանէ քնչուին , որ կեցած է կալին առընթեր չափելոյ պահուն : Դիւղացին իւր ցորենի բաժանումն տակաւին կը շարունակէ և այս անդամին մի այլ շեղջէ կը տայ չըրւան , կը տայ խանութպանին , որմէ ապրանք առած է , զոր « փարթալ » կանուանեն այսպէս կը լեցնեն քաղաքացւոց բեռները և ահա ցորեաններու շեղջերն սններեոյթ եղած են : Այս ատեն արդարեցուածատ կերպարանք մի կ'զգենու մեր գիւղացին , որ վիզծուած՝ և գլխիկոր յիւր տնակն կը վերադառնայ կողակցին դուժ տալ թէ « կի՞ն էլ ցորէն չմնաց կալատեղ , զմէն դնաց , Աստուած թողնորէն տայ , նորէն ուրախանանք , ողջ մնան մերեզներն և մեր բաղուկներն ։ :

Հուսկ ուրեմն կալի տկուցք , զոր « խզուղ »

(\*) Որով կը հոգայ իւր բոլոր պէտքերն եւ կը վճարէ պարտքերն , զի գիւղացւոց գրեթէ բոլոր սակարակութիւնք ցորենով կը լինին :

կ'անուանեն, կրկին և կրկին կը ծեծեն և վրան  
կալ ընելով մնացած ողբրմելի ցորեաններն կը  
հանեն, որով կը պատրաստեն իրենց տան պա-  
րեն, որ շատ անգամ՝ չըաւելով փոխառութիւն  
կ'ընեն տարեկանի (Հ-Պ-Պ) և մանաւանդ գարիի,  
մինչև յաջորդ տարուան կալ ու կութի ժամա-  
նակն . սոյն օրինակ փոխառութիւնն « սալաֆ »  
կ'անուանեն : Այսպէս գործերնին շարունակե-  
լով կ'աւարտեն կալերն մինչև աշնան առաջի  
ամսուան 45 ին, որմէ ետք ձմեռն օր ըստ օրէ  
զգալի լինելոյ վերայ կը գտնուի :

## ՔԼ. ԼԸ.

### Ա Շ Ո Ւ Յ

ՍԵՊՏԵՄԲԵՐ , ՀՈԿՏԵՄԲԵՐ , ՆՈՅԵՄԲԵՐ

Հայ դիւղացիք աշնան սկիզբը կ'սկսին խո-  
տերն դիղել, դէղերն դլիսել ( \* ) , ախոռներու ,  
գոմերու և տանց ծակ ծուկներն կաւով ծեփել ,  
դուարներու դլուխները դնելոյ համար կա-  
պանքներ պատրաստել , մորանիք (մուռներ) վե-  
րանորոգել , քայքայեալ տեղերն շինել և այլն :  
Ախոռի դուռն արդէն առ հասարակ տան վերի  
անկիւնը բացուած է , հետեաբար անասուն-  
ներն իրենց երթեւկութեան առաջին ճանա-

(\*) « Դէզ գլխել » կ'անուանեն երբ խոտի դէզն  
բրդաձեւ շարելէն և աւարտելէն ետքը գլխուն վերայ  
մի քանի խուրձ եղէք կամ տարբեր խոտ կը ձգեն ։  
որպէս զի դէզն ձիւնէ և անձրեւէ անվաս մնայ :

պարհն ունին տան միջավայրը և թէ էր աղա-  
գաւ գիւղացիք պարտաւորուած են տարօրի-  
նակ ճաշակ մի տալ անասնոց այդ բնակութեան  
շէնքի կերպին , մի զատ հարց է , որոյ պատաս-  
խանն շատ հետաքրքրական , զոր աստ ՚ի վեր  
հանել չունիմ նպատակ :

Աշուն կը վարեն կորդ երկիրներ գութա-  
նով , որ Վասպուրականի մէջ 4 լուծէ կը բազ-  
կանայ և Տուրուրերանի մէջ շատ անգամ 7 է ,  
վասն զի առաջնոյն հողերն կակուղ են , և երկ-  
րորդին պինդ : Դութանի մաճակալին ամենէն մեր-  
ձաւոր եղողէն սկսեալ կարդաւ նշանակեմք ան-  
ուանքն այդ լծոց . Ա. ամալ : Բ. հրաւարան : Գ. ա-  
նուա : Դ. Խնչորդան : Ե. առժուան : Զ. իսուրէկ : Ի.  
Քոչորդան : Չախահասքն առաջի լուծերուն վերայ  
և անչափահասքն վերջնոց վերայ կը նստին , ընդ  
մէջ պարապ ձգելով . գութանի լծուվարներն ա-  
նասնոց ընթացքին հակառակ ուղղութեամբ  
նստած լինելով նոցա կռնակներն կը մայեն  
(մեղմաբար շփել) և ՚ի քաջալերութիւն Հայկա-  
կան և Քրդական երդերով կը գովեն զանասու-  
նըս , որոց աշխոյժն կը զօրանայ , կորովս կը վե-  
րանորոգուի , զի այդ անբաններն , գիտես , թէ  
ԲԱՆ ՄԸ կ'զգան գովասանքէ :

## Զ Մ Ե Բ

ԴԵԿՏԵՄԲԵՐ , ՅՈՒՆՈՒԱՐ , ՓԵՏՐՈՒԱՐ  
Չմեռուան եղանակին Հայաբնակ գաւա-

ուաց գիւղօրէից հասմար առ հասարակն օր հան-  
գըստեան է , նման կիւրակէ աւուրց . խոնջեւ ալ  
կենդանիք կը կապուին ախոռներու մէջ , մաս-  
միներն կամ նշանաւոր եղներն այդ բնակու-  
թեանց անկիւնները՝ պատուաւոր տեղերն ար-  
դէն գրաւած են , գիւղապետն պատրաստած  
ունի լուսոյէ տեղն , որ ախոռի միջավայրն է , մէկ  
մեթր բարձրութեամբ , որոյ բոլորտիքը շուրջա-  
նակի թումբեր են քաշուած , որոց ետևը նոյն  
ուղղութեամբ կը կենան տան գոմչու ձագերն՝  
իւրեանց հոգւոյն հատորները : Այս խորհրդա-  
տեղին կը հաւաքուին մեր գիւղացիքն տարուան  
տխուր եղանակին , անուսուցիչ մանուկներ մաս-  
նաւոր տեղերը առանձնացած՝ վէդ կը խաղան ,  
երիտասարդներն վէդով ընկոյզ (\*) , որով կը վատ-  
նեն իւրեանց թանկագին ժամերն : Ծերերն ,  
ընդ որո նաև գիւղապետն կսյլոն (լուղոն) կը  
ծխեն և իրարու պատիւ կ'ընեն . այս ատենուան  
խորհրդակցութեան նիւթերու տեսակներն աւե-  
լի շատ են . զառամեալներն ձայն չունին զի և ի-  
րենց բան լմնցած է » . խոկ խելահասներն կը  
խորհին և կը խորհրդակցին , մին կը չափէ ա-  
ռանց կանդունի , միւսն կը ձեւէ առանց մկրա-  
տի , և մէկան կը կարէ առանց ասեղի . կը խօ-

(\*) Ոստան գաւառի Քուրդերն գիւղացւոց այս  
բուք սովորութիւն գիտնալով 'ի ձմերան մնծ քանա-  
կութեամբ ընկոյզ կը բերեն 'ի գիւղօրայս եւ ցորենի  
հետ կը փոխանակեն , և եւ տալով 2-3 առնկով :

սին երկարօրէն և դատողաբար ընդհանուր Երկրին վերայ, վեսայի և հարսի վերայ, ճակատագրի կամ բազդի վերայ, վերջապէս երկրաւոր և Երկնաւոր շատ բաներու վրայ. բայց չեն խօսիր բնաւ գրելոյ և կարդալոյ վերայ, կամ իրենց բացատրութեամբ սեւի ու սիրտկի (գրի և թղթի) վերայ, առ այս լուռ են և լուռ, զի սիրտերումն չկայ ուսման սիրոյ հուր: Եթէ դանուի մէջերնին մի լուսամիտ անձ, որ կարենայ վերջի ամենակենսական կէտի վերայ խօսք մը բանալ, շուտ կը կարկեն դորա լեզուն առելով թէ « մեր ճյեր շատ կարդալով անաստուած կը լինին կամ մեր պապկնական ժամ, պատարագ չեն ճանաչեր »:

(\*) Թէ է՞ր այս ամենատխուր եւ ամենավտանգաւոր եզրակացութեան եկած է եւ կը դայ օր ըստ օրէ Երկրի Հայ ժողովրդեան միտքն եւ զայրութ կը դգայ կրթական դորձէն եւ թէ ո՞չք են դիմաւոր պատճառներն, որով եւ պատասխանատու այս սպառնալից երեւոյթին, այս մասին, Երկասիրութեանս շրջանակէն դուրս, պատեհ առթիւմը, ունիմ յուղելիք մի քանի կենսական խնդիրներ, որոնք Ազգային գոյութեան եւ ապագային հետ այնպէս սերտիւ կապուած են, որպէս հոգին եւ մարմին, զրական փաստերով ցոյց տալ Երկրի լուսաւորութեան համար ճիգ թափող կարգ մը զանգակաւոր աղջուկներու անհաշիւ ուղղութիւն, որոց համար ց'արդ քանի հազարաւոր ոսկիներ ծախսուած են եւ կը ծախսուին, ի՞նչ հակապատկեր արդիւնք յառաջ եկած՝ եւ թէ Երկրի զարգացեալ եւ հեռատես մասի գաղափարն ի՞նչ է վերաբերութեամբ

Երբեմն անձամբ տեսած եմ, որ իրենց մէջ այնպիսի բանաւոր խորհուրդներ տեղի կ'ունենան և գաղափորներ կը յայտնուին, որոնց արժեքն իրենք իսկ չ'գիտեն հեղինակ լինելով հանդերձ, Երկրի պատուական կլիմայն արդէն զիշենք օժտած է մոռային զօրաւոր կարողութեամբ մը. սակայն անմշակ մնալով կը մեռնի մըտաւոր այդ կենդանի զօրութիւնն, որ 19րդ դարու կատարեալ դերասանն է, Գիւղացիք զիրեար լաւ զիտեն յարդել, համաձայն իւրեանց բարոյական և նիւթական աստիճաննին. մէջերնին երբ խօսքի տէր մի օտարական գըտնուի, խօսից կարգն միշտ իրենն է և ամենքն բերաննին բացած և ականչնին որած լոիկ ու մնջիկ անոր մտիկ կ'ընեն, ինչ կուղէ թող խօսի, բաւական է որ յուսադերական լինի և նիւթն առնուած՝ տեղական ու փորձառական կեանքէ:

## ԳԼ. ԼԹ.

Դէ-շէ յեռուան լուսարիւ

Չմեռ եղանակին զիւղի մէջ եթէ կայ մի տիրացու կամ վոքը ինչ ընդերձանութիւն վարժքահանայ, կը լինի մանկանց վեցամսեայ վարժապետ, որոյ վարձքն արդէն ցորենով կը փոխարինուի: Տիրացու-վարժապետն զուսանողս մեր ակնարկած խնդրոց, զորս այժմ կը թողում իւրեանց մթութեան եւ ծանրակշիռ պիճակին մէջ ու կանցնիմ շարունակել իմ ներկայ ըստիքն:

ըստ կրթելոյ բարեմնութենէն շարժեալ՝ իւր կը շատին դրած է մի հաստ գտաւղան, որ կը ծառայէ « ՚ի վախ և ոչ թէ ՚ի ծեծ » , և որոյ շատ տեսակներն ինքն արդէն քաջ գիտէ. դասերն կաւանդէ 20-25 տղայ իւր գլխին ժողոված ոտքի վերայ, չեմ խօսիր դասագրեանց տեսակներու և վիճակի մասին . ջանասէր դասատուն յօնքեր վիճելոյ արդար փափաքովն որատես ուսանողաց աչքերն կը հանէ յանդէտս և ձմեռն ողջոյն այսպէս կանցունեն ախոռի մի անկիւնը :

Զհորման ժամանացունիւն (\*)

Գիւղի ողորմելի քահանայն զգիւղացիս կոշել կը տայ յԵկեղեցին, ձեռամբ ծերունի ժամ կոչի մը , որ տանեաց վերայ ման դալով կը պօռայ բոլոր ձայնովն « օրհնեալ է Աստուած ՚ի ժամ հրամայեցէ՛ք , ողորմի Աստուած ոէս Տաւո (դաւիթ) կամ այս ինչ անուն (տան մեծի անունն տալով) , որ ներսէն աչքերն ճմրթելով կը պատասխանէ « Աստուած ողորմի » :

Եկեղեցւոյ մէջ քահանայն ամեն ինչ է (բացառութիւն շատ քիչ տեղեր), այսինքն եկեղեցւոյ բոլոր ասմունքներն միայնակ ասելոյ դատապարտուած է . ժամակոչն երբեմն կ'օգնէ իրեն, եթէ յիրաւի, աչքն կարենայ որոշել հնութենէն շարականի կամ ժամագրքի գիրերն ,

(\*) Ամառուան ժամասացութիւնն յար եւ նման է ձմեռուանին , միայն թէ քահանայն զրեթէ ունկընդիր չունենար :

զորս տէր պապան եղած տեղին կապէլով կ'ընթեռնու առանց ՚ի միտ առնլոյ : Շատերու լեզուն սահած է և ոչոք կրնայ կանոնաւոր պարբերութիւն մը լսել ու այս բանն յառաջ եկած է շուտով լմնցնելոյ Քունաշանունէնէն : Տարուան մէջ 3-4 անգամ՝ պատարագ կը լինի և գիւղացիք կը յաճախեն յեկեղեցի . իսկ միւս օրերն ժողովուրդն կամ բնաւ չըլլար և կամ կը բաղկանայ , Զ պառաւէ և մէկ ծերուկէ :

Հարկ չկայ այլ ևս եկեղեցւոյ շէնքի խեղճութիւնն նկարագրել , քանի որ ազնիւ ընթերցողիս ց'արդ անծանօթ չէ մնացած . նոյնպէս շեմ ուղեր ծանրանալ եկեղեցւոյ քայքայեալ դրան և փայտէ բաւական վերայ , որոնց կրնայ բնաւ պէտք չունենալ :

## Գլ. Խ.

### ՏԱՆՈՒՏԻՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Մեր Հայ գիւղացւոց այժմեան տանուտիրական իշխանութիւնն քիչ կը տարբերի նախնեաց ժամանակի վիճակէն և այս իսկ է նշան հարազատ Ա.Ի.Ա.ՆԴ.Ա.Պ.ՀՈՒԹԵԱՆ այդ հին . . . ժողովրդեան , որ քաջ գիտէ ամեն ինչ վրայ տալ թող ՚տալոյ համար իւր պապկնական Բընակավայրն , ուր երբեմն Սահակ և Մեսրոպ թարգմանեցին , Եղնիկ Փիլիսոփայից , և Եղիշէն մըմունջ կարդաց . . . :

Տան մէջ ամենէն մեծն (տարեւոր) յարգելի և պատկառելի է ամենուն համար, եթէ ծերութենէն մտաւոր կարողութիւնն կամ մարմնական կազմութիւնը չեն խանգարուած, նա արդէն իւր գերդաստանի բացարձակ հրամայողն է, ոչ ոք նորա հրաման ունակովսել կը համարձակի, զի տան Տէր և ՆԱՀԱՊԵՑՆ է, եթէ գտնուի երբեմն ստահակ երիտասարդ մը՝ որ ինչ ինչ պարագայից մէջ անհնազանդ լինի, առ ժամանակ մի է այդ և ապա, այլոց միշնորնորդութեամբ, ձեռք համբուրիւ, սիրելի կը դառնայ տանուտեառն, որ զնորա գլուխն գըրկելով սրտագին համբոյր կըտայ նման, որպէս անառակ որդւոյ: Ինչպէս է Պապն տան արական սեռի վերայ, նոյն է և մամիկն իդական սեռի նկատմամբ: Ամառ եղանակին երբ ամենքն կերթան ՚ի սար և ՚ի ձոր, տանուտէրն ընդհանրապէս կը մնայ ՚ի տան (՚ի գեղջ) և ամեն երեկոյ հարց ու փորձ կընէ զիւր զաւակաց որդիութենէն, զաւուր ապահովութենէն և վերջապէս զօրն երեկոյ ընելէն: Տան բոլոր առն և տուրը յիւրում ձեռլն է և առանց իրեն մէկը չունի իրաւունք բան մը դնելոյ կամ վաճառելոյ:

\* \* \*

Հօր և մօր ողջութեանը զաւակներն շատ և շատ քիչ անգամ իրարմէ կը բաժնուին, որ

« Տան հիմն քակել կամ ունել մարել է ։ Երկրագործական վիճակնին խոլ զիրենք պարտաւոր կը կացուցանէ , որպէս զի իրարմէ չբաժնուին , զի այդ արհեստն բազմամարդութիւն կը պահանջէ , որպէս յայտնի է ։

Երբ տանուտէրն ծերութենէն այլ ևս անկարող լինի գործելոյ , տանուտիրական իշխանութիւնն կը յանձնէ իւր երէց որդւոյն և կամ ամենէն աւելի խելահառ ճարտարին , ինքն գործէ և գործելէ կը քաշուի . այսու ամենայնիւ տակաւին իւր վերին իրաւասութիւնն գրեթէ կը պահէ և կը միջամտէ մանաւանդ այն գործառնութեանց , որոց մէջ փորձառու է ։

Յետ այսորիկ տանուտէրն կը լինի տան պապիկն , և որպէս ասացի , յաճախ կը տեսնուի եկեղեցւոյ պարսպի ՇՈՒԲԻ ներքենստած , ուր հանգիստ կ'առնու , դրեթէ միշտ մտաղբաղ հանդերձեալ աշխարհին վերայ . զի ինքն երկրաւոր լինելոյ վիճակէն դադրելոյ շատ ժամանակ չունի . այդ ողորմելի մարդն հաստ դաւաղան մի ունի ՚ի ձեռին , սակայն բաղում անդամ պատահած եմ , որ ոտքի ելած ատենը կրնակն տուած է եկեղեցւոյ հիմնաքարին , առանց ուրոյ , մի օր աչօքս տեսի , որ ընկաւ երեսի վերայ , թռաւ ձեռքի դաւաղան՝ իւր ծերութեան միակ նեցուկն և եթէ դէպքով մը ջերմեռանդ կարապետս կայծակի արագութեամբ չհասնէր և զինքն չվերցնէր գետնէն , նորա բանն բու-

սած էր ու հարկ կը լինէր դքահանայն կոչել և  
թաղման հանդեւ կատարել :

Այսպէս ալ տանտիկինն կը լինի տան մա-  
միկն , երբ չափազանց պառաւած է և գործերն  
կը յանձնէ տան մեծ հարսին , եթէ ամենէն աշ-  
խատասերն և տնտեսագէտն է(\*) :

Տան մը մէջէն երբ մի կարեւոր անհատ ՚ի  
պանդխտութեան գտնուի , այդ տունն միշտ  
սդաւոր է . այս հաշուով , ուշիմ վերծանող ,  
կրնաս գիտնալ թէ որչափ սդաւոր տուն կայ  
Հայտքնակ դաւառաց մէջ , մանաւանդ երբ ՚ի  
նկատ առնուո նոցա պանդուխտներու թիւն ,  
զոր շատ տեղեր նշանակած եմ որչափ որ կա-  
րելի եղած է :

### ԳԻՒՂԱՊԵՏ (ՔԵՆՃԵԿ) ԸՆՑՐԵԼՈՅ ԿԵՐՊՆ

Գիւղին պետ մը ընտրելոյ համար մեծէն  
մինչև փոքր ՚ի մի կը հաւաքուին նիւթական  
կամ բարոյական կարողութեան տէր մէկի մը  
տան առընթեր կամ մի այլ հրապարակային  
տեղ , ուր խորհուրդ ընելով ձայնից մեծա-  
մասնութեամբ յարմարագոյն մի անձ կ'ընտրեն ,  
զոր մի քանի գլխաւորք հետերնին առած՝ կը  
տանին Առաջնորդին և արդէն դնած են մի նախ-  
շուն շւլ (գօտի) և կը յանձնեն դայն Արբազա-

(\*) Աչքի դարմելիք պարագայ մի է , որ մեր գիւ-  
ղացի կանայքն արանց հետ համեմատելով , աւելի  
տնտեսագէտ են :

նին, որում կը յայտնեն գիւղի որոշ կամքն 'ի  
մասին գիւղապետի ընտրութեան : Առաջնորդն,  
գօտին 'ի ձեռին ոտք ելած՝ պահպանիչ մը կ'ը-  
սէ և զգօտին կը կապէ նորընտիր գիւղապետին  
գլուխը : Այսպէս մեր գիւղապետն գլուխն մեծ-  
ցուցած քթին հետ և շրջապատեալ իրեններէն՝  
առօք և փառօք կը վերադառնայ 'ի գիւղն,  
ուր խնճոյք մը կազմելով կը կոնծեն զգինին  
և զօղին . յաջորդ օրը խնճոյքին համար եղած  
ծախքերն, զոր օրինակ գիւղապետի շալն, մոր-  
թուած գառնուկն և այլն, ամենքն հաշիւ ընե-  
լով՝ գիւղի տրոց համեմատութեամբ մէջերնին  
կը բաժնեն և իւրաքանչիւրն իրեն բաժին ընկած  
կը վճարէ, թէև ոմանք ոչ առանց տարօրինակ  
հայհոյանաց :

Գիւղականաց ասունչանդն

Գիւղի ժողովուրդն կը բաժնուի չորս գըլ-  
խաւոր աստիճանի . Ա. Խամբայ կամ պճեղ կ'ա-  
նուանի, որ 1 տուրք ունի : Բ. կիսախամբայ  
կամ կիսապճեղ, որ  $\frac{1}{2}$  տուրք ունի : Գ. Թուա-  
րեկ, որ  $\frac{1}{4}$  տուրք ունի : Դ. կէս թուարեկ, ո-  
րոյ տուրքն նախորդի կէսն է, այսինքն  $\frac{1}{8}$  : Այս  
համեմատութիւնն 'ի նկատ կ'առնուի կառավա-  
րական հարկերու և այլ տրոց մէջ : Ո՛վ որ բնաւ  
տուրք մը չկընար վճարել, իրեն պարտակա-  
նութիւնն է գիւղի հիւրերուն ծառայութիւն  
ընել և անոնց ձիերը դարմանել : Երբեմն գիւղի

ժողովսերու մէջ կագ և կռիւ տեղի կ'ունենան ,  
երբ տիրող կառավարութեան պաշտօնեայն կե-  
ցած՝ կը պահանջէ սայլ կամ ձի , եթէ դտնուի ,  
և այլն(\*). այս իրարանցման մէջ ծերունիք կը յա-  
ջողին զստահակն հայրաբար խրատելով հնագան-  
դութեան բերել , որով խնդիրն կը վերջանայ .  
կը պատահի նաև որ ուժեղ գիւղապետի մէկ  
ապտակն բաւական կը լինի զստահակն կարգի  
բերել :

Գիւղացւոց անհնագանգներն ՚ի հնագան-  
դութիւն ածելոյ այս հայրական եղանակն զի-  
րենք արդարև գովութեան արժանի կը հան-  
դիսացնէ . զի տեղական կառավարութիւնն գըլ-  
խացաւէ կ'աղատի : Գիւղապետներն « մելիք »  
ալ կ'անուանեն շատ տեղերը :

## ԳԼ. ԽԱ.

Վ. Ա. Կառավար (Պատշաճ)

Ա. Ամէն վիծկի կամ գութան ունեցող  
տուն , տարուան ընթացքին մէջ , մէկ օր իւր  
վիծկին կամ գութան , պէտք եղած մշակներով ,  
վանուց հողին վերայ աշխատցնելոյ պարտական  
է . տուն մ'եթէ վանքէն շատ հեռու լինելով  
գիւղացին դժուարութիւն ունենայ ՚ի վանս գը-  
նալոյ , գընամն կը տայ և ինքն չերթար : Բ. Իւ-  
րաքանչիւր տուն , թէ աղքատ լինի և թէ հա-

(\*) Սոյն օրինակ պահանջից օլամ անուն կը ասն ?  
որ ձրի կը նշանակէ :

բուստ, տարուան հնձոց ժամանակը, մէկ օր  
մարդ մը տալ ոլարտի վանուց արաերն քաղե-  
լոյ համար. ոմանք դրամ կը տան փոխանակ  
մարդոյ, Վանուց համար այս օրինակ աշխատու-  
թիւնք կ'ըսուին շատարա, որ խիստ ուրախու-  
թեամբ տեղի կ'ունենան, ուստած և շառան ի-  
րենց պաշտօն անհանգիստ կը վարեն և նոյն օ-  
րը վանքն կը կերակրէ զաշխատաւորս : Կանայք  
ևս կը գան վանուց գարիներն քաղել 'ի պա-  
հանջել հարկին : Գ. Ա. Ա. Մէն տուն և կամ նոյն է  
ըսել իւրաքանչիւր գիւղ իւր բոլոր ոչխարաց  
կաթն մէկ օր վանուց կը տայ . եթէ այդ թե-  
մական գիւղն վանքէն այնչափ հեռու ըլլայ : որ  
զհօան 'ի վանս բերել կարելի չը լինի , յայնժամ  
վանուց պտղի հաւաքող վարդապետն 'ի գիւղն  
կը գայ և զոչխարս կթել տալէն յետոյ շինել կը  
տայ իւղ և պանիր , զորս գիւղի անասուններով  
կը փոխադրէ :

### Կողապեսուա

Դ. Վանուց իրաւունքն է արական սեռէ  
մեռնողի մը սովորաբար հագած զգեստներ ,  
որք կողոպուտ անուան ներքեւ կը տրուին՝ հո-  
գեբաժին , այսինքն մեռնողի հոգւոյն համար ,  
եթէ հարուստ մէկը լինի մեռնողն , մեր հայր  
սուրբ միայն անձնական զգեստովն չըաւակա-  
նանար , այլ ուղած դուարներէն մին ևս կը տա-  
նի : Իգական սեռէ մեռնողի մ'երրեմն արծա-  
թեղէնքն ալ կ'առնուն՝ իրը մեղաց գին , եթէ

հարուստ է՝ զգեստին ալ կէսն :

Բաց ՚ի յիշեալ տուրքերէն, տարուան մէջ, բացառիկ տուրքեր ալ կը տան վանուց, ինչպէս ցորեան, տարիկան, դարի, ձէթ (ունիւր եռուը), իւղ, պանիր, հաւկիթ, նոյնպէս միաբանաց համար դուլպա. վանական այս կարդի տուրքերն աւելի այն դաւառներ կը տան, յորս հաշուադի սովորութիւնն վերցուածի պէս է(\*) :

Խաչինա (Խաչ օբննեա)

Մեր Հայ գիւղացիք այսպէս կ'անուանեն, երբ իւրեանց ննջեցելոց հոգւոյն յատուկ պատարագ ընել տան և այս առթիւ այլոց հացիերոյթ կը տան հետևեալ եղանակաւ :

Տանուտէրն (ժամ ընել տուողն) կը դնէ հարէնէ կամ ուշիւ ահագին պտուկներով, իւղն կը հալեցնեն պղինձներով, կը կոչեն զգիւղացիս մեծամեծ խումբերով և խիստ շատ տեղեր անխըռապէս, որոնք կը դան հոգւոյ ճաշն ուտել, Մայր-Տան թոնիրի (Ռանուը) շրջապատը երկայն տախտակներ կամ կաշէ սուֆրաներ կը շարեն. աւելորդ է ըսել որ իրենց նստարանն կամ համագլատարանն երկիրն է, ուր կը զարնեն Պառաշ, քահանայն և վարդապետ հայր սուրբ (եթէ գործով մը գիւղի մէջ կը դանուի կամ թէմական վանքէն կոչուած է) տան վերի գլուխը բազմած են, լիաբերան կը լեցուին ճաշի ուսուս-

(\*) Վասպուրական եւ Տուրուբերան նահանգներն ց'արդ կը պահեն ուսումնի սովորութիւնն :

ներն , որոց վերայ իւղն լճացած՝ կը ծփայ մատակարար կանանց արագաշարժութենէն . այս պահուս ամէն ոք անհամբեր կ'սպասէ տէր ողապայի ՀԱՅԻ ՄԵՐԻՒՆ , զոր ջերմեռանդօրէն կ'արտասանէ և խաչակնքմամբ ճաշն կ'սկսի ուտուիլ : Աղահօրէն ուտելոյ անվարժ մարդիկ , սեղանի առատութենէն , շատ անդամ կը կշտանան ոչինչ կերած : Հոգւոյ ճաշն տակաւին կը շարունակի և շերեփի (+էէչ) նման խոշոր դրդալներն վար ու վեր անընդհատ կը շարժին . տան հարսներն ու երիտասարդներ , մոմի նման , դիմացնին կեցած կը վառուին պարպուածներն անմիջապէս լեցնելոյ համար . այսպէս ահա կը կշտանան ամենքն ալ :

Երկրորդ սեղան կը նստին կանայքն և աղջրկունք(\*) , որք արանց նման , ճաշելոյ կերպի մասին անմրցանակ չեն և առ այս իրաւունք ունին . վասն զի իրենց չարաչար աշխատութեամբն արանց կը հաւասարին : Ի վերջոյ տան երէցն Հայրմերի լրմանը՝ շեշտելով կ'արտասանէ «օրհնեցի և պահպանեցի զտունս , զտեղիս , զայրըս և զկանայս , զծերս և զմանկտիս , զկերողս և զկերցնողս , նոյնպէս զննջեցեալս ձեր , որ ՚ի հողոյ տապանիս իցեն , ՚ի լոյս երեսաց իւրեանց հանդուցանիցէ և դարձեալ զհոգիս նոցա ար-

(\*) Ըստ որում իդական սեռին արականին հետ մէկ սեղանի վերայ ճաշ չընելոյ սովորութիւնն տակաւին կը պահուի , իրբեւ նախնեաց սովորութիւն :

ժանիս լիցի յարքայութեան երկնից , զմացորդս  
բարի յիշատակ և անփորձ արասցէ , Աստուած  
շէն և պայծառ պահեսցէ և սեղաննիդ առա-  
տացուսցէ ամէն » , Քահանայն (\*) նմանօրինակ  
եղանակաւ կանանց սեղանն եւս օրհնելէն ետքը<sup>ը</sup>  
ամենքն միահամուռ իրեն ձեռքը կը համբու-  
րեն և կը մեկնին հետղհետէ :

### ԳԼ. ԽԲ.

Քրոջ վերա համառակէ

Քուրդ ցեղի ընտանեկան կեանքն քիչ կը<sup>ը</sup>  
տարրերի մեր գիւղական Հայոց ունեցածէն :  
Սոքա կը բաժնուին երկու գլխաւոր կարդի . Ա.  
աստանդական (վրանաբնակ) . Բ. նստկան (հաս-  
տատուն բնակութիւն ունեցող) : Առաջինքն հո-  
ղին վերայ քրտինք թափել ոչ 'ի հօրէ տեսած  
են և ոչ 'ի մօրէ սորված . իրենք կենաց աշխա-  
տութեան վերայ նոր յաւելում մի ընել տակա-  
ւին չ'գիտեն , այսու ամենայնիւ երջանիկ ապ-  
րելոյ հնարքներուն քաջ ծանօթ են . իւրեանց  
գլխաւոր հարստութիւնքն կը կազմուին ոչխար-  
ներէ և ձիերէ , շատերն արդէն կը պահեն յա-  
տուկ ժոյգներ հեծնելոյ համար : Ընդհանրա-  
պէս ունին պետեր , որք նորուն կ'անուանին , որ  
ազնուական գերդաստանէ սերեալ կը նշանա-  
կէ : Թոռուններուն հրամաններն անդառնալի են

(\*) Հոգ չէ թէ ինչ ըսելն չ'հասկնար եւ սխալ-  
ներով լի կը շարազրէ :

և վճիռնին վաղ կամ անագան միշտ գործ ադրելի :  
Իւրաքանչիւր թուուն իւր հպատակ բոլոր վրա-  
նաբնակներն 'ի միասին առած՝ Աշէեն կամ Հո-  
վերեն կը կոչուի և իրարմէ կ'որոշուին տոհմական  
ու միանգամայն իրենց բնակած վայրերու ան-  
ուանի տեղերէն ընդունած անուանց ներքեւ,  
յորոց մի քանի նշանաւոր ցեղեր աստ կը նշա-  
նակեմ, զորօրինակ Ճէտրանցէ, Զէլանցէ, Պւբէնցէ,  
Սէտէնցէ, Զորենցէ և այլն :

Վրանաբնակաց մէջ կը գտնուին նշանաւոր  
տաղանգի տէրեր, (ուղղակի արդիւնք իւր-  
եանց ծծած օդի ներդործութեան), այլ խո-  
պան և բոլորովին անմշակ մաօք, զի գատիա-  
րակութիւնն, որով և քաղաքակրթութիւնն ի-  
րենցմէ տակաւին շատ հեռու է, հարստութիւն  
քաջասրտութեան չափ նշանակութիւն գրեթէ  
չունի սոցա մէջ, քաջասիրտն ամենէն պատ-  
ուաւորն է, ում ամենքն կը հպատակին սիրով :  
Բ. Նստկան մասն կը պարապի երկրագործու-  
թեամբ, որ բոլորովին անզարգացեալ վիճակի  
մէջ կը գտնուի : Հայոցմէ աւելի մեծ քանակու-  
թեամբ ոչխար պահելոյ ապահովութիւն ունին,  
որպէս և բաւական քաղցր յարաբերութիւն մե-  
րայնոց հետ, երբ մի և նոյն գիւղին կը պատ-  
կանին : Իրենց ընտանիքներէն շատերն ունին  
նախշուն գորգ ( +էլէ ) գործելոյ արհեստն,  
որով կը նեն գլխաւոր առ և տուրնին :

Քրդական տարրէն , որպէս յիշեցի , շատ  
քիշեր Հայկական յատկանիշներէ զուրկ են և  
ոմանք ևս Հայոց կնքահայր կը լինին խաչ բըռ-  
նելով կամ այլոց բոնել տալով , այսուհետեւ այդ  
քուրդն փեսայի տան +րէլան է և անոր պաշտ-  
պանն նեղ վայրկեաններու մէջ(\*):

Սոքա կրօնական պարտականութեան մէջ  
շատ թերի են , մանաւանդ վրանարնակներն ,  
թէպէտեւ ունին կրօնական գլուխներ , որոնք  
չեն կը կոչուին , որոց խօսքերը և խրատներն  
Աստուածային պատգամի շափ իւրեանց կը ներ-  
գործէ , կը վայելէն ամեն տեսակ յարդանք ու  
պատիւ : Քուրդերն ասոր նման թերի են նաև  
քաղաքական պարտականութիւն կատարելոյ  
մասին , այսինքն կառավարութեան տուրք տա-  
լուն մէջ , որ դիտես թէ ինքնուրոյն վիճակ մ'ու-  
նին . վասն զի իւրաքանչիւր Պետն Տէրութեան  
մասնաւոր տուրք մը կըտայ իւր հապատակաց  
կողմանէ և ապա ինքն անոնցմէ կընդունի :

Այս ցեղն շատ վրէժառու է , այնպէս որ  
յորդոց յորդիս կը տեսէ , նոյն իօկ եղբայր եղ-  
բօր դէմէ վրէժն կըլուծուի միայն մահուամք(\*\*):

(\*) Հայերն՝ թէ՛ քաղաքացիք ևւ թէ՛ զիւղացիք՝  
Քրդաց Քրիստ բառով կը կոչեն , որ կնքահայր կը  
նշանակէ :

(\*\*) Դուն ուրեք յանցաւորին կը ներուի , եթէ  
իւր ընտանիքն հետ առած՝ երթայ ներողութիւն խընդ-  
րել իւր թշնամիէն , որուն զրեթէ զերին կը դառնայ  
այնուհետեւ . այս տեսակ պարագայից մէջ , համաձայն  
իրենց սովորութեան , միջնորդի դեր կատարողն յան-  
ցաւորի ընտանիքն է միայն :

Քրդաց մէջ պահողիստութիւնն ամենամեծ  
նախատինք համարուած է, ամեն ոք կապրի  
իւր ընտանեաց քով և գոհ իւր կացութենէն, և  
երբ իւրեանց կոխած տեղէն դժգոհութիւն սը  
զգան, բնաւ դժուարութիւն չունին փոխադա-  
րուիլ (կեռւընել) ուրիշ տեղ մը, որ հաճոյ լինի  
իրենց և անասնոցն : Ունին մի այլ ոռվորու-  
թիւն, այն է թէ երբէք առանձին ճամբորդու-  
թիւն չեն ըներ, կուզէ լինին ունեւոր կուզէ լի-  
նին չունեւոր, գովելի է ընկերական այս հա-  
մերաշխ զգացումնին, որով լաւ ըմբռնած են  
թէ ճանապարհորդաց համար ամեն ինչ յուսա-  
լի այդ ապառած երկրի մէջ, թէ միայնութիւնն  
մահ է իւրեանց համար և կեանք՝ երբ տեսնեն  
դայն այլոց վերայ : Մեր գիւղացւոց ճանապար-  
հորդութեան կերպն զրեթէ միշտ միայնու-  
թեամբ է, ուրեմն թող ականջ խօսի այդ ան-  
տարրեր Հայ-մարդոց, որք, ըստ իս, իւրեանց  
կեանքէն շատ քիչ դժգոհութիւն զգալոյ իրա-  
ւունք ունին . վասն զի իրենք արդէն կը հետե-  
ւին այնպիսի ուղղութեան մը, որ ամեն ազգաց  
մէջ հաւասարապէս կընայ դատապարտելի հա-  
մարուիլ :

Ուստի խօսքս կը վերջացնեմ Եղիշէ Ա. հօր  
զրած հետեւեալ տողերովն թէ « զուգութիւն է  
մայր բարեաց և անդուգութիւն ծնող չարեաց »  
որոյ մէջ կը փափաքիմ ընդ միշտ տեսնել Ազ-  
գի և Կառավարութեան շահերն անբաժան :

---

Ծանօթ. — Հետեւեալ իրեսին վերայ կը նշանա-  
կեմք Հայարնասկ գաւառաց մէջ գործածուած անուանց  
իլրնատեալներէն մի քանիներն :

Ա.ՐԱԿԱՆ Ս.ՆՈՒՄ.ՆՔ.

Անկրճատ	կրճատեալ
Արբահամ .	Արբօ
Առաքել .	Բրկօ
Աւետիս .	Աւօ , Աւտէ կամ Աւտօ
Գասպար .	Գապօ , Գոպօ կամ Գոպէ,
Գրիգոր .	Գորիկ , Գրկօ կամ Գորկո
Դաւիթ .	Դաւօ
Զաքար .	Զաքօ , Զքօ կամ Զքէ
Թովմաս .	Թումօ կամ Թումէ,
Կարապետ .	Կարօ
Համբարձում .	Խամբօ կամ Խամբար
Մաքսուտ .	Մախսօ
Մարտիրոս .	Մարտօ, Մարտէ կամ Մարտիկ
Մելքոն .	Մէլօ
Միքայէլ .	Մքէ , Մուքէ կամ Մուքօ
Միխիթար .	Մխօ
Մկրտիչ .	Մկօ , Մկրէ կամ Մկրը
Մնացական .	Մնօ
Մովսէս .	Մոսօ կամ Մուսա
Յակոբ .	Ակէս , Յակօ կամ Յակէ
Յարութիւն .	Յարօ կամ Յարթին
Յովհաննէս .	Յովօ կամ Յովէ
Պաղտասար .	Պղտօ , Պաղտօ կամ Պղտէ
Պետրոս .	Պիտօ կամ Պէտէ
Սահակ .	Սըհօ կամ Սախօ
Սարդիս .	Սրկօ կամ Սրիկէ
Սեղրակ .	Սեղօ :

ԻԳ.ԱԿԱՆ Ս.ՆՈՒՄ.ՆՔ.

Եղիսաբեթ .	Եղօօ
Իւղաբեր .	Օղիկ
Հոխիսիմէ .	Խուռոփէ
Մարիամ .	Մարան կամ Մայրօ
Նուպար .	Նուպօ :

« ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ

(Ա Ի Ա Ր Տ )

# ՅԱՆԿ ԳԼՈՒՅՑ

	Երես
Գլ. Ա. — Առքերանի (Բերկրի) . . . . .	17
Գլ. Բ. — Առքերանոյ կարեւոր գիւղերն . .	21
Գլ. Գ. — Քաջբերունիք . . . . .	25
Գլ. Դ. — Քաջբերունեաց զլխաւոր գիւղերն	28
Գլ. Ե. — Արձէշ՝ հին բերդաքաղաք . . . . .	32
Գլ. Զ. — Խոսխոսունիք . . . . .	36
Գլ. Է. — Մեկնումն ի Հարք գաւառ . . . . .	43
Գլ. Ը. — Մանազկերտի Մայր եկեղեցին . .	48
Գլ. Թ. — Կարմիր վանք և կռապաշտական քար . . . . .	54
Գլ. Ժ. — Մանազկերտ գաւառակի զլխաւոր գիւղեր . . . . .	60
Գլ. ԺԱ. — Ապահունեաց գաւառ (Պուլանըն) .	67
Գլ. ԺԲ. — Ա. Վերին Պուլանըն . . . . .	69
Գլ. ԺԳ. — Մէճիսլուի գեղջկուհին . . . . .	75
Գլ. ԺԳ. — Բ. Ներքին Պուլանըն . . . . .	85
Գլ. ԺԸ. — Հասան-կորան և իւր բնակիչն . .	95
Գլ. ԺԶ. — Հետաքրքիր յայտնութիւն և հին խաչաքար մը . . . . .	99
Գլ. ԺԷ. — Խնուս գաւառն . . . . .	103
Գլ. ԺԸ. — Խնուսի գիւղերն քարաչօպանէն սկսեալ . . . . .	106
Գլ. ԺԹ. — Խնուս՝ բերդաքաղաք . . . . .	112
Գլ. Ի. — Ա. Կարապետի զմբեթաւոր վանք .	115
Գլ. ԻԱ. — Շար. Խնուսի գիւղօրէից . . . . .	122
Գլ. ԻԲ. — Մեկնումն (Խնուսէն) . . . . .	128
Գլ. ԻԳ. — Մուտան 'ի կարնոյ գաւառն կամ 'ի Բարձր Հայս . . . . .	134
Գլ. ԻԴ. — Կարին քաղաք կամ Թէոդորովիս .	138
Գլ. ԻԵ. — Բարերարաց յիշատակն անմահ է . .	145

ԳԼ. ԻԶ. — Քաղաքական վիճակն կարնոյ . . . . .	152
ԳԼ. ԻԵ. — Կարնոյ դաշտի գիւղերու անուանքն .	156
ԳԼ. ԻՐ. — Շար. կարնոյ գիւղօրէից . . . . .	159
ԳԼ. ԻԹ. — » » » . . . . .	165
ԳԼ. Լ. — Կարնոյ դաշտի վանօրացք . . . . .	173
ԳԼ. ԼԱ. — Հայ գիւղացւոց տարեկան կենաց չորս եղանակի համառօտ նկարագիրն.	
ԳԱՐՈՒՆ (Մարտ, Ապրիլ, Մայիս) .	177
ԳԼ. ԼԲ. — Գոմշակոփու . . . . .	181
ԳԼ. ԼԳ. — Հովիւ եւ հօտ . . . . .	184
ԳԼ. ԼԴ. — Հովուական ճաշ . . . . .	186
ԳԼ. ԼԵ. — Պերատեղի (բերատեղի) . . . . .	191
ԳԼ. ԼԶ. — ԱՄԱԾ (Յունիս, Յուլիս, Օգոստոս)	194
ԳԼ. ԼԵ. — Կալ եւ կութ . . . . .	198
ԳԼ. ԼԲ. — ԱՇՈՒՆ (Սեպտ. Հոկտ. Կոյեմբ.) եւ ԶՄԵՌՆ (Գեկտ. Յուն. Փետրվ.) .	202-203
ԳԼ. ԼԹ. — Գիւղի ձմեռուան լուսաւորիչ . . .	206
ԳԼ. Խ. — Տանուտիրական իշխանութիւն . .	208
ԳԼ. ԽԱ. — Վանական տուրք (պտղի) . . . .	243
ԳԼ. ԽԲ. — Քրդաց վրայ համառօտակի . . . .	247



Ա. Տ. Կ. Պ. Ա. Կ. Փ.

Երես	Տաղ	Սխալ	Ուղիղ
23	4	որոց	յորոց
30	14	ընդ եւ	ընդ իւ
32	6	Ազնունեաց	Բզնունեաց
33	9	Արձու	Արձշու
117	12	քուղիա	քուզիա
125	22	Պուրկազցիք	Պուրնազցիք
127	15	ՍԱՅԼԻՈՐԻ	ՍԱՅԼԻՈՐ
149	15	Պ.	Բ.
207	8	լինելոյ	չինելոյ

Ծանօթ . — Երկասիրութեանս թ. Մասի մէջ պըտ-  
նուած Անձրեւացիք բառն պէտք է ընթեռնուլ Ան-  
ձհւացիք :







7751

7752

7753

0003788  
0003795  
0003796  
0003797

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003796

ՀՀ Ազգային գրադարան



NL0003795

ՀՀ Ազգային գրադարան



NL0003788

